

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԶՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2018

ՄԱՍ II

**ԵՐԵՎԱՆ**  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2018

Երաշխավորված է հրատարակության  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

***Խմբագրական խորհուրդ՝***

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր  
աշխարհ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
տնտեսագիտության թեկնածու  
տնտեսագիտության թեկնածու

**Յուրի Միքայելի Սուվայրյան  
Ռոբերտ Ներսեսի Սարինյան  
Աշոտ Հակոբի Բայադյան  
Արարատ Եղիշեի Զաքարյան  
Դավիթ Վլադիմիրի Հարությունյան  
Էրա Արկադիի Բաբայան  
Քրիստինե Յուրիի Բաղդասարյան  
Հայկ Աշոտի Մարկոսյան  
Լիլիթ Նորայրի Մարգարյան**

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի  
Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու - 2018) մաս II /  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ.  
խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018 -304 էջ:

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**  
0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15  
Հեռ. (+374 10) 58-19-71  
E-mail: [nas\\_ie@sci.am](mailto:nas_ie@sci.am), [economicjournal@sci.am](mailto:economicjournal@sci.am)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ  
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ – 2018**

**ЧАСТЬ II**

Ереван

*Издательство "Гитутюн" НАН РА*

2018

***Редакционный совет:***

академик НАН РА

доктор экономических наук, профессор

доктор экономических наук, профессор

доктор экономических наук, профессор

доктор экономических наук, профессор

доктор экономических наук

кандидат географ. наук, профессор

кандидат экономических наук

кандидат экономических наук

кандидат экономических наук

**Суварян Юрий Михайлович**

**Саринян Роберт Нерсесович**

**Баядян Ашот Акопович**

**Закарян Арарат Егишевич**

**Арутюнян Давид Владимирович**

**Бабаян Эба Аркадиевна**

**Багдасарян Кристина Юрьевна**

**Маркосян Айк Ашотович**

**Саргсян Лилит Норайровна**

Ответственный редактор сборника

член-корреспондент НАН РА,

доктор экономических наук, профессор **ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения.

Сборник научных статей -2018, часть II /Институт экономики НАН РА

им.М.Котаняна.

Отв.редактор В. Л. Арутюнян. Ер., изд-во «Гитутюн» НАН РА, 2018, 304 с.

***Национальная академия наук Республики Армения Институт экономики имени М. Котаняна***

Республика Армения

0015, Ереван, ул. Григора Лусаворича 15

Тел. (+3741) 58-19-71,

Е-mail: [nas\\_ie@sci.am](mailto:nas_ie@sci.am), [economicjournal@sci.am](mailto:economicjournal@sci.am)

**M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA**

**THE CONTEMPORARY ISSUES OF  
SOCIOECONOMIC DEVELOPMENT IN THE  
REPUBLIC OF ARMENIA**

**SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2018**

**PART II**

**Yerevan**

*“Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

**2018**

Approved for publishing by the decree of the  
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences of the Republic of Armenia

**Editorial Board:**

**Yuri Mikael Suvaryan**

*Academician of the National Academy of Sciences  
of the Republic of Armenia,*

*Doctor of Sciences (Economics), Professor*

**Robert Nerses Sarinyan**

*Doctor of Sciences (Economics), Professor*

**Ashot Hakob Bayadyan**

*Doctor of Sciences (Economics), Professor*

**Ararat Yeghish Zakaryan**

*Doctor of Sciences (Economics), Professor*

**Davit Vladimir Harutyunyan**

*Doctor of Sciences (Economics).*

**Eba Arkadi Babayan**

*Doctor of Geographical Sciences, Professor*

**Kristina Yuri Baghdasayan**

*Doctor of Economics*

**Hayk Ashot Markosyan**

*Doctor of Economics*

**Lilit Norayr Sargsyan**

*Doctor of Economics*

Responsible Editor

**VLADIMIR HARUTYUNYAN**, Doctor of Sciences (Economics), Professor  
Correspondent Member of the National Academy of Sciences  
Republic of Armenia

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2018, part II / M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia; Responsible Editor: Vladimir L. Harutyunyan, Yerevan, “Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2018, 304 p.

***M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia***

15 Grigor Lusavorich Street

Yerevan 0015, Republic of Armenia

Tel. (+374 10) 58-19-71

E-mail: [nas\\_ie@sci.am](mailto:nas_ie@sci.am), [economicjournal@sci.am](mailto:economicjournal@sci.am)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԲԱՅԱԴՅԱՆ Ա. Հ.	ՀՀ ապահովագրական ընկերությունների զարգացման միտումները և դրանց գործունեության վերլուծությունը.....	13
ԱԶԱՏՅԱՆ Լ. Ս.	Ներդրումային միջավայրի ձևավորման դերն ու նշանակությունը գյուղատնտեսության ոլորտում....	24
ԱԼՈՅԱՆ Ռ. Ս.	Ռիսկերի դասակարգումը և դրանց կառավարման փուլերը.....	30
ԲԱԲՅԱՆ Է. Ա., ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա. Ա.	Փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման քաղաքականության կատարելագործումը Հայաստանի Հանրապետությունում .....	40
ԶԱԽԱՐՅԱՆ Ա. Գ.	Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում .....	51
ԶԱՏԻԿՅԱՆ Ա. Թ.	Ինովացիոն գործունեության հարկային խթանումների առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում.....	64
ԶԱՔԱՐՅԱՆ Ա. Ե., ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ. Հ.	Հայաստանի բնական շինանյութերի ռեսուրսային ցիկլերի զարգացման տնտեսական խնդիրները և ինովացիոն առանձնահատկությունները.....	77
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Է.	Ռազմաարդյունաբերության ոլորտում կլաստերային զարգացման արտերկրյա փորձը .....	84
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Մ. Գ.	ՀՀ ապահովագրական համակարգի զարգացման փուլերը և առկա իրավիճակը .....	98
ՄԱՐԴՈՒՄՅԱՆ Մ. Ս., ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Լ. Մ.	Բիզնեսի ֆինանսական կայունության վերլուծությունը և կանխատեսումը որպես կորպորատիվ ձախողման կանխարգելման գործիքներ.....	112
ՄԵԼԻՔՅԱՆ Զ. Վ.	ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործընթացը ներդրումային միջավայրի բարելավման գործում .....	120
ՊԱՊԻԿՅԱՆ Ա. Ռ.	Արցախի Հանրապետության էներգահամակարգում գազատուրբինային կայանքների օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորումը.....	129
ՊՈՂՈՍՅԱՆ Շ. Պ.	Լիզինգի ներդրման անհրաժեշտությունը և խոչընդոտները ՀՀ ՓՄՁ ոլորտում .....	135
ՎԱՐԴԱՆՅԱՆ Գ. Ի., ԻԳՆԱՏՈՎ Ս. Ա.	Տնտեսական ինտեգրման և օտարերկրյա ուղղակի ներդրումների փոխկապվածությունը .....	144

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ  
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎԱՐԿԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Հ., ԾԱՌՈՒԿՅԱՆ Ս. Ս.	Էլեկտրաէներգիայի ոչ տեխնիկական կորուստների գնահատում .....	161
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Բ. Վ., ՉՈՒԲԱՆՅԱՆ Մ. Ա.	Կադրային արդի խնդիրները պետական ծառայության համակարգում .....	170
ԳԱԼՍՏՅԱՆ Ա. Ս.	Շարունակական մասնագիտական զարգացման արդի մարտահրավերները .....	182
ԳՐԻԳՈՐՅԱՆ Դ. Հ.	Աղքատության պատկերը ՀՀ-ում .....	189
ԴԱԼԼԱՔՅԱՆ Ս. Ա.	Միջազգային միգրացիոն հոսքերը և դրանց բացասական ու դրական հետևանքները .....	200
ԻՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Կ.	Մարդկային կապիտալի որակական կորուստները Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում .....	210
ՄԱՐԿՈՍՅԱՆ Հ. Ա.	Միջուկային անվտանգությունն ու դրա կարգավորումն աշխարհում և Հայաստանում .....	217
ՄԱՐԿՈՍՅԱՆ Հ. Ա., ՊԵՏՐՈՍՅԱՆ Դ. Ա.	Հայաստանի վերականգնվող էներգիայի աղբյուրների ներուժն ու օգտագործման հեռանկարները .....	227
ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ Ա. Հ.	Աշխատուժի օգտագործման արդյունավետությունը ձեռնարկություններում .....	237
ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ Հ. Գ., ԽԱՉԱՏՐՅԱՆ Գ. Գ.	Հանրային նշանակալի կազմակերպությունների աուդիտի կարգավորումը ՀՀ-ում .....	242
ՆԱՆՅԱՆ Ա. Ա.	Կանաչ էներգիայի արտադրությունը Հայաստանում. կլիմայական պայմանների ռիսկը .....	250
ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Ս.	ՀՀ բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնների վերլուծությունը .....	261
ՄԱՐԳՍՅԱՆ Լ. Ն., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Զ.	Ժողովրդագրական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում .....	267
ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Տ. Ս.	Էլեկտրոնային կառավարման համակարգը ՀՀ-ում .....	280
ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	.....	292



# СОДЕРЖАНИЕ

## ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

БАЯДЯН А. А.	Тенденции развития страховых компаний в Армении и анализ их деятельности.....	13
АЗАТЯН Л. С.	Роль и значение формирования инвестиционной среды в сельском хозяйстве.....	24
АЛОЯН Р. С.	Классификация рисков и этапы их управления.....	30
БАБАЯН Э. А., ГЕВОРГЯН А. А.	Совершенствование политики стимулирования малого и среднего предпринимательства в РА.....	40
ЗАХАРЯН А. Г.	Проблемы стимулирования деятельности малых и средних предприятий в Республике Армения.....	51
ЗАТИКЯН А. Т.	Особенности налогового стимулирования инновационной деятельности в зарубежных странах.....	64
ЗАКАРЯН А. Е., АРАКЕЛЯН К. О.	Экономические проблемы развития ресурсных циклов природных стройматериалов Армении и их инновационные особенности.....	77
АРУТЮНЯН Г. Э.	Зарубежный опыт кластерного развития оборонной промышленности.....	84
МАНУЧАРЯН М. Г.	Этапы развития и текущая ситуация системы страхования РА.....	98
МАРДУМЯН М. С., АЙРАПЕТАН Л. М.	Анализ и прогнозирование финансовой устойчивости бизнеса как инструмент предотвращения корпоративных неудач.....	112
МЕЛИКЯ З. В.	Процесс развития аграрного сектора РА в деле совершенствования инвестиционной среды.....	120
ПАПИКЯН С. Р.	Технико-экономическое обоснования использования газотурбинные установки в энергосистеме Арцаха.....	129
ПОГОСЯН Ш. П.	Необходимость внедрения лизинга и препятствия в сфере МСП РА.....	135
ВАРДАНЯН Г. И., ИГНАТОВ С. А.	Взаимозависимость экономической интеграции и прямых иностранных инвестиций.....	144

## РАЗВИТИЕ СФЕРЫ УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

АРАКЕЛЯН А. А., ЦАРУКЯН С. С.	Оценка нетехнических потерь электроэнергии.....	161
ГАБРИЕЛЯН Б. В., ЧОБАНЯН М. А.	Современные кадровые проблемы в системе государственной службы .....	170
ГАЛСТЯН А. М.	Современные проблемы непрерывного профессионального развития.....	182
ГРИГОРЯН Д. О.	Картина бедности в Армении .....	189
ДАЛЛАКЯН С. А.	Международные миграционные потоки и их негативные и положительные последствия.....	200
ИСААКЯН Р. К.	Качественные потери человеческого капитала в сфере общественного образования .....	210
МАРКОСЯН А. А.	Ядерная безопасность и его регулирование в мире и РА .....	217
МАРКОСЯН А. А., ПЕТРОСЯН Д. А.	Потенциал и использование возобновляемых источников энергии в Армении.....	227
МНАЦАКАНЯН А. Г.	Эффективность использования рабочей силы на предприятиях .....	237
МНАЦАКАНЯН А. Г., ХАЧАТРЯН Г. Г.	Регулирование аудита общественно-значимых организаций в Республике Армения .....	242
НАНЯН А. А.	Производство зеленой энергии в Армении: риск климатических условий.....	250
ПЕТРОСЯН Л. М.	Анализ факторов, влияющих на уровень жизни в Армении .....	261
САРГСЯН Л. Н., АРУТЮНЯН Г. З.	Текущие демографические проблемы в Армении .....	267
ПАРСАДАНЯН Т. С.	Система электронного управления в РА .....	280
НАШИ АВТОРЫ	.....	292

# CONTENTS

## ISSUES ON THE REAL SECTOR OF THE ECONOMY

BAYADYAN A. H.	Development Trends of Insurance Companies in the Republic of Armenia and Analysis of Thereof Activities	13
AZATYAN L. S.	The Role and Importance of Having More Business-Friendly Investment Environment in the Agriculture ...	24
ALOYAN R. S.	Classification of Risks and Stages of Thereof Management .....	30
BABAYAN E. A., GEVORGYAN A. A.	Improvement of the Policy Aimed at Stimulating Small And Medium-Sized Entrepreneurship in Armenia.....	40
ZAKHARYAN A. G.	Issues on Stimulating the Activity of Small and Medium-Sized Enterprises in the Republic of Armenia	51
ZATIKYAN A. T.	Specifics of Tax Incentives Stimulating the Innovative Activity in Other Countries.....	64
ZAKARYAN A. Y., ARAKELYAN K. H.	Economic Issues on Developing Natural Construction Resource Cycles and Innovative Featu-Res in Armenia	77
HARUTYUNYAN G. E.	International Practice on Clustering in Defense Industry.....	84
MANUCHARYAN M. G.	The Stages of Development and Current Situation of the Insurance System in the Republic of Armenia .....	98
MARDUMYAN M. S., HAYRAPETYAN L. M.	The Analysis and Forecasting of the Financial Stability of Businesses as Tools to Prevent Business Failures .....	112
MELIKYAN Z. V.	The Role of Developing the Agriculture Industry in Making the Investment Climate More Business Friendly.....	120
PAPIKYAN S. R.	The Economic Issues on the Utilization of Gas-Turbine Stations in the Power System of the Artsakh Republic	129
POGHOSYAN SH. P.	The Necessity for Introducing Leasing to the Sme Sector and Obstacles in the Republic of Armenia .....	135
VARDANYAN G. I., IGNATOV S. A.	Interdependence of Economic Integration and Foreign Direct Investments .....	144

## ISSUES ON DEVELOPING SERVICES SECTOR AND SOCIO-DEMOGRAPHIC STANCE

ARAKELYAN A. H., TSARUKYAN S. S.	Assessment of Nontechnical Losses of the Electricity	161
GABRIELYAN B. V., CHOBANYAN M. A.	Contemporary Human Resource Issues in the System of Civil Service .....	170
GALSTYA A. M.	Contemporary Challenges Of The Continuing Professional Development.....	182
GRIGORYAN D. H.	Poverty Overview in the Republic of Armenia .....	189
DALLAQYAN S. A.	International Migration Flows and the Negative and Positive Consequences of Thereof .....	200
ISAHAKYAN R. K.	The Qualitative Losses of Human Capital in the Public Education in the Republic of Armenia .....	210
MARKOSYAN H. A.	Nuclear Safety and the Regulation of Thereof Worldwide and in Armenia .....	217
MARKOSYAN H. A., PETROSYAN D. A.	The Potential of Renewable Energy Sources and Utilization Prospects of Thereof .....	227
MNATSAKANYAN A. H.	The Efficacy of Utilization of Workforce in Enterprises	237
MNATSAKANYAN H. G., KHACHATRYAN G. G.	Audit Regulation of Public-Interest Entities in the Republic of Armenia .....	242
NANYAN A. A.	Production of Green Power in Armenia: the Risk of Climatic Conditions.....	250
PETROSYAN L. M.	Analysis of the Factors Affecting the Standards of Living in the Republic of Armenia .....	261
SARGSYAN L. N., HARUTYUNYAN H. Z.	Current Demographic Issues in the Republic of Armenia .....	267
PARSADANYAN T. S.	The System of Electronic Governance in the Republic of Armenia .....	280
OUR AUTHORS	.....	292

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

**ԱՇՈՏ ՀԱԿՈՒԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող*

## **ՀՀ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հիմք ընդունելով տնտեսապես զարգացող երկրների փորձը կապված ապահովագրության գործընթացի հետ, պետք է նշել, որ Հայաստանում այն նույնպես ունեցավ իր ուրույն տեղը և ՀՀ կառավարության 2017թ. ծրագրով նախատեսվում է, որ 2018 թվականին և հետագա տարիներին ապահովագրական ընկերությունները հիմնականում ծառայություններ են մատուցելու՝ ցամաքային տրանսպորտի, օդանավերի, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, հրդեհից ու բնական աղետներից, գույքի, փոխադրվող գույքի (բեռների), երկաթուղային տրանսպորտի, առողջության, ընդհանուր պատասխանատվության ապահովագրության գծով, ինչպես նաև դժբախտ պատահարներից, աջակցության և երաշխիքների տրամադրման, այնպես էլ Հայաստանի համար հույժ կարևոր նշանակություն ունեցող գյուղատնտեսության ապահովագրության գծով<sup>1</sup>:

Ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական ծառայությունների մատուցման համար հանգուցային կենտրոն է մնալու Երևան քաղաքը: Սակայն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պարտադիր օրենքի ընդունմանը զուգընթաց, ապահովագրական ընկերությունները պատրաստ են ակտիվ գործողությունների ձեռնարկմամբ մուտք գործել նաև մարզերի շուկաներ, ընդ որում, ումանք՝ մասնաճյուղերի ստեղծման միջոցով, իսկ ումանք էլ՝ գործակալական ցանցի ստեղծման կամ ընդլայնման միջոցով:

Ապահովագրական ընկերությունների հիմնական մասը որպես հաճախորդ առաջնային դերում պետք է տեսնի ֆիզիկական անձ ապահովադիրներին, սակայն դրանց համահունչ որոշ ընկերություններ՝ կշարու-

---

<sup>1</sup> ՀՀ ապահովագրական համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018թթ.:

նակեն շեշտը դնել իրավաբանական անձ ապահովադիրների վրա: Ըստ էության, ապահովագրական ընկերությունների հաճախորդներ են հանդիսանում տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպությունները, պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները, բանկերը և վարկային կազմակերպություններից վարկ վերցնող քաղաքացիներն ու արտերկիր մեկնող ուղևորները:

Կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայումս ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունները, այդ թվում՝ «Այ Էս Ջի» ապահովագրական ՍՊԸ, «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ, «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲԸ, «Հայաստանի ապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ը, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲ-ն, «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ, «Ռեսո» ԱՓԲԸ, «Ռոսգոստոտախ - Արմենիա» և «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ները մեծամասամբ նախընտրում են օգտվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հուսալի ճանաչման չափանիշներին բավարարող վերաապահովագրական ընկերությունների ծառայություններից<sup>1</sup>: 2009 թվականից սկսած ապահովագրական ընկերությունները շարունակել և շարունակում են կապերի ամրապնդումը, իսկ ոմանք էլ նոր կապեր են հաստատել տարբեր վերաապահովագրական ընկերությունների և բրոքերների հետ: Ապահովագրական ընկերությունների ներկայիս հիմնական գործընկերներ են հանդիսանում՝ ֆրանսիական «Սկոր», լեհական «Պոլիշ Ռե», գերմանական «Մյունխին Ռե», «Հանովեո Ռե», ռուսական «Ինգոստրախ», «Ռոսնո», ինչպես նաև «Լոյդոս» ապահովագրական շուկայի ընկերությունները, այնպես էլ միջազգային վերաապահովագրական շուկայի առաջատար բրոքերները և այլն: Ապահովագրական ընկերությունների գերակշիռ մասը հիմնականում համագործակցում է անգլիական ու եվրոպական շուկայի վերաապահովագրողների և բրոքերների հետ: Միաժամանակ այդ ընկերություններն օգտվում են նաև տեղական բրոքերների ծառայություններից, որոնք նրանց մատուցում են հիմնականում վերաապահովագրական միջնորդային ծառայություններ:

Բացի վերոնշյալ հեռանկարային ռազմավարական ուղղություններից, ՀՀ ապահովագրական ընկերությունների կանխատեսմամբ՝ իրենց գործունեության վրա հնարավոր ազդեցություն կարող են ունենալ արտաքին միջավայրի հետ կապված հետևյալ երևույթները, այդ թվում՝

- ընկերություններից ոմանք կանխատեսում են համաշխարհային և ՀՀ

---

<sup>1</sup> www.cba.am

- տնտեսության աշխուժացում, իսկ ոմանք՝ անկում,
- Հայաստան Թուրքիա սահմանի բացում, ինչն էապես կմեծացնի դեպի Հայաստան բեռնափոխադրումների ծավալը,
  - փոխարժեքային տատանումները,
  - որոշ վերաապահովագրողների վարկանիշների հնարավոր ցածրացումը,
  - հայտնի վերաապահովագրողների կողմից ՀՀ ապահովագրական շուկայի նկատմամբ հետաքրքրության առաջացումը,
  - տեղական ապահովագրական ընկերությունների կողմից նոր վերաապահովագրողների հետ հարաբերությունների հաստատումը, որին կնպաստի 2011թ. հունվարի 1-ից գործող վերաապահովագրողներին հուսալի ճանաչելու ավելի խիստ չափանիշները,
  - հուսալի վերաապահովագրողների կողմից տարվող սակագնային քաղաքականության վերաբերյալ անորոշությունը (մասնավորապես՝ մի շարք ընկերություններ կանխատեսում են վերաապահովագրողների կողմից առաջարկվող սակագների աճ, որոշ ընկերություններ՝ նվազում), ինչպես նաև վերաապահովագրողների կողմից առավել խիստ պայմանների հնարավոր առաջադրումը,
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի գործարկման հետ կապված դժվարությունները,
  - ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքին համահունչ գործընթացների բարելավումը, ինչը կբարձրացնի բնակչության իրազեկության մակարդակն ապահովագրության ոլորտում, ինչպես նաև խթան կհանդիսանա ապահովագրական շուկայի զարգացման համար,
  - մրցակցության սրացումը,
  - շուկայի կենտրոնացումը և ապահովագրողների խոշորացումը, գործող փոքր ապահովագրական ընկերությունների քանակի նվազումը՝ ի հաշիվ սրվելիք մրցակցության ու նորմատիվային խստացումների,
  - ընկերությունների քանակի նվազում՝ մի կողմից նորմատիվային դաշտի խստացման, մյուս կողմից առավել մրցունակ ընկերությունների առկայության հետևանքով,
  - որոշ ընկերություններ կանխատեսում են նոր մրցակիցների մուտք տեղական ապահովագրական շուկա, իսկ որոշ ընկերություններ էլ դա համարում են քիչ իրատեսական,
  - ապահովագրական շուկայի աճի դանդաղումը,
  - շինարարության և ներմուծման ծավալների կրճատումը, ինչի արդ-

յունքում տեղի կունենա որոշ դասերի գծով ստացվող ապահովագրավճարների նվազում (օրինակ՝ փոխադրվող գույքերի կամ բեռների, ավտոտրանսպորտային միջոցների, դժբախտ պատահարներից և այլն),

- բժշկական ծառայությունների գների հավանական աճը,
- ֆինանսական հաշտարարի ինստիտուտի հնարավորությունների օգտագործումը, որը դրական ազդեցություն կունենա ապահովագրական շուկայի զարգացման, ապահովագրական ծառայությունների նկատմամբ հասարակական պահանջարկի մեծացման վրա,
- ապահովագրական սակագների նվազեցումը՝ մրցակցությանը դիմակայելու համար,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից նորմատիվային դաշտի խստացումը,
- պարտադիր ապահովագրությանը համահունչ որոշ ինստիտուտների/համակարգերի ներդրումը: Ակտուարական համակարգի ներդրման հետ կապված խնդիր կարող է հանդիսանալ դրանց գծով հաշվարկների համար օգտագործվող վիճակագրական տվյալների ոչ ճշգրիտ լինելը,
- որակյալ մասնագետների նկատմամբ պահանջարկի աճ,
- վնասաբերության ցուցանիշի աճի միտում, մասնավորապես՝ ավտոտրանսպորտային միջոցների և առողջության ապահովագրության գծով:

Կապված արտաքին միջավայրի ազդեցության հետ, ապահովագրական ընկերությունները պետք է ձևավորեն և ելնեն հետևյալ հնարավորություններից՝

- հնարավոր է, որ զարգացած երկրների ապահովագրական շուկաների կրճատումը ստիպի վերաապահովագրողներին նոր շուկաներ ներխուժել, ինչի արդյունքում անգամ այն վերաապահովագրողները, որոնք հետաքրքրված չեն եղել հայկական շուկայով կարող են ընդունել վերաապահովագրության տեղական ռիսկերը,
- օրենսդրության խախտման, մրցակցության սրացման հետևանքով ապահովագրական ընկերությունների թվի կրճատում, առկա ապահովագրական ընկերությունների կողմից նոր մասնաբաժինների տիրակալու հնարավորություն, առողջ, արդյունավետ և ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերությունների հաստատման հնարավորություն,
- ակտուարների ինստիտուտի ներդրման հետևանքով ընկերությունների ընդհանուր ռիսկայնության նվազում և պորտֆելի կառավարելիության բարձրացում:



Միաժամանակ, հիմք ընդունելով վերը նշված հնարավորությունները, ապահովագրական ընկերությունների կողմից նախանշվում են հետևյալ սպառնալիքները՝

- հետզհետեաժամային երևույթների ազդեցությունն ՀՀ տնտեսության վրա, տնտեսական աճի դանդաղ տեմպը,
- տարածաշրջանի տնտեսական և քաղաքական անկայունությունը,
- գնաճի նախատեսվածից բարձր տեմպերը,
- փոխարժեքի տատանումների հետ կապված ռիսկերը,
- նորմատիվային դաշտի խստացումը,
- որակյալ և փորձառու մասնագետների բացակայությունը,
- հուսալի վերաապահովագրողների հետ հարաբերությունների պայմանների խստացումը,
- մրցակցության սրացում գործող ապահովագրական ընկերությունների միջև,
- նոր ապահովագրական ընկերությունների մուտքը, մասնաբաժինների նվազումը,
- ապահովագրության մի շարք դասերի գծով ապահովագրավճարների նվազում՝ պայմանավորված տնտեսական աճի տեմպի նվազմամբ,
- ՀՀ ԿԲ-ի կողմից ապահովագրության պայմանագրերի ռեգիստրի պահանջների կիրառումը և հաշվետվությունների նվազման հետ կապված ժամկետային խստացումները,
- առողջապահության, վիճակագրության և ապահովագրության ոլորտների միջև աշխատանքների համակարգման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը,
- բժշկական ծառայությունների հավանական գնաճը,
- վերաապահովագրողների կողմից առաջարկվող ավիացիոն ռիսկերի ապահովագրության սակագների աճը,
- շահութաբերության մակարդակի նվազում՝ ի հաշիվ ապահովագրական սակագների անկման, ռիսկային բնույթ ունեցող ապահովագրիչների ներգրավման:

Այստեղից հետևություն, որ յուրաքանչյուր տնտեսապես զարգացող երկրի համար, ինչպիսին նաև Հայաստանի Հանրապետությունն է, խիստ կարևորվում է հեռանկարային առումով ապահովագրական գործընթացների ճիշտ վարումը տնտեսության բոլոր ոլորտներում:

Այժմ վերանշյալներին համահունչ ներկայացնենք ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվեկշռային ցուցանիշները, այդ թվում ակտիվների, ընդհանուր կապիտալի, ապահովագրական պահուստների և չբաշխված շահույթի վերաբերյալ 2007-2017թթ. գծով (տե՛ս աղյուսակ 1-ը):

**ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվեկշռային ցուցանիշները՝  
ըստ 2005-2017թթ.<sup>1</sup>**


Մլն դրամ

Ժամանակաշրջան	Ակտիվներ	Ապահովագրական պահուստներ	Ընդհանուր կապիտալ	Զբաղիված շահույթ
31.12.05	9879	3692	4426	264
31.12.06	8704	1216	5991	324
31.12.07	8376	1626	5347	625
31.12.08	11682	2149	7448	625
31.12.09	16982	2723	12304	1131
31.12.10	25614	2917	12506	1234
31.12.11	31502	8599	14104	1713
31.12.12	38351	15612	14055	1960
31.12.13	50007	17219	15968	- 48
31.12.14	43421	15605	15758	1044
31.12.15	41130	17278	16782	1010
31.12.16	46675	19186	19465	3302
31.12.17	49510	19896	19255	2648

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ ըստ ուսումնասիրվող տարիների հաշվեկշռային ցուցանիշները (բացի ակտիվներից) ունեցել են բավականաչափ տատանողական բնույթ: Հատկապես չբաղիված շահույթի գծով, եթե 2005թ. այն կազմել է 264 մլն դրամ, 2009-ին՝ 1131 մլն դրամ, 2013թ.՝ 48 մլն դրամ, 2016թ.՝ 3302 մլն դրամ, իսկ 2017թ.՝ 2648 մլն դրամ: Իր հերթին ընդհանուր կապիտալն ի տարբերություն չբաղիված շահույթի սկսած 2007թ-ից կազմել է 5347 մլն դրամ, իսկ այնուհետ աճելով, այն 2017թ. վերջին եղել է 19224 մլն դրամի չափով և գերազանցել 13.897 մլն դրամի չափով, իսկ հարաբերական շեղումը կազմել է 259,9% կամ ավելացել 2,6 անգամ: Պետք է նշել, թե ինչ կարևոր նշանակություն ունեն ապահովագրական ընկերությունների համար պահուստները, որոնք ընդհանուր կապիտալին համահունչ ունեցել են համարյա միևնույն աճման միտումները: Այսպես, եթե 2005թ. կազմել է 3692 մլն դրամ, ապա 2017թ.-ի վերջին եղել է 19896 մլն դրամ կամ ավելացումը տեղի է ունեցել 4,4 անգամ:

Ավելի պարզ պատկերացնելու համար, վերոնշյալ աղյուսակի տվյալների հիման վրա կազմենք գծապատկեր 1-ը:

<sup>1</sup> www.cba (ապահովագրական ընկերություններ)



**Գծապատկեր 1. ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվեկշռային ցուցանիշները՝ ըստ 2005-2017թթ.**

Ներկայացնենք նաև բանկի գրծունեությունը բնութագրող շահութաբերության (ROE, ROA) և ապահովագրական ընկերությունների մուլտիպլիկատորը:

Վերոնշյալ ցուցանիշների էությունը կայանում է նրանում՝

- ROE – ն (ընդհանուր կապիտալի շահութաբերությունը) արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$ROE = \frac{\text{Չբաշխված շահույթ}}{\text{Ընդհանուր կապիտալ}} \quad (1)$$

- ROA – ն (ակտիվների շահութաբերությունը) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ROA = \frac{\text{Չբաշխված շահույթ}}{\text{Ակտիվներ}} \quad (2)$$

- Ապ.ընկ.մուլտիպ. =  $\frac{\text{Ակտիվներ}}{\text{Ընդհանուր կապիտալ}}$  կամ  $\frac{ROE}{OA}$  (3)

Կատարենք համապատասխան հաշվարկները և արդյունքները տեղադրենք աղյուսակ 2-ում:

**ՀՀ ապահովագրական ընկերությունների շահութաբերության  
ցուցանիշները՝ ըստ 2005-2017թթ.**

Տարիները	Ակտիվների շահութաբ., %	Ընդհանուր կապիտալի շահութաբ., %	Ապահովագրական ընկերությունների մուլտիպլիկատորը
2205	2.7	6.0	2.2
2006	3.3	5.4	1.5
2007	7.5	11.7	1.6
2008	5.4	8.4	1.6
2009	6.7	9.2	1.4
2010	4.8	9.9	2.0
2011	5.4	12.1	2.2
2012	5.1	13.9	2.7
2013	- 0.1	- 0.3	3.1
2014	2.4	6.6	2.8
2015	2.5	6.0	2.4
2016	7.1	17.0	2.4
2017	5.3	13.8	2.6

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ ուսումնասիրվող տարիներին, բացի 2013 թվականից, ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից ապահովված է շահութաբերության մակարդակ: Հատկապես ամենաբարձրը եղել է 2016 թվականին, ընդհանուր կապիտալի շահութաբերությունը՝ 17%, իսկ ակտիվների շահութաբերությունը՝ 7.1%: Սակայն 2017 թվականին ունեցել են նվազման միտում և վերոնշյալ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 13.8% և 5.3%:

Պետք է նշել, որ ուսումնասիրվող տարիների ՀՀ ապահովագրական ընկերությունները համեմատական առումով իրենց վատ չեն դրսևորել:


Իր հերթին կարևորվում է նաև ապահովագրական ընկերությունների մուլտիպլիկատորը, որը ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունն է, այսինքն՝ որքան բարձր լինի այս մեծությունը ընդհանուր կապիտալի շահութաբերությանը համահունչ, այնքան լավ:

Ապահովագրական ընկերությունների գործունեության համար կարևորվում են նաև մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ ապահովագրական և վերաապահովագրական վճարները, ապահովագրական հատուցումները, գործող պայմանագրերով ապահովագրական գումարները և գործող ապահովագրական պայմանագրերի քանակը: Վերջիններիս գծով համապատասխան տվյալներն ըստ 2005-2017թթ. ներկայացված են աղյուսակ 3-ում և գծապատկեր 2-ում:

**ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական գործունեության ցուցանիշները՝ ըստ 2005-2017թթ.<sup>1</sup>**

Մյն դրամ

Ժամանակաշրջան	Ապահովագրավճարներ	Վերապահովագրավճարներ	Ապահովագրական հատուցումներ	Գործող պայմանագրերով ապահովագրական գումարներ	Գործող ապահովագրական պայմանագրերի քանակ
31.12.05	4351	2387	522	1734	23508
31.12.06	5876	3683	27343	3933	29477
31.12.07	4814	2079	923	1105	39883
31.12.08	7769	3968	1375	2354	48781
31.12.09	8102	4036	1901	3386	50646
31.12.10	8253	4011	1746	3052	50484
31.12.11	22372	2803	8141	3696	207246
31.12.12	35525	3172	14487	6295	406728
31.12.13	35753	3251	19719	8160	563136
31.12.14	30105	3599	22150	9536	594893
31.12.15	31424	3921	13564	9450	591859
31.12.16	33141	4791	14222	11005	633727
31.12.17	35263	4751	18003	28679	796123



**Գծապատկեր 2. ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական գործունեության ցուցանիշները՝ ըստ 2005-2017թթ.**

<sup>1</sup> www.cba.am (ապահովագրական ընկերություններ)  
 \*Տվյալները ներկայացված են աճողական տարվա սկզբից

Աղյուսակ 3-ի և գծապատկեր 2-ի տվյալները վկայում են այն մասին, որ բոլոր ցուցանիշներն էլ ունեցել են ըստ տարիների տատանողական բնույթ: Հատկապես այն զգալի է ապահովագրական հատուցումների գծով: Ինչևէ, հարաբերական շեղումը ապահովագրական վճարների առումով կազմել է 2017 թվականին 2005 թվականի նկատմամբ՝ 7.1 անգամ ավելացում, իսկ վերաապահովագրական վճարների գծով՝ 99%, ապահովագրական հատուցումների առումով՝ 33.5 անգամ, գործող պայմանագրերով ապահովագրական գումարների գծով՝ 15.5 անգամ:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ապահովագրական ընկերությունները նշված ցուցանիշների (բացի վերաապահովագրական վճարներից) գծով ըստ տարիների ապահովել են բավականաչափ բարձր աճման միտումներ:

### **ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱՇՈՏ ՀԱԿՈՒԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հայաստանում ապահովագրության գործընթացն ունեցավ իր ուրույն տեղը: Հատկապես ապահովագրական ընկերությունների հիմնական մասը որպես հաճախորդ առաջնային դերում պետք է տեսնեն ֆիզիկական անձ ապահովադիրներին: Ապահովագրական ընկերությունների գերակշիռ մասը հիմնականում համագործակցում է անգլիական ու եվրոպական շուկայի վերաապահովագրողների և բրոքերների հետ: Միաժամանակ այդ ընկերություններն օգտվում են նաև տեղական բրոքերների ծառայություններից: Հայաստանի համար խիստ կարևորվում է հեռանկարային առումով ապահովագրական գործընթացների ճիշտ վարումը տնտեսության բոլոր ոլորտներում: Իր հերթին կարևորվում են նաև ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ու մուլտիպլիկատորը, որոնք ունեցել են դրական միտում:

**Բանալի բառեր.** *ապահովագրություն, գործունեություն, երաշխիքների տրամադրում, վերաապահովագրություն, ռազմավարական ուղղություններից, ապահովագրական շուկա, պահուստներ, չբաշխված շահույթ:*

# ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СТРАХОВЫХ КОМПАНИЙ В АРМЕНИИ И АНАЛИЗ ИХ ДЕЯТЕЛЬНОСТИ

**АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН**, д.э.н., профессор

*зав.отделом, главный научный сотрудник*

*Института экономики им.М.Котаяна НАН РА*

**Аннотация:** Процесс страхования занимает важное место в Армении. В частности, большинство страховых компаний должны рассматривать клиентов как основное физическое лицо – страхователь. Большинство страховых компаний в основном сотрудничают с английскими и европейскими перестраховщиками и брокерами. В то же время эти компании также пользуются услугами местных брокеров. Для Армении важно обеспечить перспективность страховых процессов во всех сферах экономики. В свою очередь, повышается рентабельность страховых компаний, которая имеет положительную тенденцию.

**Ключевые слова:** *страхование, деятельность, предоставление гарантий, перестрахование, стратегические направления, страховой рынок, резервы, нераспределенная прибыль.*

## DEVELOPMENT TRENDS OF INSURANCE COMPANIES IN THE REPUBLIC OF ARMENIA AND ANALYSIS OF THEREOF ACTIVITIES

**ASHOT HAKOB BAYADYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*

*Head of Department, Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The insurance process had its own place in Armenia. In particular, the majority of insurance companies must view a natural person as their primary client, insuree. The majority of insurance companies are mainly collaborating with reinsurers and brokers from the UK and European Union. Meanwhile, those companies rely on the services of the local brokers as well. For Armenia, it is of vital importance to widen insurance coverage incorporating more sectors of the economy as prospective industry development path. The profitability and multiplier of the insurance companies are stressed as well since they have reported a positive trend.

**Keywords:** *Insurance, activity, provision of guarantee, reinsurance, strategic directions, insurance market, reserves, retained income.*

## ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՉԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

### ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ներդրումը դա կապիտալ ներդրումն է (դրամական, նյութական և ոչ նյութական ձևերով) ձեռնարկատիրական գործունեությունում, իրականացվող օբյեկտներում եկամուտ (տոկոս կամ շահաբաժին) ստանալու, կապիտալն ու ակտիվները ավելացնելու կամ այլ նպատակներ իրագործելու համար<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խրախուսումը տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից է: Ներդրումային նպատակաուղղված քաղաքականությամբ և իրականացմամբ է պայմանավորված երկրի զարգացման հետագա ընթացքը: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանի ներդրումային դաշտը համարվում է ամենաբացերից մեկը: Մակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ-ում վերջին տարիներին նկատվում է օտարերկրյա ներդրումների ծավալի նվազում:

Չնայած այն բանին, որ Հայաստանն ունի ռիսկայնության հետ կապված խնդիրներ, այդ թվում շրջափակում, Ղարաբաղյան հիմնահարց և այլն, այնուհանդերձ ունի լայնածավալ ներդրումների կարիք: Դրա համար ներդրումների ներգրավումը եղել է մեր երկրում վարվող տնտեսական քաղաքականության կարևոր հիմնահարցերից մեկը: Ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծում, որն էլ կապահովի ՀՀ-ում տնտեսական կայուն աճ:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով<sup>2</sup>: Համաձայն այս օրենքի՝ օտարերկրյա ներդրումները կարգավորող ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է

<sup>1</sup> Բայադյան Ա.Հ., Տնտեսագիտական բառարան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2014, , էջ 348:

Баядян А.Х. - Экономический словарь, Издательство «Наука», НАН РА, Ереван, 2014, стр. 348.

<sup>2</sup> «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1994թ. հուլիսի 4-ին, Հ.Ն.-1093-1, ՀՕ-115:



ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը: Այժմ էլ օրենքում նախատեսվում են փոփոխություններ, որոնք կնպաստեն ներդրումների և գործարար միջավայրի կայուն զարգացմանը:

Ներդրողները ձգտում են ներդրում կատարել այն ոլորտում, որը ապահովված կլինի բազմաթիվ երաշխիքներով, որոնցից էլնելով մեր երկիրն էլ պետք է հնարավորին չափով բարենպաստ պայմաններ ստեղծի ներդրողների համար՝ սահմանելով երաշխիքներ և արտոնություններ:

Ներդրողը հաշվի է առնում տվյալ երկրում շահույթ ստանալու ու ռիսկը նվազեցնելու գործոնները և, որպես կանոն, հաղթում են այն երկրները, որոնք ունեն բարենպաստ ներդրումային միջավայր ու բավարարում են շահութաբեր ներդրում կատարելու բոլոր ակնկալիքները: Ուստի մեր երկրում ներդրումային վարկանիշի բարձրացման ձևերից մեկը ներդրումային ռիսկի զսպումն է:

Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել են տնտեսական նախադրյալներ ազատ մրցակցության, շուկայական տնտեսության ձևավորման և գործարարության ազատ ձևերի ընտրության համար:

Համաձայն «Գործարարությամբ զբաղվելը 2013» (Doing Business 2013) դասակարգչի, Հայաստանը 185 երկրների շարքում զբաղեցնում է 32-րդ տեղը<sup>1</sup>:

ՀՀ-ում ներդրումային միջավայրի ձևավորումն արդիական դարձավ անկախության հռչակումից հետո:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում կատարվող ներդրումների մակարդակը նվազել է: Չնայած, ՀՀ կառավարությունը ցանկանում է օտարերկրյա ներդրողների ուշադրությունը գրավել տարբեր ոլորտների ուղղությամբ՝ տուրիզմ, բժշկություն, կոնյակագործություն, սննդի արդյունաբերություն, և այլն, սակայն նրանք ներդրումներն ավելի շատ կենտրոնացնում են քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, թեթև արդյունաբերության, էներգետիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում: Ուստի, կարևորագույն ներդրումային միջավայրը բարենպաստ դարձնելու համար պետք է մշակել և իրագործել արդյունավետ ներդրումային քաղաքականություն:

Ներդրումային հոսքերի կառավարման քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնել հնարավոր բացասական ազդեցությունները: Օրինակ, ներդրումը կարող է կատարվել միանվագ, իսկ շահույթի ստացումը կրի մշտական բնույթ: Նման պարագայում կարևոր է շահույթի

---

<sup>1</sup> Doing Business 2013. Smarter Regulations for Small and Medium-Siz Enterprises, International Bank for Reconstruction and Development, The World Bank, 2012, 270 pages.

վերաներդրումը, որի համար անհրաժեշտ է ներդրումային բարենպաստ միջավայր: Օտարերկրյա ներդրողները կատարում են իրենց ներդրումներն այնպիսի ոլորտներում, որոնք ապահովում են արագ հատույց, ինչը հանգեցնում է տնտեսության զարգացման անհամամասնությանը և դրա համար էլ պետության կողմից անհրաժեշտ է կառավարել կապիտալ հոսքերի ուղղությունը, որը վերաբերում է հատկապես բնապահպանական տեսանկյունից վտանգավոր արտադրություններին:

Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար պետք է ունենալ դրանց օժանդակող, խթանող և դրանց պաշտպանության հարցերով զբաղվող մասնագիտացված ենթակառուցվածքներ: Մեր երկրում այդ գործառնությունները իրականացնում են հետևյալ պետական կառույցները՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, Գործարարության աջակցության խորհուրդը, Զարգացման հայկական գործակալությունը, ՀՀ կենտրոնական բանկը:

Օտարերկրյա ներդրումները խթանում են՝ ընդունող երկրի տնտեսության աճին, որի արդյունքում արտասահմանյան կազմակերպությունների գործունեությունը դրդում է տեղական կազմակերպություններին արագ անցում կատարել բարձր և նորագույն տեխնոլոգիաների:

Ներդրումները պահանջում են նաև տեղական կադրերի պատրաստվածության համապատասխան մակարդակ, քանի որ ընդունող երկրի աշխատուժի որակական մակարդակը ազդում է դրա տնտեսական աճի վրա:

Օտարերկրյա ներդրումների խթանման համար կարևոր դեր են խաղում տնտեսության ընդհանուր ազատականացումը, բիզնեսի համար բարենպաստ արդյունաբերական գոտիների ստեղծումը, որը կօգնի ինչպես ներդրումների ներհոսքին, այնպես էլ տնտեսական աճի խթանմանը<sup>1</sup>:

Ներդրումներն իրենց դրական ազդեցությունն ունեն ներդրում իրականացվող երկրի համար: Դրանք են.

- տվյալ երկրի տնտեսության զարգացման տեմպի արագացում,
- օտարերկրյա առաջավոր տեխնոլոգիաների ներգրավումն, աշխատանքի կազմակերպման և փորձի կիրառում,
- տեղական խնայողությունների օգտագործում,
- տեղական բնական ռեսուրսների օգտագործում,
- տեղական աշխատուժի որակավորման, զբաղվածության մակարդակի բարձրացում,

---

<sup>1</sup> Словарь современной экономической теории Макмиллана, М. ИНФРА- М., 2003, ст. 103-132:

- արտահանման ընդլայնում,
- նոր շուկաների բացահայտում և մուտք գործելու հնարավորություն,
- բնակչության կենսամակարդակի բարձրացում,
- երկրի նկատմամբ վստահության աճ:

Մեր երկրի համար կարևոր նշանակություն ունեցող գյուղատնտեսության ոլորտում ներդրումներն աննշան են, միայն 2006 թվականից սկսեցին մասամբ ուշադրություն դարձնել այս ոլորտին: Վերջին տարիներին ներդրումներ են արվել արդիական ջերմոցների, ձկնաբուծության և կաթնամթերք արտադրող ընկերությունների մեջ: Վերջերս ներդրումներ են կատարվել խաղողագործության և գինեգործության ոլորտում: 2013թ, աճում են հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ): ՀՀ կառավարության կողմից ոլորտում բարեփոխումներ իրականացնելու դեպքում կբարձրանա ներդրողների հետաքրքրությունը, քանի որ անորոշությունը խոչընդոտում է ներդրումների հոսքին: Ներդրողները գերադասում են կայուն և ոչ թե փոփոխական իրավիճակներ, օրինակ՝ բնական գազի սակագնի փոփոխությունն ազդում է ջերմոցային տնտեսություններում ներդրումների վրա: Ներդրողները հետաքրքրված են նաև կայունության ապահովմամբ հարկային դաշտում: Միաժամանակ հզորացնելով ներդրումների խթանման գործակալության կարողությունները, Հայաստանի զարգացման հիմնադրամը պետք է ձգտի ավելի լիարժեքորեն բավարարել ոլորտային ներդրումների կարիքները: ՀԶՀ-ն ունի ներդրումներով զբաղվող երկու բաժին, որոնցից մեկն աշխատում է ներդրումային ծրագրերի մշակման, իսկ մյուսը՝ դրանց խթանման ուղղությամբ: Անհրաժեշտ է այնպիսի մեխանիզմ, որով երկու բաժիններն էլ կունենան բավարար կարողություններ՝ գյուղատնտեսությանն առնչվող ներդրումներին ծառայություններով ապահովելու համար: Այն պետք է ստեղծի գյուղատնտեսության հետ կանոնավոր գործունեության մեխանիզմ: Ներկայումս այսպիսի մեխանիզմը բացակայում է կամ շատ թույլ է<sup>1</sup>:

Ներդրողները երբեմն բախվում են հողի շուկայի և առկա հողային հարցերի հետ, հատկապես այն դեպքերում, երբ նրանց հետաքրքրում է այգիների հիմնումը կամ կերերի արտադրության կազմակերպումը: Այս դեպքում նպատակահարմար է տեղեկատվության մատչելիության կազմակերպումը՝ ներդրողների ավելի հասանելի լինելու համար: Այդ համակարգը պետք է տեղեկատվություն պարունակի տվյալ տեղանքի վիճակի վերաբերյալ:

<sup>1</sup> Գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման ուղիները, Երևան, 2017թ., էջ 11:

Առաջիկայում ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները պետք է լինեն ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների ծրագրերում:

Անհրաժեշտ է կազմել կարողունակ երկրների և ներդրողների ցանկ, որոնք հետաքրքրված են գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ կատարելու ուղղությամբ:

Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ է պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը, որի պատճառով մեծ նշանակություն է տրվում արդյունավետ ներդրումային քաղաքականության մշակմանն ու իրագործմանը:

## **ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒԴԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՐՏՈՒՄ**

### **ԼԻԱՆԱ ՍԱՄԿԵԼԻ ԱԶԱՏՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**Չամառոտագիր:** Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խրախուսումը տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից է, չնայած այն բանին, որ Հայաստանն ունի ռիսկայնության հետ կապված խնդիրներ և լայնածավալ ներդրումների կարիք: Դրա համար ներդրումների ներգրավումը եղել է մեր երկրում վարվող տնտեսական քաղաքականության կարևոր հիմնահարցերից մեկը: Օտարերկրյա ներդրումները խթանում են ընդունող երկրի տնտեսության աճին: Մեր երկրի համար կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության ոլորտում ներդրումները, և առաջիկայում ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները պետք է լինեն ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների ծրագրերում:

**Բանալի բառեր.** *գյուղատնտեսության ներդրումներ, ներդրումային դաշտը, երաշխիքներ և արտոնություններ, ներդրումային միջավայրի բարելավում, տեղական կադրերի պատրաստվածություն:*

## РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ФОРМИРОВАНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ

**ЛИАНА САМВЕЛОВНА АЗАТЯН**

*научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Поощрение инвестиций является приоритетным направлением экономической политики в РА. Несмотря на то, что Армения имеет проблемы, связанные с рискованностью и необходимостью широкомасштабных инвестиций. Вот почему привлечение инвестиций остается одним из важнейших вопросов экономической политики нашей страны. Иностранные инвестиции способствуют росту экономики принимающей страны. Для нашей страны также важны инвестиции в сельское хозяйство, а вопросы улучшения инвестиционной среды должны проявляться в приоритетных программах правительства Армении.

**Ключевые слова:** *инвестиции в сельском хозяйстве, инвестиционная среда, гарантии и льготы, улучшение инвестиционной среды, квалификация кадров.*

## THE ROLE AND IMPORTANCE OF HAVING MORE BUSINESS-FRIENDLY INVESTMENT ENVIRONMENT IN THE AGRICULTURE

**LIANA SAMVEL AZATYAN**

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Promoting and attracting investments into the Republic of Armenia is one of the priorities of the economic policy. Even though Armenia faces some issues associated with specific risks and needs large-scale investments, the attraction of investments has been one of the priorities of the implemented economic policy in our country. That is why investment incentives were one of the most important issues of our country's economic policy. Foreign investments contribute to the economic growth of the host country. Investments in agriculture are of great importance for our country, and hence the issues of making investment environment more business-friendly need to be prioritized by the Government of the Republic of Armenia while elaborating and implementing various reforms.

**Keywords:** *Investment in agriculture, investment environment, guarantees and incentives, making investment environment more business-friendly, skills and capabilities of the local workforce.*

## ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

### ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Տնտեսական և սոցիալական ոլորտներում ինչպես հասարակությունը, այնպես էլ յուրաքանչյուր անհատ մշտապես հարկադրված է որևէ որոշում կայացնել՝ նպատակ ունենալով խուսափել վտանգներից, ինչպես նաև օգտվել տրված հնարավորություններից:

Ռիսկը՝ որպես պատմական կատեգորիա, ծնունդ է առել մարդկության զարգացման վաղ ժամանակաշրջանից: Ռիսկ բառի թարգմանությունն է «որոշման ընդունում», որի հետևանքներն անհայտ են: Ցանկացած որոշակի ռիսկ իրենից ներկայացնում է որոշակի անբարենպաստ իրավիճակի առաջացում: Գրականության մեջ գոյություն ունեն ռիսկի էության մասին տարբեր տեսակետներ: Ս. Ի. Օժեգովի բառարանում,<sup>1</sup> ռիսկը սահմանվում է որպես «հնարավոր վտանգ», իսկ ահա ըստ Պ. Գրաբովսկու «Ռիսկը ժամանակակից բիզնես» գրքում<sup>2</sup> «Ռիսկն» ընդունված է հասկանալ որպես կազմակերպության ռեսուրսների մի մասի կորստի, եկամուտների թերացման կամ որոշակի արտադրական և ֆինանսական գործունեություն իրականացնելու արդյունքում լրացուցիչ ծախսերի առաջացման հավանականությունը (վտանգ):

Ռիսկը օբյեկտիվ երևույթ է, այսինքն՝ եթե իրականացվում է որևէ գործողություն, ապա ռիսկն անպայման գոյություն ունի՝ անկախ նրանից, այն հաշվի է առնվում, թե ոչ: Ռիսկի դիմելը որոշվում է սեփական ընտրությամբ՝ գիտակցաբար և նպատակաուղղված, որի դեպքում սուբյեկտը դիմում է ռիսկի՝ իմանալով ռիսկի պատճառները և աղբյուրները՝ օգտագործելով անվտանգության մեխանիզմները, նվազեցման եղանակները, որոնք չեն բացառում ռիսկից խուսափումը: Այլ կերպ՝ ռիսկը դա կանխատեսելի և կառավարելի վտանգն է: Առանց ռիսկի հնարավոր չէ զարգացմանը նպաստող այնպիսի շարժիչ ուժերի կյանքի կոչելը, ինչպիսիք են նախաձեռնությունը, նորարարությունը և ձեռներեցությունը:

<sup>1</sup> Ожегов С. И., Словарь русского языка. Под ред. докт. Филолог. Наук., проф. Н Ю. Шведовой, 14-е изд. стереотип, М. Рус. яз., 1983г., с.678.

<sup>2</sup> Грабовский П. К., Петрова С. Н., Полтавцев С. И. И др., Риск в современном бизнесе, Под ред. П. Г. Грабового, М.: Изд-во «Алане», 1994, с.8.

Ռիսկի բազմաթիվ սահմանումների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել ռիսկային իրավիճակին բնորոշ հիմնական պահերը: Դրանք են.

- իրադարձության պատահական բնույթը,
- այլընտրանքային որոշումների առկայությունը,
- հետևանքների հայտնի կամ որոշվող հավանականությունները և սպասվող արդյունքները,
- վնասների առաջացման հավանականությունը:

Յուրաքանչյուր ձեռնարկատեր իր գործունեությունը սկսելու հենց առաջին պահից բախվում է մի շարք ռիսկերի հետ:

Ձեռնարկատիրական տեսանկյունից ռիսկը հանդիսանում է բացասական իրադրություն՝ ոչ շահավետ տնտեսական հետևանքներով, որոնք կարող են առաջանալ ապագայում, որոշակի պահի, անհայտ չափերով:

Ռիսկը ոչ միայն սխալ հետևանքով ձեռնարկատիրոջը սպառնացող վտանգն է, այլ նաև բոլոր այն ռիսկային իրավիճակները (բնական, տարերային, տեխնաձին աղետների, պատասխանատվության և այլն), որոնց, կյանքի կամ գործունեության ամբողջ ընթացքում, ուղղակի կամ անուղղակի կերպով ենթարկված են քաղաքացիները և տնտեսավարող սուբյեկտները:


Ֆինանսատնտեսական գործունեության կարևորագույն կանոններից մեկի համաձայն. «պետք է ոչ թե խուսափել ռիսկից, այլ ձգտել նվազեցնել այն՝ հասցնելով հնարավոր առավել ցածր մակարդակի»<sup>1</sup>:

Ռիսկերի տեսակները բազմաթիվ են: Ռիսկերի դասակարգման ժամանակ անհրաժեշտ է հետևել այն սկզբունքին, ըստ որի ռիսկերի դասակարգումը պետք է մշակվի ամեն գործունեության համար առանձին՝ կախված գործունեության ծավալից և բարդության աստիճանից:

Ներկայացնում ենք ռիսկերի դասակարգման սխեման ըստ Ռ. Գրի-գորյանի<sup>2</sup> (տե՛ս գծապատկեր 1-ը):

<sup>1</sup> Гарантуров В., «Экономический риск», М.: Дело и сервис, 1999г.

<sup>2</sup> Ռ.Լ.Գրիգորյան, Ռիսկի կառավարում: Ուս. ձեռնարկ, Եր, ԵրՃՇՊՀ հրատ., 2010թ., էջ -99:



Չճապատկեր 1. Ռիսկերի դասակարգումը՝ ըստ տարատեսակների

Որպես մարդկային գործոնի հետ կապված ռիսկ կարող են հանդես գալ բնական աղետները, պատերազմները, գործադուլները, մատակարարումների ընդհատումները:

Կախված ռիսկային իրադարձությունների հետևանքների բնույթից արտադրական ռիսկը լինում է երկու տեսակի՝ **մաքուր և սպեկուլյատիվ**<sup>1</sup>:

**Մաքուր ռիսկերը** ենթադրում են բացասական կամ չեզոք արդյունքների ստացում (բնական, տրանսպորտային, բնապահպանական, քաղաքական, գույքային, արտադրական և առևտրային):

**Սպեկուլյատիվ ռիսկերը** արտահայտում են դրական և բացասական արդյունքների ստացման հնարավորություն: Դրանք ներառում են ֆինանսական ռիսկեր, որոնք կոմերցիոն ռիսկերի մի մասն են կազմում:

<sup>1</sup> <http://www.askins.ru/index.php/princip>



**Քնական ռիսկերը** այն ռիսկերն են, որոնք առաջանում են բնության տարերային աղետներից՝ երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ, համաճարակներ և այլն:

**Տրանսպորտային ռիսկեր**՝ այս ռիսկերի մեջ ներառվում են այն իրադարձությունները, որոնք վնասի պատճառ կարող են հանդիսանալ տրանսպորտի տարբեր տեսակներով՝ բեռների փոխադրման ձախողման դեպքերում: Դրանք ստորաբաժանվում են կասկո և կարգո ռիսկերի: **Կասկո տրանսպորտային** ռիսկերը ենթադրում են օդային, ծովային, երկաթգծի և ավտոմոբիլային (շարժման, կայանման և վերանորոգման) ռիսկերի ապահովագրությունը: **Կարգո տրանսպորտային** ռիսկերը ենթադրում են օդային, ծովային, երկաթգծի և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների օգնությամբ բեռների ապահովագրությունը:

**Քնասպահպանական ռիսկեր**՝ շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված ռիսկերն են

**Քաղաքական ռիսկեր**՝ քաղաքական ռիսկերը կախված են երկրում քաղաքական իրավիճակի և պետության գործունեության հետ: Քաղաքական ռիսկեր առաջանում են արտադրական և իրացման գործընթացների խախտման ժամանակ, պատճառներով, որոնք կախված չեն տնտեսվարող սուբյեկտի գործունեությունից:

**Քաղաքական ռիսկերին են պատկանում՝**

Ռեզգմական գործողությունների, պատերազմների, երկրում ներքին քաղաքական իրավիճակի սրման, ապրանքների ու ձեռնարկությունների բռնագրավման և այլնի հետևանքով տնտեսական գործունեության իրականացնելու անհնարինությունը

- Արտաքին վճարումները որոշակի ժամկետով հետաձգելը արտակարգ իրավիճակների ժամանակ (գործազրկություն, պատերազմ և այլն):
- Հարկային օրենսդրության անբարենպաստ փոփոխությունը:

**Գույքային ռիսկերը**, այն ռիսկերն են, որոնք առաջանում են սեփականատիրոջ գույքի կորուստներից՝ գողության, լարման տատանումների, տեխնիկական, տեխնոլոգիական համակարգերի խափանման պատճառով:

**Արտադրական ռիսկերը**՝ կապված են կորուստների հետ, որոնք առաջանում են արտադրության կասեցման ժամանակ տարբեր գործոնների ազդեցության պատճառով հիմնական և շրջանառու միջոցների վնասման ժամանակ(սարքավորումներ, հումք, տրանսպորտ և այլն), ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներդրման առաջացած ռիսկեր:

**Առևտրային ռիսկեր**՝ այդ ռիսկերը հանդես են գալիս, երբ գնորդները ձեռք բերված ապրանքների դիմաց վճարումների ժամկետները խախտում են կամ ընդհանրապես հրաժարվում են վճարել:

Վերջին երեք տիպի ռիսկերին (գույքային, արտադրական, առևտրային) բնորոշ է երկակի բնույթը: Դրանց մի մասը կարող է հանդես գալ որպես կոմերցիոն ռիսկեր, որոնք ներառվում են ֆինանսական ռիսկերի մեջ:

Ֆինանսական ռիսկերը կապված են հնարավոր ֆինանսական կորուստների հետ:

Ֆինանսական ռիսկերը լինում են երկու տեսակի՝

**1. Ռիսկեր դրամի գնողունակության հետ կապված:**

**2. Ռիսկեր կապիտալի ներդրման հետ կապված (ներդրումային ռիսկեր):**

Դրամի գնողունակության հետ առնչվող ռիսկերը հանդես են գալիս որպես ինֆլյացիոն և դեֆլյացիոն ռիսկեր, արտարժույթային ռիսկեր, իրացվելիության ռիսկեր:

**Ինֆլյացիոն ռիսկեր՝** այն ռիսկերն են, երբ ինֆլյացիայի աճի ժամանակ եկամուտները գնողունակության տեսանկյունից ավելի արագ են արժեզրկվում, քան արժևորվում: Այդ դեպքում ձեռնարկատերը կորուստներ է կրում:

**Դեֆլյացիոն ռիսկեր՝** այն ռիսկերն են, երբ դեֆլյացիայի ժամանակ մակարդակի անկման պատճառով առաջանում է ձեռնարկատիրական գործունեության պայմանների վատացում և եկամուտների նվազում:

**Արտարժույթային ռիսկեր՝** առաջանում են փոխարժեքային կուրսի տատանումների ժամանակ, երբ կան միջազգային առևտուր, վարկեր կամ այլ արժույթային գործողություններ:

**Իրացվելիության ռիսկեր՝** արժեթղթերի կամ այլ ապրանքների իրացման ժամանակ կորուստների առաջացած ռիսկերն են՝ որակի կամ գնի գնահատականի փոփոխության պատճառով:

Ներդրումային ռիսկերը հանդես են գալիս 3 տարատեսակներով.

**Բացթողնված հնարավորության ռիսկեր** (կորցրած շահույթի ռիսկեր) անուղղակի ֆինանսական կորուստի որևէ չիրականացված գործողության հետևանք(ապահովագրություն, ներդրումներ և այլն): Դրա պատճառն այն է, որ միշտ չէ հնարավոր լինում նախօրոք ճշգրիտ գնահատել ակնկալվող շահութաբերության ցուցանիշները, բացի այդ ներդրումների տարբերակներից յուրաքանչյուրն ունենում է շահութաբերության և ռիսկայնության զանազան ցուցանիշներ և միշտ չէ, որ հնարավոր է լինում ճիշտ համադրել դրանք:

**Եկամտաբերության նվազեցման ռիսկեր՝** այս ռիսկերը կարող են առաջանալ տոկոսների և պորտֆելային ներդրումներից, վարկերից, ավանդներից՝ դիվիդենդների նվազեցման պատճառով: Այս ռիսկն իր հերթին բաժանվում է՝

- տոկոսային ռիսկի,

- վարկային ռիսկի:

Տոկոսային ռիսկերը կապված են այն հանգամանքի հետ, որ ժամանակի ընթացքում կարող է վարկավորման տոկոսը փոփոխվի, իսկ վարկային ռիսկը կարելի է ներառել նաև ուղղակի ֆինանսական ռիսկերի մեջ:

***Ուղղակի ֆինանսական ռիսկերն են՝***

- բորսայական,
- սելեկտային,
- սնանկության:

***Բորսայական ռիսկերն*** իրենցից ներկայացնում են բորսայական գործարքներից կորուստների վտանգ: Այդ ռիսկերի շարքին են դասվում՝ առևտրային գործարքների, բրոքերային գործարքների կոմիսիոն վճարների համար չվճարելը և այլն:

***Սելեկտային ռիսկերն*** առաջանում են սխալ ներդրումների եղանակի սխալ ընտրության դեպքում՝ ներդրումների համար արժեթղթերի համեմատությունն այլ արժեթղթերի հետ պորտֆելային ներդրումների ձևավորման ժամանակ:

***Սնանկացման ռիսկ***, որը հանդես է գալիս այն դեպքում, երբ գործարքի իրականացման ժամանակահատվածում մասնակից կողմերի մի մասն անվճարունակ է դառնում պարտավորությունները կատարելու տեսանկյունից: Արդյունքում ձեռնարկատերը դառնում է սնանկ:

Այսպիսով՝ ռիսկը ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես ակնկալվող եկամտի և գույքի կորստի վտանգ, որն առաջանում է պատահարների հետևանքով:

Ռիսկի դասակարգման հետ միաժամանակ շատ կարևոր է նրանց արդյունավետ գիտականորեն հիմնավորված կառավարումը:

Ռիսկի օբյեկտիվ գոյության պայմաններում կազմակերպության հաջող գործունեության համար անհրաժեշտ պայմանը ռիսկերի կառավարման համակարգի (մենեջմենթի) ձևավորումն է, որը սահմանվում է որպես կառավարման որոշումներ կայացնելու և իրականացնելու գործընթաց՝ հաշվի առնելով ռիսկի առկայությունը:

Ռիսկի կառավարումը՝ հավանական կորուստներից խուսափելն է, կամ կորուստների նվազեցնելն է, և մյուս կողմից ընդունված հնարավորություններից օգտվելը, հաշվի առնելով, որ կառավարչական որոշումները պետք է ընդունվեն ռիսկերի գնահատման (կանխատեսման) արդյունքում:


Այլ կերպ ասած՝ նշանակում է օգնել ձեռնարկություններին՝

- զերծ մնալ կորուստներից ու վնասներից,
- ձեռնարկության մասին դրական կարծիք ձևավորել և այլն:

Ռիսկն անորոշությունն է ապագայի նկատմամբ: Այդ պատճառով այն կառավարելու համար հարկավոր է մշակել որոշակի սկզբունքներ.<sup>1</sup>

- ռիսկի հայտնաբերում,
- ռիսկի գնահատում,
- ղեկավարման մեթոդների ընտրություն,
- այլ մեթոդների կիրառում,
- արդյունքների գնահատում:

Ռիսկի կառավարման գործընթացը կարող է բաժանվել առանձին փուլերի: Դրանք են՝ նպատակի սահմանում, վերլուծություն, ռիսկի բացահայտում, ռիսկի գնահատում, ռիսկի կառավարման մեթոդների ընտրություն, որոշումների ընդունում, փոխազդեցություն ռիսկի վրա (նվազեցում, խափանում, փոխանցում) և արդյունքների գնահատում: Ստորեն ներկայացված է ռիսկերի կառավարման գործընթացի փուլերը (տե՛ս գծապատկեր 2-ը):



**Գծապատկեր 2. Ռիսկերի կառավարման գործընթացի փուլերը**

<sup>1</sup> Ареопар – м. <Управление предпринимательскими рисками>, <http://www.arepag.ru>

**Նպատակի սահմանումը** մարդու համար ենթադրում է, օրինակ, հոգատարություն առողջության մասին, ընտանիքի բարեկեցության ապահովում եկամտի աղբյուրի կորստի կամ կերակրողի մահվան դեպքում, ինչպես նաև տնային գույքի, տրանսպորտային միջոցների և այլ դեպքերում ապահովագրական պաշտպանվածություն: Տնտեսավարող սուբյեկտների համար գլխավոր նպատակն անկանխատեսելի հանգամանքների (հրդեհ, գողություն և այլն) դեպքում կազմակերպության գոյության ապահովումն է:

Ռիսկի հետ կապված յուրաքանչյուր գործողություն միշտ նպատակաուղղված է, քանի որ նպատակի բացակայությունը ռիսկի հետ կապված որոշումը դարձնում է անիմաստ: Ռիսկի նպատակը դա արդյունք է, որն անհրաժեշտ է ստանալ: Դա կարող է լինել շահույթ, հասույթ և եկամուտ:

**Ռիսկի բացահայտումն** արտահայտվում է անհատի կամ տնտեսվարող սուբյեկտի կողմից ռիսկի գիտակցման մեջ: Վերջինս որպես կանոն ընթանում է հասարակական միջավայրում և հենվում է հասարակական պրակտիկայի վրա:

**Ռիսկի գնահատումը**՝ հնարավոր վնասի հավանականության և մեծության տեսանկյունից նրա լրջության որոշումն է:

**Ռիսկի կառավարման մեթոդների ընտրությունն** իր մեջ ներառում է՝ ռիսկի պարզեցում, կորստի կանխում և վերահսկողություն, ապահովագրություն ու կլանում: Մեթոդի ընտրությունը կախված է ռիսկի տեսակից և այն գործնականում հանդիպում է ռիսկի կառավարման մի քանի մեթոդների միաժամանակյա օգտագործման հետ:

**Որոշումների ընդունումը** պայմանավորում է հետագա քայլերը, այդ թվում՝

- **Փոխազդում է ռիսկի վրա**, և այս փուլում կատարվում է ազդեցության տարբեր մեթոդների արդյունավետության համադրում:
- **Արդյունքների գնահատումը** կատարվում է համակարգված և ճշգրիտ տեղեկատվական համակարգի հիման վրա, որը հնարավորություն է տալիս քննարկել առկա վնասները և այն գործողությունները, որոնց իրականացման դեպքում հնարավոր կլինի դրանց կանխումը:

Ռիսկերի կառավարման համակարգը բավականաչափ բարդ համալիր է, որի մշակումը և ներդրումն ընդգրկուն գործընթաց է: Այն իրենից ներկայացնում է ռիսկերի կառավարման համակարգի կազմավորման մեկնարկային պայմանների ապահովման և առաջնային ընթացակարգերի կազմակերպման բազմափուլ գործընթաց:

Ռիսկերի կառավարման համակարգի առջև դրված խնդիրների արդյունավետ լուծումն ապահովելու համար այն պետք է ներառի հետևյալ առանցքային բաղադրիչները, առանց որոնց ռիսկերի կառավարման համակարգի նպատակային և արդյունավետ գործունեությունն անհնար է: Դրանք են՝

- տեղեկատվության հավաքում և մշակում,
- ռիսկերի վերլուծության անցկացում՝ դրանց առաջացման պայմանների նկարագրություն, առաջացմանը նպաստող գործոններին համահունչ ռիսկերը բնութագրող չափանիշների սահմանում և ռիսկերի հետևանքով վնասների մեծության գնահատում,
- բոլոր փուլերում ռիսկերի կառավարման գործընթացների մշակում և իրականացում,
- ընդունված միջոցառումների վերլուծությունը և դրանց արդյունավետությունը առաջարկների մշակման նպատակով:

Այսպիսով՝ ռիսկը կարելի է կառավարել, այսինքն՝ կանխատեսել ռիսկային իրադարձությունների տեղի ունենալու հնարավորությունը և միջոցներ ձեռնարկել ռիսկի աստիճանը նվազեցնելու համար:

## **ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ**

### **ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Չամառոտագիր:** Այսպիսով, ռիսկերի դասակարգման ժամանակ անհրաժեշտ է հետևել այն սկզբունքին, ըստ որի ռիսկերի դասակարգումը պետք է մշակվի ամեն գործունեության համար առանձին՝ կախված գործունեության ծավալից և բարդության աստիճանից: Ռիսկի դասակարգման հետ միաժամանակ շատ կարևոր է նրանց արդյունավետ գիտականորեն հիմնավորված կառավարումը: Ռիսկերի կառավարման արդյունավետ կառույցների բացակայությունը որպես որոշումների կայացման համակարգի մի մաս, բերում է անցանկալի հետևանքների և խոշորագույն ընկերությունների սննկացմանը:

***Բանալի բառեր.** ռիսկ, ռիսկային իրավիճակ, տեսակ, ձեռնարկատեր, կորուստ, դասակարգում, վնաս, կառավարում, փուլ, վերլուծություն, ռիսկի գնահատում:*

## КЛАССИФИКАЦИЯ РИСКОВ И ЭТАПЫ ИХ УПРАВЛЕНИЯ

**РУЗАННА СТЕПАНОВНА АЛОЯН**

*младший научный сотрудник*

*Института экономики им.М. Котаняна НАН РА*

**Аннотация:** Таким образом, при классификации рисков важно следовать принципу, согласно которому классификация рисков должна разрабатываться отдельно для каждого вида деятельности в зависимости от объема деятельности и степени сложности. Одновременно с классификацией рисков очень важно иметь эффективное научно-обоснованное управление. Отсутствие эффективных структур управления рисками в рамках процесса принятия решений приводит к нежелательным последствиям и банкротству крупнейших компаний.

**Ключевые слова:** *риск, рисковое событие, вид, предприниматель, потеря, классификация, опасность, управление, этап, анализ, оценка риска.*

## CLASSIFICATION OF RISKS AND STAGES OF THEREOF MANAGEMENT

**RUZANNA STEPAN ALOYAN**

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Thus, while classifying various types of risks the following principle needs to be applied: for each type of economic activity respective risks need to be identified and classified, depending on the specifics and complexity of the given type of activity. Along with risk classification, the effective and scholarly-grounded methods on the management of thereof are highly stressed. The lack of institution and or unit being in charge of effective risk management as a part of decision-making system leads to undesirable consequences and bankruptcy of large companies.

**Keywords:** *Risk, risky situation, type, entrepreneur, loss, classification, damage, management, stage, analysis, risk assessment.*

**ԷՐԱ ԱՐԿԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆ**, *աշխարհ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր,*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

**ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԵԿՈՐԳՅԱՆ**  
*Տնտեսագետ, մագիստրանտ*

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: ՓՄՁ-ները ներկայացնում են արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը:

Եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ տալով ՀՆԱ-ի 40-60%-ը:

ՓՄՁ ոլորտի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմել անցումային տնտեսություններին բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ ստեղծելով հետագա տնտեսական աճի համար: Վերջին տարիներին Կենտրոնական Եվրոպայի անցումային տնտեսությամբ երկրներում արդյունաբերական գործընթացների անկումն ու դրանով պայմանավորված գործազրկության աճը զգալիորեն մեղմացվեց ՓՄՁ ոլորտում նպատակային քաղաքականության շնորհիվ:

Սակայն, ելնելով ՓՄՁ ոլորտի առանձնահատկություններից, այդ զարգացումը պայմանավորված է դրա զարգացմանն ու աջակցմանն ուղղված պետական քաղաքականության և ռազմավարության առկայությամբ:

ՓՄՁ-ների ռազմավարական կարևորությունը պայմանավորված է հետևյալով.

- ՓՄՁ-ներն առավել փոքր ներդրումների հաշվին և կարճ ժամանակահատվածում կարող են ապահովել զգալի թվով նոր աշխատատեղեր, էապես բարելավելով աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը՝ լուծելով մի շարք լուրջ սոցիալական խնդիրներ:
- Հաճախ նոր ՓՄՁ-ների ստեղծմամբ առավել արդյունավետ է ընթանում պարապուրդի մատնված և ոչ շահութաբեր խոշոր ձեռնարկությունների վերակառուցման ու արդիականացման գործընթացը:



- ՓՄՁ-ներն առավել արդյունավետությամբ են օգտագործում տեղական հանքահումքային ռեսուրսները և նվազեցնում երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից:
- ՓՄՁ-ներում համեմատաբար արագ և փոքր ծախսերով են ներդրվում նոր տեխնոլոգիաներն ու նորարարությունները:
- ՓՄՁ-ներում արտադրվող ապրանքատեսակները մրցակցության մեջ են մտնում ներմուծվողների հետ՝ դրանք փոխարինելով տեղական արտադրատեսակներով:
- ՓՄՁ-ները, շնորհիվ իրենց ճկունության, շատ ավելի արագ են հարմարվում շուկայի պահանջներին, յուրացնելով նոր ապրանքատեսակների արտադրությունը և սպասարկման արդիական ձևերը:
- ՓՄՁ-ների զարգացումը տարածաշրջաններում էապես նպաստում է տվյալ երկրում նպատակային քաղաքականության իրականացմանը:
- ՓՄՁ-ների զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման գրավականն է:

Ի վերջո, իրենց ռազմավարական կարևորությունից և հետագա զարգացման հնարավորություններից ու առանձնահատկություններից ելնելով ՓՄՁ-ները նպաստում են տնտեսության բոլոր ճյուղերի և ոլորտների աշխուժացմանն ու վերակենդանացմանը:

Հայաստանում շուկայական տնտեսության անցման քաղաքականության իրականացմամբ է պայմանավորված 1991 թվականից սկսված սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը: Այն սկսվեց գյուղատնտեսական հողատեսքերի սեփականաշնորհմամբ և մասնավոր գյուղացիական տնտեսությունների ձևավորմամբ:

Սեփականաշնորհման գործընթացը շարունակվեց առևտրի և սպասարկման օբյեկտների, այնուհետև՝ նաև արտադրական կազմակերպությունների ապապետականացմամբ: Արդյունքում՝ Հայաստանում ձևավորվեց ձեռնարկատիրության մասնավոր հատվածը:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման քաղաքականությունը պետք է ուղղվի նշված հիմնախնդիրների հաղթահարմանն ու նպաստի ձեռնարկատիրության զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: ՓՄՁ հիմնախնդիրների լուծումը զգալի քայլ կլինի երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի գործում:

ՓՄՁ ոլորտի յուրահատկությունները, նրա ընձեռած հնարավորությունները և միջազգային փորձը թույլ են տալիս վստահորեն խոսել Հայաստանում այդ ոլորտի զարգացման համակարգված պետական քաղաքականության անհրաժեշտության ու հրատապության մասին:

ՓՄՁ զարգացման պետական քաղաքականությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների վրա:

Ելնելով երկրի տնտեսական և սոցիալական առողջացման քաղաքականության մեջ ՓՄՁ-ների հատկացվող դերից, ՓՄՁ զարգացման պետական քաղաքականությունը կոչված է նպաստել հետևյալ նպատակների իրականացմանը: Այն է. փոքր և միջին ձեռնարկատիրության, որպես ժամանակակից տնտեսության կարևոր բաղկացուցիչ տարրի, զարգացման նպատակներն առաջին հերթին առնչվում են տնտեսական դաշտին:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրությունը ներկայացված է հատկապես գործող սահմանափակ պատասխանատվությամբ և փակ բաժնետիրական ընկերություններով, արտադրական կոռպերատիվներով և մասնավոր ձեռնարկություններով:

Այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք, 2016թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում գործող ՓՄՁ-ները՝ ըստ գործունեության ոլորտների:

*Աղյուսակ 1*

**ՓՄՁ սուբյեկտներն ըստ գործունեության ոլորտների (2016)<sup>1</sup>**

Անվանում	գերփոքր	փոքր	միջին
Առևտուր	34880	979	145
Ծառայություններ	6072	1217	352
Արտադրություն	6790	1062	289
այլ տարատեսակներ	10713	1004	174


Վերը նշված աղյուսակի տվյալները փաստում են այն մասին, որ առևտրի, ծառայությունների, արտադրության և այլ բիզնեսի ձևերում գերիշխում են գերփոքր ձեռնարկությունները, որը ենթադրում է համապատասխան միջոցառումների իրականացում՝ Հայաստանի մարզերի հավասարաչափ զարգացման ապահովման համատեքստում: Պետք է նշել, որ փոքր և միջին ձեռնարկությունների մեծ մասը գտնվում է Երևանում ու մոտակա մարզերում՝ Կոտայքում, Արմավիրում, Արարատում և այլն:

Փոքր և միջին գործող ձեռնարկությունների քանակը Երևանում կազմում է 33895 ձեռնարկություն (53,25%)՝ Հայաստանում ընդհանուր գործող տնտեսավարող սուբյեկտների քանակի նկատմամբ: Ինչպես հայտնի

<sup>1</sup> Данные официального сайта Национальной статистической службы Республики Армения, <http://www.armstat.am>.

է, փոքր և միջին բիզնեսի զարգացումն ունի մեծ դերակատարում ՀՀ տնտեսության արդիականացման գործում:

ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2016թ.-ին կազմել է գրեթե 33%, ինչի մասին է վկայում ստորև բերված գծապատկերը:



**Գծապատկեր 1. ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (2008-2016թթ.)<sup>1</sup>**

Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման նպատակային քաղաքականության կիրառման արդյունքում կավելանա վերջիններիս քանակը, հատկապես արտադրության ոլորտում, հետևաբար և զգալիորեն կաճեն արտադրության ծավալները: Դա կփոխհաստուցի խոշոր ձեռնարկություններում արտադրության ծավալների անկումը: Հայաստանի ներքին շուկայում գործող տնտեսավարող միավորների թվի աճը կբարձրացնի մրցակցությունը, որի հետևանքով էականորեն կբարձրանա հայրենական ապրանքների որակը: ՓՄՁ-ների քանակի աճը, խթանելով մրցակցությունը ներքին շուկայում, ի վերջո կբարձրացնի վերջինիս տարողունակությունը (ծավալները): Բարձրորակ ապրանքների արտադրությունը կնպաստի ներմուծման ծավալների զգալի կրճատմանը և արտահանման աճին, որի հետևանքով կմեղմվի առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքր ձեռնարկությունները խոշորների համեմատությամբ հիմնականում ներքին նյութատեխնիկա-

<sup>1</sup> Данные официального сайта Национальной статистической службы Республики Армения, <http://www.armstat.am/am/?nid=82>.

կան ռեսուրսներն են օգտագործում, ՓՄՁ-ների զարգացումը կնպաստի տեղական հումքի առավել արդյունավետ օգտագործմանը, միաժամանակ օպտիմալ և (կամ) նվազագույնի հասցնելով ներմուծվող հումքի ու կիսաֆաբրիկատների ծավալները:

ՓՄՁ զարգացման քաղաքականությունը, պետական համակարգված տարածաշրջանային ծրագրերի իրականացումով կնպաստի մարզերի տնտեսական զարգացմանը, նրանց միջև գոյություն ունեցող անհամամասնությունների հաղթահարմանը, տարածաշրջանների միջև տնտեսական կոռպերացիայի զարգացմանը:

Փոքր և միջին արտադրությունների խրախուսմանն ու զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման արդյունքում տեղի կունենա առևտրի ոլորտից ֆինանսական միջոցների մի մասի հոսք արտադրության ոլորտ:

Արագ արձագանքելու համար շուկայի հարափոփոխ պահանջներին, փոքր ձեռնարկությունները, շնորհիվ իրենց բնորոշ տեխնոլոգիական ճկունության և կառավարման համակարգի պարզության, ավելի հեշտությամբ ու ավելի քիչ ներդրումներով կարող են դիվերսիֆիկացիայի ենթարկել (ընդլայնել) իրենց արտադրատեսակները:

Այսպիսով, Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացման տնտեսական նպատակներն են<sup>1</sup>

- արտադրության ծավալների զգալի աճը,
- ստվերային տնտեսության կրճատումը,
- ձեռնարկությունների մրցակցության բարձրացումը,
- հայրենական ապրանքների որակի աճը,
- ներմուծման կրճատումը, արտահանման ծավալների աճը,
- ներքին նյութատեխնիկական ռեսուրսների առավելագույնս օգտագործումը,
- մարզերի տնտեսական զարգացումը:

ՓՄՁ-ների վիճակն անմիջականորեն ազդում է երկրում տիրող սոցիալական վիճակի և պետության վարած քաղաքականության վրա:

ՓՄՁ-ների թվաքանակի աճը զգալի թվով նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն կընձեռի՝ կրճատելով ընդհանուր տնտեսական անկման հետևանքով առաջացած գործազրկությունը: Ձեռնարկատիրության զարգացումը երկրում անմիջականորեն կազդի բնակչության

---

<sup>1</sup> Бабалян Э.А., Меликян С.С. Развитие предпринимательской деятельности в Республике Армения, с. 40-41, Ереван 2006.

լայն խավերի դրամական եկամուտների աճի վրա և կբարձրացնի նրանց վճարունակությունը:

Փոքր ձեռնարկատիրության զարգացումը Հայաստանում առավել լայն հնարավորություններ կստեղծի անհատի ունակությունների դրսևորման և դրա հավասար պայմանների ստեղծման համար, ինչն ի վերջո կնպաստի Սահմանադրության հիմնական դրույթներից մեկի՝ սոցիալական արդարության ամրապնդմանը:

Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման համար նպաստավոր պայմանների առկայության դեպքում կնվազի բնակչության արտահոսքը, ինչպես նաև կխթանվի ներհոսքը, կբարելավվի երկրի ժողովրդագրական իրավիճակը:

Տարածաշրջանային նպատակային տնտեսական քաղաքականության իրականացման արդյունքում կամրապնդվեն Հայաստանի սահմանամերձ շրջանները:

Այսպիսով՝ Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացման քաղաքական նպատակներն են՝

- սահմանամերձ շրջանների ամրապնդումը,
- միջին խավի ձևավորումն ու ամրապնդումը,
- պետության միջազգային վարկի բարձրացումը:

Հայաստանում ՓՄՁ աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմներն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծել ՓՄՁ հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը և ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը:

Հայաստանում ՓՄՁ զարգացման և աջակցության ծրագրերի մշակմանն ու իրականացման գործընթացում նշանակալի դեր ունեն նաև միջազգային և օտարերկրյա կազմակերպություններն ու դրանց կողմից իրականացվող ծրագրերը<sup>1</sup>:

Վերջին տարիներին Հայաստանում մեծ աշխատանք է կատարվել շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման ուղղությամբ: Հիմնականում ստեղծված է ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող իրավական դաշտը: Միաժամանակ ձեռնարկատիրության և մասնավորապես ՓՄՁ ոլորտներում գերակա ուղղությունների զարգաց-

<sup>1</sup> Бабаян Э.А., Меликян С.С. Развитие предпринимательской деятельности в Республике Армения, Ереван 2006 , с. 52-53 .

ման համար անհրաժեշտ է կիրառել հարկային խթաններ նոր ձեռնարկությունների ստեղծման, նոր տեխնոլոգիաների ներդրման, առևտրային բանկերի միջոցները ձեռնարկությունների ֆինանսավորմանն ուղղելու նպատակով:

Հայաստանում ձեռնարկատերերն իրենց գործունեության և նոր ձեռնարկությունների ստեղծման ժամանակ բախվում են մի շարք հիմնախնդիրների, որոնց մեջ առաջնային տեղ է զբաղեցնում ֆինանսականը: Փորձագիտական հետազոտությունները հաստատում են, որ ՓՄՁ-ների վարկային ու ֆինանսական աջակցությունը խիստ սահմանափակ է և անբավարար: Հատկապես ակնհայտ է փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հարցերում պետական օժանդակության բացակայությունը:

Միաժամանակ առկա է գործող ֆինանսավորման աղբյուրներին ՓՄՁ սուբյեկտների անհասանելիությունը: Դա հիմնականում բացատրվում է.

- վարկերի տոկոսադրույքների բարձր լինելով,
- միջինժամկետ և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությամբ,
- վարկերի դիմաց տրամադրվող երաշխիքների բացակայությամբ,
- վարկերի գրավային անբավարար ապահովվածությամբ,
- բիզնես ծրագրերի ցածր որակով,
- վարկի ձեռքբերման գործընթացին առնչվող խնդիրներով:

Փոքր և միջին ձեռնարկությունների նկատմամբ պետության կողմից իրականացվող ֆինանսավարկային քաղաքականության հիմնական նպատակը պետք է դառնա ֆինանսական շուկայում ՓՄՁ սուբյեկտների անբարենպաստ վիճակի բարելավումը, ինչպես նաև առանձին, ռազմավարական կարևորություն ունեցող ծրագրերի ֆինանսավորումը:

ՓՄՁ ֆինանսավորման հետ կապված հիմնախնդիրների լուծման գործում կարևորագույն քայլ կհանդիսանա վարկերի երաշխավորման համակարգի ձևավորումը՝ ՓՄՁ վարկերի կառույցի ստեղծման ճանապարհով: Անհրաժեշտ է ներդնել վարկային նոր՝ ավանդական և ոչ ավանդական սխեմաների կիրառման մեխանիզմներ՝ ձեռնարկությունների ֆինանսավորման պայմանների բարելավման համար:

ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման ֆինանսավորման աղբյուրները պետք է լինեն՝<sup>1</sup>

- պետական բյուջեն,
- սեփականաշնորհումից ստացված միջոցները,

---

<sup>1</sup> Жданкина Ю.А., Агафонова М.С. Современные проблемы развития среднего и малого бизнеса в России, Международный студенческий научный вестник, N1, с. 212-222, 2014.

- վարկերի երաշխավորման դիմաց ստացված վճարները,
- միջազգային և օտարերկրյա դոնոր-կազմակերպությունների հատկացումները,
- նվիրատվությունները և այլն:

Համակարգի բաղկացուցիչ մաս պետք է կազմի ՓՄՁ-ներին վարկային երաշխիքների տրամադրող համապատասխան կառույցը և փորձագետների խորհուրդը:

ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման կարևորագույն ուղղություններից է Հայաստանի մարզերի միջև դրանց անհամամասնությունների հաղթահարումը: Հայաստանի յուրաքանչյուր մարզ առանձնահատուկ է ինչպես աշխարհագրական առանձնահատկություններով, այնպես էլ տնտեսության, հատկապես արդյունաբերության և դրա որոշակի ճյուղերի առկայությամբ պայմանավորված յուրահատկություններով:

ՓՄՁ հիմնախնդիրները մարզերում կարելի է բաժանել.

1. Ենթակառուցվածքային՝ կապված ճանապարհների, տրանսպորտային ու հեռահաղորդակցության միջոցների, թերզարգացվածությամբ և (կամ) բացակայությամբ:
2. Բիզնես խորհրդատվության, մենեջմենթի, մարքեթինգի, ուսուցման և տեղեկատվության մատչելիության գործոնը:
3. Ֆինանսների անմատչելիության գործոնը, որն առավել զգալի է մարզերում:
4. Մպասարկման ոլորտի ու հյուրանոցային տնտեսության բացակայությունը և թույլ զարգացած լինելը:

Պետական քաղաքականությունը պետք է ապահովի յուրաքանչյուր մարզի նկատմամբ տարբերակված մոտեցում՝ պետական նպատակային ծրագրերի իրականացման առումով:

Մարզերում ՓՄՁ-ների զարգացման առաջնային ուղղություններից կարող է դառնա արհեստագործությունը, քանի որ այն Հայաստանում հարուստ է ավանդույթներով՝ տեքստիլ, կարի, կաշվի-կոշիկի, քարի (նաև թանկարժեք և կիսաթանկարժեք) մշակման, ձեռագործ գորգագործության, փայտի փորագրության, հախճապակու, ճենապակու, թանկարժեք ու կիսաթանկարժեք մետաղներից զարդերի արտադրության և գեղանկարչության բնագավառում: Արվեստի նմուշները, հատկապես հուշանվերները, ունենալով ազգային դիմագիծ, նաև պետք է կազմեն զբոսաշրջության զարգացման քաղաքականության և ռազմավարության բաղկացուցիչ մաս: ՀՀ կառավարության դերն այստեղ կայանալու է նրանում,

որ խրախուսի արհեստագործական «կլաստերների» ստեղծումն ու զարգացումը: Նախկին, պարապուրդի մատնված արտադրական տարածքները, որոնք ներկայումս չեն օգտագործվում, կարող են հատկացվել արհեստանոցներին:

Հայաստանի տնտեսության համար գերակա ուղղություններ են համարվում բարձր տեխնոլոգիական, նորարարական ներդրումներով, տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործող ձեռնարկությունները: Սակայն առանձին վերցրած փոքր ձեռնարկությունների համար, հիմնականում իրենց թանկության պատճառով, այդպիսի գործունեության ծավալումը գրեթե անմատչելի է: Ձեռնարկության զարգացման համար այս հույժ կարևոր հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է ստեղծել բիզնես գեներատորներ, տեխնոպարկեր, արդյունաբերական գոտիներ: Դրանք կոլեկտիվ հնարավորություններ են ընձեռում այն դեպքերում, եթե առանձին ձեռնարկությունների համար այս կամ այն ծառայությունը մատչելի չէ:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ներկայիս վիճակը՝ փոքր ու միջին բիզնեսի զարգացման խթանման, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման և կայուն տնտեսական աճի ապահովման համար առաջարկվում է հետևյալը.

- պետական մակարդակով ՓՄՁ ոլորտի ընկերությունների ներդրումային գործունեության խթանումը,
- ՓՄՁ ոլորտի ընկերությունների կողմից թողարկվող արտադրանքի ինքնարժեքի նվազեցումը՝ ընկերությունների տեխնիկատեխնոլոգիական վերազինման միջոցով,
- ԵԱՏՄ անդամ-երկրների առաջատար ընկերությունների հետ ՀՀ ՓՄՁ ոլորտի ընկերությունների գործունեության ակտիվացումը,
- ՓՄՁ ոլորտի ընկերությունների մարքեթինգի համակարգի կատարելազորումը,
- ՓՄՁ ոլորտի ընկերությունների գործունեության խթանման նոր գործիքների և մեխանիզմների մշակումն ու ներմուծումը մակրո և միկրո մակարդակներում:

Այսպիսով, փոքր և միջին բիզնեսի զարգացման խթանումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ՀՀ տնտեսության համար, հետևաբար, տվյալ ոլորտի զարգացման ուղղության ընտրությանն անհրաժեշտ է մոտենալ առավելագույն պատասխանատվությամբ:



## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**ԷԲԱ ԱՐԿԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆ**, *աշխարհ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

### **ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*Տնտեսագետ, մագիստրանտ*

**Համառոտագիր:** Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: ՓՄՁ-ները ներկայացնում են արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը:

Եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ տալով ՀՆԱ-ի 40-60%-ը:

ՓՄՁ ոլորտի յուրահատկությունները, նրա ընձեռած հնարավորությունները և միջազգային փորձը թույլ են տալիս վստահորեն խոսել Հայաստանում այդ ոլորտի զարգացման համակարգված պետական քաղաքականության անհրաժեշտության և հրատապության մասին:

***Բանալի բառեր.** փոքր, միջին, ձեռնարկատիրություն, երկիր, միջազգային փորձ, տնտեսական, սոցիալական, մանրածախ, մեծածախ, առևտուր, ծառայություններ, սպասարկման ոլորտ:*

## СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПОЛИТИКИ СТИМУЛИРОВАНИЯ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В РА

**ЭБА АРКАДЬЕВНА БАБАЯН**, *к.географ.н., профессор  
ведущий научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

### **АРАМ АШОТОВИЧ ГЕВОРГЯН**

*экономист, магистрант*

**Аннотация:** Малые и средние предприятия являются основным гарантом экономической и социальной стабильности любой страны. МСП представлены производственными и перерабатывающими предприятиями, промыслами, объектами оптовой и розничной торговли, фермерскими хозяйствами и сферой услуг.

В Европейской экономической зоне 2/3-их всей занятости обеспечивают малые и средние предприятия, дающие порядка 40-60% ВВП.

Особенности сферы МСП и их возможности, а также международный опыт позволяют с уверенностью утверждать о необходимости развития и совершенствования в Армении данной сферы, на основе регулирующей государственной политики.

*Ключевые слова:* малое, среднее, предпринимательство, страна, международный опыт, экономический, социальный, оптовая, розничная, торговля, услуга, сфера обслуживания.

## **IMPROVEMENT OF THE POLICY AIMED AT STIMULATING SMALL AND MEDIUM-SIZED ENTREPRENEURSHIP IN ARMENIA**

**EBA ARKADI BABAYAN**, *Candidate of Sciences (Geography)*  
*Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ARAM ASHOT GEVORGYAN**, *M.A. in Economic*  
*Economist, Graduate student*

**Abstract:** Small and medium-sized enterprises are the main drivers of the economic and social stability in any country. The SMEs represent the following industries of the economy: industry including manufacturing; wholesale and retail trade, agriculture, services.

In the European economic zone, the two third of employment is ensured by the small and medium-sized enterprises accounting for 40-60% of the GDP.

The specifics and the opportunities of the SME sector, and the international best practices permit us to stress the need and urgency for a systemic and coordinated state policy to ensure the development of the sector in Armenia with confidence.

*Keywords:* Small, medium-sized, entrepreneurship, country, international practice, economic, social, wholesale, retail, trade, service, the services industry

## **ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Շուկայական տնտեսության պայմաններում կարևորվում է ՓՄՁ ոլորտի զարգացման խթանումը, քանի որ վերջինս հանդիսանում է ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման, զբաղվածության ապահովման, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման, պետական բյուջեի եկամուտների ավելացման, ինչպես նաև հանրապետությունում տնտեսական աճի խթանման կարևորագույն նախապայմաններից մեկը: Դրանով պայմանավորված՝ փոքր և միջին ձեռնարկության զարգացման խթանման հիմնահարցերը գտնվում են պետական կառավարման մարմինների, գործարարների և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են<sup>1</sup>.

- **գերփոքր**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը:

- **փոքր**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը:

- **միջին**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային

---

<sup>1</sup> «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՀ ՊՏ 2000.12.30/33 (131), <http://www.arlis.am/>.

արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

Միաժամանակ մի քանի ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների պատկանելությունը ՓՄՁ սուբյեկտներին որոշվում է դրանց կողմից իրականացվող գործունեության գերակշիռ ոլորտի չափորոշիչներով:


ՓՄՁ սուբյեկտ չեն համարվում վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, գրավատները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատները և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունները:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ների պետական աջակցության հիմնական ուղղություններն են հանդիսանում՝

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը,
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանն աջակցություն,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը,
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը,
- պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

Ինչպես հայտնի է, ժամանակակից աշխարհում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտությունն ազգային տնտեսությունների վերակառուցման և զարգացման գլխավոր հրամայականներից է: Այն շուկայական հարաբերությունների արմատավորման և տնտեսական զարգացման ու առաջընթացի հիմնական գրավականն է: ՓՄՁ-ների զարգացումը կենսական անհրաժեշտություն է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների համար, քանի որ այն նպաստում է ուժեղ և դինամիկ մասնավոր հատվածի ձևավորմանը և հնարավորություն է տալիս կարճ ժամանակամիջոցում ապահովել տնտեսական աճ՝ միաժամանակ մեղմացնելով անցումային փուլին բնորոշ անցանկալի երևույթ-

ները<sup>1</sup>: ՓՄՁ զարգացումը նպաստում է անկախ ու ինքնաբավ ձեռնարկատերերի խավի ստեղծմանը, ներքին շուկայի ծավալների ընդլայնմանը, արտաքին շուկաներում տեղական ապրանքների/ծառայությունների մրցունակության բարձրացմանը և արտահանման ծավալների ավելացմանը, ինչպես նաև պարապուրդի մատնված արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանն ու երկրում քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունության ապահովմանը: Ստորև փորձենք ներկայացնել ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում գծապատկեր 1-ի միջոցով:



**Գծապատկեր 1. ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (2008-2016թթ.)<sup>2</sup>**

Վերոբերյալ գծապատկերի տվյալները վկայում են, որ 2016թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նվազել է 8,7 տոկոսային կետով: Սակայն, պետք է նշել, որ 2016թ.-ին 2015թ.-ի համեմատությամբ նկատվել է նշված ցուցանիշի աճ՝ 1 տոկոսային կետով: Ակնհայտ է, որ ՓՄՁ ոլորտի զարգացումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ՀՀ տնտեսության հետագա զարգացման համար, հետևաբար, ցանկալի է, որ ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տարիների ընթացքում մոտենա գոնե 45-50%-ի, քանի որ զարգացած երկրներում այն կազմում է շուրջ 70%:

<sup>1</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում (2004-2005թթ.), <https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/3079ae2eb.pdf>.  
<sup>2</sup> Арамян А. Плоды господдержки "малышей"?; Общественно-политическая газета "Голос Армении", 15.07.2016, <http://www.golosarmenii.am/article/43163/plody-gospodderzhki-malyshej>.

Այժմ փորձենք ներկայացնել նաև ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշները ստորև բերված աղյուսակի միջոցով:

*Աղյուսակ 1*

**ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշները (01.01.2017)<sup>1</sup>**

<b>Անվանումը</b>	<b>գերփոքր</b>	<b>փոքր</b>	<b>միջին</b>	<b>ընդամենը</b>
Ակտիվ հարկատուների թվաքանակը	71606	5272	1368	78246
Աշխատատեղերի թիվը	101584	91947	108470	302001
Ֆինանսական շրջանառության ծավալը, մլն ՀՀ դրամ	578 135,7	593 441,4	649 691	1 817 268,1
Վճարված հարկերի գումարը, մլն ՀՀ դրամ	89 646,1	110 924,4	193 284, 6	393 855, 2

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 01.01.2017թ.-ին ակտիվ հարկատուների թվաքանակով առաջատար են հանդիսացել գերփոքր ընկերությունները (71606), աշխատատեղերի թվով՝ միջինները (108470), ֆինանսական շրջանառության ծավալով՝ միջինները (649 691 մլն դրամ), վճարված հարկերի գումարով՝ կրկին միջինները (193 284, 6 մլն դրամ): Հուսանք, որ ապագայում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշները աստիճանաբար կբարելավվեն՝ նպաստելով ՓՄՁ մրցունակության մակարդակի բարձրացմանը, երկրի տնտեսության զարգացմանը և ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը:

Տնտեսական արդի իրողության մեջ անմերժելի է գիտական նվաճումների, ուսումնասիրությունների, ժամանակակից մոտեցումների և նորարարական արդյունքի կիրառման անհրաժեշտությունը՝ արդյունավետ, մրցունակ և կայուն տնտեսավարման ապահովման տեսանկյունից: Այս հրամայականն առավել կարևոր է դառնում ՓՄՁ սուբյեկտների համար, ելնելով փոքր և միջին ընկերություններին բնորոշ առանձնահատկություններից, երբ նման ընկերությունները չեն կարողանում ֆինանսավորել նորարարական մեթոդների կամ արդյունքի, արտադրանքի մշակումն ու ստեղծումը, մյուս կողմից, նույն առանձնահատկություն-

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կայքում տեղադրված պաշտոնական տվյալների հիման վրա, <http://mineconomy.am/hy/449>.

ներից ելնելով, չեն կարողանում ներդնել նորարարական մեթոդներ և տեխնոլոգիաներ: Այս համատեքստում առաջանում են երկու հիմնական բացեր. կառավարման ոլորտում նորարարական մեթոդների բացակայություն և նորարարական տեխնոլոգիաների ներդրման բացակայություն, նորարարական արդյունքի ստեղծման ցածր մակարդակ: Այս բացերը լրացնելու համար կպահանջվի ներքոհիշյալ միջոցառումների իրականացումը<sup>1</sup>.

- ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,
- տնտեսավարող սուբյեկտների (բիզնես ասոցիացիաների) և ուսումնական հաստատությունների միջև համագործակցության խթանում և ուժեղացում,
- ՓՄՁ-ների կողմից նորարարական հետազոտությունների և տեխնոլոգիաների, արդյունքի ստեղծման ու ներդրման համար ֆինանսական մատչելի գործիքների ստեղծում, երկարաժամկետ վարկերի տրամադրում առանձին նպատակային ծրագրերի միջոցով,
- ՓՄՁ-ների կողմից նորարարական արտադրանքի արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ գիտական և խորհրդատվական կազմակերպությունների ներգրավմամբ, ֆինանսական երկարաժամկետ մատչելի վարկային ռեսուրսների տրամադրում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական ռազմավարական նպատակներն են հանդիսանում<sup>2</sup>.

- Ինստիտուցիոնալ, օրենսդրական և գործառնական միջավայրի բարելավում՝ ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման համար,
- ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորման հասանելիության բարելավում,
- Ձեռնարկատիրական կարողությունների (մշակույթի) խթանում և զարգացում,
- ՓՄՁ սուբյեկտների ներքին և արտաքին մրցունակության բարձրացում,
- Պետություն-մասնավոր հատված երկխոսության բարելավում,
- ՓՄՁ ոլորտի զարգացմանն աջակցող կառույցների ուժեղացում,

---

<sup>1</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարություն, ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված, <https://www.e-gov.am/protocols/item/551/>, <https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/b10101d41c.pdf>.

<sup>2</sup> Նույն տեղում:

- Կանանց ձեռներեցության խթանում, ինչպես նաև սկսնակ գործարարներին աջակցության տրամադրում:

Հասկանալի է, որ սկսնակ գործարարներին աջակցության ցուցաբերումը կարևորվում է այն առումով, որ վերջիններս չունեն բավարար գիտելիքներ և փորձ, հաճախ չեն տիրապետում բավարար ֆինանսական միջոցների, ուստի պետության աջակցությունը կարող է զգալի դեր ունենալ նրանց կայացման և հետագա զարգացման համար: Սկսնակ գործարարներին աջակցությունը կարևորվում է նաև նոր աշխատատեղերի ստեղծման, գործազրկության մակարդակի կրճատման առումով: Այս նպատակի իրականացման համար նույնպես միջոցառումներ են նախատեսված փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության տարեկան ծրագրերով, որոնք նախատեսվում է շարունակել և ընդլայնել ապագայում:

Նշված նպատակների իրականացման արդյունքում միջնաժամկետ հեռանկարի համար տնտեսությունում ուղենիշ կլինի ՓՄՁ-ների արդյունքի բարձրացումը և ՀՆԱ-ում մինչև 40 տոկոսի կշռի կայուն ապահովման համար հիմքի ստեղծումը<sup>1</sup>: ՓՄՁ-ների դիրքի ամրապնդումը և զարգացումը կարտահայտվի նաև դրանց մրցունակության մակարդակի բարձրացմամբ և դա բնորոշող հիմնական ցուցանիշով՝ աշխատանքի արտադրողականության աճով: Ներկայումս, կախված տնտեսության ճյուղից, Եվրամիության երկրների ՓՄՁ-ների արտադրողականությունը 3-ից 5 անգամ ավելի է հայկական ՓՄՁ-ների համանման ցուցանիշից: Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է տեղական ՓՄՁ սուբյեկտների այդ ցուցանիշն ավելացնել մինչև 2 անգամ՝ նպաստելով նաև արտահանման մեջ ՓՄՁ-ների արտադրանքի տեսակարար կշռի աճին: Փոքր և միջին ձեռներեցության կայուն զարգացման գրավական հանդես կգա ՓՄՁ-ների նորարարական գործունեությունը, նորարարության և գիտելիքի, մարդկային կապիտալի զարգացման հիման վրա տնտեսական գործունեության իրականացումն ու գործարար նախաձեռնությունների իրագործումը: Միաժամանակ, կարևորվում է արտադրության հենքային և գերակա ճյուղերի բազմազանեցման քաղաքականությունը, այսինքն՝ ՓՄՁ-ների հիմնումը գիտության բազայի վրա՝ զարգացնելով այն ոլորտները, որտեղ կա գիտական ներուժ:

Անշուշտ, նշված բոլոր նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կլինի նաև տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում պահպանել մրցակցության ապահովման, տնտեսավա-

---

<sup>1</sup> <https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/b10101d41c.pdf>.



րողների համար հավասար պայմանների ստեղծման, իրավական բարենպաստ դաշտի ստեղծման սկզբունքները, ՓՄՁ-ների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության հնարավորինս քիչ փոփոխությունների իրականացումը, վարչարարության և վարչական կանոնակարգերի՝ ՓՄՁ-ներին առնչվող մասով հնարավոր մեղմ կարգավորումների նախատեսումը, միաժամանակ դրանց առանց խտրականության, հետևողական ու անշեղ կատարմամբ:

Ինչպես հայտնի է, ներկայում Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորումն ապահովվում է գլխավորապես բանկային վարկավորման և նորաստեղծ ձեռնարկությունների ու գյուղմթերք արտադրողների համար նախատեսված հասցեական աջակցության որոշ սխեմաների միջոցով: Դեռևս լիարժեք կայացած չեն ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրները, և դրանք կարող են շահել իրավական առավել կայացած դաշտի պարագայում, մասնավորապես, լիզինգային գործունեությունից, որը ՓՄՁ սուբյեկտների համար կարող է լինել բանկային ֆինանսավորման այլընտրանք<sup>1</sup>:


Ժամանակակից տնտեսական պայմաններում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության բարելավման համար հատկապես պահանջարկված կարող է դառնալ ինովացիոն լիզինգը, որի զարգացման հիմնական գործոնները ներկայացված են ստորև բերված գծապատկեր 2-ում:

Տնտեսագիտական գրականությունից հայտնի է, որ «ինովացիոն լիզինգ» կատեգորիան արտացոլում է ինովացիոն գործունեության ընթացքում հիմնական միջոցների շարքին դասվող շարժական և անշարժ գույքի հետ կապված տնտեսական հարաբերությունների յուրահատուկ տեսակը դրա սուբյեկտների՝ լիզինգատուի, լիզինգառուի և լիզինգի օբյեկտի վաճառողի միջև: Ինովացիոն է համարվում այնպիսի գործունեությունը, որի նպատակն է հանդիսանում որևէ նորույթ պարունակող նյութական արժեքների արտադրությունը, փոխանակությունը, բաշխումը և սպառումը: Այս գործունեությունը կարող է ուղղված լինել ինչպես նոր, այնպես էլ արդեն գոյություն ունեցող ապրանքների արտադրությանը՝ սակայն նոր եղանակներով կամ տեխնոլոգիաներով: Այսպիսով՝ ինովացիոն լիզինգը կարելի է սահմանել որպես ինովացիոն գործունեությունը կամ շուկայում ինովացիոն արտադրանքի առաջնորդումն ապահովող ներդրումների տա-

---

<sup>1</sup> Երկրի բնութագիրը՝ ըստ փոքր բիզնեսի ակտի. Հայաստան, փմձ քաղաքականության համաթիվ, Արևելյան գործընկերության երկրներ 2016, Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման գնահատում, էջ 17, [http://www.oecd.org/global-relations/Armenia\\_SME\\_PI\\_Country\\_chapter\\_ARM.pdf](http://www.oecd.org/global-relations/Armenia_SME_PI_Country_chapter_ARM.pdf).

րատեսակ<sup>1</sup>: Հասկանալի է, որ ճգնաժամային տնտեսության պայմաններում հենց այս տեսակի ներդրումներն են ամենապահանջարկվածները, քանի որ դրանք կարող են դրական լուրջ տեղաշարժեր իրականացնել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության մեջ:



Գծապատկեր 2. Ինովացիոն լիզինգի զարգացման հիմնական գործոնները<sup>2</sup>

Անշուշտ, փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակի ավելացման, նրանց կողմից թողարկվող արտադրանքների և ծառայությունների ծավալների մեծացման համար անհրաժեշտ է նաև հարկային բեռի նվազեցումը, հատկապես սկսնակ ընկերությունների համար: ՓՄՁ ոլորտի

<sup>1</sup> Храмова Е. В. Инновационный лизинг в управлении предприятием // В сборнике «Управление организацией: диагностика, стратегия, эффективность», 2004, с. 164-165, <http://bgscience.ru/lib/10527>

<sup>2</sup> Доминирующие факторы развития инновационного лизинга, <http://www.market-journal.com/teorijalizinga/19.html>

հարկադրման առաջատար արտասահմանյան փորձի ուսումնասիրության հիման վրա կարող ենք առանձնացնել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հարկային խթանման հետևյալ ուղիները<sup>1</sup>.

- Հարկային դրույքաչափերի նվազեցում, որն, առաջին հերթին, վերաբերում է եկամտահարկին, գույքահարկին և ԱԱՀ-ին: Մասնավորապես, ԱՄՆ-ում կիրառվում է եկամտահարկի երկու դրույքաչափ՝ փոքր բիզնեսի համար (15-28%) և կորպորացիաների համար (34-46%):
- Եկամտահարկի գծով «հարկային արձակուրդների» տրամադրում, հատկապես սկսնակ ընկերություններին: ՓՄՁ խթանման տվյալ մեթոդը կիրառվում է ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Սլովակիայում և Չեխիայում:
- Հատուկ հարկային ռեժիմների ներդրում: Այս մոտեցումը մեծ կիրառություն ունի Ֆրանսիայում, Իսպանիայում, ինչպես նաև ԱՊՀ որոշ երկրներում:
- Հարկադրման պրոգրեսիվ սանդղակի կիրառում: Այս մեթոդը հաջողությամբ կիրառվում է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ավստրիայում, Բելգիայում, Շվեյցարիայում:
- Ոչ մեծ շրջանառությամբ փոքր ընկերություններին ԱԱՀ-ի վճարումից ազատում: Այս մոտեցումը կիրառվում է Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում և Չեխիայում:
- Ինովացիոն ուղղվածությամբ փոքր ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրում: Մասնավորապես, Ճապոնիայում նորագույն տեխնոլոգիաներով արտադրանք թողարկող փոքր ընկերությունների 50%-ին տրամադրում են հարկային արտոնություններ:
- Արտադրության հիմնական միջոցների արդիականացման նպատակով հարկային արտոնությունների տրամադրում: Այս մոտեցումը հաջողությամբ կիրառվում է ԱՄՆ-ում:
- Գործարարների առանձին խմբերի, գործունեության առանձին տեսակների և գործարարության առանձին ոլորտների աջակցությանն ուղղված հարկային քաղաքականության իրականացում: Այս մոտեցումը հաջողությամբ կիրառվում է Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում:

Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության հարկային խթանման մոտեցումներից ՀՀ-ում կիրառվում են հարկային դրույքաչափերի նվազեցման, հատուկ հարկային ռեժիմների ներդրման, ինովացիոն

---

<sup>1</sup> Филонова Э.А., Юхновец Л.Ю., Гладуша Б.В. Налоговое стимулирование малого и среднего предпринимательства: зарубежный опыт, Научно-практический журнал “Управление и экономика в XXI веке”, № 1/2017, с. 24-28.

ուղղվածությամբ փոքր ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրման և այլ մոտեցումները, որոնք դրական ազդեցություն կգործեն ՓՄՁ ոլորտի զարգացման վրա:

Պաշտոնական տվյալների համաձայն, «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման» 2017 թվականի ծրագրի իրագործման համար ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 152,600,000 ՀՀ դրամ<sup>1</sup>: Հաշվետու ժամանակահատվածում «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման» 2017 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 4700 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 11,487 աջակցություն:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 3.3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96.7%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 1,126, Արարատի մարզում՝ 902, Արմավիրի մարզում՝ 410, Գեղարքունիքի մարզում՝ 1,029, Լոռու մարզում՝ 2,328, 3, Կոտայքի մարզում՝ 1,958, Շիրակի մարզում՝ 888, Սյունիքի մարզում՝ 407, Վայոց ձորի մարզում՝ 1057, Տավուշի մարզում՝ 1,003, Երևան քաղաքում՝ 379:

---

<sup>1</sup> «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, էջ 2, <https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/1b3e1a12f0.pdf>.

**Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված աջակցությունը 2017թ.-ին<sup>1</sup>**

<b>Տրամադրված աջակցության ուղղություն</b>	<b>2017թ. ընթացքում տրամադրված աջակցության քանակ</b>
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	464
Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ	246
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	10,337
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	81
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՅ գործունեության շրջանակներում	348
Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	11
<b>Ընդամենը</b>	<b>11,487</b>

Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության ընթացքում մեծապես կարևորվում է նաև հարկային պլանավորումը: Միկրումակարդակում հարկային պլանավորման անհրաժեշտությունը կապված է հարկային օրենսդրության հետ, որը նախատեսում է տարբեր իրավիճակների համար որոշակի հարկային ռեժիմներ, թույլատրում է հարկային բազայի հաշվարկման տարբեր մեթոդների կիրառում և նախատեսում է հարկատուների տարաբնույթ հարկային արտոնություններ<sup>2</sup>:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության բարելավման հետևյալ ուղիները.

1. ՓՄՁ ոլորտում հարկային վարչարարության կատարելագործում,
2. Ինովացիոն և ներդրումային գործունեության խթանում,

<sup>1</sup> «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, էջ 2, <https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/1b3e1a12f0.pdf>.

<sup>2</sup> Մաթևոսյան Ա.Վ., Փոքր և միջին բիզնեսի հարկային պլանավորման հիմնախնդիրները, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, էջ 5:

3. ինովացիոն լիզինգի կիրառում (հատկապես սկսնակ ընկերությունների կողմից),
4. ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում,
5. բիզնեսի օպտիմալ կառուցվածքի ձևավորում:

Այսպիսով, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ՀՀ տնտեսության հետագա զարգացման համար, հետևաբար, դիտարկված հիմնահարցերը պետք է գտնվեն պետության և հասարակության մշտական ուշադրության ներքո:

## **ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒԼԵՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ ԶԱՆԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Սույն հոդվածը նվիրված է ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանման հիմնախնդրին: Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման վրա ՓՄՁ ոլորտի ազդեցությունը, հոդվածում փորձ է արվել բացահայտել փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանման միջոցով ՀՀ տնտեսական վիճակի հետագա բարելավման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է հատկացվել ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման, ինովացիոն լիզինգի կիրառման, հարկային վարչարարության կատարելագործման, ՓՄՁ ոլորտի խթանման պետական քաղաքականության արդյունավետ իրագործման հիմնախնդիրներին: Քանի որ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ՀՀ տնտեսության զարգացման համար, ապա վերջինս պետք է գտնվի պետության և հասարակության ուշադրության կենտրոնում:

***Բանալի բառեր.** տնտեսություն, փոքր և միջին ձեռնարկություններ, ինովացիաներ, ներդրումներ, հարկեր, քաղաքականություն, պետություն, արդյունավետություն, զարգացում:*

## ПРОБЛЕМЫ СТИМУЛИРОВАНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**АРМИНЕ ГРИГОРЬЕВНА ЗАХАРЯН, к.э.н.,**

*научный сотрудник института экономики им. М.Котаняна  
Национальной академии наук Республики Армения*

**Аннотация:** Настоящая статья посвящена проблеме стимулирования деятельности малых и средних предприятий в Республике Армения. Учитывая влияние сферы МСП на развитие экономики РА, в статье сделана попытка выявления возможностей дальнейшего улучшения экономического положения РА посредством стимулирования деятельности малых и средних предприятий. Особое внимание уделено проблемам активизации инновационной и инвестиционной деятельности, использования инновационного лизинга, совершенствования налогового администрирования, эффективного осуществления государственной политики стимулирования сферы МСП. Поскольку стимулирование деятельности малых и средних предприятий имеет важное стратегическое значение для развития экономики РА, то оно должно находиться в центре внимания государства и общества.

**Ключевые слова:** экономика, малые и средние предприятия, инновации, инвестиции, налоги, политика, государство, эффективность, развитие.

## ISSUES ON STIMULATING THE ACTIVITY OF SMALL AND MEDIUM-SIZED ENTERPRISES IN THE REPUBLIC OF ARMENIA

**ARMINE GRIGORI ZAKHARYAN, Ph.D. in Economics**

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** This article discusses the issues on stimulating the activity of small and medium-sized enterprises (SMEs) in the Republic of Armenia. By taking into account the impact of the SME sector on the development of the economy in the Republic of Armenia, the article attempts to identify opportunities to further improve the economic situation in the Republic of Armenia by stimulating the activity of small and medium-sized enterprises. Special attention is paid to the issues of activating the innovations and investment activities, utilizing innovative leasing, increasing the efficacy of tax administration, effective implementation of the state policy to stimulate the SME sector. Since the stimulation of the activity of small and medium-sized enterprises is of strategic importance to the development of the economy in the Republic of Armenia, it needs to be constantly monitored by the government and the society.

**Keywords:** Economy, small and medium-sized enterprises, innovations, investments, taxes, policy, the government, efficacy, development.

## **ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՅԱՆՅԱԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Ազգային ինովացիոն քաղաքականության ներդրման հարցում էական դեր է խաղում հարկային լծակների համարժեք գործադրումը: Նորարարությունների բնագավառի նպատակամետ հարկային խթանման քաղաքականություն են որդեգրել բազմաթիվ զարգացող և զարգացած երկրներ, որոնց հաջողվել է մի շարք խթանող հարկային լծակներով ակտիվացնել նորարարական գործընթացը՝ մասնավորապես նոր տեխնոլոգիաների ներգրավումը, հարմարեցումը և ներդրումը<sup>1</sup>:

Հարկային քաղաքականության համար գոյություն չունի մեկ ընդհանրական մոտեցում: Տարբեր երկրներ առաջնությունը տալիս են այս կամ այն հարկային օրենսդրական խթանին, իսկ դրանք հիմնականում ընտրվում են՝ հաշվի առնելով տվյալ երկրի զարգացման առանձնահատկությունները:

Ինովացիոն գործընթացների պետական կարգավորման կարևորագույն ուղղություններից մեկը ինովացիոն գործունեության հարկային խթանն է: Գերմանիայում, փոքր և միջին բիզնեսի հարկային աջակցությունը հիմնականում ուղղվել է զբաղվածության և մենաշնորհների օրենսդրական սահմանափակումների խնդիրների լուծմանը, իսկ արագ տեխնոլոգիական փոփոխությունների և կառուցվածքային տեղաշարժերի դարաշրջանում, հարկային աջակցության թիրախի հիմնական կենտրոնում եղել է ստեղծագործական փնտրտուքների խրախուսելը, ռիսկեր ստանձնելու պատրաստակամությունը և ձկուտությունը, որը առավելագույն չափով բնորոշ է հենց փոքր և միջին բիզնեսին<sup>2</sup>:

1998-2005 թվականների հարկային բարեփոխումների արդյունքում Գերմանիայում հարկային բեռը փոքր և միջին բիզնեսի վրա նվազել է ձեռնարկատիրական եկամտահարկի դրույքաչափերի, նվազագույն՝ 10 տոկոսային կետով (25-ից մինչև 15%), իսկ առավելագույն՝ 11 տոկոսային

<sup>1</sup> Overview of Singapore Tax Incentives, SINGAPORE TAX INCENTIVES-2013, Rikvin, Pte Ltd <http://www.rikvin.com/taxation/singapore-tax-incentives/>

<sup>2</sup> Абрамов С.В. «Налоговое стимулирование венчурного бизнеса в Германии опыт для России», Экономические науки.-№8 (33), -2007, с, 23-25.



կետով (53-ից մինչև 42%) իջեցնելու, ինչպես նաև առևտրային հարկի փաստացի վճարումների նվազման հաշվին: Փոքր և միջին բիզնեսների վրա հարկային բեռի էական նվազեցումը եկամտահարկի իջեցման միջոցով, պայմանավորված է այն հանգամանքով, որ Գերմանիայում փոքր և միջին ձեռնարկությունների ճնշող մեծամասնության գործունեությունը ընկնում է անհատական եկամտահարկով հարկման օրենքի գործողությունների տակ:

Գերմանիան ունի բարենպաստ պայմաններ համաշխարհային կապիտալի ֆոնդային կառույցների հարկման թափանցիկ սխեմաների կառուցման համար: Դա ձեռք է բերվում հատուկ իրավական ձևերի առկայության շնորհիվ - GmbH Co.KG (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և առևտրային կազմակերպության): 2002 թվականին, ներդրողներին բարձր ռիսկային վենչուրային նախագծերում ներգրավելու նպատակով Գերմանիան մշակել է օրենսդրական նախագիծ՝ վենչուրային կապիտալի շուկան ներդրողների համար առավել գրավիչ դարձնելու համար: Գերմանական օրենսդրությունում կատարված փոփոխությունների համաձայն, ներկայումս հարկվում է վենչուրային կապիտալում ներդրումներից ստացված համախառն շահույթի միայն 50 տոկոսը<sup>1</sup>:

Մեծ Բրիտանիայում հետազոտությունների և մշակումների համար հատկացվող հարկային վարկերը հանդիսանում են կառավարության կողմից ձեռնարկատիրական գործունեության աջակցության համապարփակ միջոցառումների կարևոր բաղադրիչն այլ աջակցության ձևերի հետ մեկտեղ: 2000 թ. ինովացիոն փոքր և միջին բիզնեսի (ՓՄՁ) համար ներդրվել է հարկային արտոնություններ, իսկ 2002 թ. այդ սխեման տարածվել է նաև խոշոր ընկերությունների վրա:

Հետազոտությունների և մշակումների համար կիրառվում են երեք տեսակի հարկային արտոնություններ՝

- 2007 թ. հարկվող բազայից նվազեցվում է հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերը՝ ՓՄՁ- ներինը - 175%, խոշոր ընկերություններինը՝ 130% (նախկինում ՓՄՁ-ների համար՝ 150%, խոշոր բիզնեսների՝ 125%)<sup>2</sup>,
- փոքր ընկերությունների համար, որոնք չեն ունենում շահույթ, ուղղակի փոխհատուցվում են նրանց կողմից հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը,

<sup>1</sup> Абрамова С.В., Налоговое стимулирование венчурного бизнеса в Германии: опыт для России//Экономические науки.-№8 (33).-2007.- с.23-25

<sup>2</sup> «Налоговое стимулирование инновационных процессов», (под ред, Н.И.Ивановой).- М.: ИМЭМО РАН.-2009, 160 с.

- հարկային արտոնություններ են տրամադրվում վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստանյութեր մշակող ընկերություններին՝ հետազոտությունների և մշակումների համար<sup>1</sup>:

ՓՄՁ-ների համար հարկային վարկ ստանալու պայմանները հետևյալն են.

- ընկերությունը պետք է բավարարի ՓՄՁ համարվելու պահանջները (գբադվածությունը 190 մարդուց պակաս, կամ տարեկան շրջանառությունը չի գերազանցում 130 մլն եվրո, կամ տարեկան հաշվեկշիռը չի գերազանցում 43 մլն եվրո),
- հետազոտությունների և մշակումների տարեկան ծախսերը պետք է լինեն ոչ պակաս, քան 10 հազ. ֆունտ ստեռլինգ՝ առանց վերին սահմանի,
- հետազոտությունների և մշակումների ծախսերը պետք է դասակարգված լինեն ըստ առևտրի և արդյունաբերության նախարարության առաջարկությունների,
- հարկային արտոնությունները կիրառվում են միայն ընթացիկ ծախսերի վրա, այդ թվում, ա) հետազոտության և մշակումների սեփական ծախսերի. բ) նյութերի, վառելիքի, ջրի և էներգիայի, գ) հետազոտությունների և մշակումների համար ուղղակիորեն օգտագործված ծրագրային ապահովումների, դ) ենթակապալառու այլ կազմակերպություններում հետազոտությունների և մշակումների վրա,
- պահանջվող արտոնությունների գումարը կարող է կրճատվել, եթե հետազոտության և մշակումների ծրագրերը ստանում են դրամաշնորհ կամ սուբսիդիա:
- ընկերությունը պետք է լինի հետազոտությունների և մշակումների արդյունքում ձեռք բերված մտավոր սեփականության սեփականատերը<sup>2</sup>:

Հարկային արտոնությունները կիրառվում են նաև խոշոր ընկերությունների և «համալսարանների կամ հետազոտական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող «անկախ հետազոտությունների» ծախսերի նկատմամբ: Դրանք նվազեցնում են հետազոտությունների և մշակումների մեջ ներդրումների իրական արժեքը:

ԱՄՆ-ում փոքր և միջին բիզնեսի խնդիրներով զբաղվում են երկու կումիտեներ՝ Փոքր բիզնեսի աշխատակազմը և Փոքր բիզնեսի գործերի

<sup>1</sup> «Налоговое стимулирование инновационных процессов», (под ред, Н.И.Ивановой).-М.: М., ИМЭМО РАН.-2009, 160 с.

<sup>2</sup> «Налоговое стимулирование инновационных процессов», (под ред, Н.И.Ивановой).-М.: М., ИМЭМО РАН.-2009, 160 с.

կոնգրեսի կոմիտեն: ԱՄՆ-ում փոքր նորարարական ձեռներեցությունների աջակցության համար յուրաքանչյուր տարի ծախսվում է պետական միջոցներից ավելի քան 5 միլիարդ դոլար, իսկ մասնավոր հատվածից՝ 935 մլն դոլար:

ԱՄՆ-ում պետական աջակցության հիմնական ձևերը ներառում են՝ փոքր նորարարական ձեռնարկատիրության աջակցման հատուկ ծրագիրը, նորարարության պետական աջակցության փոխառությունները, պետական ֆինանսական ներդրումները, վենչուրային հիմնադրամների լայն ցանցի ձևավորումը և այլն: Ֆինանսական օգնությունը, որը տրամադրվում է պետության կողմից, ներառում է ուղղակի և երաշխավորված փոխառությունները, որոնք փոքր ձեռնարկությունները ստանում են որոշակի ժամանակահատվածով, ավելի ցածր տոկոսադրույքով, քան այն վարկերը, որոնք ձեռք են բերվում մասնավոր կապիտալի շուկայում:

Բազմաթիվ ընկերություններ նորարարություններ են իրականացնում տեխնոլոգիական, կառավարման, աշխատանքի կազմակերպման և արտադրանքի տեսականին թարմացնելու տեսքով: Պետական օժանդակությունը ունի նաև շատ լուրջ դերակատարում համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման համար նոր տեխնոլոգիաների փոխանցումն օժանդակելու հարցում: Պետական օժանդակության նպատակն է բարձրացնել տեխնիկապես զարգացած ձեռնարկությունները, որոնք կարող են նպաստել տնտեսության բոլոր ոլորտներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը: Այսպիսով, հնարավոր է մասնակիորեն փոխհատուցել փոքր ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների պակասը, որոնք անհրաժեշտ են գիտական հետազոտությունների և նախագծային աշխատանքների իրականացման համար:

Գիտահետազոտական և նորարական գործունեության ձեռներեցությանը պետական ֆինանսական աջակցության առաջին ծրագիրը (SBIR) մշակվել է 1982 թ.-ին, ԱՄՆ Կոնգրեսի նախաձեռնությամբ, որն ուղղված էր օգնել փոքր՝ բարձր տեխնոլոգիական, բիզնեսին ֆեդերալ ագենտների (պետական) պատվերների որոնման, ինչպես նաև օժանդակել վերջինների նախնական կապիտալի ձևավորման համար: Այս ծրագրի շրջանակներում նախատեսում էր աջակցություն ցուցաբերել Միացյալ Նահանգների տարածքում գործող և ԱՄՆ-ի քաղաքացիների կողմից կառավարվող ու ոչ ավելի, քան 50 աշխատակից ունեցող փոքր ձեռնարկություններին:

ԱՄՆ-ի Կոնգրեսի նախաձեռնությամբ երկրորդ՝ փոքր բիզնեսին տեխնոլոգիաների փոխանցման (STTR ) ծրագիրը, որը հիմնադրվել է նույն 1982 թ.՝ ուղղված էր օգնել փոքր բիզնեսի շարքին դասվող ընկերությունների հետ պետական հետազոտական կազմակերպությունների կատար-

վող պայմանագրային աշխատանքներին: Այս ծրագիրը ապահովում էր ֆինանսական աջակցություն փոքր բիզնեսին՝ շահույթ չհետապնդող հետազոտական կազմակերպությունների՝ համալսարանների և ֆեդերալ գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող գիտահետազոտական և գիտակոնստրուկտորական աշխատանքների համար:

Միացյալ Նահանգներում օգտագործվում են հարկային արտոնությունների երկու հիմնական տեսակ՝ մաշվածության հաշվարկման հատուկ ռեժիմ՝ հարկային նվազեցման շրջանակներում և հարկային վարկի ձևով արտոնությունների կիրառում՝ արդեն հաշվարկված հարկի վճարման վրա: 1981 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից առաջին անգամ ընդունվեց հարկային արտոնություն՝ որպես երկրի հետազոտական և մշակումների ոլորտի վրա ազդելու գործիք: Փոքր և միջին բիզնեսի ինովացիոն գործունեությունը խթանելու նպատակով նոր օրենքի մշակումն ու ընդունումը արձագանքն էր պետական կառավարման համակարգում 1970-ականներին թափ առած այն տեսակետին, որ արդյունաբերական հետազոտությունների և մշակումների կառուցվածքում փոփոխությունները պետք է ընթանան կարճաժամկետ ծրագրերի ուղղությամբ՝ ի հաշիվ երկարաժամկետ ծրագրերի<sup>1</sup>:

Սկզբնական շրջանում օրենքը նախատեսում էր եկամուտներից հարկի զեղչ՝ ընկերությունների որակյալ հետազոտությունների և մշակումների համար կատարված լրացուցիչ ծախսերի 25%-ի չափով, նախորդ երեք տարիների ընթացքում այդ նպատակով կատարված համապատասխան միջին տարեկան ծախսերի համեմատ: Ներկա օրենսդրության համաձայն, հարկային զեղչը կրճատվել է մինչև 20%: Այն կապված է բացառապես Միացյալ Նահանգներում մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող հետազոտության և մշակումների (ներքին կամ արտաքին) հետ: Հարկային արտոնությունները բացառվում են արտերկրում ամերիկյան ընկերությունների կողմից արդյունաբերական հետազոտությունների և մշակումների խրախուսման համար: Նոր օրենսդրության համաձայն հետազոտությունների և մշակումների միջին տարեկան եկամուտը հաշվարկվում է՝ ելնելով նախորդ չորս տարիների տվյալներից, որում հաշվի են առնվում հետազոտական աշխատանքներում ներգրավված աշխատակիցների աշխատավարձերը, նյութական ծախսերը, ինչպես նաև պայմանագրերի հիման վրա հետազոտությունների և մշակումների համար արտաքին կատարողներին վճարումները՝ 65%-ի չափով: Այսպիսով, հարկային արտոնությունների մեծ մասը՝ մոտ 70 տոկոսը, տրվում է հետազոտության և մշակումների ոլորտում աշխատանքի վարձատրության համար:

<sup>1</sup> «Налоговое стимулирование инновационных процессов», (под ред, Н.И.Ивановой).- М.: М., ИМЭМО РАН.-2009, 160 с.

Հետազոտական և մշակումների համար հատուկ հարկային արտոնություններից բացի օգտագործվում են հարկային արտոնություններ սպառողների և բիզնեսների համար, որոնք ունեն գզալի նշանակություն ինովացիոն պահանջարկի խթանման համար: Միացյալ Նահանգներում լայնորեն կիրառվում են արտոնություններ առաջատար էներգետիկ տեխնոլոգիաների՝ արևային, քամու և այլ «այլընտրանքային» էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում: Էլեկտրաէներգիայի ոլորտում նոր և այլընտրանքային տեխնոլոգիաների օգտագործմամբ արդյունաբերական մասշտաբներով էլեկտրաէներգիա արտադրող կայանների համար գործում է ներդրումային հարկային արտոնություն 10%-ից մինչև 30%՝ կախված նախագծից, ներդրման վերադարձի գործնական սահմանից:

ԱՄՆ-ի փորձը ցույց է տալիս, որ պետության կողմից փոքր և միջին նորարարական ձեռնարկություններին աջակցություն ցուցաբերելու համար օրենսդրությունը խթանում է արտադրության արդյունավետության բարձրացումը, որը հանդիսանում է մրցակցային լրացուցիչ խթան՝ միջին և խոշոր ընկերությունների մեջ փոքր ձեռնարկությունների անընդհատ զարգացման համար նախադրյալների ստեղծման, նոր տեխնիկայի, արտադրանքի ներդրման, խոշոր ընկերությունների արտադրության և արդյունավետության համար:

Ճապոնիան առաջատար է հարկային արտոնությունների զարգացման և տարածման մեջ՝ որպես մասնավոր հատվածի գիտության վրա ազդելու գործիք: 2003 թ. ընդունվել է հարկային արտոնությունների համակարգ՝ գիտական հետազոտությունների հետ կապված ընդհանուր ծախսերի գումարի համար: Դրա համաձայն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ծախսերի ընդհանուր գումարի հարկային արտոնությունները կազմում է այդ ցուցանիշի 8-ից 10% -ը<sup>1</sup>:

Փոքր և միջին (մինչև 100 մլն իեն կապիտալով) ընկերությունների վրա տարածվում է հարկային արտոնություն՝ նրանց կողմից գիտության վրա կատարված ընդհանուր ներդրումների գումարի 12%-ի չափով: Բացի այդ, այդ ընկերությունների տեղական հարկերի բազան հաշվարկելիս սկսեցին այն նվազեցնել հետազոտությունների և մշակումների ոլորտում իրենց կատարած ներդրումներ 12%-ի չափով գումար:

2006-2008 թվականներին, որպես բիզնեսի ոլորտում գիտության զարգացմանը նպաստող լրացուցիչ խթան, ցանկացած ընկերության առաջարկվեց իր հետազոտական միավորների ընդլայնման ժամանակ 5% հարկային արտոնության հաշվարկում:

<sup>1</sup> Страна налоговых скидок: особенности финансового стимулирования инновационной деятельности японских компании, независимая газета, 24.3.2010.

Ավստրալիայում 2001 թ. ներդրվել է հետազոտության և մշակումների 175% հավելավճար և արտոնյալ հարկման համակարգ: Այս պարզևավճարները խիստ տարածված էին. ավելի քան 900 ընկերություններ օգտվել են հետազոտության և մշակումների համար սահմանված հարկային արտոնություններից: 175% հավելավճարը երեք տարվա ընթացքում ապահովում է հարկային արտոնություններ՝ գիտահետազոտական մշակումների վրա կատարված լրացուցիչ ծախսերի համար: Հարկային արտոնությունները օգնում են սկսնակ ձեռնարկություններին պայքարել գիտահետազոտական աշխատանքների համար ֆինանսավորում գտնելու դժվարությունների դեմ, ընկերություններին հնարավորություն տալով հարկային վնասներով լրացնել դրամական միջոցների բացակայությունը՝ ապագայում հարկային արտոնությունները հանելու միջոցով:

Չինաստանը համարվում է դինամիկ զարգացող երկիր, որը նպատակ է դրել համաշխարհային շուկայում առաջնություն ձեռք բերել տեխնոլոգիամետ ինովացիաների ոլորտում: Հարկային խթանման քաղաքականությունը դրսևորվում է բազմաթիվ տարբերակներով՝ սկսած հարկային վարկերից մինչև շահութահարկի զեղչեր, ԳՏՀ ծախսերի խթանում և տեխնոլոգիական սարքավորումների նորացման խրախուսում: Ընդ որում, եթե տարիներ առաջ հարկային լծակներն ուղղված էին շահութահարկի և ԱԱՀ-ի մակարդակի իջեցմանը, ապա այժմ հիմնական շեշտը դրվում է հարկման բազայի ընդլայնման և հարկային վարկերի խոշոր զեղչերի վրա<sup>1</sup>:

Մինգապուրի կառավարությունը ակտիվ դեր է խաղում երկրի տնտեսական զարգացման գործում՝ բիզնեսին տրամադրելով ֆինանսական արտոնություններ: Այսպես, անդրազգային կորպորացիաների ներգրավման դեպքում Մինգապուրը ներդրման առաջին 10 տարվա ժամանակահատվածի համար սահմանել է 10% շահութահարկ: Մինգապուրի կառավարությունը ներդրել է հարկային զեղչերի փաթեթ, որոնք մեծ ազդեցություն ունեն բիզնեսի վրա: 2008թ. եկամտահարկի մասին օրենքը ենթարկվեց որոշակի փոփոխությունների, որոնցով նորարարական ընկերություններին տրամադրվում են հարկային զեղչեր<sup>2</sup>: Այսպես, սեփական գիտության և հետազոտության մեջ յուրաքանչյուր 100 դոլար ներդրման դեպքում ընկերությունն իրավունք է ստանում հարկման ենթակա եկամուտը կրճատել 150 դոլարով: Սկսնակ բիզնեսներին այդ դեպքում տրամադրվում են հարկային արձակուրդներ, որոնք կարող են հասնել մինչև 15 տարվա: Այն ընկերությունը, որը առաջին անգամ է գրանցվում երկրում, սկզբի

<sup>1</sup> Taxation and Investment in China, 2012, Publication of Deloitte.

<sup>2</sup> Taxation and Investment in Singapore, 2012, Publication of Deloitte.

երեք տարվա ընթացքում ազատվում է շահութահարկից՝ 100 հազար սինգապուրյան դոլարի չափով:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ինովացիոն ձեռնարկությունների հարկային աջակցությունը հանդիսանում է ինովացիոն զարգացման ամենակարևոր գործոններից մեկը: Ինովացիոն գործընթացների կարգավորման այս գործիքը օգտագործվում է բազմաթիվ զարգացած արդյունաբերական երկրներում: Մի շարք երկրներում (Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ, Ճապոնիա, Ավստրալիա) հարկային վարկերը կիրառվում են հետազոտության և մշակումների համար, որն իրականացվում է այդ ծախսերը հարկային բազայից հանելու միջոցով: Դրանք նպաստում են գիտահետազոտական և փորձարարական ստորակտորական հետազոտությունների համար կապիտալ ներդրումների աճին՝ նվազեցնելով դրանց իրական արժեքը: Բացի դրանից, դրանք նվազեցնում են ֆինանսական կորուստների ռիսկը, այն դեպքում, երբ նոր արտադրանքի ստեղծման համար կատարված ուղղակի ծախսերը չեն կարող փոխհատուցվել վաճառքի փոքր ծավալով պայմանավորված: Մեր կարծիքով, հատկանշական է նաև բարձր ռիսկային վենչուրային նախագծերի համար ներդրումների խրախուսման Գերմանիայի փորձը, որտեղ վենչուրային կապիտալի ոլորտում կատարված ներդրումներից ստացված համախառն շահույթի միայն 50%-ն է հարկվում: Շատ երկրներ հատուկ ուշադրություն են դարձնում փոքր և միջին բիզնեսին: Օրինակ, Մեծ Բրիտանիայում և Ճապոնիայում ՓՄՁ-ների համար հարկային արտոնությունները ավելի բարձր են, քան խոշոր բիզնեսինը, իսկ Գերմանիայի կառավարությունը հաճախակի կատարում է այնպիսի փոփոխություններ, որոնք խրախուսում են փոքր վենչուրային հիմնադրամների գործունեություն, նվազեցնելով նրանց հարկային բեռը: Մեր կարծիքով, սա նպաստում է ոչ միայն խոշոր, այլև փոքր և միջին ձեռնարկություններին ինովացիոն գործունեության մեջ ներգրավմանը, ինչը նշանակալի գործոն է գիտատեխնիկական և տնտեսական աճի համար: Մի շարք երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա և այլն), բացի համապետական հարկային աջակցության, գործում է նաև տարածաշրջանային մակարդակում ինովացիոն զարգացման խթանման համակարգ: Մեր կարծիքով, այս փորձի ուսումնասիրությունը մեծ նշանակություն կարող է ունենալ մարզերի տնտեսական զարգացմանը օտարերկրյա ներդրումների ներգրավման համար:

Աշխարհում գոյություն ունեցող ՓՄՁ պետական աջակցության երկու մոդելներից՝ փոքր բիզնեսին հարկային արտոնությունների տրամադրում և «այլ աջակցություն» (տեղեկատվության հասանելիության, խորհրդատվության որակի կառավարման համակարգեր, սեմինարներ և այլն), Հա-

յաստանում գերադասվեց վերջինը, որի արդյունքում ընդհանուր առմամբ, ՓՄՁ-ները զգալի հարկային արտոնություններ չունեն: Ընդ որում, այն ժամանակ վերացվեց գոյություն ունեցող նորմը, նոր ստեղծվող ձեռնարկատիրության համար երկու տարվա հարկային արտոնությունը:

Այնուամենայնիվ, վերջերս Հայաստանում գնում են հարկային արտոնությունների ավելացման տրամադրման ճանապարհով: Այսպես՝ համեմատաբար վերջերս ներդրվել է հարկման արտոնյալ համակարգ ընտանեկան բիզնեսների, այդ թվում փոքր հյուրանոցային ձեռնարկատիրության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենքով նախատեսված արտոնությունները նոր ՏՏ ձեռնարկատերերի համար: Հարկային արտոնություններ են տրամադրվել նաև այն գործարարներին, ովքեր աշխատում են երկրի սահմանամերձ շրջաններում:

ՀՀ-ում դեռևս չի ձևավորվել այնպիսի հարկային քաղաքականություն, որը կստեղծի բարենպաստ միջավայր բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման համար:

2010 թվականին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը, որով 300 մլն դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետները երեք տարի ժամկետով հետաձգելու արտոնություն է տրամադրվել:

Այնուամենայնիվ, ՓՄՁ-ների դերն ու նշանակությունը երկրի տնտեսական կյանքում ինչ-ինչ պատճառներով շարունակում է նվազել: ՓՄՁ-ների դերի ու նշանակության նվազեցումը և տնտեսության անընդհատ աճող կախվածությունը խոշոր բիզնեսից սպառնալիք են երկրի կայունությանը, ազգային անվտանգությանը:

Հայաստանում ՓՄՁ-ները բավականին պասիվ են արտադրության ու ծառայությունների ոլորտում և նախապատվությունը տալիս են առևտրով զբաղվելուն, քանի որ պետությունը չի ստեղծել արդյունավետ մեխանիզմներ տեղական արտադրության խրախուսման համար: Տեղի է ունեցել ՓՄՁ-ների գերկենտրոնացում մայրաքաղաքում, որը չի նպաստում արդեն կարևոր խնդիր համարվող տարածքային համաչափ զարգացմանը:

Փոքր և միջին բիզնեսը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար: Այն պետք է կազմի ՀՆԱ-ի առնվազն 50%-ը: ՀՀ-ում ՓՄՁ-ների տոկոսային մասնակցությունը ՀՆԱ-ում 2000թ. կազմել է 24,8%, 2006թ.՝ 40,3%, 2007թ.՝ 41%, 2010թ.՝ 43% 2013թ.՝ 34,2%, իսկ 2016թ.՝ 33%, ՓՄՁ-ները աճ են գրանցել 2000-2011 թվականների ընթացքում, իսկ



2012-2015 թվականներին այն նվազել է ու միայն 2016թ. արձանագրվել է շուրջ մեկ տոկոսի աճ<sup>1</sup>:

Ներկայացնենք զարգացած երկրների ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկությունների հատվածի բաժինը և փոքր և միջին ձեռնարկությունների ներդրումը զբաղվածության ապահովման գործում:

*Աղյուսակ 1*

**ՓՄՁ ոլորտի ներդրումը ՀՆԱ-ում <sup>2</sup>**

<b>Անվանումը</b>	<b>Մասնաբաժինը, %</b>
Իտալիա	71
Չինաստան	60
Ճապոնիա	60
ԱՄՆ	60
Ֆրանսիա	56
Գերմանիա	54
Մեծ Բրիտանիա	50
Բրազիլիա	30
Ռուսաստան	21

Զարգացած երկրներում փոքր և միջին բիզնեսի բաժինը ՀՆԱ-ում տատանվում է 50-60%: Ռուսաստանում փոքր և միջին բիզնեսի ներդրումը երկրի տնտեսության մեջ շատ ցածր է՝ ՀՆԱ-ի 21 տոկոսը:

Այսպիսով, հարկային քաղաքականության մեջ հարկավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք կխրախուսեն նորամուծություններ պարունակող բիզնես-ձրագրերից շահույթի ստացումը: Վենչուրային ֆինանսավորման վրա հիմնված ինովացիոն ընկերությունների շահույթի հարկումը պետք է իրականացնել զեղչման ռեժիմով կամ ընդհանրապես ազատել հարկումից, քանի որ ստացված շահույթը կրկին վերաներդրվում են այդ ընկերությունների հետագա ընդլայնման մեջ:

<sup>1</sup> «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում», 2003-2004թթ., 2004-2005թթ., 2005-2006թթ. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պոշտոնական կայքի տվյալները URL://www.armstat.am/am?nid+82.

<sup>2</sup> Чайков, Д. ВВП. Экономические новости. – М., 2012. – Электрон. текстовые дан. – Режим доступа: <http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat/rosstatsite/main>.

**ՓՄՁ ներդրումը զբաղվածության ապահովման և եկրոպական նախկին «սոցիալիստական լագերի» երկրների ՀՆԱ-ում <sup>1</sup>**

Երկիր	ՓՄՁ մասնաբաժինը երկրի ձեռնարկությունների ընդհանուր զբաղվածությունում, %	ՓՄՁ մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում, %
Բուլղարի	73,5	59,2
Հունգարիա	71,5	54,6
Լատվիա	77,8	70
Լիտվա	75,9	64,1
Լեհաստան	67,5	54
Ռումինիա	68,1	45,7
Սերբիա	65,9	56,3
Սլովակիա	57,2	52
Սլովենիա	64,2	63,2
Խորվաթիա	67,2	57,1
Չեխիա	67,7	22,7
Էստոնիա	77,8	76,2

Հնարավոր է ձկուն հարկային քաղաքականության և հարկային զեղչերի շնորհիվ խթանել երկրում նորարարությունների ստեղծումը, տարածումը և հարմարեցումը:

Արտերկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է ինովացիոն գործունեության հարկային խթանումների նպատակահարմարությունը տարբեր ուղղություններով՝ հետազոտությունների և մշակումների հարկային արտոնություններ, հարկային արտոնություններ վենչուրային ներդրումների համար, բնապահպանական ինովացիաների և բնապահպանական մաքուր տեխնոլոգիաների անցնելուն հարկային խրախուսումներ և այլն:

<sup>1</sup> Чайков, Д. ВВП. Экономические новости. – М., 2012. – Электрон. текстовые дан. – Режим доступа: <http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat/rosstatsite/main>.

## ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԽՁԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՅԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

**ԱԼՎԱՐԴ ԹԵՎՈՍԻ ՉԱՏԻԿՅԱՆ**, *տ. գ. թ.*,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի փոխտնօրեն, ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում դիտարկվում է ինովացիոն հարկային քաղաքականության միջազգային փորձը և նրա տարրերի հնարավորությունների տեղադրումը ՀՀ-ում: Ներկայացվում են ինովացիոն գործունեության հարկային կարգավորումների առանձնահատկությունները զարգացած երկրներում: Ուսումնասիրվել են հարկային գործիքների ինովացիոն զարգացման խթանումները, ինչպիսիք են՝ հարկային վարկերի ուսումնասիրումը և մշակումը, հարկային արտոնությունները վենչուրային ներդրումների համար, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների հարկային աջակցությունը:

*Բանալի բառեր.* *փոքր և միջին բիզնես, հարկային խթանում, վարկեր, ինովացիա, հետազոտում և մշակում, վենչուրային ներդրումներ, գեղչեր:*

## ОСОБЕННОСТИ НАЛОГОВОГО СТИМУЛИРОВАНИЯ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

**АЛВАРД ТЕВОСОВНА ЗАТИКЯН**, *к. э. н.*,

*заместитель директора, старший научный сотрудник  
Института экономики им. М.Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье рассматривается международный опыт инновационной налоговой политики и возможности размещения ее элементов в РА. Представлены особенности налогового регулирования инновационной деятельности в развитых странах. Исследованы налоговые инструменты стимулирования инновационного развития, такие как налоговые кредиты на исследования и разработки, налоговые льготы для венчурных инвестиций, а также налоговая поддержка предприятий малого и среднего бизнеса.

**Ключевые слова:** *малый и средний бизнес, налоговое стимулирование, кредиты, инновации, исследования и разработки, венчурные инвестиции, скидки.*

## SPECIFICS OF TAX INCENTIVES STIMULATING THE INNOVATIVE ACTIVITY IN OTHER COUNTRIES

**ALVARD TEVOS ZATIKYAN**, *Candidate of Sciences (Economics)*  
*Deputy Director, Senior Research Associate*  
*M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article discusses the foreign best practices on tax policy aimed at stimulating the innovation and possibilities of adapting some of the practices in the Republic of Armenia. The article presents the features of tax regulation with respect to the innovative activity in developed countries. The article studies the tax stimulus packages utilized in other countries to promote innovative development, such as tax credits for research and development, tax incentives for venture capital, and tax cuts and/or incentives for small and medium-sized enterprises.

**Keywords:** *Small and medium-sized business, tax incentives, loans, innovations, research and development, venture investments, discounts*

**АРАРАТ ЕГИШЕВИЧ ЗАКАРЯН**, *д.э.н., профессор*

*Институт экономики им. М. Котаяна НАН РА, главный научный сотрудник*

**КАРАПЕТ ОГАНЕСОВИЧ АРАКЕЛЯН**, *к.э.н.,*

*Армянский государственный экономический университет,  
ассистент кафедры маркетинга*

## **ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РЕСУРСНЫХ ЦИКЛОВ ПРИРОДНЫХ СТРОЙМАТЕРИАЛОВ АРМЕНИИ И ИХ ИННОВАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ**

Современный этап экономического развития характеризуется возрастающими масштабами потребления природных ресурсов, усложнением процесса взаимодействия природы и общества, расширяются и становятся более интенсивными сферы проявления специфических природно-антропогенных процессов, возникающих вследствие техногенного воздействия на природу.

Обострение водных, топливно-сырьевых, энергетических и в целом экологических проблем перешагнуло границы отдельных регионов и приобрело глобальный масштаб. В этой связи большое значение приобретает изучение природно-ресурсного потенциала мира в целом, отдельных материков и стран, анализ тенденций и способов освоения природных богатств и оценка возникающих природно-ресурсных проблем при нерациональном освоении природных ресурсов.

Существует тесная взаимосвязь между уровнем развития цивилизации, объемами ресурсопотребления и изменениями в окружающей среде. С развитием общественного производства все более возрастает влияние человека на природу и использование ресурсов. В данных условиях необходимо адекватно оценивать причинно-следственные связи взаимодействия основных факторов экономического развития общества, которые находятся в диалектическом единстве, учитывая, что и между ними имеются противоречия. Очевидно, что дальнейшее развитие производительных сил связано с нарастающими темпами потребления ресурсов и увеличением нагрузки на окружающую среду

Известно, что на территории Армении распространены самые разные и богатые месторождения природных строительных материалов, которые очень интенсивно добываются, разрабатываются и используются в основном в строительных целях. Однако значительная часть из этих добываемых масс остается в природе как отходы, загрязняющие окружающую среду.

С этой точки зрения необходимо отметить, что на современном этапе общественного развития обмен веществ между природой и обществом, в соответствии с ростом материального производства, принимает все большие

масштабы, возникают новые звенья круговорота веществ в системе «природа-общество-природа», видоизменяются и углубляются старые.

Для научного познания и рационализации общепланетарного круговорота веществ важное значение имеют также выделение и изучение отдельных ресурсных циклов по регионам. Определенный научный и практический интерес представляет изучение возникших экономических проблем развития и инновационных особенностей ресурсного цикла и подциклов природных строительных материалов Армении.

Как известно в дословном переводе «цикл» означает круг, однако ресурсный цикл предполагает движение не по кругу (несмотря на то, что некоторые звенья цепочки могут повторяться), а его качественное изменение, развитие, характер и темпы, которые обусловлены уровнем научно-технического прогресса в данный промежуток времени. Применение понятия «цикл» не новое. О естественном передвижении веществ (циклах) писали Д.И. Менделеев, В.И. Вернадский, А.Е. Ферсман, А.П. Виноградов, Б.Б. Польнов, А. И. Перельман и другие, а в экономическую географию он вошел благодаря Н.Н. Колосовскому, автору известной теории энергопроизводственных циклов.

В основе концепции энергопроизводственных циклов лежит представление о типах набора производственных процессов, устойчиво повторяющихся в разных регионах, иначе говоря, о звеньях одной и той же технологической цепи. Такие подходы учитывают, как отраслевые (поэлементные), так и региональные различия и особенности природопользования.

В отличие от энергопроизводственных циклов И.В. Комар под ресурсным циклом понимает «совокупность превращений и пространственных перемещений определенного вещества или группы веществ (подчеркнуто нами), происходящих на всех этапах его использования человеком (включая его выявление, подготовку к эксплуатации, извлечение из природной среды, переработку, потребление, возвращение в природу) и протекающих в рамках общественного звена общего круговорота данного вещества или веществ на Земле».

Таким образом, ресурсные циклы различаются по виду главного участвующего в них вещества или сочетания веществ, причем каждый цикл, обычно обрастает рядом сопутствующих и побочных подциклов, развивающихся на базе разностороннего использования основного ресурса и дополнительно вовлекаемых в хозяйственный оборот первичных материалов<sup>1</sup>.

Основываясь на концепции И. В. Комара о ресурсных циклах выделение нами ресурсного цикла природных строительных материалов Армении не повторяет идею энергопроизводственного цикла, а расширяет ее, так как ре-

---

<sup>1</sup> Комар И.В. «Рациональное использование природных ресурсов и ресурсные циклы.» М. «Наука», 1975, с. 75

сурсный цикл включает в себе все «цепочки» и фазы круговорота природных строительных материалов в пределах системы природа-общество-природа<sup>1</sup>.

Надо подчеркнуть, что использование каменных строительных материалов в Армении и сопредельных с ней регионах имеет глубокие исторические корни. Однако оно приняло широкие масштабы, глубже стала переработка строительных материалов, извлекаемых из природной среды, появились новые области применения, расширилась пространственная база их добычи и использования в период индустриального развития Армении и в современную эпоху НТР. Добывая природные камни, человек подвергает их обработке и переработке, производит разнообразные стройматериалы, а также вещества и изделия другого назначения. Таким образом, возрастают объемы «вырванных» из своей естественной среды; подверженные переработке и использованные человеком вещества вновь возвращаются в природу, но уже в измененном виде, с другим назначением и очень часто в другую природную среду. Часть этих веществ остается в природе в качестве полезной долгосрочной потребительской стоимости (здания, сооружения, дороги, мосты и т.д.), значительная часть возвращается в природу непосредственно в процессе добычи и первичной обработки в виде так называемых «отходов». Надо подчеркнуть, что в обоих случаях нарушается естественное равновесие природной среды, но в первом случае оно необходимо человеку и полезно, а во втором случае нарушается экологическое равновесие окружающей среды, создаются дополнительные проблемы для общества.


Проблема состоит в том, чтобы в круговороте веществ полностью исключить «отходы» и все вещества вернуть природе в виде потребительской стоимости, не нарушающей экологического равновесия природной среды.

Ресурсный цикл, отвечающий этим требованиям, нами в данной статье изображен в виде упрощенной модели ресурсного подцикла перлитов (рис. 1).




Такой подход очень важен, чтобы с помощью модели показать, что подцикл также состоит из последовательных взаимообусловленных и взаимоподчиненных стадий и звеньев, которые начинаются с нахождения, разведки месторождений и продолжаются стадиями подготовки и эксплуатации месторождений, добычи, обработки и переработки стройматериалов, производства конечной продукции и ее использования, затем и возвратом этих веществ в природу (в виде полезной потребительской стоимости и «отходов»). В модели особое место занимает общественно-производственное звено ресурсного цикла и производственный цикл, несущий основную функциональную нагрузку в цепи природа-общество-природа.



---

<sup>1</sup> Закарян А. Е. «Ресурсный цикл стройматериалов Армении». Ереван. «Айастан», 1991, с. 70.



### Условные обозначения

-  - стадии развития подцикла
-  - действующие производства и области применения перлитов
-  - производства и области возможного применения перлитов

-  - прямые связи природа-общество (производственные и стадийные связи подцикла, создание потребительской стоимости)
-  - обратные связи общество-природа

**Рисунок 1.** Совмещенная действительная и принципиальная модель ресурсного подцикла перлитов РА



Уместно также подчеркнуть, что процесс формирования ресурсного цикла и подциклов стройматериалов Армении прошел довольно долгий путь с которым были связаны также основные перемещения развития отрасли в Армении. Однако, как известно цикл в целом не совпадает с какой-нибудь классификацией отраслей промышленности, так как он складывается из отдельных производств, производственных стадий, звеньев и фаз, относящихся к различным отраслям промышленности. Тем не менее они связаны друг с другом и соподчинены очередностью стадий добычи, технологическими цепочками комплексной обработки и переработки природных веществ, различными аспектами их общественного использования и возвратом в природу.

Одну из основных цепочек цикла составляет производственный процесс (производственный цикл), через который происходят цикловые круговороты веществ по системе природа-общество-природа, а благодаря комплексной обработке веществ возникают новые производства, производственные звенья и фазы цикла со своими производственными, производственно-технологическими и непроизводственными многосторонними связями, этим же создавая структурные единицы цикла.

Надо подчеркнуть, что в подобных условиях ресурсный цикл стройматериалов не имеет единого центра непосредственного управления. Отдельные производства, звенья цикла находятся в подчинении различных ведомств, что иногда затрудняет целостное и ритмичное развитие цикла.

Однако, сказанное не означает, что не следует искать пути совершенствования управления циклом. При создании и размещении добывающих, обрабатывающих и перерабатывающих производств различных природных каменных материалов следует учесть и координировать интересы различных организаций, могущих способствовать более эффективному и целостному развитию цикла, комплексному использованию природных веществ, что не только приводит к повышению эффективности производства, но и является одной из наиболее рациональных форм охраны окружающей среды.

Проведенные нами исследования показывают, что системный подход к изучению структуры ресурсного цикла стройматериалов и конструктивное решение задач повышения эффективности его отдельных звеньев могут сыграть существенную роль в процессе комплексного использования природных ресурсов и регулирования пропорционального развития и размещения производств стройматериалов на территории республики.

Важной особенностью перспективного развития ресурсного цикла стройматериалов Армении является то, что благодаря своим высоким физико-механическим свойствам, декоративным качествам и широкой цветовой гамме, каменные материалы республики еще долго будут играть решающую роль в современном строительстве, в производстве как традиционных, так и новых видов стройматериалов, найдут широкое применение и в других областях экономики. С целью повышения эффективности использования добытых веществ уже на данном этапе необходимо уделить серьезное внимание созданию, в особенности «верхних этажей» комплексной обработке и

переработке природных каменных строительных материалов, т.е. внедрению безотходных (замкнутых) технологических процессов. Это в конечном итоге приведет к созданию «замкнутого цикла», что имеет, как уже отмечено, огромное экономическое и экологическое значение.

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՑԻԿԼԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ ԶԱԶԱՐՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթայանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

**ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**, *տ.գ.թ.,*

*ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ասիստենտ*

**Համառոտագիր:** Նյութերի համաերկրային շրջապտույտի արդյունավետ կազմակերպման, ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման և բնական շինանյութերի արդյունահանման, մշակման ու վերամշակման գործընթացների տնտեսական արդյունավետության բարձրացման համար առանձնահատուկ նշանակություն ունի ՀՀ բնական շինանյութերի ռեսուրսային ցիկլի և ենթացիկլերի հետազոտությունն ու անթափոն արտադրությունների կազմակերպումը, ինչը կնպաստի նաև շրջակա միջավայրի պահպանությանը:

***Բանալի բառեր.** ռեսուրս, ռեսուրսային ցիկլ, ռեսուրսային ենթացիկլ, թափոններ, անթափոն տեխնոլոգիաներ, ցիկլի փուլեր, «Բնություն-հասարակություն-բնություն» շղթա, նյութերի շրջապտույտ, փակ ցիկլ:*

## **ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РЕСУРСНЫХ ЦИКЛОВ ПРИРОДНЫХ СТРОЙМАТЕРИАЛОВ АРМЕНИИ И ИХ ИННОВАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ**

**ԱՐԱՐԱՏ ԵԳԻՏԵՎԻՇ ԶԱԿԱՐՅԱՆ**, *ժ.ճ.ն., պրոֆեսոր*

*Институт экономики им. М. Котаяна НАН РА, главный научный сотрудник*

**ԿԱՐԱՊԵՏ ՕԳԱՆԵՍՈՎԻՇ ԱՐԱԿԵԼՅԱՆ**, *կ.ճ.ն.,*

*Армянский государственный экономический университет,  
ассистент кафедры маркетинга*

**Аннотация:** Для экономической организации, использования современных инновационных технологий, общепланетарного круговорота веществ а также для повышения эффективности экономического процесса добычи,

обработки и переработки природных строительных материалов особое значение имеет исследование ресурсного цикла и подциклов природных строительных материалов РА, которое способствует организации безотходного производства, следовательно и охраны окружающей среды.

**Ключевые слова:** ресурс, ресурсный цикл, ресурсный подцикл, отходы, безотходные технологии, стадии цикла, система «природа-общество-природа», круговорот веществ, замкнутый цикл.

## **ECONOMIC ISSUES ON DEVELOPING NATURAL CONSTRUCTION RESOURCE CYCLES AND INNOVATIVE FEATURES IN ARMENIA**

**ARARAT YEGHISHE ZAKARYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor  
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of science, Republic of Armenia*

**KARAPET HOVHANNES ARAKELYAN**, *Candidate of Sciences (Economics)  
Assistant Professor, Chair of Marketing, Armenian State University of Economics*

**Abstract:** For the effective organization of the around planet circulation; increasing the economic effectiveness of utilizing the modern innovative technology; and extraction, initial processing, and re-processing of the natural construction material processes the study on natural construction material resource cycle and sub-cycles of thereof and organizing waste-free production plays a special role special role play since it would assist the protection of the environment as well.

**Keywords:** *Resource, resource cycle, resource sub-cycle, waste, waste-free technologies, cycle stages, “The nature-society-nature” chain, circulation of substances, closed cycle.*

**ԳԱՅԱՆԵ ԷՐՆԻԿԻ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

## **ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԸ**

Այսօր տնտեսական զարգացման նոր մոդելների և կառուցակարգերի որոնումը բնորոշ է աշխարհի գրեթե բոլոր երկրներին, ինչը պայմանավորված է համաշխարհային մրցունակության գործոնների նշանակության էական փոխակերպմամբ: Դարձել է ակնհայտ, որ էժան աշխատուժի առկայությունը երկրում չի կարող ապահովել համաշխարհային մրցունակության բավարար մակարդակ: Մրցունակության հիմնական հենարանն արդեն նորարարություններն են, դրանք ապահովող արդյունավետ հետազոտական և նախագծային աշխատանքները, մարդկային բարձրորակ կապիտալը: Նորարարական գործընթացների բնույթի կերպափոխման միտումները (զծային երկկողմ հարաբերություններից անցումը դեպի բազմակողմ՝ ցանցային փոխհարաբերություններին) նույնպես թելադրում են որոշակի նոր պարադիգմի անհրաժեշտություն, որը կհիմնավորի տարբեր մակարդակներում ամենատարբեր բնույթի ձեռնարկությունների արդյունավետ փոխգործակցության շահադրդման և արդյունավետության ապահովման հիմքերը:

Այս գործընթացների ոչ միանշանակությունը և ինտենսիվությունը գլոբալ, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում փոխհարաբերությունների նոր հիերարխիայի (աստիճանակարգի) և նոր տրամաբանության անհրաժեշտություն է առաջացնում: Հայաստանի համար այդ գործընթացն առանձնահատուկ ու բարդ է՝ պայմանավորված աշխարհաքաղաքական կացությամբ (սառեցված հակամարտություն), ինչպես նաև՝ տնտեսության զարգացման մեկնարկային իրողություններով (հանքահումքային արտահանում, համախառն արդյունքում արդյունաբերության ցածր տեսակարար կշիռ): Ըստ էության, փոխվում են շեշտադրումները զուտ ազգային նորարարական համակարգի ստեղծումից դեպի այլ մակարդակներում նորարարական համակարգերի ձևավորումը, այդ թվում՝ միջազգային և տարածաշրջանային (Հայաստանի պարագայում՝ ԵԱՏՄ տնտեսական տարածքում):

Սկսած անցյալ դարի 90-ական թվականներից, որպես նշված իրողությունների հաղթահարման ուղղություն, լայն տարածում ստացավ տնտեսության կլաստերացման մոտեցումը: Այն իր արտացոլումը գտավ աշխարհի տարբեր երկրների նորարարական, կառուցվածքային փոփոխությունների, տարածքային կառավարման, արտաքին առևտրատնտեսական քաղաքականություններում: Ընդ որում, թեև յուրաքանչյուր երկրի կլաստերացման քաղաքականության իրագործման հիմքում ընկած են տվյալ երկրի առանձնահատկություններն, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, կլաստերները դիտարկվում են որպես որոշիչ գործոն, որը հիմնավորում է տնտեսական և նորարարական գործունեությունների փոխընթացման և փոխհամաձայնեցման էմպիրիկ դրսևորումները: Հանդես գալով որպես կարևորագույն էկոհամակարգ՝ ձեռնարկությունների համար, կլաստերները ժամանակի ընթացքում վերածվեցին տնտեսական զարգացման հզորագույն շարժիչ ուժի և նորարարությունների «արագացուցիչ» աշխարհի շատ երկրներում:

Տարբերակում են տնտեսության կլաստերացման մի քանի հիմնական մոդելներ, որոնցից առավել տարածված են իտալականը և ֆիննականը: Իտալական մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ երկրում փոքր և միջին ձեռնարկությունների մեծ մասը գործում է որոշակի տարածքային-արդյունաբերական խմբավորումների շրջանակներում (որոնք կոչվում են արդյունաբերական շրջաններ)<sup>1</sup>: Դրանք տեղական տարածքային հիմքի վրա ձևավորված սոցիալ-տնտեսական որոշակի միավորներ են, որտեղ փոքր և միջին ձեռնարկությունները համագործակցում են միևնույն արտադրական գործընթացին արդյունավետ մասնակցության համար, և տեղակայված են հիմնականում երկրի կենտրոնական և հյուսիսարևմտյան հատվածներում: Արդյունքում, Իտալիան ներկայում համարվում է փոքր բիզնեսի արդյունավետ զարգացման դասական երկիր, որտեղ գործող ավելի քանի 4 մլն ձեռնարկություններից խոշոր են համարվում միայն 2%-ը:

Փոքր ձեռնարկությունների միջև արդյունավետ համագործակցությունը հնարավորություն է ընձեռում բարձրացնել տեխնոլոգիական զարգացման մակարդակը արդյունաբերական շրջանի ներսում, և որոշ ժամանակային լազով այն փոխանցել նաև տնտեսության այլ ճյուղեր, ոլորտներ, շրջաններ: Ինչպես նկատում է Մ. Պորտերը, ով համարվում է կլաստերների տեսության հիմնադիրը, «իր յուրաքանչյուր մասնակցին

<sup>1</sup> Скоц А. Международный опыт формирования кластеров // Космополис. 2007. № 2 (16). С. 118–136.

կլաստերը տրամադրում է այնպիսի հնարավորություններ, ինչպիսին, օրինակ, այն կունենար, եթե լիներ խոշոր ընկերություն, կամ եթե միաձուլված լիներ կլաստերում ներառված մյուս ֆիրմաներին, առանց կորցնելու իր ճկունությունը և ինքնուրույնությունը»<sup>1</sup>: Կլաստերացումը Իտալիայի համար վերածվել է ազգային մրցունակության ընդհանուր համակարգի, որտեղ արդյունավետության խթանման գլխավոր դերակատարումը պատկանում է պետությանը, որն այդ նպատակով տրամադրում է բազմազան արտոնություններ՝ արտահանման մաքսատուրքերի կրճատման, վարկային երաշխիքների, ներդրողների ներգրավման, խորհրդատվության և այլ առումներով:

Ինչ վերաբերում է կլաստերացման ֆիննական մոդելին, ապա այստեղ կլաստերները հիմնականում ձևավորվում են մասնագիտացման հայտանիշով համանման ձեռնարկությունների միջև փոխգործակցության շնորհիվ (ի տարբերություն իտալականի, որտեղ կլաստերացումն իրականացվում էր առավելապես տարածական առումով ձեռնարկությունների իրար մոտ գտնվելու հայտանիշով): Դրանով պայմանավորված՝ Ֆինլանդիայում կլաստերները դասակարգվում են արդյունաբերական ճյուղերին համապատասխան, թվով վեցը՝ անտառային, տեղեկատվական և հեռահաղորդակցական, մետալուրգիական, էներգետիկ առողջապահության, բիզնես ծառայությունների, սննդարդյունաբերական և շինարարական<sup>2</sup>: Հենց կլաստերացման քաղաքականության շնորհիվ էլ, որը Ֆինլանդիայի արդյունաբերական քաղաքականության հիմքում դրվեց 1991-1993 թվականներին, այդ երկիրը կարողացավ ռեսուրսներից մեծ կախվածություն և ցածր եկամուտներ ունեցող երկրից վերածվել առաջատար արդյունաբերական երկրի: Ֆիննական կլաստերացման մոդելի կարևոր առանձնահատկություններից մեկն այնպիսի պարադոքսալ իրավիճակի դրսևորումն էր, երբ բարձր ավելացված արժեք պարունակող արտադրանքի արտադրության արդյունավետ զարգացումը և ակտիվ նորարարություններն իրականացվում էին առավելապես այն ոլորտներում, որտեղ նկատվում էր բնական ռեսուրսների պակաս: Բնական ռեսուրսների սղությունը, փաստորեն, այդ երկրում խթանել է նորարարական տեխնոլոգիաների զարգացման անհրաժեշտությունը՝ դրանք առավել արդյունավետ օգտագործելու նկատառումներով: Դրա լավագույն օրի-

<sup>1</sup> Porter, M. (1998). Clusters and the New Economics of Competition, Harvard Business Review, November–December 1998, p. 78.

<sup>2</sup> Сутырин С.Ф., Филиппов П.Н. Кластеры конкурентоспособности Финляндии // Вестник Санкт-Петербургского университета. 2004. Вып. 1 (№ 5). С. 71–78.

նակն են աշխարհում լավագույնը համարվող փայտանյութի վերամշակման ֆիննական հաստոցները: Միաժամանակ, սեփական էներգետիկ ռեսուրսների անբավարարությունը էներգախնայող տեխնոլոգիաների պահանջարկ է ձևավորել: Չպետք է թերագնահատել նաև ֆիննական տնտեսության զարգացման հիմքում պետության կողմից իրականացվող խելամիտ արդյունաբերական և ներդրումային քաղաքականության դերը:

Իտալական և ֆիննական կլաստերացման մոդելների հիմնական տարբերություններից մեկն այն է, որ իտալական մոդելում կլաստերային միավորումների ձևավորում տեղի է ունենում «ներքևից վերև» սկզբունքով, այսինքն՝ նախաձեռնությունը պատկանում է ձեռնարկություններին, մինչդեռ ֆիննական մոդելի դեպքում, հակառակը՝ կլաստերների ձևավորման նախաձեռնությունը պետությանն է, որը տնտեսության միտումների և հնարավորությունների խորը վերլուծության արդյունքում որոշում է տնտեսական զարգացման գերակայությունները և ձեռնարկատիրությանն ուղղորդում համապատասխան ուղղությամբ: Հաշվի առնելով, Հայաստանի տնտեսության առանձնահատկությունները և էական նմանությունները Ֆինլանդիայի տնտեսության հետ, մենք նույնպես կարծում ենք, որ տնտեսության կլաստերացման նախաձեռնությունը պետք է պատկանի պետությանը: Ընդ որում, ձևավորվող կլաստերներում պետությունը պետք է իր յուրահատուկ տեղն ունենա ոչ միայն որպես կլաստերի սուբյեկտներին վերահսկողի, այլ նաև, որպես կլաստերներին մասնակցող որոշ կազմակերպությունների (որոնք կարող են լինել պետական ձեռնարկություններ, գիտակրթական հաստատություններ կամ պետական գերատեսչությունների բաղկացուցիչներ) դերում:

Սակայն մեր կողմից առավել կարևորվել է ռազմաարդյունաբերական արդյունավետ գործող կլաստերներ ունեցող երկրների փորձի ուսումնասիրությունը՝ շեշտադրելով դրանց ձևավորման առանձնահատկությունները, հաջող փորձը Հայաստանի օրինակով տեղայնացնելու համար: Այդ նպատակով ուսումնասիրվել է Թուրքիայում և Իսրայելում ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորման փորձը:

**Թուրքիա:** Թուրքիայում տնտեսության կլաստերացման միտումները սկսվել են 2000-ական թվականների սկզբին, իսկ ռազմաարդյունաբերական առաջին կլաստերների ձևավորումը վերագրվում է 2008 թվականին<sup>1</sup>: Մինչև 1960-ական թվականները Թուրքիայի ռազմաարդյունաբերությունը զարգանում էր բավական ցածր տեմպերով, քանի որ պետա-

<sup>1</sup> Demir K. A., Caymaz E., Erenel F. Defense Industry Clusters in Turkey. (2016). Journal of Defense Resources Management. 7(1(12)), pp 7-20.

կան քաղաքականությունն առավել նպատակահարմար էր դիտում միջոցները նպատակաուղղել այլ ոլորտներ, մասնավորապես կրթությանը և առողջապահությանը: 1960-ական թվականներին ներմուծվող պաշտպանական համակարգերի վրա դրված որոշակի սահմանափակումների թելադրանքով<sup>1</sup>, երկրում որոշում կայացվեց ամրապնդել տեղական ռազմարդյունաբերությունը: Հիմնվեցին հիմնադրամներ՝ տեղական ռազմարդյունաբերական ձեռնարկություններին աջակցելու նպատակով: Դրանցից խոշորագույնը Թուրքիայի Ջինված ուժերի ֆոնդն էր, որի օգնությամբ են հիմնվել այնպիսի խոշոր ընկերություններ, ինչպիսիք են ԱՍԵԼՍԱՆ-ը, ԱՍՊԻԼՍԱՆ-ը, ՀԱՎԵԼՍԱՆ-ը: Թուրքական ռազմարդյունաբերական ձեռնարկությունների մեծամասնությունը հիմնվել է 1980-ական թվականներին՝ հիմնականում արտասահմանյան ընկերությունների հետ համատեղ արտադրությունների կազմակերպման ճանապարհով, առավել հաճախ հանդես գալով որպես արտասահմանյան ընկերությունների ենթապատվերներ իրականացնողներ (subcontractors): Օրինակ, ամերիկյան հայտնի F-16 բազմաֆունկցիոնալ կործանիչների որոշ մասեր արտապատվիրվել են թուրքական ընկերություններին: 1975-1985թթ. ընթացքում Թուրքիան զենքի արտադրության ոլորտում զարգացող 32 երկրների շարքում արդեն իր արտադրական բազմազանությամբ զբաղեցնում էր 5-րդ տեղը՝ չնայած ռազմական տեխնոլոգիաների ու արտադրության ծավալները դեռևս սահմանափակ էին<sup>2</sup>: Սակայն թուրքական ռազմարդյունաբերության համար բեկումնային էր 2011 թվականը, երբ թուրքական զինված ուժերում իր մարտական ծառայությունը սկսեց ամբողջովին Թուրքիայում նախագծված MILGEM տեսակի հետախուզական ռազմանավը: Դրան հաջորդեցին ATAK ուղղաթիռները, ANKA անօդաչու թռչող ապարատները, HURKU ուսումնական ինքնաթիռները, որոնք թուրքական ռազմաարդյունաբերության հիմնական ձեռքբերումներից են: Ներկայում Թուրքիան ունակ է երկրի ռազմական ուժերն ապահովել ամենատարբեր տեսակի սպառազինություններով: Այդ երկրում զարգացած են ռազմաարդյունաբերության գրեթե բոլոր ենթաճյուղերը՝ ռադիոէլեկտրոնիկան, նավաշինությունը, ավիաշինությունը, զրահատեխնիկայի արտադրությունը և այլն, իսկ «ԱՍԵԼՍԱՆ» (ASELSAN) և

<sup>1</sup> Ինչը պայմանավորված էր Կիպրոսի հյուսիսային հատվածի գրավումից հետո Թուրքիայի նկատմամբ կիրառված ռազմական էմբարգոյով:

<sup>2</sup> Հովսեփյան Լ. Ս., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Եր., 2014., էջ 95-97:

<http://www.historyofarmenia.am/images/menus/1227/Hovsepyan.pdf>



«Թուրքիշ Աերոսպեյս Ինդաստրիս» (*Turkish Aerospace Industries*) ընկերություններն աշխարհի 100 ամենախոշոր ռազմաարդյունաբերական ընկերությունների շարքում են<sup>1</sup>:

Թուրքական ռազմաարդյունաբերության զարգացման համար կարևոր դերակատարում են ունեցել մի շարք պետական և ոչ պետական հաստատություններ՝ Պաշտպանական արդյունաբերության ենթակումիստեն (որը երկրի ռազմապաշտպանական երկարաժամկետ քաղաքականության ձևավորման հիմնական պատասխանատուն է), Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը, Ռազմածովային հետազոտությունների թուրքական կենտրոնը, Պաշտպանական և աերոտիզերական արդյունաբերողների միությունը (որը մասնավոր ոլորտում գործող ձեռնարկությունների բավական ազդեցիկ ասոցիացիա է և ներառում է 137 ընկերություն, այդ թվում՝ 4 ռազմաարդյունաբերական կլաստեր<sup>2</sup>) և այլն: 2014 թ.-ի տվյալներով, Թուրքիայի ռազմաարդյունաբերության ոլորտի վաճառքների ընդհանուր ծավալը կազմել է 5 մլրդ դոլար, իսկ ոլորտում կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը գերազանցել է 11 մլրդ դոլարը, նախորդ տարվա համեմատ աճելով 35%-ով<sup>3</sup>: Թուրքիան ռազմական նշանակության արտադրանք է արտահանում բազմաթիվ երկրներ, հիմնական գնորդները ԱՄՆ-ը (581 մլն դոլարի արտահանում՝ 2014 թվականին) և Եվրոպական երկրներն (418 մլն դոլարի) են:

Արագ զարգացող ռազմաարդյունաբերության պատասխանատուները շուտով գիտակցեցին կլաստերացման կարևորությունը մրցունակության ապահովման հարցում: Չնայած դրան, կլաստերացման գործընթացները Թուրքիայի ռազմաարդյունաբերությունում համեմատաբար նոր երևույթ են. առաջին կլաստերի՝ OSTIM Defence and Aviation Cluster (OSSA), ձևավորումը վերագրվում է 2008 թվականին: Վերջինս ունի 191 անդամ և իրականացնում է բազմաթիվ ռազմաարդյունաբերական ծրագրեր, այդ թվում՝ ULTRAVEG նախագիծը եվրոպական ութ ձեռնարկությունների և համալսարանների հետ համատեղ: Այս կլաստերի շրջանակներում են արտադրվում F-16 և CN-235 ինքնաթիռների առանձին բա-

<sup>1</sup> Տե՛ս «The SIPRI Top 100 arms-producing and military services companies in the world (excluding China)», 2015 <https://www.sipri.org/databases/armsindustry>

<sup>2</sup> Տե՛ս Ասոցիացիայի պաշտոնական կայք. <http://www.sasad.org.tr/uploaded//SASAD-DEFENCE-DIRECTORY-2015.pdf>

<sup>3</sup> <http://www.sasad.org.tr/uploaded//2014-Yili-Savunma-ve-Havacilik-Sanayii-Performans-Raporu.pdf>

դադրիչները և սարքավորումները<sup>1</sup>: Միաժամանակ, այստեղ են արտադրվում նաև այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են խառատային և ֆրեզերային հաստոցները, կտրող գործիքները:

2010 թվականին հիմնվեց Teknokent Defense Industry Cluster (TSSK) կլաստերը, որը տեղակայված է Միջինարևելյան տեխնիկական համալսարանում և սերտորեն կապված է այդ համալսարանի գործունեությանը: Կլաստերի հիմնական նպատակն է անդամների միջև համագործակցության շնորհիվ հասնել առավել մեծ սիներգետիկ էֆեկտի՝ պաշտպանական ոլորտում կիրառական հետազոտություններ իրականացնող հաստատությունների համար: Այն բաղկացած է մոտ 330 փոքր և միջին ձեռնարկություններից, որոնք արտադրում են թռչող սպարատներ, այդ թվում նաև՝ անօդաչու, նոր տեսակի նյութեր, CBRN (chemical, biological, radiological, nuclear) տեխնոլոգիաներ, գրահապատ մեքենաներ, կրիպտոգրաֆիայի, կոդավորման և թվայնացման տեխնոլոգիաներ, էլեկտրոնային հետախուզական սարքավորումներ և այլն: Կլաստերի հիմնական շարժիչ ուժը հետազոտությունները և մշակումներն են (R&D), որոնք իրականացվում են համալսարանների, արդյունաբերության և հետազոտական հաստատությունների միջև սիներգետիկ կապերի շնորհիվ: Կլաստերում աշխատում է ավելի քան 2140 գիտաշխատող, որոնք իրականացնում են ավելի քան 365 գիտահետազոտական նախագիծ՝ ռազմաարդյունաբերության համար: 2016 թ.-ի վերջի դրությամբ կլաստերի արտահանման ծավալները գերազանցել են 100 մլն ամերիկյան դոլարը<sup>2</sup>:

2010 թ.-ին է հիմնվել նաև Աերոսպիցերական կլաստերային ասոցիացիա (Aerospace Clustering Association), ոչ կառավարական կազմակերպությունը, որի հիմնական նպատակն է Թուրքիայի աերոսպիցերական և պաշտպանական արդյունաբերության ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը՝ արտադրության, նախագծման, ինչպես նաև՝ հետազոտությունների և մշակումների կազմակերպմանն աջակցության նկատառումներով: Այն մեծ ուշադրություն է դարձում բարձրորակ աշխատուժի պատրաստմանը: 2011 թվականին ձևավորված Eskisehir Aviation Cluster (ESAC) կլաստերը մասնագիտացած է ինքնաթիռաշինության ոլորտում: Տեղակայման տարածքը պատահականորեն չի ընտրվել, այստեղ են տեղաբաշխված Թուրքիայի ռազմաօդային ուժերը, և կլաստերը կոչված է

<sup>1</sup> Աղբյուրը՝ Օստիմի պաշտպանական և ավիացիոն կլաստերի կայք. <http://www.ostimsavunma.org/>

<sup>2</sup> Աղբյուրը՝ Տեքնոքենթ պաշտպանական արդյունաբերության կլաստերի պաշտոնական կայք. <http://tssk.odtuteknokent.com.tr/>

այդ ուժերին մատակարարել անհրաժեշտ մասեր և ծառայություններ: Կլաստերի ձևավորման համար պահանջվել է մոտ երեք տարի, ընդ որում բավական մեծ նշանակություն է ունեցել այդ տարածաշրջանի ձեռնարկությունների մասնաբաժինն ընդհանուր ռազմաարդյունաբերական և աերոտիեզերական արտադրանքի թողարկման ծավալներում: Դրա ձևավորման հիմնական նպատակն է աջակցել մասնակից ձեռնարկությունների հետազոտական և մշակման աշխատանքներին, խթանել նորարարությունները և ձեռներեցությունը, ստեղծել արդյունավետ կոոպերացիա մասնակիցների միջև (այդ թվում՝ մշակութային, մասնագիտական, առևտրային, տնտեսական, կառավարական և այլ մասնակիցների):

Ավելի ուշ՝ 2015 թ.-ին 27 հիմնադիր մասնակից-ձեռնարկությունների նախաձեռնությամբ Ստամբուլում ձևավորվեց Պաշտպանական, ավիացիոն և տիեզերական կլաստերային ասոցիացիան (The Defence, Aviation, Space Clustering Association (SAHA))<sup>1</sup>, որի հիմնական նպատակն է եղել բարձրացնել ոլորտի մրցունակությունը, դրանում գործող ձեռնարկությունների արտադրողականության աճի և միջազգային շուկաներում լավագույնս հանդես գալու նկատառումներով: Այս կլաստերի ձևավորմամբ Ստամբուլի արդյունաբերությունը, որն ապահովում է Թուրքիայի ազգային արդյունքի գրեթե կեսը, ընդ որում՝ առավելապես բարձրտեխնոլոգիական արտադրանքի տեսքով, ավելի մեծ հաջողություններ է ակնկալում ունենալ համաշխարհային շուկայում: Աերոտիեզերական և պաշտպանական կլաստեր՝ The Space, Aviation, and Defence Cluster, գործում է նաև Բուրսայում՝ 2014 թվականից, որի հիմնական աջակիցը Բուրսայի առևտրի և արդյունաբերության պալատն է: Այն դեռևս կայացման փուլում է, կառավարման մարմիններն ակտիվորեն աշխատում են արտասահմանյան և ներքին արտադրողների հետ համագործակցության կապուղիներ հաստատելու ուղղությամբ՝ նպատակադրելով աջակցել մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը, նորարարական նախաձեռնություններին և տարածաշրջանի զարգացմանը:

Այսպիսով, Թուրքիայում ռազմաարդյունաբերական կլաստերների հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք գլխավորապես բաղկացած են փոքր և միջին ձեռնարկություններից, այն դեպքում, երբ զարգացած ռազմաարդյունաբերություն ունեցող երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ կլաստերները խոշոր և փոքր ձեռնարկությունների յուրօրինակ խմբավորումներ են:

<sup>1</sup> <http://sahaistanbul.org.tr/en/who-we-are/>

Օրինակ, Ֆրանսիայի Ավիատիեզերական հովիտը՝ Aviation and Space Valley of France, իրենից ներկայացնում է հիմնականում խոշոր ենթապատվիրատուներից բաղկացած միավորում, թեև այն միաժամանակ հանդես է գալիս նաև որպես ՓՄՁ-ների հետ (և միջև) սիներգետիկ էֆեկտի լավագույն դրսևորման համար բնական միջավայր: Ուստի, առավել մեծ ռազմաարդյունաբերական ավելացված արժեքի հասնելու համար կարևոր է հավասարակշռել խոշոր ընկերությունների և ՓՄՁ-ների միջև համագործակցությունը նաև Հայաստանում: Հայաստանի համար, օրինակելի է նաև թուրքական կառավարական մարմինների կողմից կլաստերացման հստակ ռազմավարության որդեգրումը, ինչը բացակայում է Հայաստանում. բոլորը խոսում են կլաստերացման քաղաքականության անհրաժեշտության մասին, սակայն որևէ գործակալություն, կամ պետական լիազորված մարմին որևէ կերպ չի նախաձեռնում նման գործառույթի իրագործումը: Բացի այդ, Թուրքիայում առկա է նաև մեկ այլ խնդիր ռազմաարդյունաբերական կլաստերների հետ կապված. քանի որ ոլորտում գործունեություն ծավալող ընկերություններին պետությունը տրամադրում է զգալի սուբսիդիաներ, մասնավորապես հարկերի կրճատման տեսքով, ՓՄՁ-ներն ավելի շուտ շահագրգռված են դրանց ստացման, քան այլ ընկերությունների հետ համագործակցության ճանապարհով իրենց հնարավորությունների և իրական եկամուտների աճի մեջ:

**Իսրայել:** Իսրայելում տնտեսության կլաստերացման գործընթացները սկսվել են դեռևս 1990-ական թվականներին՝ բարձրտեխնոլոգիական արտադրական ճյուղերում: Ներկայում «Wired» ամսագիրը կլաստերացման էֆեկտի վարկանիշային ցուցանիշով իսրայելական բարձրտեխնոլոգիական կլաստերները դասակարգում է նույն խմբում, ինչ Բոստոնի, Հեյսինկիի, Լոնդոնի և Կիստայի (Շվեդիա) կլաստերները, որոնք զիջում են, թերևս, միայն Միլիկոնյան հովտին<sup>1</sup>: Դրա մասին է վկայում նաև այն, որ Իսրայելում ավելի շատ ընկերություններ են գնանշվում ամերիկյան ֆոնդային բորսաներում, քան ԱՄՆ-ի և Կանադայի հարևանությամբ գտնվող որևէ այլ երկրում: 1999 թվականի տվյալներով, օրինակ, Իսրայելն ԱՄՆ-ի վենչուրային կապիտալի հոսքերի միակ խոշոր հասցեատերն էր:

Իսրայելի կլաստերի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանում ներառված բոլոր ընկերությունները գտնվում են իրտ բնակեցված տարածաշրջաններում՝ Թել-Ավիվում, Հայֆայում, Երուսաղեմում: Իսրայելական կլաստերի հիմքում ընկած են տեղեկատվական և

<sup>1</sup> Catherine de Fontenay and Erran Carmel. (2002). Israel's Silicon Wadi: The forces behind cluster formation. DOI: 10.1017/CBO9780511802911.005.

հեռահաղորդակցական տեխնոլոգիաները (ICT)՝ ծրագրային ապահովում, տվյալների փոխանցում, էլեկտրասօպտիկա, ապարատային նախագծում, ինտերնետ-տեխնոլոգիաներ, ինչպես նաև՝ դրանց հետ փոխկապակցված բարձրտեխնոլոգիական ճյուղերը՝ բժշկական տեխնոլոգիաները, բիոտեխնոլոգիաները, գյուղատնտեսական տեխնոլոգիաները, նյութերի տեխնոլոգիաները, ռազմական տեխնոլոգիաները:

Իսրայելական SZS ոլորտի հիմնական արտադրանքը ծրագրային ապահովումն է՝ Հնդկաստանում և Իռլանդիայում վերջերս ձևավորված կլաստերների նմանությամբ, սակայն, եթե վերջիններս մասնագիտացած են ծրագրավորման ծառայությունների մատուցման գործում, ապա իսրայելական արտադրանքի մեծ մասը վերջնական արտադրանքի բաղադրիչներ են՝ ծրագրային ապահովման միջոցներ և հեռահաղորդակցական արտադրանք: Ավելին, այդ արտադրանքը նախատեսված է խոշորագույն համաշխարհային շուկաների համար, և մրցակից է հիմնականում այնպիսի երկրների, ինչպիսիք են ամերիկյան, եվրոպական, թայվանյան, ճապոնական, այլ ոչ թե զարգացող երկրների արտադրանքի հետ: 2000 թ.-ի տվյալներով Իսրայելի SZS արդյունաբերությունն արտադրել է 15 մլրդ դոլարի արտադրանք, որն Իսրայելի ընդհանուր արտահանման 1/3-ն է: Այս արդյունքն ավելի տպավորիչ է ներկայանում, հատկապես, եթե հաշվի ենք առնում, որ 1980-ական թթ. արտահանման հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր և աղամանդագործությունը: Նույն՝ 2000թ.-ին SZS ոլորտն ապահովել է ՀՆԱ-ի 36% աճ, ոլորտում աշխատում էր 148000 մարդ, որոնց մեկ երրորդը՝ գիտնականներ և ինժեներներ:

Իսրայելի զարգացման առանձնահատկություններից մեկն այն է, որ չնայած այն հանգամանքին, որ այն ի սկզբանե համեմատաբար աղքատ երկիր էր, նրան բնորոշ չէին այն բոլոր անհաջողությունները, որոնք հատուկ են զարգացող երկրներին (կաշառակերություն, գույքային ռիսկեր, հանցագործությունների բարձր մակարդակ, անվստահելի ենթակառուցվածքներ, ունեցվածքի բռնագանձման ռիսկ), և կարող էին հաճախ չեզոքացնել համեմատական առավելությունները: Փոխարենն Իսրայելին հաջողվեց ձևավորել մարդկային բարձրորակ կապիտալ, որը տիրապետում էր հիմնարար գիտելիքների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի, ճարտարագիտության և բժշկության ոլորտներում. Իսրայելի բնակչության մոտ 28%-ն ունի կրթական աստիճան, մոտ 1,35%-ը գիտնականներ կամ ինժեներներ են<sup>1</sup>, ինչը զգալիորեն գերազանցում է SZԶԿ անդամ

<sup>1</sup> Source: Office of the chief Scientist, Israel Ministry of Industry and Trade.

երկրների համանման ցուցանիշները: Նման բարձրորակ մարդկային կապիտալի առկայությունը երկրում պայմանավորված է պետության կողմից վարվող կրթական քաղաքականությամբ, ըստ որի տևական ժամանակ զգալի ներդրումներ են իրականացվել կրթության բոլոր մակարդակներում: Հասկանալի է, որ մարդկային կապիտալի զարգացման գործում բավական մեծ է նաև ռազմական ոլորտի դերը, որը դեռ պատանեկան տարիքից ուղղորդում է դեպի համակարգչային տեխնիկայի և ճարտարագիտության ոլորտներ: Ռազմական ոլորտն այստեղ, ըստ էության, ներկայանում է որպես փորձարարական հիմք տեխնոլոգիական ու գիտական էլիտայի համար<sup>1</sup>: Իսրայելի մարդկային կապիտալի ձևավորման վրա իր էական ազդեցությունն է ունեցել նաև Խորհրդային Միությունից 1989-ից հետո մոտ մեկ միլիոն հրեական ծագում ունեցողների ներգաղթը, որոնց մեջ բավական շատ էին գիտնականները ու ինժեներները՝ մաթեմատիկայի, ճշգրիտ ու բնական գիտությունների բնագավառում հիմնարար գիտելիքներով<sup>2</sup>:

Իսրայելի տնտեսական զարգացման ժամանակագրությունն առանձին չի անդրադառնում ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորմանը, այլ գրեթե միշտ՝ բարձրտեխնոլոգիական կլաստերներին ու դրանց ձևավորման փուլերին: Սակայն դրանք բոլորն էլ հիմքում ունեն ռազմաարդյունաբերության զարգացումը և դրան նպատակաուղղված պետական քաղաքականությունը: Այս ոլորտում մշակված տեխնոլոգիաները (թե՛ պետական, և թե՛ մասնավոր ձեռնարկություններում) մշտապես գտնվել են բարձրտեխնոլոգիական բոլոր արտադրությունների առանցքում (մասնավորապես՝ ՏՀՏ-ների): Պարադոքսալ է, որ Իսրայելում ռազմական բնույթի հետազոտությունները և մշակումները հաճախ ավելի հասանելի են եղել առևտրայնացման տեսանկյունից, քան քաղաքացիական նշանակության պատենտավորված գիտական ձեռքբերումները, բացի այդ բավական հեշտ է ընթացել նաև բարձր որակավորում ունեցող աշխատողների շարժը ռազմական և քաղաքացիական արտադրությունների միջև, քանի որ ըստ էության, երկրում գերակշռող քաղաքացիական արտադրության ոլորտները համարվել և համարվում են ռազմաարդյունաբերության ոլորտի հարակից կամ սպասարկող ոլորտներ: Օրինակ, Իսրայելը ներկայում իր ամուր դիրքերն ունի էլեկտրասպիտակայի բնագավառում (ներառյալ՝ մանրաթելային օպտիկան և էլեկտրասպիտակայի վրա

<sup>1</sup> Perman, Stacy. “Startup Nation.” [www.eCompany.com](http://www.eCompany.com) (10 January 2001) November 2000.

<sup>2</sup> Stone, Richard. *Science*. V.284.5416. “Israel hits rich seam in ex-Soviet immigrants.” Washington: 7 May 1999. Pp. 892 to 897.

հիմնված ռոբոտացված արտադրությունը), այն դեպքում, երբ դեռ 1960-ական թվականներին էլեկտրաօպտիկական ներառված էր ռազմական նշանակության հետազոտությունների և մշակումների մեջ: 1999 թվականի տվյալներով այս ոլորտում գործում էր ավելի քան 150 ձեռնարկություն (այդ թվում նաև՝ այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Elbit, Rafael և Israel Aircraft Industries ընկերությունները), տարեկան 2.5 մլրդ դոլար վաճառքի ծավալներով, ինչը բավական տպավորիչ ցուցանիշ է Իսրայելի նման երկրի համար<sup>1</sup>:

Եթե ընդհանրացնենք, ապա որպես Իսրայելում կլաստերացման ներուժի ձևավորման վրա ազդող գործոններ պիտի առանձնացնենք երկու խումբ՝ ներքին (կուտակային) և արտաքին ուժերի ազդեցությունը: Ներքին կուտակային ուժերի ազդեցությունը դրսևորվել է նոր ձեռնարկությունների աստիճանական ձևավորմամբ, որոնցից յուրաքանչյուրի համար ուսանելի է եղել ոլորտում արդեն գործող ձեռնարկությունների արդյունավետ փորձը, ինչպես նաև նրանց կողմից կուտակված հեղինակությունը (տեղեկատվության համաչափության պահպանումը): Մյուս կողմից որոշիչ է եղել գործող ձեռնարկությունների կողմից միջնորդական ծառայությունների և միջանկյալ ապրանքների նկատմամբ պահանջարկը, որը անպայմանորեն փորձել են բավարարել երկրի ներսում գնումների ճանապարհով: Դրան զգալիորեն նպաստել է նաև պետության նախաձեռնությամբ վենչուրային ֆինանսավորման ինստիտուտի կայացումը երկրում: Միաժամանակ բավական մեծ ազդեցություն է ունեցել նաև 1993 թվականի Օսլոյի հաշտության պայմանագիրը, որը կրճատեց քաղաքական ռիսկերը և ներդրումների լրացուցիչ ներգրավման նախադրյալներ ստեղծեց: Որպես արտաքին գործոններ, իրենց որոշիչ ազդեցությունն ունեցան ամերիկյան ընկերությունների և լրատվամիջոցների կողմից իսրայելական ապրանքների և արտադրությունների մարկետինգային առաջխաղացմանն աջակցությունը, ամերիկյան տեխնոլոգիաների կիրառման թույլտվությունը, ինչպես նաև 1990-ականների ինտերնետային և ֆինանսական բումերը<sup>2</sup>:

Իսրայելում ռազմաարդյունաբերության ոլորտի (և ոչ միայն) կլաստերացման փորձը Հայաստանի համար կարող է ուսանելի լինել հատկապես ձեռնարկությունների միջև (ինչպես նոր ստեղծվող, այնպես էլ արդեն գործող) արդյունավետ կապերի հաստատման տեսանկյունից: Ան-

<sup>1</sup> Catherine de Fontenay and Erran Carmel. (2002). Israel's Silicon Wadi: The forces behind cluster formation, p 10. DOI: 10.1017/CBO9780511802911.005.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 19:

հրաժեշտ է «առևտրային շահի» մտածելակերպից դուրս գործարար շրջանակներում համընդհանուր դարձնել «պետական մտածողության» գերակայությունը, ինչն անհրաժեշտ հիմքեր կստեղծի երկրում գործող արտադրությունների (հատկապես SS կամ այլ բարձրտեխնոլոգիական ոլորտներում) արտաքին դրական էֆեկտները տնտեսության զարգացմանը «ծառայեցնելու» համար: Դրա համար անհրաժեշտ է միջանկյալ ապրանքների կամ ծառայությունների (իրավաբանական, հաշվապահական, խորհրդատվական) պահանջարկ ստեղծել երկրի ներսում՝ խթանելով նոր՝ թեկուզ փոքր, ընկերությունների ստեղծումը: Այս գործում իր կարևոր դերակատարումը պետք է ունենա պետությունը՝ ստանձնելով վենչուրային ֆինանսավորման հիմնական պարտականությունը և սահմանելով արտոնությունների և գործարարության համար բարենպաստ պայմանների որոշակի համակարգ տեղական ընկերությունների միջև առևտրատնտեսական արդյունավետ համագործակցության համար:

## **ՈԱԶՄԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԼԱՍՏԵՐՎՅԻՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԸ**

**ԳԱՅԱՆԵ ԵՐՆԻԿԻ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Վերջին ժամանակներում տարբեր երկրների նորարարական, կառուցվածքային փոփոխությունների, տարածքային կառավարման և արտաքին առևտրատնտեսական քաղաքականություններում լայն արտացոլում է գտել կլաստերացման մոտեցումը՝ որպես տնտեսության զարգացման որոշիչ գործոն: Հաշվի առնելով ռազմաարդյունաբերության համակարգաստեղծ նշանակությունը տնտեսությունում, այն դիտարկվել է որպես կլաստերացման առավել նպատակահարմար ոլորտ: Ըստ այդմ էլ հոդվածում ուսումնասիրվել է կլաստերացման արտերկրյա փորձը (Թուրքիա, Իսրայել)՝ շեշտադրելով ռազմաարդյունաբերության ոլորտի հաջողությունները և Հայաստանի համար արդյունավետ փորձի կիրառման հնարավորությունները:

**Բանալի բառեր.** *ռազմաարդյունաբերություն, կլաստեր, տնտեսության կլաստերացում, բարձրտեխնոլոգիական ոլորտ, տնտեսական զարգացում, նորարարություն, մրցունակություն, փոքր և միջին ձեռնարկություններ:*



## ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ КЛАСТЕРНОГО РАЗВИТИЯ ОБОРОННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

**ГАЯНЕ ЭРНИКОВНА АРУТЮНЯН**, *к.э.н., доцент*  
*старший научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** В последнее время кластерный подход широко используется в инновационной политике, в политике структурных изменений и территориального управления, а также во внешнеэкономической политике разных стран в качестве решающего фактора развития экономики. Принимая во внимание системообразующую значимость оборонной промышленности в экономике, она представляется как наиболее подходящая сфера кластеризации. Соответственно, в статье рассмотрен зарубежный опыт кластеризации экономики (Турции и Израиля), акцентируя на достижениях в оборонной промышленности и возможностях применения эффективного опыта в Армении.

**Ключевые слова:** *оборонная промышленность, кластер, кластеризация экономики, высокотехнологическая сфера, экономическое развитие, инновация, конкурентоспособность, малые и средние предприятия.*

## INTERNATIONAL PRACTICE ON CLUSTERING IN DEFENSE INDUSTRY

**GAYANE ERNIK HARUTYUNYAN**, *Ph.D. in Economics, Assistant Professor*  
*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Recently, the cluster approach is widely utilized in the innovation policy, the policy of structural changes and regional management, and foreign trade policy as well by different countries, as a crucial factor of economic development. By taking into account the system-building importance of the defense industry in the economy, it has been considered as the most appropriate sector for clustering. Accordingly, the article examines the international practice on economic clusterization (namely, Turkey and Israel), emphasizing the achievements of the defense industry and the possibilities of applying the effective practices in Armenia.

**Keywords:** *Defense industry, cluster, clustering in the economy, high technology sector, economic development, innovation, competitiveness, small and medium-sized enterprises.*

## **ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

### **ՀՀ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

Ապահովագրությունը Հայաստանում խոր արմատներ չունի, քանի որ գործունեության այս տեսակը մեր երկրում սկսել է զարգանալ խորհրդային իշխանության տարիներին: Այդ պատճառով էլ միանշանակ կարելի է ասել, որ խորհրդային տարիները մեր հանրապետության ապահովագրության ոլորտի համար զարգացման տարիներ էին: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԽՍՀՄ մյուս երկրներում ապահովագրությունը իրականացվում էր «Պետապ» և «Ինգոսստրախ» ընկերությունների կողմից: Ինչ վերաբերում է ապահովագրության զարգացմանն աշխարհում, ապա կարող ենք ասել, որ ապահովագրության սկզբնական փաստը պատմությունը չի կարող արձանագրել: Դեռ ստրկատիրական հասարակարգերի ժամանակներից ստրկատերերը ապահովագրության միջոցով վերականգնում էին բնական աղետների, անցանկալի պատահարների պատճառով ստրուկներին հասցված վնասը:

Ժամանակակից ապահովագրության հիմքերը դրվել են 17-րդ դարից: Այդ ժամանակ սկսվեց մաթեմատիկական և վիճակագրական օրինաչափությունների միջոցով ակտուարային հաշվարկների իրականացումը: Ընդհանրապես ապահովագրության զարգացման համար կարևոր խթան են եղել մեծածավալ աղետները: Ապահովագրության մի շարք տեսակներ սկսեցին առաջանալ 18-րդ դարում՝ կյանքի ապահովագրությունը, 19-րդ դարում արդյունաբերության ռիսկը: Հետագայում 20-րդ դարի ընթացքում ստեղծվեցին և զարգացան ապահովագրության շատ տեսակներ<sup>1</sup>:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո ապահովագրական գործը հայտարարվեց պետական մենաշնորհի ապահովագրության բոլոր տեսակների գծով, որի արդյունքում փաստորեն ոչնչացվեց ցարական Ռուսաստանի զարգացած ապահովագրական ոլորտը: Խորհրդային տարիներին Պետապի հայկական հանրապետական վարչությունը ունեցել է առաջատար դիրքեր և համալրված է եղել բարձրակարգ մասնագետներով:

---

<sup>1</sup> Сербиновский Б.Ю., Гаркуша В.Н., “Страховое дело”, Издательство “Феникс”, 1999г., 376 стр.

ԽՍՀՄ փլուզումից հետո նրանք դուրս եկան հայկական շուկայից: Պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցումը ՀՀ-ում հանգեցրեց տնտեսական ու սոցիալական կառուցվածքային փոփոխությունների: Առաջացավ իրավական դաշտ և օբյեկտիվ պահանջ ապահովագրական նոր համակարգի ներդրման համար: ՀՀ ապահովագրական համակարգը սկսվել է ձևավորվել 1990-ական թթ.: Ճիշտ է, ՀՀ-ում ապահովագրական դաշտը դանդաղ տեմպերով էր զարգանում և բնութագրվում էր տարերայնությամբ և պետության կողմից թույլ վերահսկողությամբ, բայց մեծ էր նրա դերը տնտեսության բնականոն զարգացման համար:

1988թ., «Կոոպերատիվների մասին» ԽՍՀՄ օրենքով սկիզբ դրվեց ապահովագրական նոր գործընթացի: Օրենքը, վերջ դնելով ապահովագրական ոլորտում պետական մենաշնորհին, հնարավորություն տվեց ապահովագրական գործունեություն իրականացնել ոչ պետական ապահովագրական ընկերություններին: Սկսվեց ապահովագրական ոլորտի զարգացման նոր փուլ, և կազմավորվեցին մասնավոր ապահովագրական ընկերություններ: Մակայն ոլորտի կայացման և զարգացման գործընթացի վրա բացասական ազդեցություն ունեցան տնտեսական ճգնաժամը և պատերազմական իրավիճակը՝ ետին պլան մղելով ապահովագրական գործունեությունը: Մյուս կողմից օրենսդրական դաշտի անկատարությունը հանգեցրեց անվերահսկելիության, ինչի հետևանքով մի շարք ապահովագրական ընկերություններ, հեռանալով հիմնական գործառույթներից, սկսեցին իրականացնել ոլորտին չառնչվող գործունեություն:

Հատկանշական է այն փաստը, որ հետխորհրդային տարիներին ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման առաջին, այսպես կոչված, ձևավորման փուլը բնութագրվում է տարերայնությամբ, պետության կողմից ապահովագրական գործունեության նկատմամբ կարգավորման և վերահսկողության անկատարությամբ, որի արդյունքում 1991-1996թթ. ՀՀ ապահովագրական շուկայում կտրուկ աճեց գործող ապահովագրական ընկերությունների ընդհանուր թվաքանակը՝ հասնելով 82-ի<sup>1</sup>: Այդ տարիներին իրենց ապահովագրական համարող կազմակերպությունները, գործելով օրենսդրական վակուումի մեջ, զբաղվում էին նաև ապահովագրական գործունեությունից տարբերվող ֆինանսական, բանկային, անշարժ գույքի առք ու վաճառքի գործառնություններով: Իր հերթին ապահովագրողների կողմից ապահովադիրների հանդեպ ստանձնած պարտավորությունների զանգվածային չկատարման դեպքերը, խաբեությունները

<sup>1</sup> «ՀՀ-ում ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացման հայեցակարգ» ընդունված ՀՀ կառավարության 02.11.2000թ. թիվ 48 արձանագրային որոշմամբ, էջ 1:

նպաստեցին բնակչության մոտ ապահովագրական համակարգի նկատմամբ ցածր վստահության մթնոլորտի ձևավորմանը:

Անկախացումից հետո ՀՀ ապահովագրական շուկայի կանոնակարգման առաջին քայլը եղավ «Հանրապետությունում ապահովագրական գործունեության պետական կարգավորման միջոցառումների մասին» ՀՀ Նախարարների խորհրդի 01.08.1991թ. թիվ 485 որոշման ընդունումը, որի նպատակն էր նպաստել ապահովագրական ծառայությունների հանրապետական շուկայի կազմավորմանը և արդյունավետ զարգացմանը, ինչպես նաև ապահովադիրների իրավունքների և պետական շահերի պաշտպանությունը: Համաձայն այս որոշման ապահովագրական գործունեությունը հանրապետությունում առաջին անգամ նախատեսվում է իրականացնել հատուկ այդ նպատակով ստեղծված կազմակերպությունների կողմից, որոնց համար ապահովագրական գործունեությունը համարվելու է հիմնական<sup>1</sup>: Չնայած, որ որոշման մեջ ամրագրված էր ապահովագրական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ հստակ չէր սահմանվում կարգավորման որևէ մեխանիզմ կամ իրավական լծակ: Այստեղ ընդամենը նախատեսվում էր ապահովագրական գործունեության պետական կարգավորման հիմքում դնել ապահովագրական կազմակերպությունների գրանցման և դրանց գործունեության լիցենզավորման պարտադիր կարգը, իսկ պետական վերահսկողության նպատակով ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծել պետական ապահովագրական հսկողության տեսչություն:

Վերոնշյալ որոշմանը հաջորդեց «ՀՀ տարածքում գործող ապահովագրական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից ստացված եկամուտների և կատարված ծախսերի կազմի մասին» ՀՀ կառավարության 23.12.1992թ. թիվ 633 որոշման ընդունումը: Իսկ 1993թ. որոշ չափով սկսեց կանոնակարգվել այնքան կարևոր և մտահոգիչ ապահովագրական ընկերությունների գործունեության լիցենզավորման գործընթացը՝ «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեությամբ զբաղվելու ժամանակավոր կարգով» հաստատված ՀՀ ֆինանսների նախարարի ապրիլի 12-ի թիվ 28 հրամանով, որտեղ սահմանված չէին ապահովագրական ընկերությունների գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգ, ինչպես նաև վճարունակությանն ուղղված որևէ նորմատիվ: Ապահովագրական գործունեությամբ զբաղվող ընկերությունները պարզագույն կարգով ՀՀ ֆինանսների նախարարությունից ստանում էին

<sup>1</sup> «Հանրապետությունում ապահովագրական գործունեության պետական կարգավորման միջոցառումների մասին» թիվ 485 որոշում՝ ընդունված ՀՀ Նախարարների խորհրդի կողմից 01.08.1991թ., կետ 2:

ապահովագրական գործունեության իրականացման համապատասխան արտոնագրեր, որից հետո կարող էին գործել առանց որևէ խոչընդոտի: Արդյունքում արտոնագրեր ստացան 85 ընկերություններ:

1996թ. ՀՀ ֆինանսների նախարարության կազմում ստեղծվեց ապահովագրական տեսչություն, որի նպատակն էր ապահովագրության ոլորտում առաջացած բազմաթիվ հիմնախնդիրների լուծումը:

1998թ. հուլիսի 28-ին ընդունվեց ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: ՀՀ քաղաքացիական օրենսգիրք գլուխ 54-ը՝ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի հետ կազմեց ապահովագրության դաշտը ձևավորող օրենսդրության հիմքը: Արդյունքում՝ 1998թ. Հայաստանի ապահովագրական շուկայում գործունեության իրավունք ստացան ընդամենը 20 ապահովագրական ընկերություն<sup>1</sup>: 1996թ. գործող 83 նմանատիպ ընկերության փոխարեն<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական, վերաապահովագրական և ապահովագրական միջնորդային գործունեության կազմակերպման և իրականացման, ինչպես նաև ապահովագրության հետ կապված այլ հարաբերությունները ներկայումս կարգավորվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով և Քաղաքացիական օրենսգրքի 54-րդ գլխի համաձայն:

Ըստ պաշտոնական տվյալների, 2003թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գործում էին 25 լիցենզավորված ապահովագրական ընկերություններ:

2004թ. հունիսի 11-ին ընդունվեց «Ապահովագրության մասին» ՀՀ նոր օրենքը: Նոր օրենքում տրվեց ապահովագրական հարաբերությունների հիմնական հասկացությունների հստակ սահմանում: Հստակեցվեց նաև ապահովագրության տեսակների դասակարգումը: Բացի կյանքի և ոչ կյանքի ապահովագրություններից՝ սահմանվեց նաև ապահովագրության դասակարգումն ըստ անձնական, գույքային և պատասխանատվության ապահովագրությունների: Օրենքում մեծ ուշադրություն էր դարձված նաև ապահովագրական ընկերությունների լիցենզավորման գործընթացի կարգավորմանն ու ապահովագրական ընկերությունների գործունեության թափանցիկության ապահովմանը: Ապահովագրական ընկերությունները իրենց տարեկան հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև դրանց

<sup>1</sup> «Տեղեկանք Հայաստանի Հանրապետության ապահովագրական շուկայի մասին»- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1997թ.:

<sup>2</sup> «Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական շուկայի և ապահովագրական համակարգի զարգացման», ՀՀ կառավարություն, 2000թ.:

հաստատման վերաբերյալ անկախ և լիցենզավորված առողիտորական ծառայությունների տված եզրակացությունները պարտավոր էին հրապարակել մամուլում: Այնուհետև օրենքը վերանայվեց, և 2007թ. ապրիլի 9-ին ընդունվեց «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքը:

ՀՀ-ում ապահովագրական շուկան դարասկզբին սկսեց աճի միտում դրսևորել, սակայն ապահովագրական շուկայի զարգացման այդ սկզբնական փուլում գոյություն ունեին լուծում պահանջող մի շարք կարևոր հիմնախնդիրներ: ՀՀ ապահովագրական շուկայի կարևոր հիմնախնդիրը վերապահովագրության հանձնված գումարների մեծությունն էր: 2004թ. ապահովագրության գումարների հանրագումարը կազմել էր 660.962.156,0 հզ. դրամ, որից վերապահովագրության փոխանցված պարտավորությունները կազմել են 641.411.301,4 հզ. դրամ կամ ապահովագրական պարտավորությունների 97%-ը<sup>1</sup>: Այսպիսի միտումներ են գրանցվել ՀՀ ապահովագրական շուկայի կայացման ողջ ժամանակաշրջանի ընթացքում: Այս հանգամանքը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ պայմաններով՝

- ✓ բնակչության անբավարար վստահությունը հայրենական ապահովագրական համակարգի հանդեպ,
- ✓ երկրում ապահովագրական մշակույթի համեմատաբար ցածր մակարդակը,
- ✓ ապահովագրական ընկերությունների կապիտալի ոչ բավարար մեծությունը:

Այս ամենի հետևանքով էապես տուժում էր ՀՀ տնտեսությունը: Ապահովագրական ընկերությունների հասույթի մեծ մասը փոխանցվում էր օտարերկրյա առաջնակարգ վերապահովագրողներին, որի արդյունքում տեղի էր ունենում բնակչության դրամական միջոցների արտահոսք:

ՀՀ ապահովագրական շուկայի համար լավագույն խթանը կարող էր հանդիսանալ պարտադիր ապահովագրության տեսակների սահմանումը: Քանի որ ՀՀ-ում բնակչության եկամուտները ցածր են, նպատակահարմար էր պարտադիր ապահովագրության տեսակների աստիճանական ներդրում՝ որոշելով նախնական առաջնահերթությունը: Կարևոր էր նաև ապահովագրական շուկայում կամավոր և պարտադիր ապահովագրությունների տեսակների միջև օպտիմալ համամասնությունների սահմանումը:

---

<sup>1</sup> Կիրակոսյան Կ., Ապահովագրական գործ, Երևան, 2011, 352 էջ:

Հենց այս հիմնախնդրի լուծմանը ծառայելու եկավ ՀՀ ապահովագրական շուկա ներդրված առաջին պարտադիր ապահովագրատեսակը՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը՝ ԱՊՊԱ, որը ընդունվեց 2010թ. մայիսի 18-ին: ԱՊՊԱ-ի հիմնական գաղափարը ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող վնասների փոխհատուցումն է՝ կապված երրորդ անձանց գույքի, առողջության, կյանքի և այլ գույքային շահերի հետ:

Մյուս հիմնախնդիրը կապված էր ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի պահանջի խստացման հետ: Եթե նվազագույն չափը մեծացվեր, կնվազեր ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունների թիվը, որի հետևանքով տեղի կունենար ապահովագրական ընկերությունների միաձուլումներ և վերակազմավորումներ, ինչն էլ հենց տեղի ունեցավ 2004թ. սեպտեմբերի 30-ին ընդունված 1345-Ն արդյունքում՝ միայն 2 ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունն է գերազանցել 100մլն դրամը:

Ներկայումս Հայաստանում ապահովագրական գործունեություն են իրականացնում միայն ոչ կյանքի ապահովագրական ընկերությունները, որոնք այս պահի դրությամբ 7-ն են՝ «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲԸ, «Ռոսգոսստրախ Արմենիա» ապահովագրական ՓԲԸ, «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ, «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ, «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ, «Ռեսո» ապահովագրական ՓԲԸ և «Արտահանման ապահովագրական գործակալություն» ՓԲԸ ապահովագրական ընկերությունները:

Ապահովագրական ընկերությունների քանակը 2002թ. համեմատությամբ կրճատվել է ավելի քան երեք անգամ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի բարձր նորմատիվի սահմանումից հետո, որի նվազագույն չափը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1,0 մլրդ. դրամ, մի քանի ապահովագրական ընկերություններ ևս դադարեցրին իրենց գործունեությունը: Իսկ այժմ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 1,5 մլրդ դրամ:

Մինչ այժմ Հայաստանի ապահովագրական շուկայում ապահովագրությունն իրականացվում էր շատ սահմանափակ ապահովագրության դասերի գծով: Ապահովագրության պայմանագրերը հիմնականում կնքվում էին այն դասերի գծով, որոնց վերաբերյալ միջազգային համաձայնագրերով, բանկերի կողմից, վարկերի տրամադրման, շինարարական և այլ աշխատանքների մրցույթների կազմակերպիչների պահանջով սահ-

մանված էր ապահովագրվելու պարտադիր պահանջ կամ որոշ պետությունների կողմից իրենց երկրի շահերի պաշտպանության գծով սահմանված էր ապահովագրական պաշտպանվածության գծով պարտադիր պայման, մասնավորապես ավիաընկերությունները պարտավոր են ապահովագրել իրենց պատասխանատվությունը երրորդ անձանց նկատմամբ, մատակարարներն առևտրային գործարք իրականացնելիս պարտավոր են ապահովագրել ապրանքների բեռնափոխադրումները, մի շարք երկրներ զբոսաշրջության մեկնելու համար պարտադիր է աջակցության ապահովագրության պայմանագրի առկայությունը, բանկերի կողմից ավտովարկի տրամադրման հետ կապված պահանջվում է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն՝ ԿԱՍԿՈ:

Տնտեսվարման նախկին վարչահրամայական համակարգի պայմաններում ապահովագրությունը չէր կարողանում վերագտնել իր ուրույն տեղը տնտեսության մեջ և հասարակական հարաբերություններում, մինչդեռ, շուկայական հարաբերությունների արմատավորման պայմաններում ապահովագրության ինստիտուտի ներկայությունն արդեն իսկ անխուսափելի է տնտեսական և հասարակական կյանքում:

Ապահովագրությունը հասարակության տնտեսական հարաբերությունները կարգավորող կարևոր օղակներից և միաժամանակ տնտեսության զարգացման կարևոր ռազմավարական հատվածներից մեկն է, որի միջոցով ապահովվում է տնտեսվարող բոլոր սուբյեկտների սոցիալ-տնտեսական կայունությունը, ինչպես նաև երաշխավորվում է նրանց պաշտպանվածությունը հնարավոր կորուստներից: Մինչդեռ ՀՀ-ում ապահովագրությունը, իրեն բնորոշ առանձնահատկություններով հանդերձ, կարծես թե շարունակում է մնալ որպես զուտ վերաբաշխողական հարաբերությունների ձև և դեռևս չի վերածվել տնտեսության աճ ապահովող կարևորագույն գործոնի: Այժմ աղյուսակի միջոցով ներկայացնենք ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը 2007-2016թթ.:




**ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը<sup>1</sup>**

	2007 <sup>2</sup>	2008	2009	2010	2011	2012 <sup>3</sup>	2013	2014	2015	2016
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների քանակը	10	12	12	11	8	7	7	7	7	7
Արտոնագրված ապահովագրությունների կանոնադրական կապիտալը, մլն դր.	4639,3	6615,5	10938,2	12116,5	11933,2	11430,0	14732,4	14107,6	15063,6	15063,6
Գործող պայմանագրերի քանակը, միավոր	40080	49639	50768	50484	207246	406728	563136	594893	591859	633727
Ապ. վճարների մուտքերը, մլն դր.	4813,6	7769,1	8102,6	8233,3	22393,2	35524,8	35753,3	30107,2	31424,5	33141,2
Հատուցումների գումարը, մլն դր	645,3	1375,0	1900,7	1745,5	8140,9	14487,0	19718,7	22149,7	13564,5	14222,4
Ապ. պահուստները, մլն դր.	1625,9	2152,7	2719,3	2917,0	8598,8	15611,6	17219,3	15605,0	17278,4	19185,9
Պարտավորությունների ծավալը, մլն դր	1131014,2	2354745,8	3390633,0	3052438,9	3696072,0	6295988,1	8160515,5	9536083,6	9451439,3	11004823,5


<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2017թ., էջ 406:

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2012թ., էջ 400:

<sup>3</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2013թ., էջ 406:



Գծապատկեր 1. Աստիճակագրավճարների և հատուցումների փոփոխությունը 2007-2016թթ.



Գծապատկեր 2. Աստիճակագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը 2007-2016թթ.<sup>1</sup>

<sup>1</sup> Գծապատկերները կառուցվել են հեղինակի կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

Աղյուսակի տվյալներից և գծապատկերներից երևում է, որ հիմնականում ցուցանիշների աճը նկատվում է 2011թ.-ից հետո, որը կապված է ԱՊՊԱ համակարգի ներդրման հետ:

2016 թվականը բարենպաստ է եղել ապահովագրության ոլորտի համար: Միայն ընկերություններից մեկն է, որ տարին վնասով է փակել:

Շուկայի ընդհանուր շահույթը (տարվա շահույթը) կազմել է 4.02 մլրդ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 1.3 մլրդ դրամով կամ մոտ 50%-ով: Սա ռեկորդային ցուցանիշ է այս շուկայի համար: Նշենք, որ ապահովագրության ոլորտը Հայաստանում աշխուժացավ 2011 թվականից, երբ ներդրվեց ԱՊՊԱ համակարգն ու տարվա արդյունքներով գրանցվեց ավելի քան 2 մլրդ դրամի շահույթ: Հետագա տարիներին կտրուկ տատանումներ են գրանցվել: 2013-ին, օրինակ, շուկան տարին վնասով է փակել: Իսկ 2015-ին տարվա շահույթը կազմել է շուրջ 2.7 մլրդ դրամ:

Իրենց տարեկան հաշվետվություններում և աուդիտի եզրակացությունից հետո ապահովագրական ընկերությունները երբեմն ճշգրտումներ են կատարում եռամսյակային ցուցանիշներում: Բայց, որպես կանոն, էական փոփոխություններ չեն արվում: Նշված հաշվետվությունները վկայում են, որ ապահովագրական շուկայում նախորդ տարի գրանցված շահույթի աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդներից հավաքագրված ապահովագրավճարների աճով, որոշ ընկերությունների դեպքում էլ՝ ծախսերի կրճատմամբ: Միևնույն ժամանակ, աճել է նաև հատուցումների ծավալը, սակայն բացարձակ թվով հավաքագրված գումարներն ավելի շատ են աճել, քան հատուցումները: Ավելի պարզ ասած՝ ապահովագրական ընկերություններն ավելի մեծ տեմպերով հավաքագրել են, քան հատուցել: Մասնավորապես, ընկերությունների ընդհանուր համախառն ապահովագրավճարները կազմել են 33,14 մլրդ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է շուրջ 1,7 մլրդ դրամով կամ 5.5%-ով: Իսկ համախառն հատուցումները նույն ընթացքում կազմել են 14.2 մլրդ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 658 մլն դրամով կամ 4.9%-ով:

Գործող 6 ընկերություններից ամենամեծ շահույթը նախորդ տարի գրանցել է «Ռոսգոսստրախ-Արմենիա»: Իսկ «Միլ Ինշուրանս»-ը տարին վնասով է փակել, ինչպես և՛ 2015-ին: «Ռոսգոսստրախ-Արմենիա»-ի, «Ինգո Արմենիա»-ի և «Նաիրի Ինշուրանս»-ի շահույթը, 2015-ի համեմատ, աճել է: «Ռեստ»-ն 2015-ի վնասից հետո 2016-ը դրական արդյունքով է ավարտել: Իսկ «Արմենիա Ինշուրանս»-ի շահույթը նվազել է: «Ռոսգոսստրախ-Արմենիա»-ի ապահովագրավճարները նվազել են, հատուցումներն՝ աճել: Իսկ մնացածի պարագայում համախառն ապահովագրավճար-

ներն աճել են: Մինևույն ժամանակ «Ինգո Արմենիա»-ի և «Արմենիա Ինշուրանս»-ի հատուցումները նվազել են, մնացած երեքինն՝ աճել<sup>1</sup>:

Ներկայումս, երբ հանրապետությունում, փաստացի, գործում է կամավոր ապահովագրության համակարգ (բացառությամբ՝ ԱՊՊԱ-ի), բազմաթիվ տնտեսավարողներ դարձյալ ապավինում են «կենտրոնից» ստացվելիք օգնությանը (համայնքից, մարզպետարանից, պետությունից կամ բարեգործական կազմակերպություններից): Դրա մասին են վկայում, ինչպես մեր կողմից մի շարք համայնքներում անցկացված հարցազրույցները, այնպես էլ անկախ փորձագետների ուսումնասիրությունների արդյունքներով հրապարակումները: Որոշ տարիների, կամ որոշ ռիսկերի հանդեպ գոյություն ունեցող կամավոր ապահովագրությունն իր էությունով կրում է ժամանակավոր բնույթ, այն պարտադիր ապահովագրական հիմնադրամի ձևավորման անցողիկ ձևն է: Արմատավորված այդպիսի մոտեցումը հոգեբանական «արգելք է» հանդիսանում բազմաթիվ պոտենցիալ ապահովագրվողների շրջանում, ինչը, անշուշտ, խոչընդոտում է վերջինների ապահովագրումը (որպես զուգահեռ, օրինակ, կարելի է նշել այն փաստը, որ 1990-ական թվականներին, անգամ վճարունակ բնակչությունը չէր մուծում ջրի վարձավճարը, համարելով այն բնության բարիք, և պետությունը մարեց գոյացած պարտքերը՝ հիմնականում հաշվի առնելով հոգեբանական գործոնը, քանի որ հնարավոր էր վճարունակ քաղաքացիներից մատուցված ծառայության գումարը գանձել դատական կարգով: Այդ առումով կարելի է փաստել, որ ապահովագրման «ավանդույթի» (որոշ վերապահումներով կարելի է ասել՝ ապահովագրական «մշակույթի») ներդրումը նույնպես ժամանակի խնդիր է և, գտնում ենք, նրա ձևավորումն ապահովագրության այլ ոլորտներում (առողջապահություն, գյուղատնտեսություն, բնապահպանություն և այլ) ապահովագրության պարտադիր համակարգի ներդրման գործընթացի հետ (ինչպես արդեն գիտենք այդպիսի դրական փորձ արվել է՝ ԱՊՊԱ-ն, որը ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից) նույնպես ժամանակի խնդիր է:

Բնութագրելով «Պետապ»-ի և նրա տարածքային մարմինների գործունեությունը՝ կարելի է փաստել, որ, որոշ առումներով, այն կրում էր լրացուցիչ հարկատեսակի բնույթ, քանի որ պարտադիր կամ կամավոր ապահովագրությունը հնարավորություն էր ընձեռում ստեղծել խոշոր ֆինանսական հիմնադրամներ՝ նպատակային օգտագործման համար: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորաստեղծ ապահովագրական ընկերությունները հայտնվեցին շուկայական հարաբերություններով կարգավոր-

<sup>1</sup> <http://hetq.am/arm/news/78787/>

վող միջավայրում և, բնական է, չունեին բավարար փորձ, հմտություններ, գիտելիքներ նոր տնտեսակարգի պայմաններում գործելու համար: Ներկայումս ՀՀ ԲՈՒՀ-երում (Երևանի պետական համալսարանում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և այլ) պատրաստվում են համապատասխան մասնագետներ (ակտուարներ, ապահովագրական բրոքերներ, միջնորդներ, մենեջերներ և այլն), սակայն որակյալ մասնագետների պահանջարկը ապահովագրական շուկայում շարունակում է մնալ չբավարարված, քանի որ ապահովագրությունն ինքնին բարդ գործընթաց է և պահանջում է խորը գիտելիքների իմացություն և փորձ: Բացի այդ, գյուղատնտեսության ապահովագրությունը պետք է դիտարկվի այլ ռիսկերի ապահովագրության համատեքստում, ինչը հույժ կարևոր է ապահովագրական ընկերությունների կայացման, դրանց արդյունավետ փոխհամագործակցության ապահովման տեսանկյունից: Դա է պատճառը, որ հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների պորտֆելները, ըստ ուսումնասիրությունների, դեռևս խիստ սահմանափակ են (ապահովագրական պորտֆելը, ըստ սահմանման, «ապահովագրողի կողմից կնքված բոլոր ապահովագրության պայմանագրերից կամ մի դասի բոլոր ապահովագրության պայմանագրերից բխող իրավունքների և պարտավորությունների ամբողջությունն է»)<sup>1</sup>:

Հաշվի առնելով ապահովագրական շուկայի ներկա իրավիճակը ՀՀ-ում, կարծում ենք՝ դրա զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել ապահովագրական համակարգի պետական վերահսկողության խստացում՝ հատկապես պարտադիր ապահովագրատեսակների ներդրման պարագայում: Ապահովագրական շուկան պետք է մշտապես գտնվի պետության վերահսկողության ներքո, և այդ վերահսկողությունը պետք է խստացվի, հատկապես ապահովագրության պարտադիր ձևերի իրականացման ժամանակ: Ներկա ժամանակներում, շատ մարդիկ շատ փոքր պատկերացում ունեն ապահովագրության վերաբերյալ, չեն գիտակցում դրա կարևորությունը և արդիականությունը: Եվ երբ այդ մարդիկ սկսում են առաջին անգամ մասնակցել ապահովագրական հարաբերություններին, շատ կարևոր է, որ նրանց առաջին տպավորությունները լինեն բարձր, այլապես նրանք դժվարությամբ կցանկանան երկրորդ անգամ օգտվել ապահովագրական ծառայություններից, իսկ ապահովագրական շուկայի պետական վերահսկողությունը նաև ենթադրում է ապահովադիրների շահերի պաշտպանություն:

<sup>1</sup> «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 13:

Ամփոփելով նշենք, որ վերը թվարկած խոչընդոտների աստիճանական վերացումը, դրանց նկատմամբ համալիր մոտեցումը, այդ ուղղությամբ համարժեք քաղաքականության իրականացումը, հաշվի առնելով միջազգային փորձը, ապահովագրության գործուն համակարգի կատարելագործման գրավականն է:

## **ՀՀ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ**

**ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՍԱՆՈՒԶԱՐՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացվում են ապահովագրական համակարգի էվոլյուցիան՝ ստրկատիրական հասարակարգերից մինչև մեր օրեր: Նշվում է նաև թե պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցումը ՀՀ-ում ինչպիսի տնտեսական և սոցիալական կառուցվածքային փոփոխությունների հանգեցրեց և դա ինչպես ազդեց ապահովագրական նոր համակարգի ձևավորման վրա: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է պարտադիր ապահովագրության այլ տեսակների սահմանում և աստիճանական ներդրում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում այդպիսի դրական փորձ արդեն առկա է:

***Բանալի բառեր.** ապահովագրական համակարգ, զարգացում, իրավական դաշտ, փուլ, ապահովագրական շուկա, կազմակերպություններ, գործունեություն, պարտադիր կարգ, ապահովագրական վճար, հատուցում*

## **ЭТАПЫ РАЗВИТИЯ И ТЕКУЩАЯ СИТУАЦИЯ СИСТЕМЫ СТРАХОВАНИЯ РА**

**МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, к.э.н.**

*научный сотрудник Института экономики  
им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье представлена эволюция системы страхования от рабовладельческого строя до наших дней. Также отмечается, что переход от плановой экономики к рыночной экономике привел к экономическим и

социальным структурным изменениям в Армении и тому, как это повлияло на формирование новой страховой системы. В результате исследований предлагается ввести другие виды обязательного страхования и постепенного внедрения, с учетом факта, имеющегося в Армении такого положительного опыта.

**Ключевые слова:** *страховая система, развитие, правовое поле, этап, страховой рынок, организация, деятельность, обязательный порядок, страховой сбор, компенсация*

## **THE STAGES OF DEVELOPMENT AND CURRENT SITUATION OF THE INSURANCE SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA**

**MERI GAGIK MANUCHARYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Science, Republic of Armenia*

**Abstract:** The article presents the evolution of the insurance system starting from the slave societies and until the present. The article states the specific economic and social structural changes that Armenia underwent during the period of transition from the planned economy to the market economy in the Republic of Armenia and how it affected the design of new insurance system. Based on the findings of the study the author proposes to define other types of mandatory insurance plans and gradual introduction of thereof, by taking into account the positive experience Armenia has reported so far.

**Keywords:** *Insurance system, development, legal framework, stage, insurance market, enterprises, activity, mandatory rule, insurance premium payments, compensation*

**ՄԻՔԱՅԵԼ ՍԵՐՈՔԻ ՍԱՐԴՈՒՄՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ*

**ԼԻԱՆԱ ՄՅԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոն*

## **ԲԻԶՆԵՍԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՁԱԽՈՂՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

Կազմակերպություններում կառավարչական հաշվառման կարևոր տարրն է փուլ է համարվում վերլուծությունը, որը համարվում է ֆինանսական կայունության վերահսկման գործում հիմնավորված և որակյալ որոշումների ընդունման համար գործիք: Կա տեսակետ, որ կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծությունը, համարվելով ֆինանսական վիճակի վերլուծության կարևոր գործընթաց՝ պետք է վերածվի ֆինանսական ռազմավարության հիմնավորման ակտիվ գործիքի և դառնա ֆինանսական գործընթացների օպերատիվ կարգավորման ու կոորդինացման միջոց<sup>1</sup>:

Ֆինանսական կայունության վերլուծության մեթոդների կիրառումը գործնականում պետք է ապահովի հետևյալ գործառնությունները՝


- ֆինանսական ռեսուրսների ապահովվածության և գործունեության արդյունավետության տեսանկյունից կազմակերպության ֆինանսական վիճակի հետազոտում,
- ֆինանսատնտեսական գործունեության թերությունների օպերատիվ բացահայտում,
- ֆինանսական ռեսուրսների օգտագործման բարելավման ուղղությունների որոշում և տվյալ կազմակերպության զարգացման արդյունավետ ռազմավարության հիմնավորում:

Ֆինանսական կայունության ապահովման համար կազմակերպությանն անհրաժեշտ է ապահովել նորմալ գործունեության համար բոլոր անհրաժեշտ պայմաններով, մասնավորապես՝ ձևավորել և օգտագործել կապիտալը այնպես, որպեսզի եկամուտները միշտ գերազանցեն ծախսերը՝ միաժամանակ ապահովելով պահանջվող վճարունակությունը: Հարկ է նշել, որ ընդունվող ֆինանսական որոշումների հիմնավորվածությունն ու կառավարչական խնդիրների կատարման հաջողությունն ուղղակիորեն կախված են կազմակերպության փաստացի ֆինանսական վիճակի ամբողջական բնութագրից:

<sup>1</sup> Мельник М.В. Организация системы внутреннего аудита и контроля в крупных организациях // Аудиторские ведомости. 2012. № 1-2. ст. 118-134.



Գծապատկեր 1-ում ներկայացած են ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշները:



**Գծապատկեր 1. Ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշների ընդհանրացված մոտեցում<sup>1</sup>**

Կազմակերպության պարտավորությունները մարելու կարողության գնահատման համար կիրառվում են վճարունակության ցուցանիշներ<sup>1</sup>: Կազմա-

1 Казакова Н.А. Управленческий анализ и аудит компании в условиях кризиса. М.: Дело и сервис, 2010. 304 с. Михнюк И. Антикризисная диагностика предприятия// Антикризисное управление. Ежемесячная газета. 2010. № 6 (24). ст.12–13.

կերպության վճարունակությունը սուբյեկտի տնտեսական գործունեության կարողությունն է ժամանակին մարելու իր կրեդիտորական պարտավորությունները: Վճարունակությունը համարվում է կազմակերպության ֆինանսական կայունության հանգուցային նշաններից մեկը<sup>2</sup>:

Կազմակերպության վճարունակությունը, ըստ որոշ տեսակետների<sup>3</sup>, բաղկացած է հետևյալ գործոններից՝

1. ակտիվների առկայություն (գույք և դրամական միջոցներ), որոնք բավարար են կազմակերպության ունեցած բոլոր պարտավորությունները մարելու համար,
2. տնօրինած ակտիվների իրացվելիության աստիճանը բավարար է, որպեսզի դրանք փոխարկվեն պարտավորությունները մարելու համար բավարար գումարի դրամական միջոցների:

Հարկ է նկատել, որ վերը բերված առաջին գործոնի վերլուծության դեպքում ուսումնասիրվում է կազմակերպության մոտ գուտ, սեփական ակտիվների առկայությունը: Եթե կազմակերպության սեփական ընթացիկ ակտիվները բացասական են, այսինքն՝ սեփական կապիտալով ապահովվածությունը բավարար չէ, ապա կազմակերպությունը չի կարող վճարել իր բոլոր պարտավորությունները, քանի որ պարտավորությունների գումարը այս դեպքում կգերազանցի կազմակերպության բոլոր ակտիվների գումարը: Նման կազմակերպությունը կարող է վճարունակ լինել կարճաժամկետ փուլում, վճարել ընթացիկ պարտքերը, բայց երկարաժամկետ փուլում մեծ է սնանկանալու հավանականությունը:

Ֆինանսական կայունության ախտորոշման մոտեցումների վերլուծության հիման վրա հնարավոր է դառնում հստակեցնել վճարունակության առավել կիրառելի մեթոդները: Ֆինանսական կառավարման դոկտրինային համապատասխան ֆինանսապես կայուն կազմակերպությունը պետք է լինի վճարունակ: Գործնականում ֆինանսական կայունության մասին հնարավոր չէ դատել առանց վերլուծելու կազմակերպության վճարունակությունը: Կազմակերպության կայուն ֆինանսական վիճակը պայմանավորված է ազդող գործոնների վերահսկողության արդյունավետ համակարգերի առկայությամբ, որոնք էլ բնութագրում են տնտեսական գործունեության արդյունքները:

Կազմակերպության ֆինանսական կայունության գնահատումը հատուկ չափանիշների և դրանք բնութագրող ցուցանիշների հետազոտումն է, ինչը

---

1 Виноходова А.Ф., Марченкова И.Н. Методика оценки платежеспособности предприятия // Фундаментальные исследования. – 2009. – № 1 ст. 53-54.

2 Бочаров В.В. Финансовый анализ Краткий курс. 2-е изд. — СПб.: Питер, 2009. ст. 18-32.

3 Антикризисное управление / рук. авт. колл, проф. И. К. Ларионов. – [6-е изд., перераб. и доп.]. – М. : Дашков и К, 2009. ст. 17-18.

տալիս է ֆինանսական վիճակի վերաբերյալ օբյեկտիվ պատկեր: Վերլուծության արդյունքները հնարավորություն են ընձեռում բացահայտել գոյություն ունեցող և միայն հետազոտությամբ նկատված խնդիրները և հետևաբար դրանց լուծման համար հրավիրել ղեկավար անձնակազմի ու սեփականատերերի ուշադրությունը:

Բացարձակ ցուցանիշները հնարավորություն են տալիս որոշել, թե միջոցների ինչ աղբյուրներ են օգտագործվում պաշարների ֆինանսավորումն իրականացնելու համար:

Արտադրական կազմակերպություններում արտադրության գործընթացում տեղի է ունենում պաշարների, ապրանքանյութական արժեքների անընդհատ համալրում: Այդ պայմաններում օգտագործվում են ինչպես սեփական կապիտալը, այնպես էլ փոխառու կապիտալը, մասնավորապես կարճաժամկետ և երկարաժամկետ փոխառություններն ու վարկերը:

Հայ տնտեսագետ գիտնականներից ֆինանսական կայունության բացարձակ գնահատման իրենց մոտեցումներն են առաջարկել Ա. Բայադյանը<sup>1</sup> և Ա. Մաթևոսյանը<sup>2</sup>: Մասնավորապես, Ա. Մաթևոսյանի տեսակետում շեշտադրվել են ֆինանսական կայունության կարճաժամկետ, ընթացիկ և երկարաժամկետ տեսակները: Կազմակերպության ֆինանսական կայունության բարձրացման միջոցառումների մշակման և համալիր վերլուծության իրականացման նպատակով կարևորվում են հարաբերական ցուցանիշները: Ֆինանսական կայունության ցուցանիշների ընտրությունը պայմանավորված է կազմակերպությունների ճյուղային պատկանելիությունից, որում գլխավոր դեր են խաղում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածությունը, փոխառու կապիտալը, սեփական կապիտալի շարժունակությունը:

Վճարունակության և ֆինանսական կայունության փոխկապակցության համատեքստում կարևոր է Դ. Դյուրանի կողմից առաջարկված մոտեցումը: Վերջինս հաշվարկվում է աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշների միջոցով, ըստ որոնց վարկանշային գումարային գնահատականների՝ կատարվում է հետազոտվող կազմակերպությունների վճարունակության դասակարգում:

Ըստ Դ. Դյուրանի՝ իրենց վճարունակության գնահատականին համապատասխան կազմակերպությունները դասակարգվում են հետևյալ խմբերում.

- առաջին խմբում ներառվում են բարձր ֆինանսական կայունություն ունեցող կազմակերպությունները, որոնք վստահություն են ներշնչում

1 Բայադյան Ա. Հ., Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը, Եր., «Ստոդիկ», 2002, էջեր 41-52:

2 Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում,/.Սշոտ Մաթևոսյան, Եր., «Ոսկան Երևանցի», 2011, էջեր 38-41:

- փոխառու միջոցների վերադարձման հարցում,
- Երկրորդ խմբում ներառվում են կազմակերպությունները, որոնցում առկա է պարտավորությունների գծով որոշակի ռիսկ, բայց դրանք դեռևս չեն դիտարկվում ռիսկային,
  - երրորդ խմբում ներառվում են խնդրահարույց կազմակերպությունները,
  - չորրորդ խմբում ներառվում են սնանկացման բարձր ռիսկ ունեցող կազմակերպությունները, որոնց վիճակը չի կայունացել նույնիսկ ֆինանսական առողջացման միջոցառումներ ձեռնարկելուց հետո,
  - բարձր ռիսկայնություն ունեցող կազմակերպությունները, որոնք գործնականում սնանկ են:

*Աղյուսակ 1*

**Ըստ վճարունակության մակարդակի կազմակերպության դասակարգման՝  
Դ. Դյուրանի մոտեցումը<sup>1</sup>**

Ցուցանիշը	Ըստ միջակայքերի վճարունակության դասերը				
	I դաս	II դաս	III դաս	IV դաս	V դաս
Ակտիվների շահութաբերություն, %	30 % և ավելի - 50 բայլ	29,9-20 % - (49,9-35 բայլ)	19,9-10 % - (34,9-20 բայլ)	9,9-1 % - (19,9-5 բայլ)	փոքր է 1 % - 0 բայլ
Ընթացիկ իրացվելիության գործակից	2,0 և ավելի - 30 բայլ	1,99-1,7 - (29,9-20 բայլ)	1,69-1,4 - (19,9-10 բայլ)	1,39-1,1 - (9,9-1 բայլ)	1 և փոքր - 0 բայլ
Ինքնավարության գործակից	0,7 և ավելի - 20 բայլ	0,69-0,45 - (19,9-10 բայլ)	0,44-0,3 - (9,9-5 բայլ)	0,29-0,2 - (5-1 բայլ)	փոքր է 0,2 - 0 բայլ
Դասերի սահմանային միջակայքերը	100 բայլ	99-65 բայլ	64-35 բայլ	34-6 բայլ	0 բայլ

Իրացվելիության և ֆինանսական կայունության փոխկապակցության համատեքստում համեմատական վերլուծության նպատակով կարևոր են համարում Լ. Դոնցովայի և Ն.Նիկիֆորովայի մոտեցումը, որը հիմնված է աղյուսակ 2-ում բերված ցուցանիշների և դրանց փաստացի նշանակություններին համապատասխան տրվող բալային գնահատականների, ինչպես նաև տարանջատվող ռիսկի հինգ դասերի վրա: Նրանց գումարային բալային գնահատման մոտեցմամբ սահմանվում են ռիսկայնության հինգ դասեր.

1-ին դաս՝ ֆինանսական կայունության լավ պաշար ունեցող կազմակերպություններ, ինչը վստահություն է ներշնչում փոխառու միջոցների վերադարձման առումով,

1 Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / <http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html> (дата доступа 07.04.2013).

- 2-րդ դաս՝ կազմակերպություններ, որոնք դրսևորում են պարտավորությունների գծով որոշակի ռիսկ, բայց որպես ռիսկային դեռևս չեն դիտարկվում,
- 3-րդ դաս՝ խնդրահարույց կազմակերպություններ, որոնց տրված փոխառու միջոցների դիմաց տոկոսագումարների լրիվ ստացումը կասկածելի է,
- 4-րդ դաս՝ կազմակերպություններ, որոնք ունեն սնանկացման բարձր ռիսկ, նույնիսկ ֆինանսական առողջացման միջոցառումներ ձեռնարկելու դեպքում,
- 5-րդ դաս՝ սկզբունքորեն ֆինանսապես անկարողունակ կազմակերպություններ:

Աղյուսակ 2

**Կազմակերպությունների ֆինանսական կայունության Լ. Դոնցովայի և Ն.Նիկիֆորովայի գումարային բալային գնահատման մոտեցումը<sup>1</sup>**

	Ցուցանիշը	Ըստ չափանիշների դասերի սահմանները				
		I	II	III	IV	V
1	Բացարձակ իրացվելիության գործակից	0,5 և ավելի = 20 բալ	0,4 = 16 բալ	0,3 = 12 բալ	0,2 = 8 բալ	0,1 = 4 բալ
2	Կրիտիկական գնահատման գործակից	1,5 և ավելի = 18 բալ	1,4 = 15 բալ	1,3 = 12 բալ	1,2-1,1 = 9-6 բալ	1,0 = 3 բալ
3	Ընթացիկ իրացվելիության գործակից	2 և ավելի = 16,5 բալ	1,9-1,7 = 15-12 բալ	1,6-1,4 = 10,5-7,5 բալ	1,3-1,1 = 6-3 բալ	1 = 1,5 բալ
4	Ֆինանսական անկախության գործակից	0,6 և ավելի = 17 բալ	0,59-0,54 = 16,2-12,2 բալ	0,53-0,43 = 11,4-7,4 բալ	0,47-0,41 = 6,6-1,8 բալ	0,4 = 1 բալ
5	Մեփական ֆինանսավորման աղբյուրներով ապահովվածության գործակից	0,5 և ավելի = 15 բալ	0,4 = 12 բալ	0,3 = 9 բալ	0,2 = 6 բալ	0,1 = 3 բալ
6	Պաշարների և ծախսերի ֆինանսավորման մասով ֆինանսական անկախության գործակից	1 և ավելի = 13,5 բալ	0,9 = 11 բալ	0,8 = 8,5 բալ	0,7-0,6 = 6,0-3,5 բալ	0,5 = 1 բալ
	Դասերի նվազագույն սահմանները	100	85,2 - 66	63,4 - 56,5	41,6 - 28,3	14

Ներկայացվածով հանդերձ՝ նշենք, որ վարկանշման նմանաբնույթ մոտեցումները հնարավորություն են ընձեռում իրականացնել ճյուղային կտրվածքով համեմատական վերլուծություններ և վեր հանել տվյալ ճյուղի կազմակերպություններին բնորոշ ուժեղ և թույլ կողմերը: Բայց և այնպես նոր մոտե-

1 Донцова Л.В., Никифорова Н.А. Анализ бухгалтерской отчетности. М.: Издательство «Дело и сервис», 2004. 336 с.

ցումների մշակումը և գործնական կիրառումը վերափոխվող տնտեսական հարաբերությունների շրջանակներում մնում է խիստ հրատապ և արդիական:

## **ԲԻԶՆԵՍԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԶԱՆՈՂՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԻՋՆԵՐ**

**ՄԻՋԱՅԵԼ ՍԵՐՈԲԻ ՄԱՐԴՄՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ*

**ԼԻԱՆԱ ՄԴԵՐՈՎՆԱ ԱՅՐԱՊԵՏՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոն*

**Համառոտագիր:** Ֆինանսական կայունության գնահատման հիմնախնդիրները դասվում են ոչ միայն զուտ ֆինանսական, այլև ընդհանուր տնտեսական բնույթի կարևոր հիմնախնդիրների թվին, քանի որ ֆինանսական ցածր կայունությունը կարող է հանգեցնել ոչ միայն կազմակերպության զարգացման, այլև դրա ընթացիկ գործունեության ֆինանսավորման համար միջոցների սղության անվճարունակության, կամ սննկացման, այսինքն բիզնեսի ձախողման: Ուստի կազմակերպության ֆինանսական կայունության սահմանների որոշումը դասվում է բիզնեսի ձախողման կանխարգելման առավել կարևոր և հրատապ լուծումներ պահանջող տնտեսական խնդիրների թվին:

***Բանալի բառեր.** ֆինանսական կայունություն, վճարունակություն, հրացվելիություն, բիզնես ձախողում, ֆինանսական ռեսուրսներ, ֆինանսական կայունություն, ակտիվներ, հասույթ:*

## **АНАЛИЗ И ПРОГНОЗИРОВАНИЕ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ БИЗНЕСА КАК ИНСТРУМЕНТ ПРЕДОТВРАЩЕНИЯ КОРПОРАТИВНЫХ НЕУДАЧ**

**МИКАЕЛ СЕРОБОВИЧ МАРДУМЯН**, *к.э.н., доцент*

*заведующий кафедрой коммерции и организации бизнеса АГЭУ*

**ЛИАНА МГЕРОВНА АЙРАПЕТАН**, *к.э.н., доцент*

*кафедрой коммерции и организации бизнеса АГЭУ*

**Аннотация:** Проблемы оценки финансовой устойчивости относят к числу не только чисто финансовых проблем, но и к числу проблем важного общеэкономического характера, поскольку низкая финансовая устойчивость

может привести как к недостатку средств для развития организации, так и к недостатку средств для финансирования ее текущей деятельности, к неплатежеспособности или банкротству, то есть к неудачам в бизнесе. Следовательно, определение границ финансовой устойчивости организации следует отнести к числу наиболее важных экономических проблем, требующих срочного решения и связанных с предотвращением неудач в бизнесе.

**Ключевые слова:** *финансовая устойчивость, платежеспособность, ликвидность, бизнес-неудача, финансовые ресурсы, активы, прибыль.*

## **THE ANALYSIS AND FORECASTING OF THE FINANCIAL STABILITY OF BUSINESSES AS TOOLS TO PREVENT BUSINESS FAILURES**

**MIKAEL SEROB MARDUMYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*  
*Head of the Department of Commerce and Business Organization*  
*Armenian State University of Economics*

**LIANA MHER HAYRAPETYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*  
*Department of Commerce and Business Organization*  
*Armenian State University of Economics*

**Abstract:** The issues of the assessment and/or appraisal of financial stability are referred not only to mere financial issues, but also to the important issues that are of general economic nature, since the insufficient level of financial stability could not only retard the growth of company but also could create lack of resource to finance the existing operations, insolvency or bankruptcy, i.e. business failure. Hence, defining the boundary of the financial stability is considered as one of the most crucial and urgent economic issues to be addressed to prevent business failure.

**Keywords:** *Financial stability, solvency, liquidity, business failure, financial resources, assets, profit.*

## **ՉԱՐՄԻԿ ՎԱՅԱՆԻ ՄԵԼԻՔՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ*

### **ՀՀ ԱՐԴԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**


Գյուղատնտեսությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության գլխավոր ճյուղերից մեկը: Գյուղատնտեսական արտադրության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Մյն նաև մուլտիպլիկատիվ ազդեցություն է ունենում տնտեսության մյուս հատվածների վրա՝ հատկապես նրանց, որոնք ընդգրկված են սննդամթերքի վերամշակման և արտահանման ոլորտներում: Հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ագրարային հատվածում ստեղծված իրավիճակը, ծառայած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը կարևորվում է գյուղատնտեսությունում իրականացվող մասնավոր, պետական և օտարերկրյա ներդրումների ակտիվ խթանումը<sup>1</sup>: Մյս պատճառով երկրի ընդհանուր տնտեսական աճի տեսանկյունից խիստ կարևոր է ՀՀ ագրարային ոլորտում կայուն և առողջ ներդրումային միջավայրի ստեղծումը:

ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մոտ 2045,7 հազ. հա, որը երկրի ընդհանուր մակերեսի 68,8%-ն է: 2017թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 584259,3 մլն դրամ, այն պարագայում, երբ ՀՀ համախառն ներքին արդյունքը նույն ժամանակահատվածի կտրվածքով կազմել է 3764996,50 մլն դրամ, այսինքն՝ 2017թ.-ի երրորդ եռամսյակի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է ՀՆԱ-ի 15,5%-ը: Նշենք, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի ծավալն է արժեքային արտահայտությամբ: Բուսաբուծության արտադրանքը ներառում է տվյալ տարվա բերքից ստացված մթերքի արժեքը, երիտասարդ բազմամյա տնկարկների աճեցման արժեքը և տարեսկզբից մինչև տարեվերջ անավարտ արտադրության արժեքի փոփոխությունը, իսկ անասնաբուծության արտադրանքը ներառում է անասունների, թռչունների և այլ կենդանիների աճեցման, կաթի, բրդի, ձվի, մեղրի և այլնի արտադրության արժեքը: Գյուղատնտեսական համախառն արտա-

<sup>1</sup> ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայք էջ՝ [www.minagro.am](http://www.minagro.am)



դրանքի և ՀՆԱ-ի կախվածությունը 2010-2017թթ. կտրվածքով ներկայացնենք գծապատկեր 1-ում:




\*Համախառն ներքին արդյունք ցուցանիշների ամփոփումը կատարվում է եռամսյակային կտրվածքով, ուստի 2017 թ.-ի համար վերցված է 2016 թ.-ի համապատասխան ցուցանիշը:

**Գծապատկեր 1. Գյուղատնտեսական համախառն արտադրանքը և մասնաբաժինը ՀՆԱ-ում<sup>1</sup>**

Գծապատկեր 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ 2010 թ.-ից ի վեր գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում տատանվել է 17%-ից 21%-ի սահմանում, ինչը փաստում է այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը եղել է և շարունակում է մնալ երկրի տնտեսության գլխավոր ճյուղերից մեկը: Դիտարկվող ժամանակահատվածում գյուղատնտեսական համախառն արտադրանքի առավելագույն մակարդակը գրանցվել է 2014 թ.-ին՝ կազմելով 982958,7 մլն դրամ, որը կազմել է ՀՆԱ-ի 20%-ը: Ինչպես երևում է գծապատկերից, 2010-2014 թթ.-ի ընթացքում գյուղատնտեսական համախառն արտադրանքի բացարձակ արժեքի կայուն աճին հաջորդել է 2015 – 2016 թթ. միևնույն ցուցանիշի նվազումը: Մասնավորապես 2016 թ.-ին 2014 թ.-ի նկատմամբ գյուղատնտեսական համախառն արտադրանքի արժեքը նվազել է 10,6 %-ով:

<sup>1</sup> ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք էջ՝ [www.armstat.am](http://www.armstat.am).



**Գծապատկեր 2. Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով<sup>1</sup>**

Գյուղատնտեսական համախառն արտադրանքի արժեքի նվազումը, և միևնույն ժամանակ ՀՆԱ-ի կայուն աճը. 2015 թ.-ին՝ 5043633,2 մլն դրամ և 2016 թ.-ին՝ 5079864,6 մլն դրամ բերեց նրան, որ 2015 և 2016 թթ.-ին գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է համապատասխանաբար 18 և 17%: (Գծապատկեր 2) 2017 թ.-ին գյուղատնտեսական համախառն արտադրանքը աճել է կազմելով 906760,1 մլն դրամ, սակայն, ինչպես արդեն նշվել է 2017 թ.-ի երրորդ եռամսյակի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է ՀՆԱ-ի 15,5%-ը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017թ.-ին գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հավանաբար չի գերազանցի 17%-ը: Այսպիսով, ակնհայտ է, որ վերջին տարիներին գյուղատնտեսությունը սկսում է զիջել դիրքերը հայրենական շուկայում, ինչը փաստում է ոլորտում առկա մի շարք խնդիրների առկայության մասին: Ներկայումս գրեթե չեն գործում նախկինում գոյություն ունեցող արտադրությունները, սպասարկման ոլորտը, պրոֆ-տեխնիկական կրթական հաստատությունները և այլն:<sup>2</sup>

ՀՀ ագրարային ոլորտում ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունում», դրանք են.

<sup>1</sup> ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք էջ՝ [www.armstat.am](http://www.armstat.am)  
<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի հիմնախնդիրները և զարգացման ռազմավարությունը» ՀՀԳՆ, Երևան, 2002, էջ 17:

1. Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարում և հակաճգնաժամային մեխանիզմների ներդրում:
2. Ագրարային բարեփոխումների խորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում:
3. Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում:
4. Տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքների փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում:
5. Գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում:
6. Սննդամթերքի անվտանգության ապահովում:
7. Հողօգտագործման արդյունավետության բարձրացում:
8. Օրգանական գյուղատնտեսության զարգացում:
9. Բուսաբուծության զարգացում:
10. Անասնաբուծության զարգացում:
11. Գյուղատնտեսական հումքի վերամշակում:
12. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում:
13. Գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացում:
14. Գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում:
15. Ագրարային ոլորտի վարկավորման բարելավում:
16. Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում:
17. Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ վերոնշյալ խնդիրների իրականացումը պետք է հանգեցնի նաև ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավմանը, սակայն մինևս ժամանակ դրված նպատակներին հասնելու համար մեծ կարևորություն ունի գյուղատնտեսության ոլորտ ներդրումների ակտիվ ներգրավումը:

Գյուղատնտեսությունը ընդունված է տարանջատել բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի: ՀՀ բուսաբուծության ոլորտը իր հերթին կարելի է բաժանել ըստ բուսաբուծական արտադրատեսակների.

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունում» N 1476 – Ն որոշում:

հացահատիկային մշակաբույսեր, խաղողագործություն, պտղաբուծություն, բանջարաբուծություն, տեխնիկական մշակաբույսեր:

ՀՀ-ում իրականացվող ներդրումների տեսանկյունից՝ հաշվի առնելով երկրի բնակչիմայական պայմանները և արտադրանքի արտահանման հնարավորությունները, հենց բուսաբուծությունն է հանդիսանում առավել գրավիչ ոլորտ: Այստեղ մեծ են նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման հնարավորությունները: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի պաշտոնական տվյալների, 2016 թվականին ՀՀ գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում բուսաբուծության տեսակարար կշիռը, ըստ համախառն արտադրանքի, կազմել է 55,4%, անասնաբուծությանը՝ 44,6 %:

Ստորև ներկայացնենք ՀՀ գյուղատնտեսության բուսաբուծության ճյուղի հիմնական արտադրատեսակների համախառն բերքը և բերքատվությունը բնութագրող տվյալները՝ աղյուսակների տեսքով (աղյուսակ 1 և աղյուսակ 2):

*Աղյուսակ 1*

**Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը 2012 – 2016 թթ.<sup>1</sup>**

	2012		2013		2014		2015		2016	
	Համախառն բերքը, 1000 տ	Տես. կշիռ (%)	Համախառն բերքը, 1000 տ	Տես. կշիռ (%)	Համախառն բերքը, 1000 տ	Տես. կշիռ (%)	Համախառն բերքը, 1000 տ	Տես. կշիռ (%)	Համախառն բերքը, 1000 տ	Տես. կշիռ (%)
<b>Համախառն բերքը, 1000 տ</b>	<b>1954,1</b>	<b>100%</b>	<b>2087,0</b>	<b>100%</b>	<b>2232,1</b>	<b>100%</b>	<b>2218,3</b>	<b>100%</b>	<b>2180,2</b>	<b>100%</b>
Հացահատիկ և հատիկաբերեղեն	456,1	23,3	548,8	26,3	580,1	26,0	601,5	27,1	604,2	27,7
<i>որից ցորեն (աշնանացան և գարնանացան)</i>	<i>243,1</i>	<i>53,3</i>	<i>311,6</i>	<i>56,8</i>	<i>338,2</i>	<i>58,3</i>	<i>362,7</i>	<i>60,3</i>	<i>350,4</i>	<i>58,0</i>
Ծխախոտ	1,8	0,1	1,7	0,1	1,3	0,1	1,5	0,1	1,1	0,1
Կարտոֆիլ	647,2	33,1	660,5	31,6	696,1	31,2	607,7	27,4	606,3	27,8
Բանջարեղեն	849,0	43,4	876,0	42,0	954,6	42,8	1007,6	45,4	968,6	44,4


<sup>1</sup> «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան, 2017 թ.:

**Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը 2012 – 2016 թթ.<sup>1</sup>**

(գ. 1 հա-ից)

	2012թ.	2013թ.	Շեղում (+/-) 2012-2013թթ.	2014թ.	Շեղում (+/-) 2013-2014թթ.	2015թ.	Շեղում (+/-) 2014-2015թթ.	2016թ.	Շեղում (+/-) 2015-2016 թ.
Հացահատիկ և հատիկարնղեղեն	26,5	30,8	4,3	31,8	1,0	31,3	-0,5	30,7	-0,6
Ծխախոտ	27,2	30,6	3,4	24,6	-6,0	26,0	1,4	24,4	-1,6
Կարտոֆիլ	206,7	214,3	7,6	231,6	17,3	217,8	-13,8	209,8	-8,0
Բանջարեղեն	325,0	333,7	8,7	350,5	16,8	334,0	-16,5	301,8	-32,2


Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ 2012 – 2014 թթ. համախառն բերքի ծավալը կտրուկ աճել է, 1954,1 հազ. տ.-ից հասնելով 2232,1 հազ. տ.-ի, այլ կերպ ասած տվյալ ժամանակահատվածում գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն արտադրանքի գծով գրանցվել է 14,2% աճ: 2014 թ.-ին համախառն բերքի մեծ մասը, մասնավորապես 42,8%-ը կազմել են բանջարային մշակաբույսերը, 31,2%-ը բաժին է ընկել կարտոֆիլին, 26%-ը՝ հացահատիկին և հատիկարնղեղեն մշակաբույսերին և 0,1%-ը՝ ծխախոտի համախառն բերքին: 2014 – 2016 թթ.-ի ընթացքում նկատվում է համախառն բերքի դանդաղ, բայց հաստատուն նվազում (գծապատկեր 3):



**Գծապատկեր 3. Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը (հազ. տ.) 2012 – 2016 թթ.**

<sup>1</sup> «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան, 2017 թ.:

Գծապատկերից պարզ երևում է, որ 2014 թ.-ին գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը կազմել է 2232,1 հազ. տ., 2015 թ.-ին՝ 2218.3 հազ. տ., 2016 թ.՝ 2180.2 հազ. տ., այսինքն 2016 թ.-ին 2014 թ.-ի նկատմամբ գրանցվել է 2.3% նվազում: Աղյուսակ 2-ի հիման վրա ստորև կառուցենք գծապատկեր 4-ը:



**Գծապատկեր 4. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը 2012 – 2016 թթ.**

Համախառն արտադրանքի նվազման պատճառները բազմազան են, սակայն աղյուսակ 2-ի և գծապատկեր 4-ի տվյալներից կարելի է նկատել, որ այն ժամանակահատվածում, երբ գրանցվել է համախառն արտադրանքի նվազում (2014 – 2016 թթ.) նվազել է նաև գրեթե բոլոր մշակաբույսերի բերքատվությունը (բացառություն է կազմել միայն ծխախոտի 2015 թ.-ի բերքատվությունը՝ կազմելով 26 գ. 1 հա.-ից): Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ համախառն բերքի ծավալը ուղիղ կախվածության մեջ է գտնվում բերքատվության մակարդակից, այլ կերպ ասած բերքատվության մակարդակի նվազումը հանդիսացել է համախառն բերքի նվազման հիմնական պատճառներից մեկը:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ գյուղատնտեսությունում առկա հիմնախնդիրների լուծման համար, խիստ անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավումը, որոնք պետք է առաջին հերթին ուղղվեն բուսաբուծության զարգացմանը, հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը, գոտիական մասնագի-

տացմանը, ագրարային ոլորտի գիտակրթական և խորհրդատվական համակարգի բարելավմանը: Հարկ է նշել, որ դրված խնդիրների ամբողջական լուծման համար ֆինանսական միջոցների ներգրավման աղբյուրներ պետք է հանդիսանան և՛ պետական, և՛ մասնավոր, և՛ օտարերկրյա ներդրումները, որին հասնելու միակ ճանապարհը ՀՀ ագրարային ոլորտի ներդրումային միջավայրի բարելավումն է:

## **ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

### **ԶԱՐՄԻԿ ՎԱՅԱՆԻ ՄԵԼԻԷՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ*

**Համառոտագիր:** Գյուղատնտեսությունը հանդիսանում է ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերից մեկը: Վերջին տարիներին այն սկսում է զիջել դիրքերը հայրենական շուկայում, որը վկայում է մի շարք խնդիրների մասին: Հիմնական տնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ լրացուցիչ ֆինանսական ներդրումների ներգրավումը կարող է որոշիչ դեր ունենալ ագրարային ոլորտում ծառայած խնդիրների լուծման գործում: Ներդրումները առաջին հերթին պետք է ուղղվեն բուսաբուծության զարգացմանը, հողօգտագործման արդյունավետության բարձրացմանն և ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգերի բարելավմանը:

*Բանալի բառեր.* ՀՀ ագրարային ոլորտ, ներդրումային միջավայր, համախառն արտադրանք, ՀՆԱ, ֆինանսական հիմնախնդիրներ, պետական, օտարերկրյա ներդրումներ:

## **ПРОЦЕСС РАЗВИТИЯ АГРАРНОГО СЕКТОРА РА В ДЕЛЕ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ**

### **ЗАРМИК ВАГАНОВИЧ МЕЛИКЯН**

*аспирант Национального Аграрного Университета Армении*

**Аннотация:** Сельское хозяйство является одной из основных отраслей экономики Армении. В последние годы отрасль теряет свои позиции на внутреннем рынке, что свидетельствует о наличии ряда существенных проблем. Анализ основных экономических показателей показывает, что привлечение дополнительных финансовых вложений имеет решающее значение для решения существующих проблем в сельском хозяйстве, которое должны

быть направлены прежде всего на развитие растениеводства, повышение эффективности землепользования и совершенствование научно-образовательной и консультационной системы аграрного сектора.

*Ключевые слова:* Аграрный сектор РА, инвестиционная среда, валовой продукт, ВВП, финансовые вопросы, сельскохозяйственные культуры, государственные, иностранные инвестиции.

## **THE ROLE OF DEVELOPING THE AGRICULTURE INDUSTRY IN MAKING THE INVESTMENT CLIMATE MORE BUSINESS FRIENDLY**

**ZARMIK VAHAN MELIKYAN**

*Ph.D. Student, Agrarian National University of Armenia*

**Abstract:** The agriculture is one of the main industries of the economy in the Republic of Armenia. Recently it has started losing its market share in the domestic market, thus indicating the fact that the industry faces several issues. The analysis of main economic indicators shows that attraction of additional and/or new investments could play a crucial role in addressing the issues that the agriculture industry faces. Firstly, the investments need to be channeled to plant cultivation (crop husbandry), ensure an increase in efficacy of land utilization and strengthen the science and education, and consulting systems that serve the needs of the agriculture industry.

**Keywords:** *The agriculture industry in the Republic of Armenia, investment climate, gross product, GDP, financial issues, public, foreign investments.*



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԱԶԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ**

Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի էներգետիկայի արդյունավետ զարգացումը: Ներկայումս մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում հատկապես հիդրոէներգետիկայի զարգացման ուղղությամբ՝ կառուցվել և կառուցվում են նոր հիդրոէլեկտրակայաններ, նախատեսվում է նաև արևային կայանների կառուցումը: Կարևոր հարց է նաև Ստեփանակերտ քաղաքում գազատուրբինային ջեռուցման ջերմային էլեկտրակայանի ստեղծումը: Այն հնարավորություն կտա համատեղ ցիկլով արտադրել էլեկտրական և ջերմային էներգիա, ինչպես մեծ քանակությամբ վառելիքաէներգետիկ ռեսուրսներ: Բացի դրանից Արցախի էներգահամակարգում ներկայումս աշխատում են միայն հիդրոէլեկտրակայաններ, որոնք հուսալի ձևով չեն կարող փակել առկա պիկային բեռնվածությունները: Գազային տուրբինները այդպիսի հնարավորություն ունեն: Նրանք չեն պահանջում ջուր հովացման համար, կարող են աշխատել նաև պիկային ռեժիմների դեպքում: Աշխատանքի սկզբունքը հետևյալն է:

Բնական գազը այրվելով գազային տուրբինի այրման խցում ուղղվում է գազային տուրբին: Արտադրվում է էլեկտրական էներգիա: Այնուհետև աշխատած գազերը բավական բարձր ջերմաստիճանով կարելի է օգտագործել ջերմամատակարարման համար գնացող ցանցային ջրի տաքացման համար:

Առաջարկվում է կառուցել 50 ՄՎտ հզորությամբ ջեռուցման ՋԷԿ: Այն համեմատվել է անջատ եղանակով էլեկտրական և ջերմային էներգիա արտադրող կայանների հետ: Տեղադրվում է 2 հատ 25 ՄՎտ հզորությամբ գազային տուրբին և ջերմօգտագործիչ: Այս տուրբինների ջերմային բեռը կազմում է 38 ՄՎտ:

Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի արդյունավետությունը գնահատելու համար այն համեմատենք նույն հզորությամբ շոգետուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի հետ: Հաշվարկները կատարվել են 50 ՄՎտ էլեկտրական հզորությամբ ՋԷԿ-ի համար՝ հաշվի առնելով Ստեփանակերտի կլիմայական պայմանները:

Դրա համար անհրաժեշտ է այն ներկայացնել տարեկան բերված ծախսերի տեսքով: Այսինքն՝

$$Z_{\text{գր.}} = U_{\text{գր.}} + E_{\text{գ}} \cdot K, \quad (1)$$

որտեղ  $K$  -ն կայանի կապիտալ ներդրումներն են, դրամ

$E_{\text{գ}}$ -ն արդյունավետության նորմատիվային գործակիցն է, ընդունվում է հավասար 0.12-ի,

$U_{\text{տ}}$ -ն տարեկան շահագործման ծախսերն են, դրամ/տարի:

Տարեկան շահագործման ծախսերի մեջ մտնում են՝ ամորտիզացիայի և ընթացիկ նորոգման, շահագործող անձնակազմի աշխատավարձը, ընդհանուր կայանային և վառելիքի հետ կապված ծախսերը:

$$U_{\text{տ}} = U_{\text{ամ}} + U_{\text{աշխ}} + U_{\text{ը.կ.}} + U_{\text{վ}}, \quad (2)$$

Որոշենք կայանի կապիտալ ներդրումները

$$K_{\text{կ}} = \bar{K} \cdot N_{\text{կ}}, \quad (3)$$

որտեղ  $\bar{K}$  -ն էլեկտրակայանի կառուցման տեսակարար կապիտալ ներդրումներն են՝ դրամ/ԿՎտ,

$N_{\text{կ}}$  - կայանի էլեկտրական հզորությունը, ՄՎտ:

Այժմ հաշվարկենք տարեկան օգտագործված վառելիքի ծախսերը էլեկտրական և ջերմային էներգիաների արտադրման համար:

Էլեկտրական էներգիայի արտադրման համար կարող ենք գրել,

$$B_{\text{էլ}}^{\text{ո}} = \omega_{\text{գ}} \cdot Q_{\text{գ}} \cdot b_{\text{գ.գր.}} \cdot 10^{-6}, \quad (4)$$

որտեղ  $\omega_{\text{գ}}$  -ն գազատուրբինային կայանքում էլեկտրական էներգիայի

տեսակարար արտադրությունն է ջերմային սպառման բազայի վրա ԿՎտժ/ԳՋ:

25 ՄՎտ հզորության գազային տուրբինի համար ջերմային անվանական բեռը կազմում է 38 ՄՎտ:

$Q_{\text{տ}}$ -ն տարեկան արտադրված ջերմային էներգիայի քանակությունն է, Բգ.տ.-ն գազային տուրբինում մեկ ԿՎՏԺ էլեկտրական էներգիա արտադրելու համար վառելիքի տեսակարար ծախսն է գրամ/ԿՎՏԺ:

Գազատուրբինային կայանքում ստացված ջերմային էներգիայի տարեկան օգտագործված վառելիքի քանակը կարող ենք որոշել հետևյալ ձևով.

$$B_{\text{տ}} = Q_{\text{տ}} \cdot B_{\text{ջ}} \cdot 10^{-3} \text{ տոննա}$$

որտեղ  $B_{\text{ջ}}$ -ն վառելիքի տեսակարար ծախսն է ջերմային էներգիայի արտադրման համար:

Լավագույն տարբերակի ընտրման համար որպես չափանիշ ծառայող բերված ծախսերի (1) բանաձևի մեջ մտնող բաղադրիչների նշանակությունները որոշվում են տեխնիկատնտեսական հաշվարկներ կատարելու հայտնի մեթոդիկայի համաձայն:

Անհրաժեշտ է նշել, որ տարեկան բերված ծախսերով հաշվարկներ կատարելիս առավելությունը տրվում է այն տարբերակին, որի դեպքում ծախսերը նվազագույնն են ստացվում:

Հետևաբար՝ նպատակահարմար է նախագծել և կառուցել գազատուրբինային կայանքներով կահավորված ջեռուցման ՋԷԿ-եր, քանի որ տարեկան բերված ծախսերը զգալիորեն փոքր են ստացվում:

Շուկայական հարաբերությունների պայմաններում վառելիքի արժեքը փոփոխության միտում ունի՝ կախված մի շարք գործոններից: Այդ պատճառով կատարված է տարեկան բերված ծախսերի հաշվարկները վառելիքի տարբեր արժեքների դեպքում:

Ստորև ներկայացված է երկու տարբերակների դեպքում տարեկան բերված ծախսերի հաշվարկը և համեմատությունը, որոնց արդյունքները ամփոփված են աղյուսակներում:


Աղյուսակից երևում է, որ գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի դեպքում տեխնիկա-տնտեսական ցուցանիշները ավելի գերադասելի են, քան շոգետուրբինային ՋԷԿ-ի համար: Տարեկան բերված ծախսերի արժեքները տարբեր վառելիքի գների դեպքում բերված են աղյուսակում:

*Աղյուսակ 1*

Վառելիքի արժեքը, դրամ/տոննա	I Տարբերակ Դրամ/տարի $\times 10^9$	II Տարբերակ Դրամ/տարի $\times 10^9$	Տարբերությունը, $\times 10^9$ դրամ/տարի
140 հազար ՀՀ դրամ	34.8	42.1	7,3
150 հազար ՀՀ դրամ	36.9	44.6	7.74
160 հազար ՀՀ դրամ	39.1	48.1	8.99

Վառելիքի տարբեր արժեքների դեպքում հետգնման ժամանակահատվածը կկազմի

Վառելիքի արժեքը, դրամ/տոննա	I Տարբերակի Հետզնման ժամանակահատվածը, տարի	II Հետ զնման ժամանակահատվածը, տարի	Տարբերությունը, Հետզնման ժամանակահատվածը, տարի
140 հազար ՀՀ դրամ	4,98	5.88	0,9
150 հազար ՀՀ դրամ	5,28	6.33	1.05
160 հազար ՀՀ դրամ	5,58	6.7	1.12



**Գծապատկեր 1. Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի սկզբունքային սխեման**

- 1-կոմպրեսոր,
- 2-օդատաքացուցիչ,
- 3-այրման խուց,
- 4- գազային տուրբին,
- 5- էլեկտրագեներատոր,
- 6- օգտահանման կաթսա,
- 7- ցանցային պոմպ:

### Գրականություն

1. Պապիկյան Ս.Ռ., ГТУ-150 տիպի գազատուրբինային կայանքի աշխատանքային ռեժիմի ուսումնասիրությունը: ՀՊՃՀ-ի տարեկան գիտաժողովի զեկուցումներ, հատոր 1, Երևան, 2001թ.:
2. Պապիկյան Ս.Ռ., Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի ռեժիմների ուսումնասիրությունը տարբեր ջերմային բեռնվածությունների դեպքում: Երկրորդ միջազգային էներգետիկական գիտաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, 2001թ, 459-463էջ:
3. Պապիկյան Ս.Ռ., Գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-երի արդյունավետության գնահատման մեթոդ, «Գիտություն և տեխնիկա», №11, 2005, 10-12էջ:

### Եզրակացություն

1. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ստեփանակերտի կլիմայական պայմանների համար գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրական էներգիան համեմատած շոգետուրբինային կայանի հետ մոտ 20 տոկոսով ավելի էժան է:
2. Վառելիքի արժեքի մեծացմանը զուգընթաց այն ավելի ակնառու է դառնում: Հետևաբար՝ նպատակահարմար է նախագծել և կառուցել գազատուրբինային ջեռուցման ՋԷԿ-եր:
3. Առաջարկվող տարբերակի դեպքում վառելիքի տարբեր արժեքների դեպքում հետ գնման ժամանակամիջոցը կազմում է 4.98-ից մինչև 5.58 տարի, իսկ մյուս տարբերակի դեպքում՝ ավելի մեծ է: Տարբերությունը զգալի է:

## ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԱԿԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

**ՍՏԵՓԱՆ ՌԱՖԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆ**, տեխ. գիտ. թեկ.,

«Էներգիա ռեկ Արմենի» ՄՊԸ, գլխավոր ինժեներ

**Համառոտագիր:** Հնդվածում առաջարկվում է Արցախի էներգահամակարգում օգտագործել գազատուրբինային կայանքներ: Տեխնիկապես հնարավոր է և տնտեսապես շահավետ, որպեսզի Ստեփանակերտ քաղաքում կառուցվի ջեռուցման ՋԷԿ 50Մ վտ հզորությամբ՝ օգտագործելով գազատուրբինային կայանքներ: Բերված ծախսերի միջոցով կատարվել են տարբեր հաշվարկներ:

*Բանալի բաներ. գազային տուրբին, ջեռուցման ՋԷԿ, ջերմային էներգիա, հոորություն, էլեկտրաէներգիա, բերված ծախսեր, վառելիք, կապիտալ ներդրումներ:*

## **ТЕХНИКО-ЭКОНОМИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ ИСПОЛЬЗОВАНИЯ ГАЗОТУРБИННЫЕ УСТАНОВКИ В ЭНЕРГОСИСТЕМЕ АРЦАХА**

**СТЕПАН РАФИКОВИЧ ПАПИКЯН**, *Канд. тех. наук,  
«ЭРА» ООО, главный инженер*

**Аннотация:** В статье предлагается в энергосистеме Арцаха использовать газотурбинные установки. Технически возможно и экономически целесообразно для экономии топлива в г. Степанакерте построить ТЭЦ с использованием газотурбинных установок мощностью 50МВт. Для разных вариантов подсчитаны приведенные затраты.

**Ключевые слова:** *Газовая турбина, ТЭЦ, Тепловая энергия, мощность, электро-энергия, приведенные затраты, топлива, капитальные затраты.*

## **THE ECONOMIC ISSUES ON THE UTILIZATION OF GAS-TURBINE STATIONS IN THE POWER SYSTEM OF THE ARTSAKH REPUBLIC**

**STEPAN RAFIK PAPIKYAN**, *Candidate of Sciences (Technical)  
Chief Engineer, "Energia rek Armeni" LLC*

**Abstract:** The article proposes to utilize the gas-turbine stations in the power system of the Republic of Artsakh. It is technically possible and economically feasible to build a combined heat and power plant with a capacity of 50 megawatt in Stepanakert that utilizes gas turbine stations. Various estimates are provided based on the costs presented in the article.

**Keywords:** *Gas turbines, thermal power plant, thermal energy, capacity, power, estimated cost, fuel, capital investment*

## **ԼԻԶԵՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՉՆԵՂՈՏՆԵՐԸ ՀՀ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒՄ**

Բարձր մրցակցային միջավայրում ընկերությունները պետք է փնտրեն այնպիսի ֆինանսավորման աղբյուրներ, որոնք ավելի շահավետ և հարմար են զարգացման համար: Բացի բանկային վարկերից, որոնք ընկերություններին առաջարկվում են անհրաժեշտ ռեսուրսներ ընդունելի պայմաններով, շուկայում գոյություն ունեն նաև այլ գործիքներ: Նման գործիքներից է ֆինանսական վարձակալությունը կամ լիզինգը: Ներդրումային աղբյուրների կազմում լիզինգի մասնաբաժինը համաշխարհային մասշտաբով կազմում է 30%, իսկ վերջին տարիներին ՀՀ առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմի մեջ ֆինանսական վարձակալության մասնաբաժինը բանկերի ընդհանուր ակտիվներում վերջին տարիներին կազմել է 0.1%<sup>1</sup>: Այսպիսով, Հայաստանի տնտեսության պայմաններում լիզինգի կիրառումը չափազանց քիչ է օգտագործվում:

Դիտարկենք ֆինանսական գործիքներից լիզինգի առանձնահատկությունները: Այն համարվում է վարկի տեսակ, որը հնարավորություն է տալիս համեմատաբար սակավ ֆինանսական միջոցներ ունեցող ձեռնարկատիրոջը սկսել ավելի մեծ բիզնես ծրագիր: Լիզինգի դեպքում գույքի ձեռքբերման ֆինանսավորումն իրականացվում է ամբողջ ծավալով: Որպես կանոն, լիզինգ տրամադրող ֆինանսական կազմակերպությունները մատակարարների հետ գտնվում են երկարատև գործընկերային հարաբերություններում, ինչը հնարավորություն է ստեղծում գույքը ձեռք բերել համեմատաբար ավելի մատչելի գներով: Լիզինգով ձեռք բերված գույքը հաշվառվում է լիզինգառուի ֆինանսական հաշվեկշռում, որից կատարվում են համապատասխան ամորտիզացիոն մասհանումներ, ինչը հնարավորություն է տալիս նվազեցնելու հարկվող շահույթը: Լիզինգի վարձավճարների գրաֆիկը սահմանելիս ֆինանսական կազմակերպությունների կողմից հիմնականում հաշվի է առնվում բիզնես պլանն ու սեզոնայնությունը:

Ի տարբերություն վարկի՝ լիզինգն ունի հետևյալ առավելությունները.

<sup>1</sup> Կենտրոնական բանկի տեղեկագիր 2016թ., 2017թ., էջ 470-475 [www.cba.am](http://www.cba.am)

- բավական ճկուն է,
- ֆինանսավորման ժամկետներն ավելի երկարատև են,
- վարչարարական խոչընդոտները զգալիորեն կրճատված են,
- առկա են հարկային արտոնություններ:

Լիզինգը առավել մատչելի է՝ հատկապես փոքր և միջին գործարարությանը զբաղվողների համար:

Այդ առումով, ՓՄՁ-ների համար կարևորվում են հետևյալ գործընթացները.

- արագանում են տեխնիկայի և տեխնոլոգիայի նորացման տեմպերը,
- մեծանում է թողարկվող արտադրանքի տարբերակման աստիճանը, ընդլայնվում են թանկարժեք տեխնիկայի օգտագործման հնարավորությունները,
- լուծվում է սեփական կապիտալի պակասուրդի խնդիրը և այլն:

Փոքր և միջին ձեռնարկությունները ֆինանսական շուկայում բախվում են զգալի դժվարությունների, քանի որ հաճախ բանկերի կողմից խտրական վերաբերմունքի են արժանանում: Այսպես՝ վարկային կազմակերպությունները հաճախ հրաժարվում են ՓՄՁ-ներին վարկավորել՝ ոչ բավարար երաշխավորությունների պատճառով: Բացի այդ, սահմանվում են բավական բարձր տոկոսադրույքներ: Եթե սկսնակ գործարարները բախվում են ֆինանսական ռեսուրսների պակասուրդի, ապա գործող ձեռնարկություններն առնչվում են հիմնական ֆոնդերի նորացման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման խնդիրներին: Հաճախ ընկերության անբավարար միջոցները արգելք են դառնում ժամանակակից մեքենասարքավորումների ձեռքբերման համար: Եթե այդ կարգի հիմնախնդիրները ժամանակին լուծվեն, ապա թողարկվող արտադրանքի որակը կբարելավվի, և մրցունակության մակարդակը կբարձրանա: Նման հիմնախնդիրների լուծման միջոց է համարվում լիզինգը:

Ներդրումային լիզինգը մասնագիտական գրականության մեջ բնորոշվում է որպես ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնման ֆինանսավորում և կապիտալ ծախսերի միանվագ կրճատում: ՀՀ-ի համար լիզինգը կարող է կապիտալի ներգրավման նորամուծական գործիք դառնալ: Լիզինգը կարևոր նշանակություն է ստանում միկրոֆինանսավորման համակարգի կայացման համար հատկապես որպես ձեռնարկատիրական գործունեության ձև, որը ոչ միայն բավարարում է ինովացիոն քաղաքականության պահանջները, այլ նաև համատեղում է մասնավոր, կորպորատիվ և հանրային շահերը: Մասնագիտական գրականության մեջ լիզինգը հիմնականում չի համարվում միկրոֆինանսավորման գործիք և ներկայացվում է որպես



ժամանակավորապես ազատ կամ փոխառու միջոցների ներդրում, որի դեպքում վարձատուն պարտավորվում է ձեռք բերել պայմանագրով նախատեսված գույքը որոշակի վաճառողից և այդ գույքը լիզինգատուին տրամադրել ժամանակավոր օգտագործման՝ վճարման հետագա հետզման հետ միասին<sup>1</sup>: Միջազգային պրակտիկայում լայն տարածում ունի սպառողական լիզինգը, որը նախատեսված է ֆիզիկական անձանց համար: Վերջին շրջանում սպառողական լիզինգը սկսել է կիրառվել նաև Հայաստանում՝ «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպության կողմից: Մասնագետների կարծիքով սպառողական լիզինգը Հայաստանում ունի աճի մեծ ներուժ: Շուկայի այս սեգմենտի զարգացման հեռանկարները մեծապես կախված են նաև երկրի ընդհանուր տնտեսական զարգացումից, ինչպես նաև բնակչության գնողունակության աստիճանից: Լիզինգի տարածումը ֆիզիկական անձանց շրջանում յուրահատուկ էվոյուցիոն ճանապարհ է, որի սկիզբը կարծես ՀՀ շուկայում նշարվում է: Ճիշտ է, սպառողական լիզինգը ընդհանուր լիզինգի շուկայում առայժմ մեծ տեղ չի զբաղեցնի: Պարզապես նպատակն է զարգացնել ՀՀ տնտեսությունը՝ ՓՄՁ-ներին միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման միջոցով: «ԱԳԲԱ Լիզինգ» ընկերության գնահատականներով՝ սպառողական լիզինգը չի գերազանցի ընկերության ընդհանուր լիզինգային պորտֆելի 15-20%-ը<sup>2</sup>: ԱԳԲԱ Լիզինգը 2003-ին Հայաստանում հիմնադրված առաջին լիզինգային ընկերությունն է, որի բաժնետերերն են ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ Լիզինգ և Ֆակտորինգ» մասնագիտացված ընկերությունը և ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ Բանկը: ԱԳԲԱ Լիզինգը Հայաստանում լիզինգի բացարձակ առաջատարն է՝ շուկայի մոտ 80% մասնաբաժնով: Ընկերության կողմից ֆինանսավորման գերակա ուղղությունն է էներգախնայող և էներգաարդյունավետ սարքավորումների ֆինանսավորումը, որն այժմ իրականացվում է ընկերության կողմից 2014թ. ստեղծված «Գրին Լիզինգ» ենթաբրենդի միջոցով:

Ներկայում «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ-ում ուսումնասիրության և վերլուծության փուլում բազմաթիվ լիզինգային հայտեր կան, ինչպես նաև պարբերաբար նոր հայտեր են ստացվում ՀՀ մարզերից: Գյուղտեխնիկայի ձեռքբերման պայմաններն են՝ 20% կանխավճար, տարեկան տոկոսադրույքը՝ 9%, որից 7%-ը սուբսիդավորվում է պետության կողմից, արդյունքում՝ ֆերմերը վճարում է 2% լիզինգային տոկոսադրույք, 3-10 տարի մարման ժամկետում՝ կախված տեխնիկայի տեսակից:

<sup>1</sup> Балаян Б.Т. Проблемы конвергенции финансовой отчетности лизинговых операций в Республике Армения / Б.Т. Балаян // Известия аграрной науки. – 2011. – № 4. – С. 133–135.

<sup>2</sup> <http://www.banks.am/am/news/interviews/11995>

Լիզինգի տոկոսադրույքը սահմանվում է ոչ պակաս, քան ավանդների և ոչ ավելի, քան վարկային տոկոսադրույքների մեծության չափով: Եթե լիզինգի տոկոսադրույքները պակաս լինեն ավանդների տոկոսադրույքներից, ապա վարձատուն հնարավորություն չի ունենա բանկերից հավաքագրելու «էժան փողեր» և դրանք վերադրելու լիզինգի ոլորտ: Անգամ նման հնարավորության առկայության դեպքում՝ նա տնտեսապես նպատակահարմար չի համարի ֆինանսական ներդրումներ կատարել վարձակալության մեջ՝ դիմելով ռիսկայնության, եթե ավանդագրման ճանապարհով հնարավոր է վաստակել տոկոսային եկամուտ<sup>1</sup>:

Հայաստանում ՓՄՁ ոլորտը միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում է: ՓՄՁ ոլորտի հետ կապված տարբեր գնահատականներ կան արված, մասնավորապես, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄՁԳ) արձանագրել է, որ ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը Հայաստանում խոչընդոտ է փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար, քանի որ ֆինանսական կառույցների կողմից որպես գրավ պահանջվող և ՓՄՁ-ներին պատկանող գույքի միջև խիստ անհամապատասխանություն կա: Դրա հետևանքով անշարժ գույք չունեցող ՓՄՁ-ներին բանկերը հաճախ մերժում են, կամ էլ բարձր տոկոսադրույքների պատճառով նրանք խուսափում են վարկեր վերցնելուց: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՁԵԲ) ուսումնասիրություններն էլ հիմնականում հարկային ոլորտին են վերաբերում. այստեղ պետք է հարկային բեռի թեթևացում լինի և որոշակի արտոնություններ: Համաշխարհային բանկի (ՀԲ) զեկույցներում բազմիցս որպես ՓՄՁ-ների զարգացման խոչընդոտ դիտարկվել է անառողջ մրցակցային դաշտը, որտեղ սկսնակ տնտեսավարողները չեն կարողանում դիրքավորվել:


Հայաստանը բիզնեսով զբաղվելու դյուրինությամբ զիջել է իր դիրքերն աշխարհում: Համաշխարհային բանկի «Գործարարություն 2018. Բարեփոխումների իրականացում աշխատատեղերի ստեղծման համար» զեկույցի համաձայն՝ 2017-ին Հայաստանը 47-րդ հորիզոնականում է նախորդ տարվա 38-ի համեմատ: Զեկույցի համաձայն՝ ԵԱՏՄ երկրների շարքում Հայաստանը նախավերջինն է. Ռուսաստանը 35-րդ հորիզոնականում է, Ղազախստան՝ 36, Բելառուսը՝ 38, և Ղրղըզստանը՝ 77<sup>2</sup>:

ՓՄՁ ոլորտն ունի աճող մասնաբաժին ՀՆԱ-ում. ընդհանուր առմամբ ապահովում է ՀՆԱ-ի մոտ 33 տոկոսը: Այս մասնաբաժինն ավելացնելու համար փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղա-

<sup>1</sup> Հակոբյան Ա., Ֆինանսական վարձակալություն, մենագրություն, Երևան, 2011, էջ 74-75:

<sup>2</sup> <http://www.panarmenian.net/arm/news/248303/>.

քականությունը շարունակում է մնալ կառավարության ուշադրության կենտրոնում: Նրանց կարողությունները ըստ տնտեսության տարբեր ճյուղերի բացահայտելու, ֆինանսական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու համար ստեղծված Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) բիզնեսի այս հատվածում մի շարք ծրագրեր է իրականացնում: Կազմակերպությունը այս ոլորտի տնտեսավարողներին նաև անվճար խորհրդատվական ծառայություններ է տրամադրում: Սկսնակ և գործող ձեռնարկատերերի համար տեղեկատվական ուղղորդման աղբյուր կարող է դառնալ Ազգային բիզնես ինկուբատոր հիմնադրամը՝ բիզնես գաղափարի մշակումից մինչև իրացման շղթայի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելով<sup>1</sup>:



Գծապատկեր 1. ՓՄՁ մասնաբաժինը ՀՆԱ-ում 2013-2016թթ.

Ըստ Գյուղական ֆինանսավորման կառույց-ծրագրի իրականացման գրասենյակի ներկայացված վերջին հաշվետվության՝ 2011-ի ապրիլից մինչև 2015 սեպտեմբերը հինգ բանկեր տրամադրել են 77.3 մլրդ դրամի վարկ, որի տոկոսադրույքի սուբսիդավորված գումարը կազմել է 3.2 մլրդ դրամ: Տրամադրված վարկերի ամենամեծ մասը Արմավիրի մարզին է բաժին հասել:

Միջազգային պրակտիկայում ընդունված է վարկերի տրամադրումը վարկային միությունների կողմից: «Վարկային միություն» հասկացու-

<sup>1</sup> <http://ampop.am/small-and-medium-enterprises/>.

թյունը, որն աշխարհում հայտնի է credit union անվամբ, այն կոոպերատիվ սկզբունքի հիման վրա ստեղծված մարմինն է, որի միջոցները հիմնականում գոյանում են անդամ-մասնակիցների անդամավճարներից և որը կոչված է սպասարկելու իր անդամներին՝ տարատեսակ ծառայություններ մատուցելու միջոցով: Վարկային միավորումները, ընդհանուր առմամբ, մատուցում են չորս տեսակ ծառայություն՝ վարկերի տրամադրում, բանկային ավանդների ընդունում, ներդրումային ծառայություններ և ապահովագրություն, մինչդեռ ՀՀ օրենսդրությունն իր ներկայիս տեսքով թույլ է տալիս իրականացնել վերը նշվածներից միայն առաջինը: Նշենք, որ Հայաստանում գործող 17 բանկերի վարկային պորտֆելը 2016թ. ընթացքում ավելացել է 16,5 տոկոսով՝ հասնելով 2 տրիլիոն 424 միլիարդ դրամի<sup>1</sup>: World Council-ի վիճակագրական զեկույցի հիման վրա ներկայացնենք վարկային միությունների տվյալները ըստ երկրների:

*Աղյուսակ 1*

**Վարկային միությունների տվյալները ըստ երկրների<sup>2</sup>**

	Քանակ	Բաժնետերեր	Ակտիվներ (դոլար)
Ռուսաստան	250	330481	366196182
Ուկրաինա	589	821600	150130314
Մոլդովա	303	121104	31488270
Բելառուս	6	500	150000
Ադրբեջան	107	30155	70450062
Հայաստան	0	0	0

Կազմակերպչական տեսանկյունից վարձակալը վարձակալին դիմելիս ավելի քիչ ժամանակ և ռեսուրս է ծախսում, քան վարկի ձեռքբերման ժամանակ: Վարձակալները ավելի պրոֆեսիոնալ են բանակցում մատակարարների կամ սարքավորումների արտադրողների հետ, ինչը հանգեցնում է հիմնական միջոցների ձեռքբերմանը՝ համեմատաբար հարմարավետ պայմաններում: Նույնը վերաբերում է նաև լիզինգի կազմակերպման ֆինանսական ռեսուրսների ներգրավման գործընթացներին, քանի որ լիզինգային ընկերությունները ստանում են համեմատաբար

<sup>1</sup> <http://www.lin.am/2087935.html>

<sup>2</sup> Credit Unions Worldwide: 2013 statistical report [Электронный ресурс] / World Council. – Режим доступа: [http://www.woccu.org/documents/2013\\_Statistical\\_Report](http://www.woccu.org/documents/2013_Statistical_Report)

«էժան» վարկավորում, հատկապես, եթե դրանք դուստր ձեռնարկություններ են<sup>1</sup>:

Հաշվի առնելով երկրի ներքին շուկայում սպառման փոքր հնարավորությունները և առևտրի աշխարհաքաղաքական սահմանափակումները՝ ՓՄՁ արտադրության ծավալների մեծացմանը կարող են նպաստել արտահանման ծավալների ավելացումը և արտահանման աշխարհագրության ընդլայնումը կամ շուկաների դիվերսիֆիկացումը:

ՀՀ-ում փոքր բիզնեսի վարկավորմանը խոչընդոտող հիմնական գործոններն են շուկայի փոքր չափերը, ցածր գնողունակ պահանջարկը, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի խոչընդոտները: Բանկային վարկավորման լուրջ խոչընդոտ է փոքր և նվազող շուկան: Վերջինս անկայնության և բարձր ռիսկայնության վկայությունն է: Ֆինանսական գործոններից կարելի է առանձնացնել ներքին ֆինանսավորման խիստ սահմանափակ բնույթը, պարտքային և բաժնետիրական ֆինանսավորման հնարավորությունների գրեթե բացակայությունը, վարկային ֆինանսավորման ցածր հասանելիությունը, պետական ֆինանսավորման փոքր ծավալները, վենչուրային ֆինանսավորման բացակայությունը, հարկման ոչ բարենպաստ համակարգը: Ոչ ֆինանսական գործոններն են նյութական արտադրության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության խթանման բացակայությունը, ստվերային ոլորտի մեծ մասնաբաժինը, շուկայի տարերային, միևնույն ժամանակ իրավունքները չարաշահող բնույթը, ստույգ տեղեկատվության պակասի առկայությունը և այլն:

ՀՀ-ում լիզինգային գործառնությունների ծավալները փոքր են, թերզարգացած է նաև արտադրատեխնիկական նշանակության ապրանքների երկրորդային շուկան, ինչը պայմանավորված է փոքր կազմակերպությունների ներդրումների սահմանափակմամբ: Անհրաժեշտ է նպաստել լիզինգի զարգացմանը, որը հնարավորություն կընձեռի գյուղացիական տնտեսություններին ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա՝ իրականացնելով պարբերական վճարումներ երկարաժամկետ ժամանակահատվածում, աջակցել գյուղացիական տնտեսություններին այս ծառայություններից օգտվելու համար՝ տոկոսադրույքների լայնամասշտաբ սուբսիդավորման և այլ միջոցներով:

---

<sup>1</sup> Хачатрян Н.Н. Проблемы организации лизинга в агробизнесе Армении /Н.Н. Хачатрян /Известия Государственного аграрного университета Армении. – 2009. – № 3. – С. 169

## ԼԻԶԻՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԶՅ ՓՄՁ ՈԼՈՐՏՈՒ

**ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Ներկայումս բազմաթիվ ձեռնարկությունների համար սկզբնական և ազատ դրամական ռեսուրսների բացակայության պարագայում լիզինգը մեծ նշանակություն է ստանում: Լիզինգը ձեռնարկությունների զարգացման համար արդյունավետ և նպատակային աջակցության յուրահատուկ ձև է՝ հաշվի առնելով բանկային վարկի ձեռքբերման դժվարությունները և ուղղակի դրամավարկային ներդրումների աճող ռիսկերը: Հայաստանում լիզինգային ծառայությունների շուկան դեռևս լիովին չի զարգացել, բայց շատ խոստումնալից է, եթե մենք դիտարկենք աշխարհի բազմաթիվ երկրների գործարարության մեջ լիզինգի երկարաժամկետ փորձին:

*Բանալի բառեր. լիզինգ, վարկ, ֆինանսներ, ՓՄՁ, ռեսուրսներ, շուկա, ներդրում, ժամկետ, վճարում, խթանում:*

## НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ ЛИЗИНГА И ПРЕПЯТСТВИЯ В СФЕРЕ МСП РА

**ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**Аннотация:** В настоящее время в условиях отсутствия у многих предприятий начальных и свободных денежных средств, сложностей с получением банковского кредита и повышенного риска прямых денежных инвестиций-лизинг является идеальной формой эффективной и целенаправленной поддержки развития предприятий. В Армении рынок лизинговых услуг еще не совсем развит, но он является весьма перспективным, если смотреть на многолетний опыт использования лизинговых отношений в предпринимательской деятельности многих стран мира.

**Ключевые слова:** *лизинг, кредит, финансы, МСП, ресурсы, рынок, инвестиции, срок, оплата, продвижение.*

## THE NECESSITY FOR INTRODUCING LEASING TO THE SME SECTOR AND OBSTACLES IN THE REPUBLIC OF ARMENIA

**SHOGER PYOTR POGHOSYAN**, *Ph.D. in Economics*  
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia Abstract*

**Abstract:** Currently the role of leasing is becoming of higher importance for many enterprises owing to lack of initial and free financial resources. In order to report increase in sales turnover leasing is a unique form of an effective and targeted form of assistance by taking into account the difficulties with getting bank loans and direct rising risks associated with monetary investments. The leasing services market hasn't emerged as a developed financial market; however is a very promising market if we consider the long-term gains the businesses in various nations of the world benefit from.

**Keywords:** *Leasing, loan, finance, SME, resources, market, investment, period, payment, promotion.*

**ГАГИК ИШХАНОВИЧ ВАРДАНЯН**, д.э.н., профессор  
*Проректор по науке и внешним связям АГЭУ*

**СЕРГЕЙ АЛЕКСЕЕВИЧ ИГНАТОВ**  
*сосискатель кафедры международных экономических отношений  
Армянского государственного экономического университета*

## **ВЗАИМОЗАВИСИМСТЬ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ И ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ**

Прямые иностранные инвестиции играют важную роль в переходе стран к рыночной экономике, по крайней мере, по трем причинам:

- ПИИ представляют собой импорт прямого капитала, новых технологий и знаний, тем самым способствуя стратегической реорганизации фирм и в целом экономику страны - реципиента<sup>1</sup>;
- ПИИ создают положительные внешние эффекты на национальные компании посредством косвенной передачи технологий и ноу-хау, которые непосредственно повышают технологический уровень страны-реципиента, следовательно, и его способность поглощения технологии, способствуют экономическому развитию<sup>2</sup>;
- ПИИ могут преодолеть возможный среднесрочный разрыв между внутренними сбережениями и потребностями инвестиций для ускорения реструктуризации и модернизации стран с переходной экономикой<sup>3</sup>.

В некоторых публикациях встречаются мнения о том, что все последствия иностранных инвестиций не являются однозначными и могут приводить как к негативным, так и к позитивным результатам (например, для некоторых стран Центральной и Восточной Европы)<sup>4</sup>.

«Прямые инвестиции возникают в случае, когда инвестор – резидент одной страны осуществляет инвестиции, которые обеспечивают ему контроль над предприятием, являющимся резидентом в другой стране, или

---

<sup>1</sup> **Konings, J.** “The Effects of Foreign Direct Investment on Domestic Firms: Evidence from Firm Level Panel Data in Emerging Economies.” CEPR Discussion Paper No. 2586, London, CEPR, 2000,

<sup>2</sup> **Barba Navaretti, G., Venables, A.** Multinational Firms in the World Economy. Princeton University Press. 2004,

<sup>3</sup> **Campos, N., Coricelli, F.** “Growth in Transition: What We Know, What We Don’t, and What We Should.” Journal of Economic Literature, 2002, Vol. 40, No. 3, pp. 793-836.

<sup>4</sup> **De Backer, K., Sleuwaegen, L.** “Does Foreign Direct Investment Crowd out Domestic Entrepreneurship?” Review of Industrial Organization. 2003, Vol. 22, No. 1, 67-84.



значительную степень влияния на управление таким же предприятием. Понятие прямых инвестиций относится к потокам и остаткам (накопленным), которые возникают между сторонами отношений прямого инвестирования»<sup>1</sup>. Считается, что контроль над предприятием существует, если прямому инвестору принадлежит более 50 % голосов в предприятии инвестирования (такое предприятие является дочерним), а существенная степень влияния достигается в том случае, если прямому инвестору принадлежит от 10 до 50 % голосов<sup>2</sup>. В некоторых странах устанавливаются определенные критерии прямых иностранных инвестиций. Так, ПИИ считаются те инвестиции, при которых резидент одной страны приобретает долю не менее 10 % доли предприятия, резидента в другой стране<sup>3</sup>.

Интеграционные процессы по-разному влияют на разные типы ПИИ. Следует исходить из того, что статистика ПИИ охватывает в основном четыре вида операций, которые квалифицируются как ПИИ:

- покупка /продажа существующего капитала в форме слияний и поглощений (M & A);
- гринфилд (с нуля) инвестиции;
- расширение капитала (дополнительные новые инвестиции);
- финансовая реструктуризация<sup>4</sup>.

В основном, влияние ПИИ на экономический рост можно классифицировать по двум категориям: расширение капитала и углубление капитала<sup>5</sup>. Позитивный эффект ПИИ на капитальные запасы из себя представляют эффект расширения капитала. Эффект углубления капитала подразумевает передачу знаний и технологий вместе с ПИИ в экономику принимающей страны. Таким образом, он охватывает внешние эффекты технологии и производительности и другие внешние эффекты, связанные с ПИИ. Согласно модели роста Р. Солоу, эффект углубления капитала ПИИ будет иметь положительный эффект на рост в долгосрочной перспективе, тогда как эффект расширения капитала со временем уменьшится<sup>6</sup>.

---

<sup>1</sup> Руководство по платежному балансу и международной инвестиционной позиции – Вашингтон, округ Колумбия. Международный валютный фонд. 2012, с. 353. (440 с.)

<sup>2</sup> Руководство по платежному балансу и международной инвестиционной позиции – Вашингтон, округ Колумбия. Международный валютный фонд. 2012, с. 354. (440 с.)

<sup>3</sup> FDI Potential and FDI Performance of the OIC Countries. Ankara, November 2014. p.2-3.

<sup>4</sup> OECD Benchmark Definition of Foreign Direct Investment. Fourth edition. OECD, 2008, P. 87.

<sup>5</sup> **Aghion, P., and Howitt, P.** The Economics of Growth. London: MIT Press. 2009, p.227. (495 p.)

<sup>6</sup> **Solow, R. A** Contribution to the Theory of Economic Growth//The Quarterly Journal of Economics, Vol. 70, No. 1. (Feb., 1956), pp. 65-94.

Как нам представляется, вышеупомянутые эффекты ПИИ в интеграционных образованиях могут быть более значительными, что обусловлено определенными, присущими им признаками.

За последнее десятилетие появилась теоретическая и эмпирическая литература по региональной интеграции и ПИИ. Это совпало с сильным ростом как числа региональных торговых соглашений (РТС), так и объемов ПИИ в развивающихся странах. Так, за последние несколько десятилетий число региональных торговых соглашений<sup>1</sup> (РТС) быстро росло, достигнув 455 в начале февраля 2018 года<sup>2</sup>. Несмотря на их важную роль в мировой экономике, особую актуальность приобретают исследования взаимосвязи между процессом экономической интеграции и прямыми иностранными инвестициями (ПИИ). Углубленное изучение теоретических концепций, связей между экономической интеграцией и ПИИ представляется особенно важным, поскольку они составляют основу для проведения эмпирических исследований и разработки национальных и региональных политик.

Существует консенсус, согласно которому экономическая интеграция ведет к дальнейшему увеличению ПИИ. Одним из часто приводимых факторов является увеличение масштабов рынка, что следует за региональной интеграцией. Как показывают данные таблицы 1, Азиатско-Тихоокеанское экономическое сотрудничество (53%), Североамериканская зона свободной торговли занимают лидирующие позиции (53%) по доле в мировом потоке ПИИ. За ними следуют Содружество наций (28%), которое образовалось более, чем сто лет назад и БРИКС (16%).

Теория политической экономии обычно подчеркивает влияние экономической взаимосвязи в регионе на успешную и динамичную региональную интеграцию. В соответствии с этим страны-участницы должны представлять взаимные экспортные рынки и направления инвестиций, чтобы воспользоваться выгодой от внутрирегиональной торговли и инвестиций.

---

<sup>1</sup> РТС, понятное как все формы интеграционных блоков, в том числе: соглашения о частичной сфере действия, соглашения свободной торговли, таможенные союзы и соглашения об экономической интеграции

<sup>2</sup> Regional trade agreements ( <http://rtais.wto.org/UI/Charts.aspx#>)

## ПИИ в выбранных интеграционных группах, 2016 г.

(млрд. долларов США и в %)<sup>1</sup>

	Доля в мировом притоке ПИИ	Суммарный объем ввезенных ПИИ	Доля суммарных ввезенных ПИИ	Доля мирового ВВП
G20	66%	15282	57%	78%
Азиатско-Тихоокеанское экономическое сотрудничество	53%	14399	54%	60%
Североамериканская зона свободной торговли	28%	7821	29%	28%
Содружество наций	28%	5208	19%	14%
БРИКС	16%	2815	11%	22%
Страны Африки, Карибского бассейна и Тихого океана	3%	719	3%	2%

Интеграционные проекты могут улучшить свое положение в глобальной конкуренции по отношению к другим регионам и тем самым привлечь инвестиции или усилить торговлю<sup>2</sup>. По общему мнению, несмотря на их важную роль в мировой экономике, взаимозависимость между процессами экономической интеграции и потоками ПИИ по-прежнему остается менее исследованной темой, в то время как взаимодействие между экономической интеграцией и торговлей изучено многими авторами.

ПИИ способствуют экономическому развитию и, следовательно, играют важную роль в развивающихся и переходных странах по этим направлениям: во – первых, инвестиции делают рынок более конкурентоспособным, подрывая монополию местных фирм, во – вторых, ПИИ создают положительные побочные эффекты для национальных компаний посредством косвенной передачи технологий и ноу-хау, которые непосредственно повышают технологический уровень принимающей страны,

<sup>1</sup> World Investment Report 2017, New York and Geneva, UN, 2017, p.15.

<sup>2</sup> Schirm, S.: Globalization and the new regionalism. Global markets, domestic politics and regional cooperation. Oxford: Polity. 2002. (248 p.) Mattli, W. The logic of regional integration. Europe and beyond. Cambridge: Cambridge Univ. Press. 1999.

тем самым способствуя их росту.<sup>1</sup>, в-третьих, ПИИ представляют собой импорт прямых капиталов и новых технологий, что способствует стратегической реорганизации фирм; в-четвертых, когда приток ПИИ в экономику достаточно велик, могут изменить цены, повысить ставку заработной платы и улучшить условия торговли. Еще одно преимущество ПИИ заключается в том, что они могут преодолеть возможный среднесрочный разрыв между внутренними сбережениями и инвестиционными потребностями<sup>2</sup>.

Долгое время некоторыми экспертами текущее состояние знаний в области взаимосвязи интеграции и инвестиций оценивалось как неудовлетворительное. В 2013 году в ходе совещания экспертов ЮНКТАД по региональной интеграции и инвестициям было признано целесообразным интенсифицировать такие исследования и разработки. В Записке, подготовленной в 2013 году Секретариатом ЮНКТАД говорится: «Усилия по региональной и межрегиональной экономической интеграции являются важной особенностью современного экономического ландшафта, который также влияет на потоки прямых иностранных инвестиций»<sup>3</sup>. Международная инвестиционная политика столкнулась с рядом проблем:

- заметное отсутствие многосторонней инвестиционной системы;
- наличие сложного, многослойного и многогранного международного инвестиционного режима;
- несоответствия между инвестиционными договорами;
- отсутствие согласованности между торговой и инвестиционной политикой;
- изменение парадигмы развития, в которой содержится призыв к модели инвестиций для устойчивого развития.

По всему миру предпринимаются многочисленные усилия в направлении региональной и межрегиональной экономической интеграции. Хотя усилия по регионализации могут привести к увеличению трансграничных

---

<sup>1</sup> **Konings, J.** “The Effects of Foreign Direct Investment on Domestic Firms: Evidence from Firm Level Panel Data in Emerging Economies.” CEPR Discussion Paper No. 2586, London, CEPR. 2000. **Yudaeva, K., Kozlov, K., Melentjeva, N., Ponomareva, N.** (2000), “Does Foreign Ownership Matter? Russian Experience.” *Economics of Transition*, 11(3), 383-409.

<sup>2</sup> **Navaretti, G. and Venables, A.** *Multinational Firms in the World Economy*, Princeton University Press (2004), pp. 17-18. (524 p.)

<sup>3</sup> **UNCTAD** Report of the Multi-year Expert Meeting on Investment, Innovation and Entrepreneurship for Productive Capacity-building and Sustainable Development on its first session. 2013a.. Retrieved on February 5, 2014, from [http://unctad.org/meetings/en/SessionalDocuments/ciimem4d2\\_en.pdf](http://unctad.org/meetings/en/SessionalDocuments/ciimem4d2_en.pdf)

инвестиций, все еще существует потребность в более глубоком понимании влияния региональной интеграции ПИИ на развитие и наоборот<sup>1</sup>.

Новые теоретические подходы подчеркивают важность региональной интеграции и глобальное экономическое давление на региональную интеграцию<sup>2</sup>. По их мнению, интеграционные проекты могут улучшить свое положение в глобальной конкуренции по отношению к другим регионам и тем самым привлечь инвестиции или усилить торговлю.

Ниже нами предпринята попытка изложения наиболее влиятельных современных теорий, касающихся факторов, влияющих на потоки ПИИ, с тем изложить поставить основную тему в более широком контексте экономической и управленческой теории.

Прежде чем исследовать различные теории, касающиеся связей между экономической интеграцией и потоками ПИИ, необходимо констатировать, что высокий уровень неоднородности как интеграционных блоков, так и ПИИ является существенным препятствием для выявления закономерностей.

Инвестиции являются ключевым компонентом экономического развития и одной из основных целей стран, вовлеченных в процесс региональной экономической интеграции. Логика заключается в том, что более крупные рынки, большая конкуренция и повышение доверия к политике повысят стимулы для инвестиций и тем самым повысят доходы как напрямую, увеличив капиталоемкость производства, так и косвенно, поощряя технический прогресс, имеющих отношение к инвестициям со всех источников, но они особенно часто применяются к регионализму, как средство привлечения ПИИ.

М. Шифф и А. Уинтерс считают, что «реальным ключом к инвестициям является общая политическая позиция в таких областях, как разумная макроэкономическая политика, четко определенные права собственности, эффективный финансовый и банковский сектор. Региональная интеграция может способствовать инвестициям, если она значительно повысит доверие

---

<sup>1</sup> **UNCTAD** (2013a).. Report of the Multi-year Expert Meeting on Investment, Innovation and Entrepreneurship for Productive Capacity-building and Sustainable Development on its first session. Retrieved on February 5, 2014, from [http://unctad.org/meetings/en/SessionalDocuments/ciimem4d2\\_en.pdf](http://unctad.org/meetings/en/SessionalDocuments/ciimem4d2_en.pdf)

<sup>2</sup> **Schirm, S.** Globalization and the new regionalism. Global markets, domestic politics and regional cooperation. Oxford: Polity. 2002. **Mattli, W.** The logic of regional integration. Europe and beyond. Cambridge: Cambridge Univ. Press. 1999.

к политике и размерам рынка, но она должна сопровождаться хорошей политикой в целом»<sup>1</sup>.

ПИИ реагируют на различные конкретные детерминанты. Одним из распространенных мотивов для ПИИ является увеличение местных продаж и доступа к рынкам. Доступ к крупным или богатым рынкам может стать важным фактором привлечения ПИИ в страну.

Второй важный набор мотивов ПИИ заключается в использовании местных факторов производства (таких как местный труд) и создании экспортных платформ.

Эти мотивы могут быть усилены, если развивающаяся страна образует региональное инвестиционное соглашение с развитой страной, поскольку фирма, расположенная в развивающейся стране, может затем воспользоваться преимуществами дешевых ресурсов, получая свободный доступ к крупной развитой экономике.

Третий фактор может заключаться в том, что устранение внутренних барьеров в региональном инвестиционном сотрудничестве позволяет фирмам более эффективно распределять операции между странами-членами.

В региональных интеграционных соглашениях инвестиционные политики были почти всегда активистами и интервенционистами, кооперируя региональную интеграцию в региональное импортозамещение. Такая политика почти полностью не удалась и была заменена гораздо более благоприятным для рынка подходом, в котором больше внимания уделяется политике, гарантирующей справедливое обращение к инвестициям<sup>2</sup>. РИС стимулируют приток инвестиций из стран, не являющихся членами, но оказывают неоднозначное воздействие на потоки внутри блоков.

Мы полагаем, что реформы общей политики, такие как разумная макроэкономическая политика, четко определенные права собственности и эффективные финансовые и банковские сектора, скорее всего, будут гораздо важнее влиять на инвестиции и ПИИ, чем просто присоединение к РИС. Реформы, такие как макроэкономическая стабилизация, либерализация рынка и приватизация, должны повышать отдачу от всех факторов и способствовать инвестициям. Региональная интеграция будет способствовать инвестициям, если она значительно повысит доверие к политике и

---

<sup>1</sup> **Schiff, M.** Regional integration and development / Maurice Schiff and L. Alan Winters. Washington, The World Bank. 2003, p.

<sup>2</sup> **Schiff, M.** Regional integration and development / Maurice Schiff and L. Alan Winters.. The World Bank. Washington, 2003, p. 101.(321 p.)

увеличит размер рынка, но только в том случае, если будет сопровождаться хорошей политикой в целом<sup>1</sup>.

До середины XX столетия, в теориях экономического развития придавалось большое значение улучшению стимулирования инвестиций и роли государственного сектора. Преобладающие теории импортозамещения призвали правительства тщательно спланировать промышленную структуру и обеспечить, чтобы неблагоприятные последствия конкуренции не мешали бы поиску эффекта от масштаба. Региональная экономическая интеграция, естественно, рассматривалась как потенциальный инструмент для этих усилий. Признавая, что отдельные национальные рынки слишком малы для поддержки крупномасштабных отраслей, директивные органы планируют удовлетворить региональный спрос посредством одного или нескольких крупных региональных проектов, а не многочисленных небольших национальных. Идея заключалась в том, что если страны желали бы определенного уровня промышленной активности, но были бы безразличны к его точной структуре, РИС снизили бы затраты на его достижение. РИС позволит каждому члену специализироваться в конкретных отраслях промышленности и использовать экономию за счет масштаба, связанного с поставкой всего РИС, а не поддерживать более широкий набор небольших отраслей промышленности для обслуживания только своих национальных рынков<sup>2</sup>.

Двусторонние инвестиционные договоры (ДИД) стали важной частью регулирования мировых инвестиционных потоков. В настоящее время более 2 тыс. ДИД связывают страны на всех континентах и на всех уровнях развития. Они важны сами по себе и как модели и прекурсоры для региональных инвестиционных договоров, большинство из которых являются частью более широких РИС. Денежные индексы, как правило, представляют собой короткие соглашения, которые обеспечивают «неглубокую» или «негативную» интеграцию для инвестиций, то есть они стремятся устранить барьеры и смягчить неопределенность, влияющую на инвестиции, а не предусматривать позитивные действия по ее поощрению.

---

<sup>1</sup> **Schiff, M.** Regional integration and development / Maurice Schiff and L. Alan Winters.. The World Bank. Washington, 2003, p.103.

<sup>2</sup> **Cooper, C. A., and B. F. Massell.** "Toward a General Theory of Customs Unions for Developing Countries." *Journal of Political Economy*, 1965, 73: 256–83. **Johnson, H. G.** 1965. "An Economic Theory of Protectionism: Tariff Bargaining and the Formation of Customs Unions." *Journal of Political Economy* 73:256–83.

В частности, к 2017 году Армения заключила инвестиционные договоры с 33 государствами, как с развитыми (Австрия, Великобритания, Германия, Нидерланды, США и т.д.), так и с развивающимися (Аргентина, Индия, Китай и т.д.)<sup>1</sup>, что способствовало увеличению потоков прямых иностранных инвестиций в страну (таблица 2).

Теоретические последствия либерализации торговли для потоков ПИИ остаются неясными и зависят от того, считаются ли торговля и инвестиции дополнениями или заменителями. В первом случае создание региональных торговых соглашений (РТС), как ожидается, приведет к увеличению вертикальных внутрирегиональных потоков ПИИ из-за растущей сложности производственных сетей ТНК (и их затраты на создание), а также к минимальному уровню торговых связей, необходимых для вывоза ПИИ<sup>2</sup>.

Таблица 2

**Динамика количества заключенных Арменией инвестиционных договоров и входящих накопленных ПИИ<sup>3</sup>**

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Заключенные двусторонние инвестиционные договоры (кумулятивное)	23	27	27	27	29	29	29	31	32	32	32
Входящие накопленные ПИИ, млн. долларов США	1 705	2 448	3 521	3 628	4 206	5 046	5 063	5 448	5 831	4 269	4 633,0
Темп роста входящих накопленных ПИИ, %	100	143.6	143.8	103.0	115.9	120.0	100.3	108.0	115.2	73.2	108.5
Приток ПИИ, млн. Долларов США	466,5	667,7	944	760	529,3	653,2	496,6	346,1	404,3	178,4	338

Другим важным фактором является дифференциация затрат<sup>4</sup>. Горизонтальные притоки ПИИ из стран, не входящих в РТС, могут также увеличиваться из-за создания так называемых экспортных платформ, ранее

<sup>1</sup> Источник: <http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm>

<sup>2</sup> **Medvedev, D.** Beyond trade: the impact of preferential trade agreements on FDI inflows. World Development, UNCTAD, 2012; 40(1), 49-61.

<sup>3</sup> Источник: World Investment Report, New York and Geneva, UN, 2007-2017. [www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm](http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm)

<sup>4</sup> **Kubny, J., Mölders, F., & Nunnenkamp, P.** Regional integration and FDI in emerging markets. In U Volz (Ed.), Regional Integration, Economic Development and Global Governance. Cheltenham & Northampton: Edward Elgar Publishing. 2011, pp. 172-206.



обслуживаемых торговлей, такие потоки анализируются с использованием экспортно-платформенных моделей ПИИ<sup>1</sup>. С другой стороны, в этом процессе можно консолидировать существующие расширенные сбытовые и/или производственные сети предварительной интеграции, тем самым снижая общий объем внешних ПИИ в блоке.

Проведение анализа последствий создания таможенных союзов для потоков ПИИ требует расширения представленной выше структуры, особенно при рассмотрении потоков ПИИ между членами и нечленами. В случае введенных или потенциально более высоких уровней внешней защиты, горизонтальные притоки ПИИ из внешних стран должны увеличиваться в результате увеличения стимулов для ТНК и концентрации их производства в странах-членах с наименьшими затратами<sup>2</sup>; масштабы таких потоков капитала зависят от различий между тарифами и другими торговыми барьерами, применимыми к странам-членам и странам, не являющимся членами<sup>3</sup>. Однако все большее число таможенных союзов объединяет либерализацию внутрирегиональной и внешней торговли, что может иметь обратный эффект, увеличивать вертикальные ПИИ и снижать привлекательность ПИИ для внешних ТНК.

Создание экономического блока приводит к увеличению размера рынка, что, в свою очередь, влияет на величину потоков ПИИ. Этот эффект является самым сильным в крупных экономических блоках и в странах, принадлежащих к нескольким соглашениям.

Установлено позитивное влияние увеличения размера рынка на потоки ПИИ<sup>4</sup>. Основополагающим механизмом является возможность использования эффекта масштаба.

Правила либерализации и защиты инвестиций в рамках экономических блоков непосредственно связаны с решениями о привлечении ПИИ,

---

<sup>1</sup> **Veldete, D. W., & Bezemer, D.** Regional integration and foreign direct investment in developing countries. *Transnational Corporations*, 2006, 15(2), 41-70.

<sup>2</sup> **Chen, M.** Regional economic integration and geographic concentration of multinational firms. *European Economic Review*, 2009. 53, 355-375.

<sup>3</sup> **Athukorala, P.** Intra-regional FDI and economic integration in South Asia: trends, patterns and prospects. Retrieved on February 3, 2014 4, from [http://unctad.org/en/Publications\\_Library/ecidc2013misc1\\_bp7.pdf](http://unctad.org/en/Publications_Library/ecidc2013misc1_bp7.pdf)

<sup>4</sup> **Medvedev, D.** Beyond trade: the impact of preferential trade agreements on FDI inflows. *World Development*, 40(1), 49-61.

производимых ТНК из-за сокращенных транзакционных издержек<sup>1</sup>. Такие правила включают отмену таких, например, инвестиционных ограничений, каким является закрытие различных секторов для иностранных инвесторов, урегулирование споров и согласование политики в области ПИИ, которые снижают политический риск и улучшают инвестиционный климат, что делает его еще более предсказуемым.

Открытие различных секторов для иностранных инвесторов в некоторых случаях имеет важное значение для принятия решения ТНК об инвестировании в той, или иной стране. Так, профессор Калифорнийского университета П. Линдерт, рассматривая ПИИ, обращает внимание на разные позиции развитых и развивающихся стран. Так, Канада, Япония и западноевропейские страны, опасаясь подрыва контроля над национальными экономическими ресурсами, пытаются ограничить иностранные инвестиции на своей территории. Позиции развивающихся стран двойственны: они обеспокоены тем, что иностранцы будут вкладывать средства в их экономику, и тем, что инвестиции сократятся; с одной стороны, существует опасения эксплуатации, а с другой – опасения, что ограничится доступ к иностранному капиталу и технологиям<sup>2</sup>. Между тем, профессор замечает, что прямое инвестирование не только простое движение капитала, потому что во многих случаях начинается вообще без всякого потока капитала за рубеж.

Если изменения в нормативных актах значительны, внутрирегиональные потоки ПИИ должны увеличиться, а приток ПИИ извне региона, как из новых, так и с установленных инвесторов, также должен возрасти. Кроме того, члены блока могут принять решение о принятии мер, направленных на поощрение ПИИ, например, льготные налоговые процедуры<sup>3</sup>.

Следующая категория влияния потенциальной региональной интеграции на ПИИ связана с динамическими последствиями этого процесса, главным образом для более высокой степени конкуренции, более высокой эффективности распределения ресурсов и ускоренного экономического роста. В то время как взаимосвязь между потоками ПИИ и экономическим ростом кажется положительной, другие связи более сложны, например,

---

<sup>1</sup> **Kubny, J., Mölders, F., & Nunnenkamp, P.** Regional integration and FDI in emerging markets. In U Volz (Ed.), *Regional Integration, Economic Development and Global Governance* Cheltenham & Northampton: Edward Elgar Publishing. 2011, pp. 172-206.. .

<sup>2</sup> Линдерт П. Экономика миро – хозяйственных связей. М.: «Прогресс», 1992, с. 461.(515 с.)

<sup>3</sup> **Veldete, D., & Bezemer, D.** Regional integration and foreign direct investment in developing countries. *Transnational Corporations*, 2006, 15(2), 41-70.

более сильные отечественные компании могут снизить привлекательность данного рынка среди иностранных инвесторов, но более эффективные фирмы, становящиеся региональными лидерами, должны осуществлять вертикальные ПИИ<sup>1</sup> внутри блока, а также горизонтальные и вертикальные ПИИ во внешних странах.

Влияние денежной интеграции в рамках экономического блока на потоки ПИИ связано в целом с устранением изменчивости обменного курса внутри региона<sup>2</sup>. Сокращая транзакционные издержки, денежная интеграция должна стимулировать потоки ПИИ. Тем не менее, Ди Мауро утверждал, что чистое влияние на ПИИ неясно - до создания денежного союза, МНК предпочитают открывать филиалы в странах-членах (через ПИИ), чтобы избежать риска обменного курса, тогда как его создание делает экспорт, а не ПИИ, более привлекательным вариантом (если торговля и ПИИ являются заменителями). Другим механизмом влияния денежной интеграции на ПИИ является продолжающаяся финансовая интеграция стран союза. Потенциальные положительные влияния включают сокращение макроэкономической нестабильности, как скоординированный ответ на общий шок<sup>3</sup>, тогда как более высокая скорость передачи экономических потрясений может уменьшить потоки ПИИ<sup>4</sup>.

Одной из основных аналитических концепций, касающихся влияния экономической интеграции на потоки ПИИ, является различие между созданием и отклонением инвестиций<sup>5</sup>. Создание инвестиций - это увеличение объема притока ПИИ из стран, не являющихся членами, из-за эффекта отвлечения инвестиций, а утечка инвестиций - это потоки ПИИ между странами-членами в ответ на эффекты создания торговли, которые требуют реорганизации производства.

Вышеупомянутые эффекты можно определять также следующим образом: создание инвестиций понимается как иностранные инвестиции,

---

<sup>1</sup> **Veldete, D., & Bezemer, D.** Regional integration and foreign direct investment in developing countries. *Transnational Corporations*, 2006, 15(2), 41-70.

<sup>2</sup> **Petroulas, P.** (2007). The effect of the euro on foreign direct investment. *European Economic Review*, 51(6), 1468-1491.

<sup>3</sup> **Sousa de, J., & Lochard, J.** Does the single currency affect FDI? A gravity-like approach. Retrieved February 5, 2014, from <http://www.fm-kp.si/Files/File/Konference/EIIE%202006/deSousa.pdf>

<sup>4</sup> **Folfas, D.** Does Monetary Integration Affect FDI between EU Member States. Retrieved on February 1, 2014, from <http://www.etsg.org/ETSG2012/Programme/Papers/301.pdf>

<sup>5</sup> **Krein, M. and Plummer, M.** Effects of regional integration on FDI: An empirical approach. *Journal of Asian Economics*, 2008., 19(5-6), 447-454.

заменяющие внутренние, предпринятые для того, чтобы извлечь выгоду из более низких производственных издержек и инвестиций как снижение притока ПИИ из стран-членов в страны, не являющиеся членами, и переправление их на места внутри блока из-за тарифной дискриминации, что, несомненно, имеет отрицательное воздействие на глобальное благосостояние из-за сокращения инвестиций в более эффективные страны.

ПИИ внутри интеграционного образования позволяют достичь более выгодных преимуществ, связанных с динамическими эффектами интеграции, такими как реорганизация производства или усиленная конкуренция.

Экономическая интеграция также может оказать существенное влияние на преимущества собственности из-за ее динамических эффектов. Для МНК стран-членов интеграция обеспечивает доступ к расширенным рынкам и возможность использования экономики масштаба, что позволяет компаниям увеличивать расходы на исследования и разработки и получать новые или повышать текущие преимущества собственности. Для МНК из-за пределов блока необходимо иметь некоторые первоначальные преимущества собственности, чтобы конкурировать с внутренними конкурентами и накапливать такие преимущества.

Последствия экономической интеграции также могут быть включены в макроэкономические теории ПИИ. Динамические эффекты интеграции влияют на экономическое развитие.

Еще одним важным аспектом являются такие силы экономической интеграции, о которых было сказано ранее; силы дисперсии и агломерации (пространственное распределение ПИИ)<sup>1</sup>. Эффекты дисперсии и агломерации могут привести к повышению эффективности в региональном масштабе из-за эффекта масштаба, что будет способствовать дальнейшим перемещениям. Они могут повлиять на конвергенцию экономик внутри блока и, следовательно, также потоков ПИИ. Страны вне блока могут принять решение о вступлении в него, став частью кластеров, чтобы повысить их привлекательность среди иностранных инвесторов.

Увеличение потоков ПИИ между странами-членами может стимулировать развитие и активизацию торговых потоков (если ПИИ и торговля являются взаимодополняющими), а в долгосрочной перспективе – к экономическому росту и занятости. ПИИ также имеют решающее значение для

---

<sup>1</sup> **Nishikimi, K.**, Economic Integration and Development Strategies: A Theoretical Perspective in Sotharith, C. (ed.), Development Strategy for CLMV in the Age of Economic Integration, ERIA Research Project Report 2007-4, Chiba: IDE-JETRO, pp.47-81.

стран с недостаточным капиталом и низким технологическим уровнем, поскольку они могут направляться на преодоление этих барьеров роста.

Таким образом, можно прийти к общему выводу о том, что воздействие экономической интеграции на приток ПИИ будет положительным, и наоборот, приток ПИИ будет способствовать дальнейшему развитию интеграционных образований. Основными эффектами воздействия интеграции на ПИИ и, наоборот, могут быть следующие:

- инвестиции являются ключевым компонентом экономического развития и стали одной из основных целей стран, вовлеченных в процесс региональной экономической интеграции;
- интеграционные проекты могут улучшить свое положение в глобальной конкуренции по отношению к другим регионам и тем самым привлечь инвестиции;
- региональная интеграция может способствовать инвестициям, если она значительно повысит доверие к политике,
- ПИИ реагируют на различные конкретные детерминанты (увеличение местных продаж и доступа к рынкам; использовании местных факторов производства и создании экспортных платформ и т.д.), которые могут быть усилены, если развивающаяся страна образует региональное инвестиционное соглашение с развитой страной;
- политика кооперирования региональной интеграции в региональное импортозамещение не может иметь долгосрочного успеха; следует больше внимания уделять политике, гарантирующей справедливое обращение к инвестициям;
- интеграционные блоки стимулируют приток инвестиций из стран, не являющихся членами, но оказывают неоднозначное воздействие на потоки внутри блоков, под воздействием двух сил: дисперсионных и агломерационных;
- реформы общей политики, такие как разумная макроэкономическая политика, четко определенные права собственности и эффективные финансовые и банковские сектора, скорее всего, будут гораздо важнее влиять на инвестиции и ПИИ, чем просто присоединение к интеграционным блокам: макроэкономическая стабилизация, либерализация рынка и приватизация, должны повышать отдачу от всех факторов и способствовать инвестициям;
- открытие различных секторов для иностранных инвесторов в некоторых случаях имеет важное значение для принятия решения ТНК об инвестировании в той, или иной стране;

- Երկու ուժեր էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա:
- Երկու ուժեր էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա:
- Երկու ուժեր էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա:
- Երկու ուժեր էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա:

Իսկապես, եթե համարձակեցնենք այս երկու ուժերը, ապա կարող ենք ասել, որ ինտեգրացիայի ընդունումը կախված է ինտեգրացիայի ընդունումից: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա: Երկու ուժերն էլ կարող են ազդել ինտեգրացիայի վրա:

## **ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ԳԱԳԻԿ ԻՇԽԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*  
*ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր*

### **ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԵՅԻ ԻԳՆԱՏՈՎ**

*Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հայցորդ*

**Համառոտագիր:** Հոդվածում քննարկվում են ինտեգրող կազմավորումներում ներգրավված երկրների ներդրումային գործակցության վրա տնտեսական ինտեգրման ազդեցության տարբեր կողմեր: Ինտեգրման գործընթացները տարբեր կերպ են ազդում ՕՈՒՆ-ների տարբեր տեսակների վրա: Ինտեգրացիոն կազմավորումները խթանում են ներդրումների ներհոսքը երկրներից, որոնք անդամ չեն, սակայն ոչ միանշանակ ազդեցություն են ունենում կազմավորումների ներսում՝ երկու ուժերի ազդեցությամբ՝ դիսպերսիոն և ազլումերացիոն: Թեպետ ռեգիոնալացման ջանքերը կարող են ազդել ինտեգրացիայի վրա, սակայն դրանք անհամապատասխան են ինտեգրացիայի ընդունմանը:

քերը կարող են հանգեցնել անդրսահմանային ներդրումների ավելացմանը, այդուհանդերձ, դեռևս առկա է ՕՈՒՆ-ների վրա տարածաշրջանային ինտեգրման ազդեցության խոր ըմբռնման անհրաժեշտությունը: Հեղինակները եզրահանգում են, որ ԵԱՏՄ-ի շրջանակներում տնտեսական ինտեգրման հաջողությունները մեծապես պայմանավորված կլինեն այն ուղղություններով փոխադարձ ուղղակի ներդրումների ինտենսիվությամբ, որոնք կապահովեն տնտեսական ինտեգրման դինամիկ էֆեկտներ: Հատկապես կարևոր է, ԵԱՏՄ անդամ-երկրների փոխադարձ ուղղակի ներդրումները նպաստեն Միության շրջանակներում արժեքի ստեղծման շղթաների ձևավորմանը՝ գլոբալ արժեքի ստեղծման շղթաներում այդ երկրների վերընթաց կապերից դեպի վարընթաց կապերն անցումն արագացնելու համար:

***Բանալի բառեր.** տնտեսական ինտեգրում, երկկողմ ներդրումային պայմանագրեր, տարածաշրջանային առևտրային համաձայնագրեր, ուղղակի օտարերկրյա ներդրումներ (ՕՈՒՆ), ՕՈՒՆ-ների որոշիչ գործոններ:*

## **ВЗАИМОЗАВИСИМСТЬ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ И ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ**

**ГАГИК ИШХАНОВИЧ ВАРДАНЯН**, *д.э.н., профессор*  
*Проректор по науке и внешним связям АГЭУ*

**СЕРГЕЙ АЛЕКСЕЕВИЧ ИГНАТОВ**  
*сосискатель кафедры международных экономических отношений*  
*Армянского государственного экономического университета*

**Аннотация:** В статье рассматриваются разные аспекты влияния экономической интеграции на инвестиционное взаимодействие стран, входящих в интеграционные образования. Интеграционные процессы по-разному влияют на разные типы ПИИ. Интеграционные блоки стимулируют приток инвестиций из стран, не являющихся членами, но оказывают неоднозначное воздействие на потоки внутри блоков, под воздействием двух сил: дисперсионных и агломерационных. Хотя усилия по регионализации могут привести к увеличению трансграничных инвестиций, все еще существует потребность в более глубоком понимании влияния региональной интеграции ПИИ. Согласно выводу автора, успех экономической интеграции в рамках ЕАЭС в большей мере будет обусловлен интенсивными взаимными инвестициями в тех направлениях, которые обеспечат динамические эффекты экономической интеграции. Особенно важно, чтобы взаимные ПИИ стран – членов ЕАЭС способствовали формированию цепочек создания стоимости в рамках Союза, для уско-

рения перехода этих стран от восходящих связей к нисходящим в глобальных цепочках создания стоимости.

**Ключевые слова:** *экономическая интеграция, двусторонние инвестиционные договоры, региональные торговые соглашения, прямые иностранные инвестиции (ПИИ), детерминанты ПИИ.*

## **INTERDEPENDENCE OF ECONOMIC INTEGRATION AND FOREIGN DIRECT INVESTMENTS**

**GAGIK ISHKHAN VARDANYAN**, *Doctor of Sciences, Professor*  
*Vice-Rector for Science and International Relations*  
*Armenian State University of Economics*

**SERGEY ALEKSEY IGNATOV**  
*Ph.D. Student, Chair of International Economic Relations*  
*Armenian State University of Economics*

**Abstract:** The article examines different aspects of the impact of economic integration on the investment interactions among the member-states that are part of the integrating structure. Integration processes differently affect various types of FDI. Integration schemes stimulate the inflow of investments from non-member states; however differently affect the flows reported among the schemes influenced by two forces: dispersion and agglomeration. Although regionalization efforts can lead to an increase in trans-border investments, there is still a need for a more profound understanding of the impact of regional integration on FDI. The authors come to the conclusion that the success of economic integration within the framework of the EAEU will be determined to a greater extent by intensive flows of mutual investments in those directions that will ensure the dynamic effects of economic integration. It is especially important that mutual FDI among the member states of the EAEU contribute to building value chains within the Union, to accelerate the transition of these countries from forward linkages in the GVC's to backward linkages in the GVC's.

**Keywords:** *Economic integration, bilateral investment treaties, regional trade agreements, foreign direct investment (FDI), determinants of FDI.*



# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐ

**ԱՐԱՄ ՀԱՄԱՅԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**, *տեխն. գիտ. դոկտ., պրոֆ.*

*Տնտեսության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ*

**ՍՏՅՈՂԱ ՍԱՍՎԵԼԻ ԾԱՌՈՒԿՅԱՆ**

*ԵՊՀ հայցորդ*

## ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ՈՉ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**Ներածություն:** Արդի պայմաններում երկրների մեծ մասում, մասնավորապես ՀՀ-ում, էլեկտրաէներգիայի ծախսը գրանցում են էլեկտրական ցանցերի օպերատորները, համաձայն էլեկտրական էներգիայի հաշվիչների ցուցմունքի: Սակայն, ինչպես ցույց է տվել էլեկտրաէներգիայի մատակարարման և սպառման պատմական փորձը (դա բնորոշ է ինչպես ՀՀ-ի, այնպես էլ զարգացող երկրների համար), անխուսափելի են էլեկտրաէներգիայի ոչ տեխնիկական կորուստները<sup>1</sup>, որոնք արտահայտվում են հետևյալ կերպ.

- ա) էլեկտրաէներգիա բաշխողի հսկիչի կողմից էլեկտրահաշվիչի ցուցմունքի սխալ գրանցում,
- բ) սպառողի անվճարունակության կամ վճարման ուշացում,
- գ) մի սպառողի էլեկտրաէներգիայի գողությունը մյուս սպառողներից:

Էլեկտրաէներգիայի ոչ տեխնիկական կորուստների դեմ պայքարը պայմանավորել է առաջարկել արդյունավետ միջոցներ, որոնց թվում այժմ կարևորվում է էլեկտրաէներգիայի բաշխման խելացի ցանցը (Smart Grid)<sup>23</sup> (ԷԲԽՑ): ԷԲԽՑ-ն օգտագործում է խելացի էլեկտրաէներգիայի հաշվիչներ, որոնք հիմնված են միկրոպրոցեսորային սարքերի վրա, հնարավորություն են տալիս ճշգրիտ գրանցելու ծախսված էլեկտրաէներգիան, խոչընդոտում են էլեկտրաէներգիայի ծախսը գրանցող օպերատորների խարդախությունները և «բացահայտել էլեկտրաէներգիա գողացող խար-

<sup>1</sup> McLaughlin, D. Podkuiko, and Patrick McDaniel. Energy theft in the advanced metering infrastructure. In Proceedings of CRITIS 09, 4th International Conference on Critical Information Infrastructures Security, 2009.

<sup>2</sup> Guidelines for smart grid cyber security: Vol 2., privacy and the smart grid. NIST IR 7628, Aug. 2010.

<sup>3</sup> Michael LeMay and Carl A Gunter. Cumulative attestation kernels for embedded systems. *Smart Grid, IEEE Transactions on*, 3(2):744–760, 2012.

դախ սպառողներին»: Ներկայացված հոդվածը, շարունակելով աշխատությունում ուսումնասիրված հիմնախնդրի հետազոտությունը և վերևում նշված աշխատությունների ուսումնասիրությունները, առաջարկում է տեսական մոդել, որը հնարավորություն է տալիս գնահատելու խարդախ սպառողի ռիսկի չափը, կապված նրա սպասվող օգտակարության, գողացած էլեկտրաէներգիայի քանակի և բաշխման խելացի ցանցի էլեկտրաէներգիա բաշխողի ծախսերի հետ, որոնք ուղղված են ցանցի ունակությունները և հնարավորությունները բացահայտելուն:

## **Մեթոդաբանությունը, հիմնական հասկացությունները և նշանակումները**

### **Հիմնական հասկացությունները և նշանակումները**

Նշանակենք սպառողների բազմությունը, որոնք սպասարկվում են էլեկտրաէներգիայի բաշխման ցանցից  $N=\{1,2,\dots,n\}$ : Ենթադրենք, որ յուրաքանչյուր սպառող բնութագրվում է կամ որպես խարդախ (այսինքն՝ էլեկտրաէներգիա գողացող), նշանակենք նրան  $f$ -տեսակի սպառող կամ որպես ազնիվ, նշանակենք նրան  $g$ -տեսակի սպառող: Դիցուք,  $N_f \subset N$   $f$ -տեսակի սպառողների բազմությունն է՝  $N_g \subset N$   $g$ -տեսակի սպառողների մասն է ընդհանուրի մեջ, իսկ  $N_{out}$ ՝ էլեկտրաէներգիա գողացող արտաքին սպառողների բազմությունն է:

Ենթադրենք, որ  $W'_i$   $i$ -րդ տեսակի սպառողի հարստությունն է,  $i=1,2,\dots,n$ ;

$q_{g_i}^B$   $i$ -րդ սպառողի էլեկտրաէներգիայի սպառումն է ըստ էլեկտրաէներգիայի հաշվիչի ցուցմունքի,  $i=1,2,\dots,n$ ;

$q_{g_k}^S$   $k$ -րդ  $f$ -տեսակի խարդախ սպառողի գողացած էլեկտրաէներգիայի սպառումն է,  $k \in N_f \cup N_{out}$  սպառողների բազմությանը;

$p$  1 կիլովատտ էլեկտրաէներգիայի սակագինն է;

$E(x)$  -ը  $x$  պատահական մեծության մաթեմատիկական սպասումն է;

$$Q_i = \sum_{k \neq i, k \in N_f \cup N_{out}} q_{g_k}^S \text{ -ը } i \text{ - րդ ազնիվ սպառողի հաշվին հավելագրված}$$

$N_f \cup N_{out}$  խարդախ սպառողների բազմությունների գողացած էլեկտրաէներգիայի քանակն է,  $i \in N_g$  ;

$U(W_i)$   $i$ -րդ սպառողի օգտակարության ֆունկցիան է,  $i \in N$  ;

A-ն խելացի ցանցին միանալու սակագինն է:

$F(Q_i^S)$  i-րդ խարդախ սպառողին գողացած էլեկտրաէներգիայի համար ներկայացված տուգանքն է,  $i \in N_f \cup N_{out}$ :

### Ազնիվ սպառողի ռիսկի գնահատումը

Դիտարկենք հետևյալ երկու իրավիճակները:

1. Ենթադրենք, որ i-րդ ազնիվ սպառողի վերաբերյալ էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրում չի կատարվում:

Այս դեպքում նրա էլեկտրաէներգիայի ծախսը կկազմի  $q_{g_i}^B p + A$ , իսկ օգտակարությունը հավասար է՝  $U(W_i - q_{g_i}^B p + A)$ :

2. Ենթադրենք, որ i-րդ ազնիվ սպառողի վերաբերյալ կատարվում է էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրում՝  $Q_i^S = \sum_{k \neq i, k \in N_f \cup N_{out}} q_{g_k}^S$ , իսկ  $N_f \cup N_{out}$  խարդախ սպառողների գողացած էլեկտրաէներգիայի համար ներկայացված տուգանքն է՝  $F(Q_i^S)$ ,  $i \in N_g$ :

Այս դեպքում ազնիվ սպառողի էլեկտրաէներգիայի ծախսը կկազմի՝  $W_i - q_{g_i}^B p - A - Q_i^S p + F(Q_i^S)$ , իսկ օգտակարության ֆունկցիան հավասար է՝  $U(W_i - q_{g_i}^B p - A - Q_i^S p + F(Q_i^S))$ :

Ենթադրենք, որ  $q_{g_k}^S$  պատահական մեծություն է, և մաթեմատիկական սպասումը հավասար է՝  $E(q_{g_k}^S) = 0$ ,  $k \in N_f \cup N_{out}$ :

Դիտարկենք i-րդ ազնիվ սպառողի օգտակարության ֆունկցիան և ներկայացնենք դրա Թեյլորի բանաձևը.

$$U(W_i - q_{g_i}^B p + A) = U(W_i) - U'(W_i)(q_{g_i}^B p + A) + \text{բարձր կարգի անդամներ.} \quad (1)$$

$$U(W_i - q_{g_i}^B p - A - Q_i^S p + F(Q_i^S)) = U(W_i) - U'(W_i)(q_{g_i}^B p + A + Q_i^S p + F(Q_i^S)) + 0.5U''(W_i)((q_{g_i}^B p + A) + Q_i^S p - F(Q_i^S))^2 + R, \quad (2)$$

որտեղ  $R$  -ը բարձր կարգի անդամներն են:

$$Zավասարում (2)-ի մաթեմատիկական սպասումը հավասար է՝  $E(U(W_i - q_{g_i}^B p - A - Q_i^S p + F(Q_i^S))) = U(W_i) - U'(W_i)(q_{g_i}^B p + A + Q_i^S p + F(Q_i^S)) + E(0.5U''(W_i)((q_{g_i}^B p + A) + Q_i^S p - F(Q_i^S))^2) + R, \quad (3)$$$

որտեղ  $R$  -ը բարձր կարգի անդամներն են:

Նշանակենք  $F(Q_i^S) = Q_i^S p + F(Q_i^S)$  խարդախ սպառողների տու-  
գանքը, որ նրանք պետք է վճարեն էլեկտրաէներգիա բաշխողին գողացած  
էլեկտրաէներգիայի դիմաց, էլեկտրաէներգիայի գողության փաստը  
հայտնաբերելու արդյունքում և  $i$ -րդ ազնիվ սպառողի վերաբերյալ կա-  
տարված էլեկտրաէներգիայի  $Q_i^S = \sum_{k \neq i, k \in N_f \cup N_{out}} q_{g_k}^S$  ծախսի հավելագրումից հետո:

Այսպիսով, (3) հավասարումը կստանա հետևյալ տեսքը.

$$E(U(W_i - q_{g_i}^B p - A - Q_i^S p + F(Q_i^S))) = U(W_i) - U'(W_i)(q_{g_i}^B p + A - \varepsilon(l)) + 0.5U''(W_i)((q_{g_i}^B p + A)^2 - 2q_{g_i}^S p + A)\varepsilon(l) + \varepsilon^2(l) + R, \quad (4)$$

Հավասարեցնելով (1) և (4) հավասարումները՝ կստանանք.

$$U'(W_i)\varepsilon(l) + 0.5U''(W_i)((q_{g_i}^B p + A) - \varepsilon(l))^2 = 0. \quad (5)$$

Նշանակենք  $r_i = -\frac{U'(W_i)}{U''(W_i)}$ , որը կանվանենք խարդախ սպառողների

կողմից էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրմանը ենթարկվելու  $i$ -րդ  
ազնիվ սպառողի ռիսկի չափը ըստ Պրատի: Այսպիսով, (5) հավասարու-  
մից ստանում ենք.

$$2r\varepsilon(l) = ((q_{g_i}^B p + A) - \varepsilon(l))^2, \quad (6)$$

Այսինքն՝

$$r = 0.5((q_{g_i}^B p + A) - \varepsilon(l))^2 / \varepsilon(l) : \quad (7)$$

Կամ

$$r = 0.5\left(\frac{q_{g_i}^B p + A}{\varepsilon(l)} - 1\right)^2$$

Հավասարում (7)-ից հետևում է, որ  $i$ -րդ ազնիվ սպառողի ռիսկի  
չափը հակառակ համեմատական է խարդախ սպառողների տուգանքի  
մեծությանը, ու հետևաբար՝ այն հակառակ համեմատական է խարդախ  
սպառողների կողմից էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրմանը են-  
թարկվելուն:

### **Խարդախ սպառողի ռիսկի գնահատումը**

Դիտարկենք հետևյալ իրավիճակները: Խարդախ սպառողը գողա-  
նում է էլեկտրաէներգիան, սակայն վճարում է ըստ էլեկտրաէներգիայի

հաշվիչի ցուցմունքի, որը հավասար է  $q_{f_i}^B p + A$ , իսկ գողացած էլեկտրա-  
 Էներգիայի գինը հավասար է  $q_{f_i}^S p$ ՝ ու հետևաբար՝ գողացած էլեկտրա-  
 Էներգիայի ծախսը նա չի վճարում: Հնարավոր են հետևյալ երկու իրավի-  
 ճակները:

1. Խարդախ սպառողի էլեկտրաէներգիայի գողությունը չի հայտնա-  
 բերվում, ու հետևաբար նա վճարում է  $q_{f_i}^B p + A$  էլեկտրաէներգիայի  
 ծախսը:
2. Շնորհիվ այն բանի, որ էլեկտրաէներգիայի բաշխման ցանցը խելացի  
 է, խարդախ սպառողի էլեկտրաէներգիայի գողության փաստը հայտ-  
 նաբերվում է, և նա տուգանվում է:

Նշանակենք խարդախ սպառողի օգտակարության ֆունկցիան՝  $U(W_i)$ ,  
 $i \in N_f \cup N_{out}$ : Առաջին դեպքում, երբ նրա գողության փաստը չի հայտնա-  
 բերվում, նրա օգտակարությունը հավասար է՝  $U(W_i - q_{f_i}^B p + A) = U(W_{i1})$ :

Նշանակենք  $\rho_D(l, q_f^S)$  հավանականությունը այն բանի, որ խարդախ  
 սպառողի գողության փաստը չի հայտնաբերվում, որտեղ  $l$ -ը էլեկտրա-  
 Էներգիայի բաշխման խելացի ցանցի ծախսերն են ցանցի կատարելա-  
 գործման համար,  $q_f^S$ -ը գողացած էլեկտրաէներգիայի քանակն է: Նշանա-  
 կենք

$$F(l, q_f^S) = q_f^S m + \varepsilon(l), \tag{8}$$

խարդախ սպառողի տուգանքը, որտեղ  $m \succ p$ -ից:

Այսպիսով, խարդախ սպառողի սպասվող օգտակարությունը հավա-  
 սար է

$$E(U) = U(W_i - q_{f_i}^B p + A) \rho(q_f^S, l) + \tag{9}$$

$$U(W_i - (q_{g_i}^B p + A) - q_f^S p - F(l, q_f^S) (1 - \rho(l, q_f^S)))$$

Նշանակենք

$$W_{i1} = W_i - (q_f^B p + A) \tag{10}$$

$$W_{2i} = W_i - (q_f^B p + A) - q_f^S p - F(l, q_f^S) \tag{11}$$

Որոշենք (9) հավասարման առաջին կարգի պայմանները ըստ  $q_f^B$  և  
 $q_f^S$ -ի:

Ածանցելով (9) հավասարումը ըստ  $q_f^S$  և հավասարեցնելով ածանցյալը 0 – ի, կստանանք.

$$\begin{aligned} & (U(W_{i1}) - U(W_{i2})) \frac{\partial \rho(q_f^S, l)}{\partial q_f^S} - \\ & U'(W_{i2}) \left( p + \frac{\partial F(l, q_f^S)}{\partial q_f^S} \right) (1 - \rho(l, q_f^S)) = 0 \end{aligned} \quad (12)$$

Հավասարում (12)-ի պարզեցումը տալիս է.

$$\begin{aligned} & (U(W_{i1}) - U(W_{i2})) \frac{\partial \rho(q_f^S, l)}{\partial q_f^S} - \\ & U'(W_{i2}) p + U'(W_{i2}) p \rho(q_f^S, l) - \\ & U'(W_{i2}) \frac{\partial F(l, q_f^S)}{\partial q_f^S} + U'(W_{i2}) \rho(l, q_f^S) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} = 0 \end{aligned} \quad (13)$$

Կիրառելով Թեյլորի բանաձևը՝ (13)- ից կստանանք.

$$\begin{aligned} & [U'(W_i)(q_f^S p + F(q_f^S, l)) + 0.5U''(W_i)p^2(2(q_f^B p + A)(q_f^S p + F(q_f^S, l)) + \\ & (q_f^S p + F(q_f^S, l))^2)] \frac{\partial \rho(q_f^S, l)}{\partial q_f^S} - U'(W_i)p + U''(W_i)p(q_f^S p + A + F(q_f^S, l)) + \\ & U'(W_i)p\rho(q_f^S, l) - U''(W_i)(q_f^S p + A + F(q_f^S, l))p\rho(q_f^S, l) - \\ & U'(W_i) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} + U''(W_i)(q_f^S p + A + F(q_f^S, l)) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} + \\ & U'(W_i) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} - U''(W_i)(q_f^S p + A + F(q_f^S, l))\rho(q_f^S, l)p = 0 \end{aligned} \quad (14)$$

Նշանակենք  $r = -\frac{U'(W_i)}{U''(W_i)}$ , և անվանենք այն խարդախ սպառողի

ոիսկի չափը ըստ Պրատի: Նշանակենք

$$\begin{aligned}
R_1 = & [0.5p^2(2(q_f^B p + F(q_f^S, l))(q_f^S p + F(q_f^S, l)) + \\
& (q_f^S p + F(q_f^S, l))^2 \frac{\partial \rho(q_f^S)}{\partial q_f^S} - p(q_f p + A + F(q_f^S)) + \\
& (q_f p + A + F(q_f^S))p\rho(q_f^S, l) - (q_f p + A + F(q_f^S, l)) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} + \\
& (q_f p + A + F(q_f^S, l)) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} \rho(q_f^S, l)], \quad (15)
\end{aligned}$$

$$\begin{aligned}
R_2 = & (q_f^S p + F(q_f^S, l))p - p(1 - \rho(q_f^S, l)) - \\
& (1 - \rho(q_f^S, l)) \frac{\partial F(q_f^S, l)}{\partial q_f^S} \quad (16)
\end{aligned}$$

Բաժանելով (14) հավասարման բոլոր անդամները  $U''(W_i)$  կստանանք.

$$r = \frac{R_1}{R_2} \quad (17)$$

Բաժանելով (17) հավասարման համարիչը և հայտարարը

$(q_f^S p + F(q_f^S, l))^2$ -ով կստանանք.

$$r = K(q_f^S p + F(q_f^S, l))^2 \quad (18)$$

Հավասարում (18)-ից հետևում է, որ խարդախ սպառողի ռիսկի չափը, ըստ Պրատի, ուղիղ համեմատական է նրա կողմից գողացված էլեկտրաէներգիային և գողության համար ներկայացված տուգանքին: Միաժամանակ այս հավասարումը հնարավորություն է տալիս գնահատելու խարդախ սպառողի ռիսկի չափը ըստ Պրատի:

## ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՈՉ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**ԱՐԱՍ ՀԱՄԱՅԱԿԻ ԱՈՒՔԵԼՅԱՆ**, *տեխն.գիտ.դոկտ., պրոֆեսոր*  
*Տնտեսության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ*  
**ՍՏՅՈՊԱ ՍԱՄՎԵԼԻ ԾԱՌՈՒԿՅԱՆ**  
*ԵՊՀ հայցորդ*

**Համառոտագիր:** Ներկայումս երկրների մեծ մասում, մասնավորապես ՀՀ-ում, էլեկտրաէներգիայի ծախսը հաշվարկվում է համաձայն էլեկտրական էներգիայի հաշվիչների ցուցմունքի: Նշենք, որ նման պայմաններում անխուսափելի են խարդախությունների երևույթները, ինչպես էներգետիկ համակարգի օպերատորների կողմից, այնպես էլ խարդախ սպառողների կողմից իրականացվող ազնիվ սպառողների վերաբերյալ էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրումները:

Ներկայացված աշխատանքը նվիրված է էլեկտրաէներգիայի ծախսի մոդելի առաջարկմանը, որի հիման վրա հաշվարկվում է ազնիվ և խարդախ սպառողների ռիսկի չափը ըստ Պրատի:

*Բանալի բաներ. ռիսկ, Պրատ, էլեկտրաէներգիայի ծախս, մոդել, ազնիվ սպառող, խարդախ սպառող, բաշխման ցանց:*

## ОЦЕНКА НЕТЕХНИЧЕСКИХ ПОТЕРЬ ЭЛЕКТРОЭНЕРГИИ

**ԱՐԱՄ ԱՄԱԿՈՎԻՉ ԱՐԱԿԵԼՅԱՆ**, *դոկտոր տեխ.նաук, профессор*  
*Зав.кафедрой Математических методов в экономике ЕРГУ*  
**ՏԵՊԱ ՏԱՄԵԼՈՎԻՉ ԸԱՐՈՒԿՅԱՆ**  
*соискатель ЕГУ*

**Аннотация:** В настоящее время в большинстве стран и в частности в Армении, расход электроэнергии определяется по показанию счетчика электроэнергии оператором энергосети. Однако такой способ регистрации расхода электроэнергии чреват обманом со стороны оператора и потребителя, который может отнести свои расходы на показания счетчика электроэнергии других потребителей.

Представляемая работа посвящена изучению проблемы оценки риска потребителей электроэнергии на основе модели оценки риска Пратта.

**Ключевые слова:** *риск, Пратт, модель, расход электроэнергии, счетчик, честный потребитель, обманщик, сеть распределения.*



## ASSESSMENT OF NONTECHNICAL LOOSES OF THE ELECTRICITY

**ARAM HAMAYAK ARAKELYAN**, *Doctor of Sciences (Engineering), Professor*  
*Head of the Department of Mathematical Modeling in Economics*  
*Yerevan State University*

**STYOPA SAMVEL TSARUKYAN**,  
*Ph.D. Student, Yerevan State University*

**Abstract:** Currently, in many countries and particularly in Armenia, the cost of electricity consumption is determined by the meter of the electricity meter from grid operator. However, such a method of recording the electricity consumption causes fraud by a dishonest consumer or by the operator of the grid, thus resulting in adding some additional amount to the original bill to be paid by honest consumers.

The article proposes a model for calculating the cost of consumed electricity based on which the risks associated with honest and dishonest consumers are computed according to Pratt.

**Keywords:** *Risk, Pratt, cost of electricity consumption, model, honest consumer, dishonest consumer, distribution network and/or grid.*

**ԲԵԼԼԱ ՎԱԼԵՐԻԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՄԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԶՈՐԱՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

## **ԿԱՂՐԱՅԻՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Գործունեության ցանկացած ոլորտում, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության համակարգում, հույժ կարևոր են կադրերի հավաքագրումն ու ընտրությունը, քանի որ ի վերջո իր ամբողջության մեջ պետության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն իրականացվում են հենց այդ ընտրված կադրերի միջոցով: Սա բազմաթիվ խնդիրներ է առաջացնում՝ կապված կադրերի նկատմամբ պահանջարկի և առաջարկի կանխատեսման արդյունքում սահմանված անհրաժեշտ կադրերի թվի, նրանց որակավորմանը ներկայացվող պահանջների որոշման հետ:

Առանց կադրերի նկատմամբ պահանջների վերաբերյալ պարզ և լրիվ պատկերացման հնարավոր չէ իրականացնել նրանց ճիշտ ընտրությունն ու բաշխումը և թեկնածուներից ընտրել նրանց, ովքեր առավելագույնս են համապատասխանում իրականացվող խնդիրների բոլոր անհրաժեշտ պահանջներին: Իսկ դա ենթադրում է միասնական, գիտականորեն հիմնավորված և օրենսդրորեն ամրագրված կադրային քաղաքականություն:

Նման մասշտաբի խնդիրներ ի գործու են իրականացնել միայն որոշակի որակներ ունեցող քաղաքացիական ծառայողներ, ովքեր բավարարում են բարոյականության, հայրենասիրության, ազգի հանդեպ հավատարմության, համընդհանուր շահերից բխող գործառույթներ իրականացնելու պատրաստակամության, բարձր մասնագիտական պատրաստվածության, ծառայողական գաղտնիք պահելու կարողության, որոշումները հասարակության օգտին լուծելու կարողություն ունենալու պահանջներին:

Միաժամանակ հարկ է հաշվի առնել նաև թեկնածուների անհատականությունը, սոցիալական, մշակութային, հոգեբանական բնութագրերը:

Տարբեր երկրներում թեկնածուներից ընտրություն կատարելու չափանիշները բազմազան են և տարբեր, որոնց հիմքում որոշակի միջավայրի պահանջներն են գործում<sup>1</sup>:

<sup>1</sup> Salon S. Recrutement et formation // Cahiers francais. Paris, 1980. № 197. P. 3-7.

Բնականաբար արդյունավետ ընտրության համար պետք է սկսել պաշտոնի որոշակի բնութագրումից, որից հետո միայն ներկայացնել անձնակազմի հանդեպ մասնագիտական պահանջները: Այդ նպատակներով ՀՀ-ում քաղաքացիական ծառայության պաշտոններից յուրաքանչյուրի համար մշակվել և պարբերաբար կատարելագործվում են պաշտոնների անձնագրերը, որով սահմանվում են տվյալ պաշտոնը զբաղեցնողի իրավունքներն ու պարտականությունները: Պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվում են անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու աշխատանքային ունակություններ և դասային համապատասխան աստիճան ունենալու պահանջները: Պաշտոնների անձնագրերը համակարգի կայացման ընթացքում անընդհատ ենթարկվում են որոշակի փոփոխությունների՝ ձգտելով ավելի զարգանալ ու կատարելագործվել: Դրանք թույլ են տալիս հեշտությամբ գնահատել տվյալ թեկնածուի համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին:

Հայաստանում քաղաքացիական ծառայության համակարգի ներդրումից հետո թափուր պաշտոնների համալրման նպատակով առաջին անգամ սկսեցին ներդնել մրցութային մեխանիզմ (որը կարևոր նշանակություն ունեցավ կադրերի հավաքագրման և ընտրության գործում), որը դարձել է հանրային ծառայության բնորոշ գծերից:

ՀՀ-ում կիրառվում է նաև թափուր պաշտոնը զբաղեցնելու արտամրցութային կարգը, որի շնորհիվ ապահովվում է քաղաքացիական ծառայողների պաշտոնում առաջխաղացման կարգը: Եթե կառուցվածքային ստորաբաժանման ներսում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն կա, և առկա է բոլոր պահանջները բավարարող և սահմանված համապատասխան դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայող, ապա այդ պաշտոնը նա կարող է զբաղեցնել առանց մրցույթի<sup>1</sup>:

Կադրերի հավաքագրման և ընտրության գործընթացն իրականացվում է մի շարք փուլերով, որոնցից են աշխատանքի բնութագրությունը, անձնակազմի հանդեպ մասնագիտական պահանջների սահմանումը, մամուլում մրցույթի վերաբերյալ հայտարարություններ տալը, մրցութային հանձնաժողովների ձևավորումը, քաղաքացիներից դիմումների ընդունումը, վերջիններիս միջոցով թեկնածուի վերաբերյալ հիմնական տեղեկություններ ստանալը, թեկնածուների՝ պաշտոնով սահմանված պահանջներին համապատասխանության որոշումը, թեստավորման, հարցազրույցի իրականացումը և մրցույթի դրական արդյունքի դեպքում պաշտոնում նշանակելը:

<sup>1</sup> «Քաղաքացիական ծառայությունն ընդդեմ կոռուպցիայի. 100 փաստարկ» ձեռնարկ, Մ.Բաղայան, Ա. Պետրոսյան, Ա.Նազարյան, Երևան – 2005, էջ 12:

Թեստավորման ընթացքում բացահայտվում է թեկնածուի գիտելիքների ընդհանուր մակարդակը՝ ըստ ՀՀ Մահմանադրության, քաղաքացիական ծառայության մասին և համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող ՀՀ օրենսդրության հետ: Հարցազրույցի միջոցով կարելի է գնահատել թեկնածուների ընդհանուր զարգացածությունը, մտավոր և մասնագիտական ունակությունները, սեփական մտքերը տրամաբանորեն արտահայտելու հմտությունը, բարոյահոգեբանական որակները:

Քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները բաժանվում են 4 խմբերի՝ բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր, ուստի առանձնացվում են նաև դրանց համապատասխան թեստավորման և հարցազրույցի հարցաշարերը: Ելնելով պաշտոնների խմբերի ընդհանուր նկարագրությունից՝ կարելի է որոշել, թե ինչ է անհրաժեշտ թեկնածուին՝ սովյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար: Այսպես.


- բարձրագույն պաշտոնների համար անցկացվող մրցույթում պետք է ընդունվի այն թեկնածուն, որը, բարձրագույն ուսումնական հաստատության դիպլոմ ունենալուց բացի, ունենա ընդհանուր և տեխնիկական գիտելիքներ, բավարար ինտելեկտուալ ունակություններ և հաստատուն բնավորություն, կարողանա սահմանել և գնահատել այն անձանց գործունեությունը, որոնք գտնվում են իր ենթակայության տակ:
- գլխավոր պաշտոններում նույնպես պահանջվում է հանրակրթական և մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ:
- առաջատար պաշտոնների համար անցկացվող մրցույթը պահանջում է կատարողական-տեխնիկական ունակություններ:
- կրտսեր պաշտոններ զբաղեցնել ցանկացող թեկնածուները կարող են և չունենալ հատուկ մասնագիտական որակավորում, ուստի այս խմբի մրցույթը սահմանափակվում է հանրակրթական գիտելիքների գնահատմամբ:

Մրցութային հանձնաժողովը կազմված է 6 հոգուց բաղկացած իրագրել մասնագետներից՝ 2-ական ներկայացուցիչներ Քաղաքացիական ծառայության խորհրդից, համապատասխան մարմնից, գիտաուսումնական հաստատություններից:

Բացի հանձնաժողովի անդամների ընտրությունից, կարևոր է նաև բուն մրցույթին այդ անդամների ներկայությունը: Ըստ գործող կարգի՝ մրցութային հանձնաժողովը պետք է կազմվի մրցույթը սկսելուց առնվազն 24, իսկ հանձնաժողովի անդամները պետք է տեղեկացվեն մրցույթը սկսելուց առնվազն 6 ժամ առաջ: Հաշվի առնելով, որ հանձնաժողովի անդամների թեկնածուները գործընթացին մասնակցում են հասարա-

կական հիմունքներով և ունեն մշտական զբաղվածություն, ապա նշված ժամկետները նրանց տեսանկյունից բավական փոքր են, սակայն հանձնաժողովի օբյեկտիվ վերաբերմունքի տեսանկյունից արդարացված: Մյուս կողմից էլ, չնայած զբաղված լինելուն, մրցույթին ներկա գտնվելը բարոյական խնդիր է և պայմանավորված է հանձնաժողովի անդամների պատասխանատվության աստիճանով:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների համար անցկացվող մրցույթները բավականին ինտենսիվ են, մարդաշատ և հիմնականում ունեն աճի միտում (գծապատկեր 1):




**Գծապատկեր 1. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների մասնակիցների թիվը<sup>1</sup>**

Հետաքրքիրն այն է, որ մրցույթներին մասնակցողների և մրցույթների հաղթողների հարաբերակցությունը գրեթե նույնաման ցուցանիշ է ապահովում թե՛ պաշտոնային տարբեր խմբերում և թե՛ մինևնույն պաշտոնի խմբի տարբեր տարիների դինամիկայում (գծապատկեր 2):

Նկատենք, որ դիտարկված 2010-2015թթ. ժամանակահատվածում հայտարարվել է շուրջ 4500 մրցույթ, որոնցից կայացել են մոտ 3900-ը, մրցույթներին մասնակցելու համար դիմել են մոտ 12000 քաղաքացի, որոնցից մասնակցել են մոտ 7500-ը, 4457 քաղաքացու չի թույլատրվել

<sup>1</sup> Ըստ <http://csc.am/documents/statistics/16.pdf> տվյալների:

կամ իրենց կամքով չեն մասնակցել մրցույթներին, իսկ հայտարարված մրցույթներից 522-ում հաղթող չի եղել:



**Գծապատկեր 2. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների հաղթողների տեսակարար կշիռները մասնակիցների ընդհանուր թվում<sup>1</sup>**


Այստեղ հետաքրքրական է հատկապես մրցույթին մասնակցելու թույլտվություն չստացածների և մրցույթների դիմած, բայց տարբեր պատճառներով չմասնակցած քաղաքացիների մասին տեղեկատվությունը: Պաշտոնական տվյալները կարող են լինել ցանկացած բնույթի, սակայն, կարծում ենք, մեծ է նաև վտանգը, որ գործում են կոռուպցիոն որոշակի մեխանիզմներ, և բոլոր նրանք, ովքեր չունեն համապատասխան պատրաստվածություն և չեն կարողացել գտնել այդ մեխանիզմից օգտվելու հնարավորություններ, չեն էլ մասնակցել մրցույթներին: Ընդհանրապես կոռուպցիոն մեխանիզմները քաղաքացիական ծառայության համակարգում գրեթե անխուսափելի են, և բարեփոխումները մի կողմից ուղղված են համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, իսկ մյուս կողմից՝ առավելապես հենց կոռուպցիոն մեխանիզմների հնարավոր դրսևորումների վերացմանը:

Պետական ծառայության համակարգում, բնականաբար, միայն այս խնդիրները չեն, որ արդիական են: Մեկ այլ կարևոր հիմնախնդիր է այն, որ չնայած թեկնածուների ոչ այդքան փոքրաթիվ լինելուն՝ քաղաքացիական ծառայության համակարգում քիչ չեն նաև պաշտոնները, որոնք երկար

<sup>1</sup> Ըստ <http://csc.am/documents/statistics/16.pdf> տվյալների:

ժամանակ մնում են թափուր (ատոմային էներգետիկայի, ատոլջապահության, քաղաքացիական ավիացիայի և այլ բնագավառներում). ընդ որում դա նույնիսկ այն պարագայում, որ տվյալ թափուր պաշտոնների աշխատավարձերը չեն զիջում իրենց դրույքաչափերով: Այս պաշտոնների համար կամ ոչ ոք չի դիմում, կամ առկա է թեկնածուների պատրաստվածության ոչ բավարար մակարդակ: Այս ցուցանիշը բավական ակնհայտ երևում է այն մրցույթների հայտարարությունների դիմամիկայում, որտեղ հաղթողներ չեն ճանաչվել (գծապատկեր 3):

Դրան հակառակ, կան այնպիսի թափուր պաշտոններ, որոնց դիմումների թիվը մեկ տեղի համար հասնում է 30-50-ի, իսկ երբեմն էլ՝ ավելին (կապված վերահսկողական, լիցենզավորման, տեսչական, սերտիֆիկացման գործառույթներ իրականացնող պաշտոններ զբաղեցնելու հետ): Քաղաքացիները մեծամասամբ նախընտրում են ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ կառավարության կամ ՀՀ նախագահի աշխատակազմի պաշտոնները:



**Գծապատկեր 3. Հաղթող չճանաչված մրցույթների թվի դինամիկան 2010-2015թթ<sup>1</sup>.**

Մա, ըստ էության, հենց խոսում է տարբեր պետական մարմինների հավասարազոր պաշտոններում ծառայողների իրավունքների ու պարտականությունների ոչ հավասար լինելու մասին: Եվ քանի որ բարձր արհեստավարժություն և նեղ մասնագիտական պատրաստվածություն

<sup>1</sup> <http://csc.am/documents/statistics/15.pdf>

պահանջող շատ պաշտոններ մնում են թափուր, հետևաբար՝ կարելի է հետևություններ անել հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգում առկա կադրային լուրջ հիմնախնդիրների մասին: Մի կողմից՝ ՀՀ-ում գոյություն ունի գործազրկության բարձր մակարդակ, մյուս կողմից՝ տվյալ պաշտոններում համապատասխան որոշ մասնագիտությունների գծով թեկնածուներ չլինելու կամ ոչ բավարար մակարդակ ունենալու պատճառով առկա է կադրերի լուրջ պակաս:

Մեր կարծիքով այս հիմնախնդիրները առաջին հերթին պայմանավորված են նրանով, որ կադրերի թվաքանակի պլանավորման գործընթացում աշխատանքի շուկայի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը հաշվի չի առնվում: Քաղաքացիական ծառայությունում պաշտոնների անվանացանկը պետք է կազմվի ուսումնական հաստատությունների մասնագիտությունների անվանացանկի հետ փոխհամաձայնեցված կարգով, այսինքն՝ հարկ է վերանայել ուսումնական հաստատությունների մասնագիտությունների ցանկը և համապատասխանեցնել քաղաքացիական ծառայության պաշտոնների իրական պահանջարկին:

Քաղաքացիական ծառայողների հանդեպ ընթացիկ և հեռանկարային պահանջարկը պայմանավորված է պետական մարմինների համապատասխան կառուցվածքով, քաղաքացիական ծառայության պաշտոնների համալրվածության աստիճանով և որակով, ինչպես նաև տարբեր պատճառներով (անցում կենսաթոշակի, զբաղեցրած պաշտոններին չհամապատասխանողների փոխարինում, ծառայության դադարեցում) քաղաքացիական ծառայողների կազմում հնարավոր փոփոխություններով<sup>1</sup>:

Մյուս կարևոր խնդիրն այն է, որ դեռևս օրենսդրորեն սահմանված չէ, թե ինչպիսի կրթություն է անհրաժեշտ որոշակի մասնագիտության պաշտոն զբաղեցնելու համար, որն ավելի դյուրին, նպատակահարմար կդարձնի թափուր պաշտոնի համար մրցույթ իրականացնելու գործընթացը:

Քաղաքացիական ծառայության համակարգի զարգացման համար կարևոր խնդիր է թեստավորման և հարցազրույցի հարցաշարերի որակը: Պետք է ժամանակի ընթացքում կատարելագործել հարցաշարերի որակը՝ ըստ համապատասխան պաշտոնների: Քիչ չեն դեպքերը, երբ հարցաշարերը ծանրաբեռնված են անհարկի հարցերով՝ ստեղծելով ավելորդ պահանջկոտություն և որոշակի նկատառումներով արհեստական դժվարություններ:

Քաղաքացիական ծառայության հրապարակայնության և թափանցիկության սկզբունքն ապահովելու համար օրենքով նախատեսվում է թույլ

<sup>1</sup> Овсянко Д.М., Государственная служба Российской Федерации: Учеб.пособие. – 3-е изд., перераб. и доп. – М.: Юристь, 2005. С.61.



տալ մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին մասնակցել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին դիտորդի կարգավիճակով: Դա որոշ չափով նվազեցնում է հասարակության այն կարծիքը, թե մրցույթները ձևական են:

Օբյեկտիվության ապահովման համար պետք է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում իրականացնել որոշակի փոփոխություններ և լրացումներ: Արդեն ներդրվել և գործում է հարցերի թեստավորման համակարգչային ավտոմատացված ընտրության ծրագիրը, որի շնորհիվ վերանում են գրավոր թեստավորման փուլում այս կամ այն թեկնածուին նախընտրության սկզբունքով հաջող անցկացնելու և նմանատիպ այլ կոռուպցիոն դրսևորումները:

Սակայն փաստելով, որ քաղաքացիական ծառայության համակարգում մրցույթի անցկացման գործում հրապարակայնությունն ու թափանցիկությունը զգալի չափով ապահովված են, նույնը չենք կարող ասել հաղթողներից մեկի՝ պաշտոնում նշանակման վերաբերյալ: Կադրերի ընտրության հաջորդ փուլում, որտեղ բանավոր զրույցի կամ հարցազրույցի միջոցով ստուգվում է թեկնածուի համապատասխանությունը որևէ պաշտոնի, ճիշտ է, օբյեկտիվության ապահովման համար նախ՝ հարցազրույցը ամբողջությամբ ձայնագրվում է: Բացի դրանից, յուրաքանչյուր հնչեցված հարցին մրցույթի մասնակցի պատասխանից հետո հնչեցվում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, և սխալ լինելու պարագայում նշվում է ճիշտ պատասխանը: Սա, ըստ էության, բավականին լուրջ փաստարկ է և իրականում պետք է ապահովի օբյեկտիվություն, սակայն մի կարևոր խնդիր կա, որը վերահսկելի չէ և պարունակում է սուբյեկտիվ կողմ:

Յուրաքանչյուր հնչեցվող հարց ունի որոշակի բարդություն, որն առայժմ տարանջատված չէ, և կան հարցեր, որոնց չիմացությունն այնքան էլ պարտադիր չէ այս կամ այն պաշտոնը զբաղեցնելու համար: Այս տեսանկյունից օրենքը չունի և չի կարող ունենալ առանձնացված դրույթներ և կարգավորել հարց տվողի սուբյեկտիվ կարծիքը: Այստեղ հույսը միայն մրցութային հանձնաժողովի բարոյականությունն ու օբյեկտիվությունն է, որը միշտ չէ, որ վստահություն է ներշնչում քաղաքացիներին:


Նման հանգամանքի առկայությունը կապված է այն բանի հետ, որ դեռևս չեն մշակվել այնպիսի հարցաշարեր, որոնք թույլ տան բացահայտել թեկնածուների մասնագիտական, մարդկային-հոգեբանական ողջ ներուժը: Մեր կարծիքով դա մեթոդապես տրամաբանական չէ, որովհետև այդ դեպքում պետք են այնպիսի չափորոշիչներ, որոնք կապահովեն լավա-

գույնի ընտրությունը<sup>1</sup>: Ուստի պետք է ստեղծել այնպիսի գիտական ու հետազոտական կենտրոններ, լաբորատորիաներ, որոնց գործունեությունն ուղղված կլինի մեթոդական ու գործառնության խնդիրների վերլուծությանն ու բարելավմանը:

Միայն նման պարագայում է հնարավոր օբյեկտիվ հիմք ստեղծել քաղաքացիական ծառայության համակարգում արդյունավետ ծառայողների ընտրության համար:

Այս գործում կարևոր նշանակություն ունեն նաև կադրերի ռեզերվի ստեղծումն ու դրա արդյունավետ օգտագործումը, և շատ կարևոր է ռեզերվ անցած կադրերի ճիշտ տեղաբաշխումը, հատկապես երբ դա տեղի է ունեցել բարձր մրցութային տեղերից:

Ինչպես նկատում ենք, 2009թ.-ից կադրերի երկարաժամկետ ռեզերվ անցածների թվի կտրուկ անկում է արձանագրվել, ինչը մի կողմից պայմանավորված է 2008թ. տեղի ունեցած փոփոխություններով. Մերժ Սարգսյանի նախագահ ընտրվելու և Տիգրան Սարգսյանի վարչապետ դառնալով փոփոխություններ տեղի ունեցան նաև կառավարության կազմում, և փոփոխությունների արդյունքում օգտագործվեց երկարաժամկետ ռեզերվի հնարավորությունների մեծ մասը (գծապատկեր 4): Նկատենք, որ նույն ժամանակահատվածում որոշակի կարճաժամկետ ռեզերվի համեմատական ավելացում է արձանագրվել, չնայած ընդհանուր պատկերի մեջ էական փոփոխություններ չի կրել:



**Գծապատկեր 4. Կադրերի կարճաժամկետ և երկարաժամկետ ռեզերվում գրանցվածների թվի դինամիկան 2003-2015թթ.<sup>2</sup>**

<sup>1</sup> «Քաղաքացիական ծառայություն», շաբաթաթերթ, թիվ 8 (172), փետրվարի 28, 2007թ.:

<sup>2</sup> Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց թվաքանակն ըստ տարիների՝ <http://csc.am/documents/statistics/02.pdf>.

Ճիշտ է, այս փոփոխություններն ու դինամիկան առավելապես դրական կողմեր ունեն, սակայն նաև որոշ վտանգ են պարունակում: Այն իմաստով, որ իշխանության փոփոխությունը չհանգեցնի կադրերի փոփոխության և դրա արդյունքում հանրությանը մատուցվող ծառայությունները ոչ ժամանակին և ոչ արդյունավետ մատուցելուն: Եվ շատ կարևոր է, որ պետական ծառայության համակարգում և մասնավորապես քաղաքացիական ծառայության համար մշակվեն այնպիսի ընդհանուր չափանիշներ ու նորմեր, որոնք, անկախ իշխանության փոփոխությունից և պետական մարմինների ղեկավարների ու տարբեր հայեցողական ու նշանակովի պաշտոններում անձերի փոփոխություններից, չհանգեցնեն ծառայողների փոփոխության, իսկ հանրությունը կարողանա ժամանակին ու արդյունավետ ստանալ այն ծառայությունները, որոնց մատուցման համար ստեղծված են համապատասխան մարմինները:

## **ԿԱՐԴՅԻՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**ԲԵՒԼԱ ՎԱԼԵՐԻԻ ԳԱՐԻԵԼՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

### **ՄԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԶՈՐԱՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**Համառոտագիր:** Կադրային քաղաքականությունը ցանկացած կազմակերպության կարևորագույն խնդիրներից մեկն է: Կադրերի ճիշտ ընտրություն, վարձատրության օպտիմալ մեխանիզմ, արդյունավետ աշխատանք. այս խնդիրները միշտ էլ հետաքրքրել են գործունեության բոլոր բնագավառներում, և այստեղ բացառություն չէ պետական ծառայության համակարգը: Հողվածի շրջանակներում քննարկվել են կադրերի ընտրության խնդիրները ՀՀ պետական ծառայության համակարգում: Վերլուծվել է կադրային խնդիրը թափուր պաշտոնների հայտարարությունից մինչև պաշտոնի նշանակման փուլերը, և վեր են հանվել քաղաքացիական ծառայության համակարգում և Հայաստանին բնորոշ առանձնահատկությունները, առավելություններն ու թերացումները, առաջարկվել են որոշակի միջոցառումներ, որոնք կարող են առավել արդյունավետ դարձնել կադրերի հավաքագրման ու ընտրության խնդիրները:

*Բանալի բաներ. պետական ​​​​ծառայություն, կադրեր, հավաքագրում, գիտելիք, թեստավորում, հարցաշար, հանձնաժողով, պաշտոն, թափուր, մրցույթ, ռեզերվ, համակարգ:*

## **СОВРЕМЕННЫЕ КАДРОВЫЕ ПРОБЛЕМЫ В СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОЙ СЛУЖБЫ**

**БЕЛЛА ВАЛЕРЬЕВНА ГАБРИЕЛЯН**, *к.э.н., доцент*  
*старший научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА,*  
**МАРИНЕ АЗАТОВНА ЧОБАНЯН**  
*соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Кадровая политика является одной из наиболее важных проблем любой организации.

Правильный подбор кадров, оптимальный механизм оплаты труда, проблемы эффективности работы всегда были интересны для всех сфер деятельности, и система государственной службы здесь не является исключением. В рамках этой статьи обсуждались вопросы отбора персонала в систему государственной службы Республики Армения. Был проанализирован кадровый вопрос с этапа объявлений о вакансиях до этапа назначения на должность, были выявлены особенности характерные для системы гражданской службы Армении, преимущества и недостатки, а также были предложены некоторые меры, которые могут сделать более эффективным проблемы набора и отбора кадров.

**Ключевые слова:** *государственная служба, кадры, набор, знание, аттестация, перечень вопросов, комиссия, должность, вакансия, конкурс, резерв, система.*

## **CONTEMPORARY HUMAN RESOURCE ISSUES IN THE SYSTEM OF CIVIL SERVICE**

**BELLA VALERI GABRIELIAN**, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*  
*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*  
**MARINE AZAT CHOBANYAN**  
*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Human Resource (HR) policy is one of the most vital issues for any organization.

The recruitment and selection of appropriate candidates, optimal mechanism of remuneration, labor productivity and job effectiveness and efficiency issues

have always been of interest to all types of economic activity, and the system of civil service is not an exception. The article discusses candidate recruitment and selection issues with respect to the work in the System of Civil Service of the Republic of Armenia. The issue of selection of appropriate candidates has been analyzed starting from the job vacancy announcement posting and ending with appointment of the selected candidates; the characteristics specific to the system of the Civil Service of Armenia, the shortcomings and advantages of thereof have been identified; and several measures have been proposed to make the process of recruitment and selection of appropriate candidates more efficient.

**Keywords:** *Civil service, personnel, recruitment, knowledge, certification, questionnaire, committee, position, vacancy, competition, reserve, system.*


**ԱՄԱԼՅԱ ՄԿՐՏՉԻ ԳԱԼՍՏՅԱԼ**, տ.գ.թ.

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

## **ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ**

Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է զբաղեցնել առաջնակարգ դիրք՝ մնալով որպես ազգային արժեք, քանզի ազատ շուկայական տնտեսության կայացման, միջազգային տարբեր կառույցներում ինտեգրման գործընթացում առավել կարևորվում է մարդկային կապիտալի դերը: Ցանկացած պետության կայուն զարգացման գլխավոր նախապայմանը գիտակցական հասարակությունն է, որը ձևավորվում է բարձրարժեք կրթական համակարգի՝ նախադպրոցական, դպրոցական, բարձրագույն, շարունակական դինամիկ զարգացման արդյունքում: Գիտության և տեխնոլոգիայի արդի զարգացման պայմաններում գիտելիքների կատարելագործման, հմտությունների ձեռքբերման, մշտապես տեղեկացված լինելու պահանջն առավել կարևորում է շարունակական կրթության կազմակերպման անհրաժեշտությունը:

Համաշխարհային փորձը վկայում է, որ ամբողջ աշխարհում ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածի առաջատար կազմակերպությունները մեծ ներդրումներ են կատարում անձնակազմի շարունակական կրթության կազմակերպման նպատակով՝ հանգուցալուծելով արհեստավարժ կադրերով ապահովվածության խնդիրը: Հասարակության, անձնակազմի, ինչպես նաև անհատի շարունակական կրթությունը՝ վերապատրաստումը, պարզապես մեկանգամյա պրոցես չէ, այլ պլանավորված շարունակական ուսուցում՝ գիտելիքների արդիականացման և իրազեկման, հմտությունների զարգացման, ինչպես նաև աշխատանքի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ մասնագիտությունների, ոլորտների ուսումնասիրության միջոցով: Շարունակական կրթությունը ներկայանում է երեք հիմնական ուղղություններով (տե՛ս գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Շարունակական կրթության ուղղություններ<sup>1</sup>**

1. Ամբողջ կյանքի ընթացքում անձնական մոտիվացիաներով պայմանավորված կրթությունը (lifelong learning) ենթադրում է, որ անհատը ամբողջ կյանքի ընթացքում զբաղվում է ինքնակրթմամբ՝ մասնագիտական գիտելիքների կատարելագործում, նոր մասնագիտության ձեռքբերում, որակավորման բարձրացում կամ ուղղակի անհատը գիտակցաբար ձգտում է բարձրացնել իր ինտելեկտը, որը հնարավոր է իրականացնել ֆորմալ (ուսուցումը հիմնականում իրականացվում է կրթական հաստատությունների միջոցով), ոչ ֆորմալ (ուսուցումն իրականացվում է աշխատանքի և առօրյա կյանքի ընթացքում ձեռք բերված փորձառության արդյունքում): Կյանքի ընթացքում կրթության զաղափարն առավել ամբողջականացրել է առաջատար տեսաբան Փոլ Լենգրանդը: Լենգրանդի տեսությունում նորովի է լուսաբանվել ուսումնառության դերը՝ կրթությունը դիտարկելով ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառության գործընթաց, որտեղ զուգորդվում են մարդկային գործունեության անհատական և սոցիալական կողմերը: Արդյունքում գրեթե բոլոր եվրոպական երկրները բոլորի համար ողջ կյանքի ընթացքում կրթության և ուսուցման հնարավորություններ ապահովելու նպատակով մշակել և ստեղծել են ռազմավարություններ՝ ինչպես բարձրագույն կրթության բարեփոխումների, այնպես էլ վերապատրաստումների հայեցակարգի վերաբերյալ՝ հաշվի առնելով պատմական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:

2. Մեծահասակների կրթության առանձնահատկություններից են՝

- որոշակի նպատակների իրականացման անհրաժեշտությունը,
- արդեն իսկ որոշակի գիտելիքների և համապատասխան փորձառության առկայությունը,

<sup>1</sup> Зайцева О, В, Непрерывное образование: Основные понятия и определение, Вестник ТГПУ, 7 (85), 2009.

- ուղղորդվում է համապատասխան առաջադրանքների կատարմանը և այլն:

Եվրոպական միության շրջանակներում գործող Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից սահմանված նորմատիվներով մեծահասակների կրթությունը դիտարկվում է 25-60 տարեկան մարդկանց համար<sup>1</sup>:

3. Շարունակական մասնագիտական վերապատրաստումն ուսուցանվողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործումն է: Կադրային քաղաքականության կարևորագույն հիմնախնդիրներից է աշխատուժի որակավորման բարձրացման և վերապատրաստման համակարգի արդյունավետ գործարկումը: Վերապատրաստման հավասար հնարավորությունները, գիտելիքներին և փորձին համապատասխան կարիերայի աճը աշխատակիցների մեջ շահագրգռվածություն է առաջացնում՝ հետամուտ լինելու իրենց գիտելիքների խորացմանը և հմտությունների կատարելագործմանը: Շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումները կազմակերպվում են տարբեր մեթոդներով, ինչպիսիք են.

- լսարանային,
- աշխատավայրում,
- համացանցի կիրառմամբ,
- տպագիր նյութերի, կրիչների և այլ դիդակտիկ նյութերի տրամադրման միջոցով:

Շատ դեպքերում մասնագիտությունների որոշ խմբերի համար շարունակական մասնագիտական զարգացումը պարտադիր է և կանոնակարգվում է համապատասխան օրենքներով, օրինակ՝ բժիշկները, ուսուցիչները, աուդիտորները, հաշվապահները, փաստաբանները և այլն, իսկ մնացյալ մասնագիտությունների գծով որակավորումների՝ գիտելիքների և հմտությունների նկատմամբ պահանջները ամրագրված չեն որևէ օրենքում, իրավական ակտերում կամ մեթոդաբանական փաստաթղթում, այլ պայմանավորված են գործատուների համապատասխան պահանջներով և բխում են անհատի՝ արհեստավարժ մասնագետ դառնալու շարժառիթներից: Ինչպես նաև որոշ պաշտոններում աշխատելու նպատակով մասնագետները պետք է ունենան համապատասխան որակավորում: Որակավորումը դաշտը կանոնակարգող մարմնի սահմանած պահանջներին համապատասխան անձի մասնագիտական գիտելիքների ստուգման ընթացակարգ է, որի արդյունքների հիման վրա տրվում է որակավորման

<sup>1</sup> [https://hy.wikipedia.org/wiki/Ցկյանս\\_ուսումնառություն](https://hy.wikipedia.org/wiki/Ցկյանս_ուսումնառություն):




վկայական, որի պահպանման նպատակով որակավորված մասնագետը սահմանված ժամանակահատվածում գիտելիքները ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով պարտավոր է անցնել շարունակական մասնագիտական վերապատրաստումներ: Օրինակ՝ իրավաբանը, որն ունի որպես փաստաբան աշխատելու արտոնագիր, պարտավոր է 2 տարվա ընթացքում անցնել 48 ժամ տևողությամբ դասընթացներ, ընդ որում յուրաքանչյուր կիսամյակի (6 ամսվա) համար փաստաբանը պարտավոր է անցնել 12 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստում<sup>1</sup>: Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կողմից որակավորված աուդիտորները պարտավոր են տարեկան 40 ժամ մասնակցել շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների: Այսպիսով, մասնագետի վերապատրաստումները կարող են կազմակերպվել ըստ իր ցանկության և նախասիրության, բխել գործատուի տարբեր պահանջներից և օրենքներից: Առավել արդյունավետ են, երբ վերապատրաստումներում ներառվում են նորագույն տեխնոլոգիաներ. արդյունքում տարբեր հեռահար դասընթացներ հնարավորություն են տալիս աշխատողին առանց աշխատանքից կտրվելու աշխատանքի ընթացքում մասնակցելու դասընթացների, կոնֆերանսների, որը նպաստում է մասնագիտական որակավորման բարձրացմանը և աշխատանքի արդյունավետ կատարմանը: Նորագույն տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման օրինակներ են համացանցի վրա հիմնված, համակարգչի կիրառմամբ, վիրտուալ դասարաններով և թվային աշխատակցության վերապատրաստումները (web-based learning, computer-based learning, virtual classrooms and digital collaboration):

Ընդհանուր նպատակների իրականացման տեսանկյունից բարձր արդյունավետության ապահովման նպատակով գիտելիքներից գատ հարկավոր են նաև հաղորդակցման, թիմային աշխատանքում ինտեգրվելու ունակությունը և մասնագիտական վարվելակերպի կանոններին հետևելը: Ժամանակի մարտահրավերները մշտապես փոփոխում են կազմակերպությունների առջև դրված խնդիրները, որը և փոփոխում է կադրերի մասնագիտական ունակությունների նկատմամբ պահանջները, հետևաբար՝ վերապատրաստումները պետք է լինեն նպատակային արդյունքի վրա հիմնված, և կրեն շարունակական բնույթ: Կազմակերպության առողջ կադրային քաղաքականությունը միտված է հետևյալ ուղղություններով նոր մասնագետների պատրաստում, որոշակի գիտելիք և փորձ ունեցող մասնագետների շարունակական վերապատրաստում, կատարողականի

<sup>1</sup> <http://www.advschool.am/cms/view/training>

հիման վրա կարիերայի աճի հնարավորությունների ընձեռում և կադրային ռեզերվի ստեղծում: Որպեսզի վերապատրաստումները լինեն նպատակային, արդյունքները՝ գնահատելի՝ նախօրոք պետք է սահմանել նպատակները և պատասխանել մի շարք հարցերի՝ որտեղ ենք, որտեղ ենք ցանկանում լինել, և պատասխանների հիման վրա սահմանել վերապատրաստողների թիրախային խմբերը, ծրագրերը:



**Գծապատկեր 2. Շարունակական մասնագիտական վերապատրաստումների ցիկլը**

Արդյունավետ վերապատրաստման հիմնական քայլերն են.

1. վերապատրաստման կարիքների գնահատում,
2. վերապատրաստման պլանի, ծրագրերի կազմում,
3. վերապատրաստումների կազմակերպում՝ դասընթացի մշակում, կազմակերպում կամ իրականացում այլ հավաստագրված կազմակերպությունների միջոցով,
4. որոշ ժամանակ անց վերապատրաստման արդյունավետության գնահատում. պետք է հետևել, որ վերապատրաստման դասընթացները մասնագետներին տրամադրեն ժամանակի պահանջներին համահունչ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ,
5. արդյունքների հիման վրա վերապատրաստումների բարելավում. վերապատրաստման ծրագրերը, օրենսդրական պահանջներից, գործատուների նպատակներից, հետադարձ արձագանքներից ելնելով. պետք է վերանայվեն:  
 Վերապատրաստման արդյունքները ներառում են.
  - մասնագետների գիտելիքների կատարելագործում, նոր հմտությունների ձեռքբերում,

- մասնագետների մոտիվացիա,
- աշխատավայրում մասնագետների կարողությունների ճիշտ օգտագործում<sup>1</sup>:

Այսպիսով, և՛ մասնավոր, և՛ պետական հատվածի արդյունավետ կադրային քաղաքականության առաջնահերթություններից է միջազգային չափանիշներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան շարունակական մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը, որը պետք է զեներացնի գործատուի և անհատի նպատակային շահերը: Մասնագիտական վերապատրաստման շարունակականությունը նպաստում է մասնագետների գիտելիքների կատարելագործմանը, վերլուծական կարողությունների բարձրացմանը, նորագույն տեխնոլոգիաների լայնորեն կիրառմանը և այլն:

## **ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ**

**ԱՄԱԼՅԱ ՄԿՐՏՅԻ ԳԱԼՍՏՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Անհատի, հասարակության շարունակական մասնագիտական զարգացման նշանակության մեծացման պայմաններում իսխտ կարևորվում է շարունակական կրթության համակարգի զարգացումը, որը հնարավորություն կտա պայմաններ ստեղծելու շարունակական զարգացման վրա անհատի, հասարակության, տնտեսության պահանջ-մունքների դինամիկ փոփոխությունների արագ արձագանքմանը:

*Բանալի բառեր.* *շարունակական վերապատրաստում, մեծահասակների ուսուցում, հասարակություն, որակավորում, մոտիվացիա:*

## **СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ НЕПРЕРЫВНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ**

**АМАЛИЯ МКРТЫЧЕВНА ГАЛСТЯН**, *к.э.н.,*

*научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА*

**Аннотация:** В условиях возрастающего значения непрерывного профессионального образования общества и отдельного человека, резко увели-

<sup>1</sup> Detailed Guidelines for Improved Tax Administration in Latin America and the Caribbean, USAID, 2013, p. 350.

чивается необходимость развития системы непрерывного образования, позволяя при этом создать условия для обеспечения реакции системы образования на динамично изменяющиеся потребности личности, общества, экономики.

*Ключевые слова: непрерывное обучение, обучение, образование взрослых, общества, квалификация, мотивация.*

## CONTEMPORARY CHALLENGES OF THE CONTINUING PROFESSIONAL DEVELOPMENT

**AMALYA MKRTICH GALSTYAN**, *Candidate of Sciences (Economics)*  
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** In the context of the growing importance of the continuing professional development (CPD) for the society and an individual the elaboration of the CDP system is highly stressed, that will provide an opportunity to create required conditions for ensuring timely response to dynamically changing needs of an individual, the society, and the economy.

**Keywords:** *Continuing professional development, training, adult education, societies, qualifications, motivation*


## ԴՈՆԱՐԱ ՅՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

### ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԿՐԴԱՄԱՐՈՒՄԻ

Աղքատությունը համաշխարհային հանրության առաջ հառնած կարևորագույն հիմնախնդիրներից է, որի ազդեցությունը կործանարար է տնտեսության, սոցիալական հարաբերությունների, քաղաքականության և մշակույթի վրա: Այն անմիջականորեն ազդում է յուրաքանչյուր մարդու կյանքի այնպիսի հիմնարար բնորոշիչների վրա, ինչպիսիք են առողջական վիճակն ու կրթության մակարդակը: Իր հերթին աղքատությունը մի շարք գլոբալ գործոնների ծնունդ է: 2008թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը հարվածեց Հայաստանի տնտեսությանը: Մինչ այդ ձևավորված կայուն տնտեսական միջավայրը, այդ թվում՝ պարտքի ցածր մակարդակը, աճող խնայողությունները պահպանեցին տնտեսությունը գլոբալ տնտեսական ճգնաժամի սկզբնական ազդեցությունից, արտաքին պահանջարկի և կապիտալ հոսքերի ծավալների անկման ազդեցությունը սկսեց զգացվել 2008թ. չորրորդ եռամսյակից, երբ արդեն իսկ գրանցվեց 5.9% տնտեսական անկում, իսկ տարեկան ՀՆԱ-ի աճը կազմեց 6.9% 2007թ. 13.7% երկնիշ աճի դիմաց: 2009թ. գրանցվեց իրական ՀՆԱ-ի 14.1% անկում, որին սկսեց հաջորդել դանդաղ վերականգնում՝ սկսած 2010 թ. -ից (2010թ. ՀՆԱ-ի հավելաճը նախորդ տարվա համեմատ կազմել է 2.2%, 2011թ.՝ 4.7%)<sup>1</sup>: Բավականին զգալի էր 2012թ. ՀՆԱ-ի աճը՝ 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008թ. տնտեսական ակտիվության մակարդակին: 2014թ. տնտեսական աճի կրճատումը հիմնականում պայմանավորված էր շինարարության, հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտներում արձանագրված անկումով, ինչպես նաև Ռուսաստանից դրամական փոխանցումների և օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներհոսքի և արտահանումից ստացվող եկամուտների կրճատմամբ:

<sup>1</sup> [https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2016&locations=AM&start=2006&year\\_high\\_desc=true](https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2016&locations=AM&start=2006&year_high_desc=true)



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Համաշխարհային զարգացման ցուցանիշներ


**Գծապատկեր 1. Իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը, 2000–2016թթ., տոկոս<sup>1</sup>**

Այնուամենայնիվ, վերջին տարիների տնտեսական աճը (2012-2016թթ.) որոշ դրական ազդեցություն է ունեցել երկրի աղքատության մակարդակի վրա: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարված վերլուծությունների՝ 2016թ.-ին 2012թ.-ի համեմատ ՀՆԱ-ի ցուցանիշը աճել է 10,66%-ով, իսկ աղքատության մակարդակը նվազել է 9,26%-ով: 2016թ. Հայաստանի տնտեսության աճի տեմպը նախորդ տարվա համեմատ ավելացել է միայն 0.2 տոկոսային կետով: Այդպիսի համեստ աճը բավարար չէ երկրում աղքատության մակարդակի նվազման համար: Այնուամենայնիվ, առաջին անգամ՝ 1996թ. աղքատության մակարդակի պաշտոնական գնահատման հրապարակումից հետո, 2016թ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա համեմատ ցուցաբերեց գնանկում: 2015 թ. համեմատ 2016 թ. աղքատության մակարդակը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 29.4%, արդյունքում աղքատության մակարդակը վիճակագրորեն չի փոփոխվել: 2016թ., ինչպես և նախորդ յոթ տարիների ընթացքում, Հայաստանում աղքատության մակարդակը դեռ գերազանցել է 2008թ. աղքատության մակարդակը 1.8 տոկոսային կետով (27.6%)<sup>2</sup>:

Ստորև ներկայացվում են 2016թ. ՀՀ-ում աղքատության մակարդակը և աղքատության զձերը:

<sup>1</sup> <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&series=NY.GDP.MKTP.KD.ZG&country=ARM#>

<sup>2</sup> [http://www.armstat.am/file/article/poverty\\_2017\\_a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf)




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

**Գծապատկեր 2. Հայաստանում աղքատության մակարդակը և աղքատության զմեռը 2016թ.<sup>1</sup>**

Հայաստանում նյութական աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը: Հայաստանի բնակչությունը, ըստ աղքատության կարգավիճակի, բաժանվում է աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին ներառում են՝ շատ աղքատներ և նրանց թվում՝ ծայրահեղ աղքատներ: Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին զմեռ, շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին զմեռ, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր

<sup>1</sup> [http://www.armstat.am/file/article/poverty\\_2017\\_a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf)

է եղել աղքատության պարենային գծից: 2016թ. աղքատության մակարդակը կազմել է 29.4%՝ 2015թ. համեմատ արձանագրելով աղքատության մակարդակի նվազում միայն 0.4 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ երկրի տասը բնակչից մոտ երեքն ամսական 40867 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր են գտնվել: Աղքատության մակարդակը զգալիորեն տատանվում է ըստ մարզերի (Հայաստանը բաժանված է 10 վարչական տարածքների և ք. Երևանի): Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքները վկայում են, որ տնտեսական աճի ազդեցությունը մարզերում աղքատության կրճատման տեսանկյունից հավասարաչափ չի եղել: Աղքատության մակարդակն առավել բարձր է սահմանամերձ, գյուղատնտեսության համար ոչ նպաստավոր պայմաններ ունեցող, ինչպես նաև քաղաքային բնակչության գերակշռություն ունեցող մարզերում:



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Համաշխարհային զարգացման ցուցանիշներ

**Գծապատկեր 2. Աղքատության մակարդակը և տնտեսական աճը 2008-2016թթ.<sup>1</sup>**

Ըստ ԱՎԾ-ի հաշվարկների՝ աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 71.4 մլրդ<sup>2</sup> դրամ կամ ՀՆԱ-ի 1.4 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Իսկ ար-

<sup>1</sup> <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=2&Topic=11>

<sup>2</sup> [http://www.armstat.am/file/article/poverty\\_2016a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf)



դեն ծայրահեղ աղքատության վերացման համար կպահանջվի 1.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0.04 %-ը՝ հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն:

Աղքատության խնդիրը միշտ կապված է քաղաքական խնդիրների հետ: Քաղաքական լուծման արդյունք են ամենից առաջ այս կամ այն պաշտոնապես սահմանված աղքատության գիծը և հասարակության մեջ ճանաչված սոցիալական չափանիշը, որի հետ համեմատությունը թույլ է տալիս չափել սոցիալական խմբերի և անհատների բարեկեցությունը: Աղքատության հաղթահարումը նույնպես ամուր կապված է քաղաքական որոշումների հետ: Աղքատության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ, որոնցից հատկանշական են կրթությունն ու մասնակցությունն աշխատանքի շուկայում: Բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար աղքատ լինելու հավանականությունն ավելի փոքր է: Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակն ամենացածրն է. այն մոտ 1.8 անգամ ցածր է 16-ից բարձր տարիքի բնակչության միջին հանրապետական աղքատության մակարդակից, և համապատասխանաբար՝ 3.5 և 2.8 անգամ ցածր, քան տարրական և ցածր, ինչպես նաև թերի միջնակարգ կրթություն ունեցողների աղքատության մակարդակը:

*Աղյուսակ 1*

**ՀՀ-ում աղքատությունը ըստ կրթության մակարդակի, 2008 և 2015 թթ.  
(16 և բարձր տարիքի բնակչություն)<sup>1</sup>**

(տոկոսներով)

Կրթ. մակարդակ	2008		2016		
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ը համեմատվող բնակչության մեջ
Տարր. և ցածր	4,2	36,1	6,9	54,4	1,8
Թերի միջն.	3,2	40,1	5,2	43,5	9,2
Միջն. ընդ.	1,7	30,2	1,8	33,4	44,1
Միջն. մասնագիտական	1,0	21,9	1,7	24,6	22,9
Բարձրագույն	0,4	14,7	0,3	15,7	22,0
Ընդամենը	1,6	26,6	1,8	28,8	100

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2008 և 2016թթ.


<sup>1</sup> ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ. [http://www.armstat.am/file/article/poverty\\_2016a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf), էջ 55:

Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում այլ կրթության մակարդակ ունեցողների համեմատ ծայրահեղ աղքատության մակարդակն ամենացածրն է ինչպես 2016թ.-ին, այնպես էլ 2008թ.-ին: Միջնակարգ ընդհանուր կրթությամբ անձինք աղքատ բնակչության շրջանում կազմում են ամենամեծ խումբը (51%): 16-ից բարձր տարիքի բնակչության կազմում այս խումբը դժվարությունների է հանդիպում աշխատանք փնտրելիս:

Խոցելիության տեսանկյունից աղքատության առավել բարձր ռիսկի առաջ են կանգնած այն տնային տնտեսությունները, որոնք գլխավորում են կանայք, որոնք մեծ են և ունեն 2 և ավելի երեխաներ, ինչպես նաև տնային տնտեսությունները, որոնք գլխավորում են գործազուրկները, ծերերը, հաշմանդամները և կրթություն չունեցող կամ ցածր մասնագիտական հմտություններ ունեցող անձինք: Կրթամակարդակը, առողջական վիճակի հետ միասին կարելի է համարել այն կարևոր գործոններից, որոնք պայմանավորում են տնային տնտեսության խոցելիության աստիճանը: Աղքատության կրճատման դինամիկան վկայում է, որ այդ կրճատումն առավել նկատելի է եղել բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող 16 և բարձր տարիքի անձանց շրջանում: Քանի որ աղքատության պատճառները հիմնականում կապված են տնտեսական, քաղաքական և սոցիալական գործոնների հետ, աղքատության նվազեցմանն ուղղված ազգային քաղաքականությունները կենտրոնացած են տնտեսական զարգացման վրա՝ նպատակաուղղված լինելով բարձրացնելու բնակչության աղքատ խմբերի կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանվածության մակարդակը, ինչպես նաև բարելավելու իրավիճակն աշխատաշուկայում, որոնց միջոցով հնարավոր կլինի պայքարել սոցիալական անապահովության և անհավասարության դեմ:

Հատկապես աշխատանքի բացակայության պարագայում մեծանում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը:

Երբ բնակչության ծայրահեղ աղքատությունը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, ծայրահեղ աղքատների մեծ մասը քաղաքաբնակներ են: Նման ցուցանիշները ցույց են տալիս, որ բնամթերային գյուղատնտեսությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում: Մակայն, հարկ է նշել, որ գյուղաբնակ աղքատները հիմնականում զբաղված են գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված է նրանց միայն շատ չնչին մասը:



Աղբյուր՝ ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ.

**Գծապատկեր 3. ՀՀ-ում աղբատությունը, ըստ կրթության մակարդակի, 2008 և 2015 թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն)**

Չնայած մայրաքաղաք Երևանում աղբատության մակարդակն ամենացածրն է երկրում, այն ավելի շատ է տուժել գլոբալ տնտեսական ճգնաժամից, քան Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերը:

**ՀՀ-ում աղքատության ցուցանիշները 2008 և 2016 թթ.<sup>1</sup>**



(տոկոսներով)

	2008			2016		
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Աղքատների %,ընդ. առկա բնակ. մեջ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Աղքատների %,ընդ. առկա բնակ. մեջ
Քաղաքային բնակ.	1,9	27,6	64,9	2,0	28,8	63,6
Ք. Երևան	1,1	20,1	33,9	1,9	24,9	33,3
Այլ քաղաքներ	2,8	35,8	31,0	2,1	33,2	30,3
Գյուղ. բնակ	1,2	27,5	35,1	1,4	30,4	36,4
Ընդամենը	1,6	27,6	100	1,8	29,4	100

Աղբյուր՝ SSԿԱՀ 2008 և 2016թթ.

Տնտեսական ճգնաժամի տարիներին աղքատության զանգվածային աճի պատճառները, ի տարբերություն խորհրդային ժամանակաշրջանի, տնտեսական բնույթ ունեին և պայմանավորված էին եկամուտների աննախադեպ անկումով: Այդ անկումը, բերելով բնակչության համատարած աղքատացման, կտրուկ ավելացրեց նաև եկամտային անհավասարությունը: Տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը և դրանց զուգորդած տրանսպորտային շրջափակումը վատթարացրին բնակչության սոցիալ-տնտեսական և կենցաղային պայմանները՝ դրդելով հարյուր հազարավոր մարդկանց արտագաղթելու՝ օտար երկրներում աշխատանք, համեմատաբար լավ ապրուստ և սոցիալական պաշտպանվածություն որոնելու նպատակով: Աղքատության հաղթահարման տեսակետից կարևոր նախապայման է կայուն բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումը: Տնտեսական աճի խրախուսման քաղաքականության աղքատության կրճատման հետ կապված հիմնական ուղղությունները կհանդիսանան ինքնազբաղվածության և փոքր բիզնեսի խրախուսումը և գործարար միջավայրի բարելավումը: Աղքատության հաղթահարման համար կարևոր նշանակություն ունի պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը կառավարման բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և դրանց հետևողական իրականացումը:

<sup>1</sup> [http://www.armstat.am/file/article/poverty\\_2017\\_a\\_7.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_7.pdf)



Աղբյուր՝ ՏՏԿԱՀ 2008 և 2016թթ.

**Գծապատկեր 4. ՀՀ-ում գյուղական և քաղաքային բնակչության աղքատության մակարդակը 2008 և 2016 թթ.<sup>1</sup>**

<sup>1</sup> [http://www.armstat.am/file/article/poverty\\_2017\\_a\\_7.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2017_a_7.pdf)

## ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

### ԴՈՆԱՐԱ ՀՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳՍԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

**Համառոտագիր:** Աղքատությունը համաշխարհային հանրության առաջ հառնած կարևորագույն հիմնախնդիրն է: Այն անմիջականորեն ազդում է յուրաքանչյուր մարդու կյանքի այնպիսի հիմնարար բնորոշիչների վրա, ինչպիսիք են առողջական վիճակն ու կրթության մակարդակը: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2017 զեկույցի՝ Հայաստանում աղքատ է բնակչության 29,4%-ը, 1,8 %-ը ծայրահեղ աղքատ է, 8,0%-ը՝ շատ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների), իսկ մնացած 19,6%-ը ուղղակի աղքատ է:

***Բանալի բառեր.** աղքատություն, բացարձակ և հարաբերական աղքատություն, տնտեսական աճ, սոցիալ-տնտեսական նկարագիր, կրթություն, գյուղական և քաղաքային բնակչություն, տնտեսական ճգնաժամ:*

## КАРТИНА БЕДНОСТИ В АРМЕНИИ

### ДОНАРА ОВИКОВНА ГРИГОРЯН

*экономист первой категории Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** Бедность является самым важным вопросом, стоящим перед мировым сообществом. Это напрямую влияет на основные характеристики жизни каждого человека, такие как здоровье и образование. Согласно Национальной статистической службы Армении, докладу 2017 года, социальная картина бедности Армении следующая: 29,4% населения в Армении бедны, 1,8% крайне бедны, 8,0% очень бедны (без крайней нищеты), а остальные 19,6% просто бедные.

***Ключевые слова:** Бедность, абсолютная и относительная бедность, экономический рост, социально-экономическое положение, образование, сельское и городское население, экономический кризис.*

## POVERTY OVERVIEW IN THE REPUBLIC OF ARMENIA

**DONARA HOVIK GRIGORYAN**

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Poverty is the most vital issue that the global community is facing. Poverty directly affects fundamental characteristics of every person's life, such as health and education. According to the Social Snapshot and Poverty in Armenia 2017 Report released by the NSS of the Republic of Armenia on Armenia's social stance and poverty, 29.4% of the population is poor in Armenia, 1.8% is extremely poor, 8.0% is very poor (excluding extreme poverty) and the remaining 19.6% is poor.

**Keywords:** *Poverty, absolute and relative poverty, economic growth, socio-economic profile, education, rural and urban population, economic crisis.*

## **ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԶՈՍՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՈՒ ԴՐԱԿԱՆ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Արդի ժամանակներում աշխատուժի միջազգային միգրացիան ստացել է գլոբալ բնույթ՝ ընդգրկելով գրեթե բոլոր երկրներն ու մայրցամաքները, հասարակության սոցիալական բոլոր շերտերը: Համաշխարհային տնտեսության աշխատանքային ռեսուրսները բնութագրող հիմնական ցուցանիշներից մեկը աշխարհի բնակչության թվաքանակն է: 2018թ. դրությամբ աշխարհի բնակչությունը կազմում է 7.6 մլրդ մարդ, այն դեպքում, երբ XX դարի կեսերին ընդամենը 2.5 մլրդ էր<sup>1</sup>: Գրականության մեջ կարելի է հանդիպել աշխարհի բնակչության աճի և ապագայի վերաբերյալ հետաքրքիր թվաբանական կանխատեսումների: Սակայն, ակնքն է, որ աշխարհի բնակչությունը տեղաբաշխված է անհավասարաչափ: Հյուսիսում ապրում է «ոսկե միլիարդը», Հարավում՝ վեց անգամ ավելին: Միգրացիան միշտ եղել է պատմության կարևորագույն մասը, իսկ ներկա ժամանակներում առավելապես, մանավանդ որ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը արտոնում է յուրաքանչյուրի ազատ տեղաշարժի իրավունքը<sup>2</sup>: Այդ իմաստով XXI դարը կարելի է համարել «գլոբալ միգրացիայի դարաշրջան»<sup>3</sup>:

Այդ է արտահայտում միջազգային միգրացիայի դինամիկ պատկերի վիճակագրությունը. 1960-1965թթ. միգրանտների թիվը 3 մլն-ից հասավ 17.4 մլն մարդու<sup>4</sup>, 1990թ. այն կազմել է 156 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 2.9%-ը, 2000-ին՝ 173 մլն մարդ, որը նույնպես կազմում էր աշխարհի բնակչության 2.9%-ը, իսկ 2005թ.՝ մոտ 191 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 3%-ը, 2010-ին՝ մոտ 212 մլն մարդ<sup>5</sup>, 2011թ. տվյալներով, միգրանտների թիվը կազմել է 214 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 2.9%-ը:

<sup>1</sup> <http://www.worldometers.info/world-population/>

<sup>2</sup> <http://www.un.org/en/universal-declaration-human-rights/>

<sup>3</sup> <https://www.iom.int/world-migration>


<sup>4</sup> Демоскоп Weekly “По среднему варианту новейшего прогноза ООН, население мира составит к середине века 9,3 миллиарда человек, а к его концу - 10,1 миллиарда человек“ Шербакова Е. N 467-468, 23 мая- 5июня 2011 г.

<sup>5</sup> International Migration Report 2011: A Global Assessment, Department of Economic and Social Affairs, Population Division, United Nations, December 2011, p. 8.



չության 3.1%-ը, իսկ 2013թ.՝ 232 մլն մարդ<sup>1</sup>, 2015թ.՝ 248, իսկ 2017թ.՝ 258 մլն<sup>2</sup>: Հարկ է նկատել, որ կապված ռազմաքաղաքական, սոցիալական և մի շարք այլ շարժառիթների հետ, վերջին ժամանակներում Սիրիայից, Իրաքից, Աֆղանստանից և աֆրիկյան մի քանի պետություններից միգրացիոն հոսքերը հետզհետե մեծանում և ստանում են զանգվածային բնույթ: Վերջինս թույլ է տալիս միջազգային տնտեսական հարաբերություններում այն գնահատել որպես ժողովրդագրական և տնտեսական երևույթ, որը տարբեր գործոնների ազդեցությամբ փոխում է ինչպես աշխարհագրական ուղղությունները, այնպես էլ տեղաշարժի նպատակները:

Տարիներ շարունակ միգրացիոն հոսքերի միտումները գրեթե չեն փոխվում (տե՛ս գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Միջազգային միգրանտների թվաքանակը ըստ աշխարհամասերի, 2000 և 2017թթ., մլն մարդ<sup>3</sup>**


Ներկայացված գծապատկերից երևում է, որ ն՝ 2000, ն՝ 2017 թթ. միգրացիոն հոսքերն առավելապես հոսքերը ուղղվում են Ասիա և Եվրոպա աշխարհամասեր և ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2017թ. 2000թ. համեմատությամբ դեպի Ասիա միգրացիոն հոսքը ավելի արագ է աճել, քան Եվրոպա աշխարհամաս՝ 49.2%-ից հասնելով 79.9%-ի: Անհրաժեշտ է նշել, որ բնակչության ընդհանուր թվում միգրանտների ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արևմտյան Ասիայի երկրները՝ Քաթար՝ 87%,

<sup>1</sup> International Migratinon Report 2013, United nations, Economiv & Social Affairs, p. 1.

<sup>2</sup> International Migration Report 2017: Highlights Key Facts, p. 2.

<sup>3</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով International Migration Report 2017: Highlights Key Facts, p. 4.

ԱՄԷ՝ 70%, Քուվեյթ՝ 69%, Հորդանան՝ 46% և Պաղեստին 44%<sup>1</sup>: Ընդ որում միգրանտների 64%-ը բնակվում է աշխարհի բարձր եկամուտ ունեցող երկրներում: Ինչպես նկատում ենք, 2017թ.-ին 2000թ.-ի համեմատությամբ միջազգային միգրանտների հոսքը դեպի բարձր եկամուտներ ունեցող երկրներ աճել, իսկ դեպի միջին եկամուտներ ունեցող երկրներ՝ նվազել, ինչը ենթադրում է բնակչության առավել բարեկեցիկ ապրելու ձգտումը (տե՛ս գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Միջազգային միգրանտները ըստ եկամուտների խմբերի 2000 և 2017թթ. (%)<sup>2</sup>**

Անհրաժեշտ է նշել, որ ամենաշատ ներգաղթյալներ ընդունող երկիրը Եվրոպական միության 28 երկրներից 2016թ. եղել է Գերմանիան՝ 1029.9 մլն մարդ, երկրորդ տեղում Մեծ Բրիտանիան է՝ 589.0 մլն, իսկ 3-րդ տեղում Իսպանիան է՝ 414.7 մլն մարդ, այնուհետև Իտալիան՝ 300.8 մլն մարդ<sup>3</sup>: Պատճառներն ինչպես քաղաքական ու տնտեսական են, այնպես էլ ժողովրդագրական և սոցիալական: Եվրոպական երկրների ժողովրդագրական իրավիճակը անընդհատ վատթարանում է, արձանագրվում է բնակչության ծերացման աճի միտում (տե՛ս աղյուսակ 1):

<sup>1</sup> International Migration Report 2015: Highlights, United Nations 2016, p. 5.

<sup>2</sup> International Migration Report 2017: Highlights Key Facts, p. 4.

<sup>3</sup> [http://ec.europa.eu/eurostat/statisticsexplained/index.php/Migration\\_and\\_migrant\\_population\\_statistics](http://ec.europa.eu/eurostat/statisticsexplained/index.php/Migration_and_migrant_population_statistics)

Ժողովրդագրական միտումներ. ծերացում 2000-2050թթ.(%-)<sup>1</sup>

	60 տարեկանից բարձր բնակչություն (ընդհանուր բնակչության մեջ %)					80 տարեկանից բարձր բնակչություն (ընդհանուր բնակչության մեջ %)				
	2000	2005	2010	2030	2050	2000	2005	2010	2030	2050
Գերմանիա	23.2	24.9	26.0	36.5	39.5	3.5	4.3	5.1	8.0	14.1
Իտալիա	24.4	25.2	26.6	34.8	39.1	4.3	5.1	6.0	8.8	13.4
Իսպանիա	21.6	21.6	22.4	30.1	37.5	3.8	4.3	5.0	6.8	11.3
Բոսնիա և Հերցեգովինա	16.6	17.7	19.1	29.8	39.2	1.2	1.8	2.4	4.3	9.1
Նիդեռլանդներ	18.2	19.2	21.9	30.8	31.3	3.2	3.6	3.9	6.8	10.5
Ֆրանսիա	20.7	20.9	23.2	30.4	32.6	3.8	4.6	5.5	7.9	11.3
Բելգիա	22.0	22.0	23.4	30.7	32.3	3.6	4.3	5.0	7.1	10.8
Սլովենիա	19.3	20.4	22.4	31.4	37.0	2.3	3.1	4.1	6.4	10.5
Ավստրիա	21.7	22.9	24.3	32.5	35.8	3.5	4.3	4.8	7.1	12.1
Մեծ Բրիտանիա	20.8	21.3	22.7	27.2	28.8	4.1	4.5	4.7	6.2	8.6

Ինչպես նշվում է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից հրատարակված Միգրացիայի մասին համաշխարհային զեկույցում<sup>2</sup>, աշխարհը կարող է հայտնվել անակնկալ իրավիճակում, եթե պետությունները, միջազգային կազմակերպություններն ու քաղաքացիական հասարակությունը համատեղ չաշխատեն ներդրումներ կատարելու արձագանքման կարողությունների ուղղությամբ:

Ու թեև տարեկան հարյուրավոր միլիոնների հասնող դոլարներ են ծախսվում միգրացիայի արդյունավետ կառավարման հարցերում պետությունների կարողությունների ամրապնդման ուղղությամբ, սակայն ներկայիս վիճակին և ձևավորվող միգրացիոն խնդիրներին ու հնարավորություններին ուղղված արձագանքը սովորաբար կարճաժամկետ է, մասնակի կամ անհավասարաչափ: Մա խոր ազդեցություն է թողնում մարդկանց տեղաշարժի, սոցիալ-տնտեսական զարգացման վրա, ընդ

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով «Социальное обеспечение в мире. Обеспечение охвата во время и после кризиса 2010-2011» Група технической поддержки по вопросам достойного труда и бюро МОТ для стран Восточной Европы и Центральной Азии, -М.:МОТ, 2011, с.140.

<sup>2</sup> International Migration and Development: Contributions and Recommendations of the International System, Coordinated by UNFPA and IOM, Valerie Hagger, IOM, Geneva, 2013, p 19.

որում ինչ-որ կերպ ներգործում է ամեն մի երկրի վրա: Եթե միջազգային միգրանտների թիվը, որը 2011թ. կազմել է 214 մլն, շարունակի աճել նույն տեմպերով, ինչ վերջին 20 տարիների ընթացքում, ապա 2050թ. կկազմի 405 մլն<sup>1</sup>: Այս կտրուկ աճի պատճառներից մեկը կլինի զարգացող երկրներում աշխատուժի զգալի աճը, որը 2005թ. կազմում էր 2.4 մլրդ մարդ, իսկ 2040թ. կհասնի 3,6 մլրդի՝ շեշտադրելով աշխատանքի առաջարկի ու պահանջարկի համաշխարհային անհամապատասխանությունը<sup>2</sup>:

Միգրացիայի, մասնավորապես աշխատուժի միջազգային միգրացիայի հետևանքների գնահատականը միանշանակ չէ: Աշխատանքային միգրացիան իր հետևանքների մեջ սրում է այն հարցը, թե արդյո՞ք էմիգրանտները հետագայում վերադառնալու են հայրենիք, թե՞ ոչ: Եթե պատասխանը դրական է, ապա աշխատանքային միգրացիայի հետևանքները դրական են ինչպես արտահանող, այնպես էլ ներմուծող երկրների համար: Անվերադարձ միգրացիան իր հետևանքների ուսումնասիրել և գնահատել: Այնուամենայնիվ, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, աշխատուժի միգրացիան անհամեմատ ծագման և նպատակակետ երկրների տնտեսությունների վրա թողնում է ինչպես *դրական*, այնպես էլ *բացասական հետևանքներ*: Վիճակագրորեն գնահատել իմիգրացիայի ազդեցությունը նպատակակետ երկրի տնտեսական աճի վրա բավական դժվար է, քանի որ, ըստ առանձին ոլորտների և ճյուղերի, իմիգրանտների վարձատրության և վերջնական արդյունքի մեջ աշխատավարձի մակարդակի մասին տվյալները գործնականում չեն ուսումնասիրվում: Սակայն օտարերկրյա աշխատուժի օգտագործման գնահատականը կարելի է տալ ըստ տնտեսության վրա թողած ազդեցության: Այդ առումով, եթե նպատակակետ երկիրը ընդունում է բարձրորակ աշխատուժ, ապա վերջինս իր տնտեսության մեջ կարող է ունենալ միանշանակ դրական երկարաժամկետ հետևանք, որովհետև նրա օգտագործումը մի կողմից ավելացնում է երկրի ՀՆԱ-ն, մյուս կողմից էլ բարձրորակ աշխատուժը «վերափոխվում» է առարկայացած նյութական կապիտալի, որը մասնակցում է բազմաթիվ արտադրապրոցեսների: Սակայն հնարավոր է նաև այն տարբերակը, երբ երկիրն ընդունում է ուղղակի միգրանտներ, ովքեր բարձրորակ աշխատուժ չեն ներկայացնում: Այս դեպքում էլ կարևոր է նաև այն հանգամանքը, որ իմիգրանտները կատարում են աշխատանքներ այն ոլորտներում, որտեղ խիստ զգացվում է աշխատուժի պակաս: Առաջին հերթին դա վերաբերում է ցածր վարձատրությամբ, ոչ որակավորված,

<sup>1</sup> GLOBAL MIGRATION TRENDS: AN OVERVIEW: IOM, Migration research division - desember 2014, p 7.

<sup>2</sup> <http://archive.ankakh.com/?p=74601>

դժվար և վտանգավոր աշխատանքներին, որոնք տեղացիները հրաժարվում են կատարել (հանքարդյունաբերություն, շինարարություն, քիմիական արդյունաբերություն և այլն): Այսպիսով, արտադրելով և սպառելով տեղական արտադրանք, վճարելով հարկեր, կատարելով խնայողություններ՝ միգրանտներն ունենում են բավականին նշանակալի ազդեցություն ընդունող երկրի տնտեսության զարգացման վրա: Գործնականում երկրներն ավելի շատ հակված են ընդունել որակյալ աշխատուժ, քանի որ, ինչպես վկայում է փորձը, ցածրորակ աշխատուժի պահպանման հետ կապված խնդիրներն ավելի շատ են: Նրանք տարբեր հարցերով ավելի հաճախ են դիմում պետական հաստատություններին, ինչը լրացուցիչ ծախսեր է պահանջում<sup>1</sup>:

Միգրանտները միաժամանակ կարևոր դեր են խաղում նաև նպատակակետ երկրների ժողովրդագրական խնդիրների լուծման հարցում: Եվրոպական երկրները համարվում են միգրացիոն հոսքեր ընդունող առավել ակտիվ երկրներ, և նրանց բնակչության ժողովրդագրական կազմը միտված է ծերացման, մասնավորապես Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Կանխատեսվում է, որ մինչև 2050թ. ԵՄ բնակչությունը կկրճատվի 12%-ով՝ կազմելով աշխարհի ամբողջ բնակչության 9%-ը 13%-ի փոխարեն, իսկ ԱՄՆ-ինը 4% է 5%-ի փոխարեն: Այժմ ԵՄ ամեն 6-րդ բնակիչը 65 տարեկանից բարձր է, 2020թ. կլինի ամեն 5-րդը, իսկ 2050թ. 50 տարեկանից բարձր բնակչության կեսը կկազմի ամբողջի կեսը: Այնինչ մարդկանց 30-45%-ը 55-64 տարեկանում դուրս են գալիս աշխատուժի շուկայից, իսկ 65-69 տարեկանների միայն 10%-ն է աշխատում, ինչը բնականաբար կրճատում է տնտեսապես ակտիվ բնակչության քանակը: Այսպիսով, ԵՄ բնակչության ծերացումը արդեն 2040թ. կարող է հանգեցնել նրան, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կրճատվի 18%-ով:

ՏՀԶԿ անդամ-երկրներում արդեն XXI դարի առաջին տասնամյակում աշխատունակ բնակչության աճի տեմպերը նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել են 0.7%-ից մինչև 0.5%-ի<sup>2</sup>: Այստեղ տեղին է անդրադառնալ ՄԱԿ-ի կանխատեսումներին, ըստ որոնց՝ 2000-2050թթ. զարգացած երկրներում բնակչության թվաքանակի, հատկապես նրա տնտեսապես ակտիվ մասի պահպանման համար անհրաժեշտ է էական փոխհատուցող նետոտ իմիգրացիա: Որպեսզի 2050թ. Եվրամիության բնակչության թվաքանակը պահպանվի 2000թ. մակարդակի վրա, անհրաժեշտ է տարեկան ընդունել 949 հազար օտարերկրացիներ, տնտեսապես

<sup>1</sup> Castles S. “International migration at the beginning of the twenty-first century”, UNESCO 2005, Blackwell Publishers, p 5.

<sup>2</sup> OECD Employment Outlook, Paris, 1999, p. 15.

ակտիվ բնակչության թվաքանակի պահպանման համար անհրաժեշտ է 1.4 մլն, իսկ տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության միջև հարաբերակցության նվազեցումը կանխելու համար՝ 12.7 մլն օտարերկրացիներ<sup>1</sup>:

Նպատակակետ երկրների համար միգրանտներին ընդունելն ունի նաև *բացասական* հետևանքներ: Ներգաղթից շահում են միայն գործատուները՝ ունենալով էժան և որակյալ աշխատուժ, մինչդեռ տեղացի աշխատողները կորցնում են իրենց աշխատանքը, որը լրացուցիչ լարվածություն է առաջացնում հասարակության մեջ<sup>2</sup>: Ինչպես նաև մեծ թվով միգրանտների ներգրավումը տնտեսության առանձին ճյուղում և նրանց երկարատև օգտագործումը բոլոր ճյուղերը կախվածության մեջ են դրել միգրանտների աշխատանքից: Այդպիսի ճյուղերից են շինարարությունը, առևտուրը, ծառայությունների ոլորտը և այլն: Միգրանտների ներհոսքը տեղական բնակչության դժգոհությունն է առաջացնում, քանի որ աշխատուժի ազգային շուկայում տեղի է ունենում գների նվազեցում: Օտարերկրյա աշխատուժի նկատմամբ պահանջարկը բարձրանում է, քանի որ միգրանտները համաձայն են աշխատելու ավելի ցածր վարձատրությամբ: Սա բերում է աշխատատեղերի կրճատման, գործազրկության աճի և ընդհանուր առմամբ վատթարացնում է դրությունը աշխատուժի ազգային շուկայում: Աշխատուժի միգրացիայի բացասական հետևանքներից առավել սուր են իմիգրանտների նկատմամբ տեղական բնակչության անհանդուրժողականությունը, իմիգրանտների ադապտացման գործընթացները:

Այժմ անդրադառնանք *ծագման երկրների տեսանկյունից* միջազգային միգրացիայի դրական և բացասական հետևանքներին:

Իբրև դրական հետևանքներ միգրանտները ծագման երկրի տնտեսության վրա ի հայտ են գալիս հետևյալում. գործազրկության բարձր մակարդակի դեպքում արտագաղթի հետևանքով սոցիալական լարվածությունը թուլանում է, բնակչության թվաքանակի անկումը տանում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճին, իսկ որ ամենակարևորն է, մեծանում է երկրի մասնավոր դրամական փոխանցումների ներհոսքը: Վերջինս իր հերթին կանխում է բնակչության կենսամակարդակի անկումն ու հետագա միգրացիան: Հարկ է նշել, որ ծագման երկրների տնտեսության վրա օտարերկրյա մասնավոր փոխանցումները ոչ միայն ունենում են երկարաժամկետ արդյունք, այլ կախված նախկինում էմիգրացվածների որակական կազմից, միգրացիայի ժամկետներից և ժամանման երկրի տնտե-

<sup>1</sup> Revue d' economic politique, 2001, N4, p. 523.

<sup>2</sup> Stalker P., Workers Without Frontiers: The Impact of Globalization on International Migration. Boulder 2008, 1 p 113.

ասկան զարգացման մակարդակից, միգրանտի կարգավիճակից, առաջ են բերում տարբեր ազդեցություններ: Մասնավորապես այլ երկրներում աշխատելը էմիգրանտներին հնարավորություն է տալիս ստանալու մասնագիտական նոր գիտելիքներ, բարձրացնելու իրենց որակավորումը: Առանց նպատակակետ երկրների կողմից կատարվող ծախսերի էմիգրանտներն իրենց հետ հայրենիք են բերում նորույթներ, ներդնում են նոր տեխնոլոգիաներ, աշխատանքի կազմակերպման առաջատար մեթոդներ, նվազում են դոնոր երկրների կրթության, առողջապահության և սոցիալական բնույթի այլ ծախսերը, որոնք էմիգրանտների համար կատարում են ծագման երկրի կառավարությունները: Վերադառնալով «հայրենիք»՝ էմիգրանտները բերում են նյութական արժեքներ և խնայողություններ, ներդրումներ են կատարում տնտեսության տարբեր ոլորտներում, զարգացնում առանձին ճյուղեր: Այնուամենայնիվ, կրկին նշենք, որ էմիգրացիոն հոսքերի ձևավորման ընթացքում տեղի է ունենում բարձրորակ մասնագետների արտահոսք, որը միանշանակ բացասաբար է անդրադառնում ծագման երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Ամենակենսունակ արտադրողական ներուժի արտահոսքը խաթարում է երկրի պաշտպանունակությունը, փոխվում են բնակչության ժողովրդագրական կազմն ու կառուցվածքը:

Բնակչության միգրացիան ակնհայտորեն ունի նաև շոշափելի ժողովրդագրական և սոցիալական բացասական հետևանքներ: Այն անմիջականորեն ազդում է ծագման և ընդունող երկրների բնակչության թվաքանակի, էթնիկական, սեռատարիքային կազմերի վրա: Ծագման երկրների, ինչպես նաև ՀՀ համար, այն ունի հետևյալ բացասական հետևանքները.

- Ժողովրդագրական, երբ փոխվում է բնակչության ժողովրդագրական կազմը, նվազում է վերարտադրողական տարիքի անձանց բացարձակ թիվը, առաջանում է սեռերի հարաբերակցության խնդիրներ, ինչի արդյունքում ի հայտ է գալիս վերարտադրության գործընթացների բարդացում, արագանում է բնակչության ծերացման գործընթացը:

- Տնտեսական, երբ «ուղեղների», որակյալ աշխատուժի, կապիտալի անկանոն արտահոսքի հետևանքով թուլանում է երկրի գիտական, ստեղծագործական և տնտեսական ներուժը: Ներքին աշխատաշուկայում ի հայտ է գալիս պահանջարկի և առաջարկի միջև անհամապատասխանության խորացում:

- Սոցիալական, երբ արտագնա աշխատանքային միգրանտների՝ հայրենիքից բացակայության պատճառով նկատվում են ամուսնալուսանկարի հարաբերությունների համակարգի խաթարում, աճող սերնդի

դաստիարակության և սոցիալական խնդիրների սրում, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու հավանականության բարձրացում և ազգաբնակչության առողջական վիճակին սպառնացող խնդիրներ: ՀՀ քաղաքացիները, հայտնվելով արտերկրում, ենթարկվում են նաև ազգային, կրոնական հիմքերով բռնությունների:

Այսպիսով, միջազգային միգրացիան անընդհատ աճի միտում ունի և առավելապես ասիական երկրներում իր հիմքում ունենալով և՛ տնտեսական, և՛ քաղաքական պատճառներ: Միջազգային միգրացիայի դրական և բացասական հետևանքները նպատակակետ և ծագման երկրների համար բազմազան են և բազմաբնույթ:

Դրական հետևանքի առումով նպատակակետ երկրների համար այն ունի ժողովրդագրական և աշխատանքի շուկայի կառուցվածքի բարելավման միտում, իսկ ծագման երկրների համար՝ տնտեսական, մասնավորապես դրամական հոսքերի ապահովման և սոցիալական խնդիրների լուծման միտումներ: Միջազգային միգրացիայի վերը նշված դրական և բացասական միտումների մեջ երկրներից յուրաքանչյուրը որոշակի քաղաքականությամբ լուծում է իր հարցերը:

## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՈՒ ԴՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

### **ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացված են միջազգային միգրացիայի հոսքերն, ըստ առանձին երկրների և աշխարհագրական տարածաշրջանների: Առանձնակի ուշադրություն է դարձվել եվրոպական երկրների բնակչության ծերացման միտումներին, ինչը ենթադրում է այն, որ ԵՄ ամեն վեցերորդ բնակիչը 65 տարեկանից բարձր է, 2020թ. կլինի ամեն հինգերորդը, իսկ 2050թ. 50 տարեկանից բարձր բնակչության կեսը կկազմի ամբողջի կեսը: Հոդվածում նպատակակետ ու ծագման երկրների տեսանկյունից առավել մանրամասն վերլուծվել և ներկայացվել են միջազգային միգրացիայի բացասական և դրական հետևանքները:

**Բանալի բառեր.** *էմիգրանտ, իմիգրանտ, ծագման երկիր, նպատակակետ երկիր, աշխատանքային միգրացիա, բնակչության ծերացում, համախառն ներքին արդյունք (ՀՆԱ):*



## МЕЖДУНАРОДНЫЕ МИГРАЦИОННЫЕ ПОТОКИ И ИХ НЕГАТИВНЫЕ И ПОЛОЖИТЕЛЬНЫЕ ПОСЛЕДСТВИЯ

**СВЕТЛАНА АРКАДЬЕВНА ДАЛЛАКЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** В статье представлены потоки международной миграции по отдельным странам и географическим регионам. Особое внимание уделено тенденциям старения населения в странах Европы, поскольку каждый шестой житель в европейских странах старше 65 лет, к 2020 г. ожидается, что каждый пятый европеец будет старше 65 лет, а в 2050 году половина всех жителей будут старше 50 лет, что составит уже 50% всего населения. В статье тщательно проанализированы и представлены положительные и негативные последствия международной миграции с точки зрения стран назначения и происхождения.

**Ключевые слова:** *эмигрант, иммигрант, страна происхождения, страна назначения, рабочая миграция, старение населения, валовой внутренний продукт.*

## INTERNATIONAL MIGRATION FLOWS AND THE NEGATIVE AND POSITIVE CONSEQUENCES OF THEREOF

**SVETLANA ARKADI DALLAQYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article presents international migration flows in various countries and geographical regions. Particular attention has been paid to the aging trends in European countries which suggest that every 6<sup>th</sup> EU citizen is currently over 65, every 5<sup>th</sup> will be over 65 by 2020, and the population over 50 will account for the 50% of the population in 2050. The article provides a detailed analysis of the positive and negative consequences of international migration with respect to the country of origin and destination country.

**Keywords:** *Emigrant, immigrant, country of origin and destination country, labor migration, aging population, gross domestic product.*

## **ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Մարդկային կապիտալի որակական հիմնական բաղադրիչը կրթությունն է, կրթական կապիտալը: Այդ պատճառով մարդկային կապիտալի որակական կորուստները նախ և առաջ դրսևորվում են կրթական կապիտալի կորուստների մեջ:

Հայաստանի վիճակագրական տարեգրքերում բնակչության կրթական մակարդակը հետազոտվում է մշակույթի հետ միասին, կրթությունը և մշակույթը դիտարկվում և ուսումնասիրվում են որպես մեկ ամբողջություն, որն այդ մոտեցման փիլիսոփայությամբ իմաստավորված է<sup>1</sup>: 1948 թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»<sup>2</sup> մարդու իրավունքների շարքում կարևոր տեղ է տվել կրթության իրավունքին: Մարդկային զարգացման գործում կրթության դերի հաջորդ վճռորոշ քայլը 1990 թ. Թաիլանդում կայացած «Կրթություն բոլորի համար» միջազգային գիտաժողովն էր, որը կրթությունն արժևորում էր ոչ միայն որպես մարդկային զարգացման կարևոր գործոն, այլ որպես աղքատությունը հաղթահարելու հիմնական ուղի:

Կրթության կարևորությունն ընդգծվում է հասկապես ժամանակակից հասարակությունում, որը թելադրվում է արտադրության նոր կառուցվածքով, տեղեկատվական բնույթի նորագույն տեխնոլոգիաներով, աշխատողների բարձր զարգացած մշակույթով:

Նկատենք, որ Խորհրդային Հայաստանում, 1920 թ. սկսած, կրթությունը մեծ զարգացում ստացավ: Ստեղծվեց կրթական ամբողջական համալիր համակարգ սկսած նախադպրոցական կրթությունից, ներառյալ ասպիրանտուրան և հետբուհական կրթությունը: 1932թ. անցում կատարվեց պարտադիր տարրական կրթության, որը անգրագիտությունը 83%-ից իջեցրեց 16%-ի, իսկ 1960-ական թվականներից աստիճանաբար արմատավորվեց պարտադիր միջնակարգ կրթությունը: Ընդ որում կրթությունն իր բոլոր մակարդակներում պետական էր և անվճար: Դա

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 117-118:

<sup>2</sup> Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Երևան, 1996, էջ 3:

հնարավորություն սովեց երկրում ամբողջովին վերացնելու անգրագիտությունը, որը սոցիալական մեծ նվաճում էր:

Մարդկային զարգացման համաթվի բնակչության կրթության մակարդակի ինդեքսը բնութագրում է չափահաս բնակչության գրագիտությունը, ինչպես նաև տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների տեսակարար կշիռը:


Այդուհանդերձ, անցումային ժամանակահատվածում և դրանից հետո մինչ այսօր էլ Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտում տեղ են գտել բացթողումներ և որոշակի կորուստներ:

Հայաստանի Հանրապետությունում մտահոգող է հանրակրթական համակարգում երեխաների ընդգրկվածության վիճակը:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում առկա են ոչ միայն դպրոցից դուրս մնալու դեպքեր, այլև տարեցտարի աճում են: Այդպես, 2002-2004թթ. դպրոց չհաճախող երեխաների ընդհանուր թիվը կազմել է համապատասխանաբար 1531, 4823 և 7630, իսկ դպրոց չհաճախելու դեպքերի ցուցանիշը՝ 0.3%, 1.0% և 1.6%: Նշված երեք տարիների ընթացքում դպրոց չհաճախելու դեպքերի թվի աճը միջին հաշվով տարեկան կազմել է 250%: Եթե այդ միտումը շարունակվի, ապա ապագան շատ մոայլ կդառնա:

Դպրոց չհաճախելու դեպքերն իրենց արտացոլումն են գտել նաև Հայաստանի Հանրապետության 2001 և 2011 թվականների մարդահամարի արդյունքներում: Այդպես, 2001թ. մարդահամարում արձանագրվել է, որ 2001թ. 108169 տղամարդ չունեին տարրական կրթություն, նրանցից տառաճանաչ չեն եղել 4581-ը: Կանանց մոտ 118264-ը չունեին տարրական կրթություն, նրանցից տառաճանաչ չեն եղել 6329-ը: Ընդ որում՝ կրթական մակարդակները քաղաքի և գյուղի կտրվածքներով էապես տարբերվում են: Քաղաքում 123638 հոգի չի ունեցել տարրական կրթություն, իսկ նրանցից տառաճանաչ չեն եղել 6339-ը, գյուղում տարրական կրթություն չի ունեցել 102815-ը, իսկ նրանցից տառաճանաչ չեն եղել 9864-ը:

Ընդ որում ուշադրության է արժանի մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային և գյուղական բաշխվածությունն ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս, որ անգամ 2011թ. ՀՀ 15 և բարձր տարիքի մշտական բնակչությունը միայն միջնակարգ հանրակրթությամբ ունի բարձր շուրջ 90% ընդգրկվածություն: Ընդգրկվածությամբ երկրորդ տեղում է բարձրագույն և ավելի բարձր կրթական մակարդակը: Այստեղ, սակայն, գյուղական համայնքները շուրջ երեք անգամ զիջում են քաղաքայինին:



**Գծապատկեր 1. Մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային և գյուղական բաշխվածությունն ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի (6 և բարձր տարիքի հազար բնակչի հաշվով)<sup>1</sup>:**

2011թ. մարդահամարը նորից հաստատեց, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքային և հատկապես գյուղական համայնքներում առկա են անգրագետ կամ տարրական կրթություն չունեցող հազարավոր մարդիկ, մի իրողություն, որը հարիւր չէ XXI դարի մարտահրավերներին:

Վերջին տարիների ՀՀ կրթության զարգացման իրավիճակների և միտումների մասին պատկերացում կարող ենք կազմել աղյուսակ 1-ից:

*Աղյուսակ 1*

**ՀՀ կրթության հիմնական ցուցանիշները տարեվերջին<sup>2</sup>**

	2008թ.	2009թ.	2014թ.	2015թ.
Նախադպրոցական հաստատությունների քանակը	628	622	713	714
Դրանցում երեխաներ, 1000 երեխա	53,7	53,9	72,7	72,4
Տոկոսով համապատասխան տարիքի երեխաների թվաքանակից	24,2	23,3	28,7	28,6
Հանրակրթական դպրոցների քանակը	1475	1457	1437	1438
Դրանցում սովորողներ, 1000 մարդ	414,8	392,9	359,6	364,4

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013, էջ 15:

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 120: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, Երևան, էջ 116, 117: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 116, 117:

Հատկապես գյուղերում մտահոգիչ են հանրակրթական դպրոցների քանակի և դրանցում սովորող աշակերտների թվի կրճատման միտումները: 2008-2015թթ. ի ժամանակահատվածում հանրակրթական դպրոցների քանակը 1475-ից նվազել է մինչև 1438, իսկ դրանցում սովորող աշակերտների թիվը՝ 414.8 հազարից մինչև 364.4 հազար: Գյուղական վայրերում վիճակը տագնապալից է կրթության որակական բովանդակության տեսակետից, որը դրսևորվում է աշակերտների թվաքանակի մեծ կրճատմաների պատճառով տարբեր դասարանները միացրած դասավանդելու, ինչպես նաև՝ քիչ թվով աշակերտ լինելու պատճառով որոշ գյուղերի դպրոցները փակելու և երեխաների կրթությունը հարևան գյուղերում կազմակերպելու մեջ:

Հանրակրթական դպրոցներում 2012-2013 ուս. տարում Հայաստանում սովորել է 368.708 աշակերտ, որոնց 48 %-ը աղջիկներ են:

Դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 89.2%: 2015-2016 ուս. տարում աշակերտների թիվը կրճատվել է՝ հասնելով 364.398-ի (աղյուսակ 2), որի հիմնական պատճառներից են բնակչության շարունակվող արտագաղթը և ծնելիության ցածր մակարդակը:

*Աղյուսակ 2*

**Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2015-2016 ուս.տարում<sup>1</sup>**

	Պետական դպրոցներ			Ոչ պետական դպրոցներ			Ընդամենը		
	աղջիկ	տղա	ընդամենը	աղջիկ	տղա	ընդամենը	աղջիկ	տղա	ընդամենը
ք.Երևան	53245	57921	111166	2981	3675	6656	56226	61596	117822
Արագածոտն	8099	9256	17355	-	-	-	8099	9256	17355
Արարատ	15540	16925	32465	-	-	-	15540	16925	32465
Արմավիր	15355	17974	33329	199	203	402	15554	18177	33731
Գեղարքունիք	13435	15698	29133	-	-	-	13435	15698	29133
Լոռի	14249	15376	29625	-	-	-	14249	15376	29625
Կոտայք	16532	18123	34655	42	57	99	14479	16191	30670
Շիրակ	14324	15941	30265	155	250	405	8005	8472	16477
Սյունիք	8005	8472	16477	-	-	-	8005	8472	16477
Վայոց ձոր	2967	3406	6373	-	-	-	2967	3406	6373
Տավուշ	7776	8098	15874	68	51	119	7844	8149	15993
Ընդամենը ՀՀ	169527	187190	356717	3443	4236	7681	172972	191426	364398

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 158:

Մարզային կտրվածքով հանրակրթական դպրոցների ոլորտում ևս առկա են անհամաչափության վիճակներ և դրանց հաղթահարման խնդիրներ: Դա մասնավորապես վերաբերում է դպրոցների հեռավորությանը և, դրանով պայմանավորված, երթևեկության ծախսերի աճին, ժամանակի կորստին և այլ անհարմարությունների: Դպրոցների աշակերտների թվաքանակով առաջին տեղում է մայրաքաղաք Երևանը. 2015-2016 ուս. տարում սովորել է 117822 աշակերտ, ամենափոքրաթիվը Վայոց ձորի մարզի աշակերտներն են՝ ընդամենը 6373:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով, էթե ոչ աղքատ տնային տնտեսություններում ավագ դպրոցներում ընդգրկվածությունը կազմել է 73.0%, ապա աղքատ տնային տնտեսություններում՝ 70.0%, իսկ ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում ընդամենը 51.0%:

Հայաստանի բնակչությունն անգամ 1990-ական թվականների ամենածանր տարիներին կրթության նկատմամբ ունեցած իր գենետիկ որակները չկորցրեց, իր բոլոր հնարավորությունները, խնայողությունները անմնացորդ ներդրեց երեխաների կրթության գործում:

Ուշադրության է արժանի Հայաստանի մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային ու գյուղական բաշխվածությունը: Ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի՝ 6 և բարձր տարիքի հազար բնակչի հաշվով այն ունի հետևյալ պատկերը, «չունի տարրական», «տարրական հանրակրթական», «հիմնական հանրակրթական», «միջնակարգ հանրակրթական» կրթածներով գյուղական բնակչությունը գերազանցում է քաղաքայինին: Դա վերաբերում է հատկապես բարձրլեռնային և սահմանամերձ գյուղերին:

Աղքատության հաղթահարման հիմնական ճանապարհը կրթությունն է, որակյալ կրթությունը, որից, սակայն, գյուղը քիչ է օգտվում և դրանով իսկ դժվարացնում է աղքատությունը հաղթահարելու պայքարը: Ուստի անհրաժեշտ է այդ տիպի գյուղերի համար սահմանել սոցիալական հավաստի արտոնություններ: Անապահով ընտանիքների երեխաների համար կրթության անհասանելիությունն աղքատությունը վերարտադրելու պատճառներից մեկն է: ՀՀ-ում մարդկային կապիտալի որակական կորստի ընդհանուր պատկերն է աղքատությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած 2013թ. մայիսի 16-ի ծրագրում մեծ տեղ է հատկացված կրթության զարգացման համալիր խնդիրների լուծմանը: Ընդ որում դրանք դիտարկվում են ինչպես սոցիալական լուրջ խնդիրների, մասնավորապես աղքատության հաղթահարման հարթակում, այնպես էլ մարդկային կապիտալի և ընդ-

հանրապետ մարդկային զարգացման հարաբերություններում: Եվ դրա հիմքերը կան, քանի որ կրթության ոլորտում հանրակրթության կարևոր ցուցանիշի գծով վերջին տարիներին ունեցել ենք նվաճումներ: Այսպես, 2003թ.-ից սկսած՝ «Բվանտ» վարժարանի սաները միջազգային օլիմպիադաներում նվաճում են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ ինֆորմատիկա, աստղագիտություն, մաթեմատիկա առարկաներից: Ամբողջությամբ վերցրած առաջիկայում ՀՀ կրթական ոլորտի առաջ կանգնած են լուրջ մարտահրավերներ: Հայաստանը 133 երկրների շարքում տարրական կրթությունից բավարարվածության 3.3 ցուցանիշով զբաղեցնում է ընդամենը 81-րդ, իսկ կրթության համակարգի որակի ցուցանիշով՝ 105-րդ տեղը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության ոլորտում մարդկային կապիտալի որակական կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է երեխաների ընդգրկվածությունը հասցնել առավելագույնի, ընդ որում այս ռազմավարությունը իրականացնել ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլև հանրապետության ողջ տարածքում:

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

**ՈԱԶՄԻԿ ԿԱՄՈՅԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հռոկվածում հանրակրթությունը դիտարկվել է որպես մարդկային կապիտալի ձևավորման և զարգացման մեկնակետ, և որակական կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով առաջնահերթ առաջարկվել է նրանցում երեխաների ընդգրկվածությունը հասցնել առավելագույնի ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

**Բանալի բառեր.** *մարդկային կապիտալ, կրթական կապիտալ, որակական կորուստ, հանրակրթություն, մարդկային զարգացում, գիտելիքահենք տնտեսություն, տնային տնտեսություն, երեխաների ընդգրկվածություն:*

## КАЧЕСТВЕННЫЕ ПОТЕРИ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА В СФЕРЕ ОБЩЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ

**РАЗМИК КАМОЕВИЧ ИСААКЯН**

*Младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация** В статье общественное образование рассматривается как начальная точка формирования и развития человеческого капитала. С целью достижения минимума общественных потерий было предложено вовлечение в них детей, что бы достичь до максимума не только в столице Ереване, но и на всей территории Республики Армения.

**Ключевые слова:** *человеческий капитал, образовательный капитал, потеря качества, общественное образование, человеческое развитие, общество основанное на знаниях, домашнее хозяйство, вовлечение детей.*

## THE QUALITATIVE LOSSES OF HUMAN CAPITAL IN THE PUBLIC EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA

**RAZMIK KAMO ISAHAKYAN**, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article views the public education as a starting point for building and developing the human capital, and in order to minimize the qualitative losses, it has been proposed to increase the secondary school enrollment rate not only in Yerevan but also in all marzes of the Republic of Armenia as a priority.

**Keywords:** *Human capital, educational capital, quality loss, public education, human development, knowledge-based economy, household, secondary school enrollment rate.*



## **ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Կայուն էներգամատակարարումը ժամանակակից աշխարհում կարևոր հիմնախնդիր է, որը որոշիչ նշանակություն ունի ցանկացած երկրի կայուն և անվտանգ զարգացումն ապահովելու գործում: Կայուն էներգամատակարարումը սերտորեն կապված է էներգետիկ անվտանգության հայեցակարգի հետ: Էներգիայի միջազգային գործակալության բնորոշմամբ էներգետիկ անվտանգությունը սահմանվում է որպես խելամիտ գներով էներգիայի աղբյուրների անընդհատ ապահովման հնարավորություն<sup>1</sup>: Ներկայումս միջուկային էներգետիկան կիրառվում է աշխարհի 31 երկրներում և իր ներդրումն ունի դրանցից յուրաքանչյուրի էներգետիկ անվտանգության ապահովման գործում:

Ատոմային էներգետիկան հիմնված է ատոմների միջուկների ճեղքման ժամանակ արձակված էներգիայի կլանման և օգտագործման վրա: Այսինքն՝ ատոմային էներգիայի աղբյուրը ատոմի միջուկի ներքին էներգիան է: Գործնականում առավել հաճախ միջուկային ռեակտորի ջերմային էներգիան վերափոխվում է էլեկտրականի, քանի որ վերջինս տեղափոխելիության և ունիվերսալության տեսանկյունից շատ ավելի պրակտիկ էներգիայի տարատեսակ է: Ատոմային էներգետիկայի մասին գիտությունն ուղղված է միջուկային էներգետիկ կայանների անխափան և անվտանգ շահագործմանը: Միջուկային էներգետիկ կայանների շահագործումը բարդ տեխնոլոգիական գործընթաց է, որի անվտանգության անտեսումը կարող է անդառնալի էկոլոգիական և տնտեսական հետևանքներ թողնել:

Միջազգային կազմակերպությունների զեկույցներն ու հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին անշեղորեն աճում է համաաշխարհային էներգետիկ պահանջարկը<sup>2</sup>: Ընդ որում, հաշվի առնելով համաաշխարհային էներգետիկ հաշվեկշռում ածխաջրածնային էներգատեսուրաների գերակշռող դիրքը, ինչպես նաև նման էներգակիրների համաաշխարհային պաշարների սահմանափակ բնույթը, անվիճելի է այն

<sup>1</sup> Էներգիայի միջազգային գործակալության պաշտոնական կայք (<https://www.iea.org/topics/energysecurity/>)

<sup>2</sup> Համաաշխարհային բանկի տվյալներով (<https://data.worldbank.org/indicator/EG.USE.ELEC.KH.PC>)

փաստարկը, որ մարդկությունը վաղ թե ուշ ստիպված է լինելու փնտրել անխաջրածնային էներգառեսուրսների փոխարինողներ: Առավել հեռանկարային ուղղություններից են վերականգնվող էներգիայի աղբյուրներն ու միջուկային էներգետիկան: Ընդ որում, չնայած վերականգնվող էներգետիկայի ոլորտում վերջին տարիների հեղափոխական զարգացումներին՝ մասնագետները, ընդհանուր առմամբ, համակարծիք են, որ ներկայիս տեխնիկատնտեսական պայմաններում միջուկային էներգետիկայից դերակատարումը համաշխարհային մասշտաբներով առնվազն մի քանի տասնամյակ դեռևս պահպանվելու է<sup>1</sup>:

Համաշխարհային էներգետիկ պահանջարկի բավարարման նպատակով նոր միջուկային էներգետիկ ռեակտորների շինարարության, միջուկային էներգետիկ տեխնոլոգիաների զարգացման ու ներդրման աշխատանքները շարունակական բնույթ են կրել: Այսպես, 2017թ. աշխարհում գործում էին 403 միջուկային ռեակտորներ՝ շուրջ 351 ԳՎտ գումարային հզորությամբ, որը կազմում էր էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 16%-ը<sup>2</sup>:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ միջուկային էներգետիկան ակտիվորեն օգտագործվում է զարգացած, էներգետիկ մեծ պահանջներ ունեցող զարգացող և նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում: Աշխարհի բոլոր ռեակտորների կեսից ավելին գտնվում են Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում, և միայն 1/10-րդ մասն է գտնվում զարգացող երկրներում: Շատ զարգացած երկրներում էլեկտրաէներգիայի զգալի մասն արտադրում են հենց ատոմային էլեկտրակայաններում (տե՛ս աղյուսակ 1): Միջուկային էներգետիկայի ոլորտը կարևորագույն դերակատարում ունի Ֆրանսիայում, Լիտվայում, Բելգիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Բուլղարիայում և Շվեյցարիայում, ինչպես նաև այն զարգացած արդյունաբերական երկրներում, որտեղ բնական գազի պաշարները բավարար չեն: Այդ երկրները էլեկտրաէներգիայի 30-80%-ն արտադրում են միջուկային էներգետիկայի հիման վրա: ԱՄՆ-ում, որտեղ կենտրոնացած են աշխարհի բոլոր միջուկային ռեակտորների շուրջ 1/4-ը, դրանք ապահովում են էներգետիկ պահանջարկի միան 1/5-ը:

<sup>1</sup> Ahearne J.F. Prospects for nuclear energy // Energy Economics. 2011. № 4 (33). p. 572–580.

<sup>2</sup> Համաշխարհային միջուկային ասոցիացիայի տվյալներով (<http://www.world-nuclear.org/>):

Միջուկային էներգետիկ հզորություններ շահագործող երկրները, 2017թ.<sup>1</sup>

հհ	Երկիր	Ռեակտորների թիվը	Գումարային հզորությունը, ՄՎտ	Միջին տարիքը
1	Արգենտինա	2	1032	23,2
2	Հայաստան	1	375	37,5
3	Բելգիա	7	5913	37,3
4	Բրազիլիա	2	1884	26,1
5	Բուլղարիա	2	1926	27,8
6	Կանադա	19	13554	34
7	Չինաստան	37	32384	7
8	Չեխիա	6	3930	26
9	Ֆինլանդիա	4	2764	38,3
10	Ֆրանսիա	56	60920	32,3
11	Գերմանիա	8	10799	31,1
12	Հունգարիա	4	1889	32
13	Հնդկաստան	20	5948	20,2
14	Իրան	1	915	5,8
15	Ճապոնիա	5	4198	31
16	Հվ. Կորեա	24	22501	19,6
17	Մեքսիկա	2	1552	25,4
18	Նիդերլանդներ	1	482	44
19	Պակիստան	5	1320	13,9
20	Ռումինիա	2	1300	15,5
21	Ռուսաստան	35	26111	30,4
22	Սլովակիա	4	1814	25,3
23	Սլովենիա	1	688	35,7
24	ՀԱՀ	2	1860	32,6
25	Իսպանիա	7	7121	32,4
26	Շվեդիա	8	8629	36,9
27	Շվեյցարիա	4	2968	40,8
28	Թայվան	5	4448	35
29	Մեծ Բրիտանիա	15	8883	33,4
30	Ուկրաինա	15	13107	28,4
31	ԱՄՆ	99	99868	37,1
32	Ընդամենը	403	351083	29,30

<sup>1</sup> World Nuclear Industry Status Report 2017. Paris, September 2017 – A ©Mycale Schneider Consulting Project, p. 262.

Յուրաքանչյուր երկիր ունի միջուկային էներգետիկայի զարգացման իր նախապատմությունն ու հայեցակարգը, որի հիմքում ընկած են ռազմական, տնտեսական, աշխարհաքաղաքական, ռազմավարական, ազգային անվտանգության, գիտական և այլ գործոններ: Հայաստանը միջուկային ռեակտոր շահագործող 31 երկրներից մեկն է: Չնայած Հայաստանի ատոմային էլեկտրակայանն իր գումարային հզորությամբ ամենափոքրն է աշխարհում, այնուամենայնիվ իր ունեցած դերակատարմամբ այն հանրապետության համար շատ ավելի կարևոր է, քան բազմաթիվ զարգացած երկրների համար իրենց ազգային միջուկային հզորությունները: Այդ առումով միջուկային անվտանգության հիմնահարցերը կարևորագույն նշանակություն են ստանում Հայաստանի դեպքում, քանի որ միջուկային բնույթի լուրջ վթարը կարող է կործանարար ազդեցություն ունենալ:

Գործնականում ցանկացած էներգետիկ տեխնոլոգիա ունի որոշակի վտանգներ, այսինքն՝ մարդկանց և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության հնարավորություն: Այն կարող է արտահայտվել ինչպես էներգետիկ օբյեկտում աշխատող անձնակազմի առողջությանը և կյանքին սպառնացող վտանգի, այնպես էլ շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսքով: Հատկանշական է, որ եթե ավանդական (ածխաջրածնային) վառելիքի վրա հիմնված էներգետիկայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա անընդհատ և անխուսափելի է և արտահայտվում է էներգակրի այրումից առաջացող գազերի և կոշտ թափոնների տեսքով, ապա ատոմային էներգետիկայի, արտառոց իրավիճակների և տեխնոլոգիական ցիկլի պահպանման դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնն է: Այսպես, XIX-XX դարերի ընթացքում ջերմոցային գազերի արտանետումները հանգեցրել են գլոբալ տաքացման և կլիմայի փոփոխության հետևանքների, որոնք լրջագույն ազդեցություն կարող են թողնել երկիր մոլորակի էկոհամակարգի վրա: Միջուկային էներգետիկայի կողմնակիցները պնդում են, որ միջուկային էներգետիկան գրոյական ազդեցություն է թողնում կլիմայի փոփոխության վրա, հետևաբար, դրա հետագա զարգացումը օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Չնայած անվտանգության վերաբերյալ միջուկային ոլորտի մասնագետների հավաստիացումներին՝ միջուկային էներգետիկայի կետարյա պատմության ընթացքում արձանագրվել են բազմաթիվ վթարներ և արտակարգ պատահարներ, որոնց գերակշիռ դեպքերում հնարավոր է եղել խուսափել միջուկային արտանետումներից և շրջակա միջավայրի աղտո-

տումից<sup>1</sup>: Այնուամենայնիվ, միջուկային էներգետիկայի պատմության մեջ առանձնացվում են 3 լուրջ միջադեպեր.

1. 1979թ. մարտի 28-ին ԱՄՆ-ի Տրինայլ-Այլենդի ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկում տեղի ունեցած վթարը<sup>2</sup>:
2. 1986թ. ապրիլի 26-ին ԽՍՀՄ-ի Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարը<sup>3</sup>:
3. 2011թ. մարտի 11-ին Ճապոնական «Ֆուկուսիմա-1» ատոմային էլեկտրակայանի վթարը<sup>4</sup>:

Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանում տեղի ունեցած վթարը ստիպեց լրջորեն վերանայել միջուկային էներգիայի զարգացման հայեցակարգը՝ հաշվի առնելով վերջինիս անվտանգության տեսանկյունը: Ընդ որում՝ վթարի ժամանակագրությունը ցույց տվեց, որ միջուկային օբյեկտներում վթարը կարող է զարգանալ վայրկյանների ընթացքում՝ հնարավորություն չտալով արձագանքելու և միջոցներ ձեռնարկելու համար: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Չեռնոբիլի միջուկային ռեակտորը կառուցվածքային առումով խոցելի էր և թերություններ ուներ, որոնք ժամանակակից ռեակտորներում հաշվի են առնված:

Չեռնոբիլի վթարը լուրջ հետևանքներ թողեց համաշխարհային միջուկային արդյունաբերության վրա: Սառեցվեցին բազմաթիվ նախագծեր և անգամ ընթացքի մեջ գտնվող միջուկային ռեակտորների շինարարություններ, որի արդյունքում մինչև XX դարի վերջ միջուկային էներգետիկայի ոլորտում դիտվում էր հարաբերական անդորր:

XX դարի վերջերից, ածխաջրածնային վառելիքի գների մակարդակի բարձրացմանը զուգահեռ, միջուկային էներգետիկան կարծես վերակենդանացավ, շատ երկրներում ներդրվեցին միջուկային էներգետիկայի զարգացման ազգային հայեցակարգեր: Սակայն 2011թ. Ճապոնիայում ուժգին երկրաշարժին հաջորդած «Ֆուկուսիմա-1» ատոմային էլեկտրակայանի վթարը ցույց տվեց, որ միջուկային էներգետիկայի անվտանգության ապահովումը դեռևս լուծված չէ: Ընդ որում, եթե միջուկային վթար կարող էր արձանագրվել Ճապոնիայի նման և տեխնոլոգիապես զարգացած արդյունաբերական երկրում, ապա այն կարող է տեղի ունենալ ցանկացած այլ երկրում ևս:

---

<sup>1</sup> Wheatley S., Sovacool B.K., Sornette D. Reassessing the safety of nuclear power // Energy Research and Social Science. 2016. (15). p. 96–100.

<sup>2</sup> [https://en.wikipedia.org/wiki/Three\\_Mile\\_Island\\_accident](https://en.wikipedia.org/wiki/Three_Mile_Island_accident)

<sup>3</sup> [https://en.wikipedia.org/wiki/Chernobyl\\_disaster](https://en.wikipedia.org/wiki/Chernobyl_disaster)

<sup>4</sup> [https://en.wikipedia.org/wiki/Fukushima\\_Daiichi\\_nuclear\\_disaster](https://en.wikipedia.org/wiki/Fukushima_Daiichi_nuclear_disaster)

Ի տարբերություն Չեռնոբիլի վթարի՝ ճապոնական վթարն ակնթարթային չէր: Օրեր շարունակ համաշխարհային հանրությունը հետևում էր միջուկային աղետը կանխելուն ուղղված ճապոնացի մասնագետների անգոր պայքարին, որը չբերեց սպասված արդյունքի: Արդյունքում շատ երկրներ (Շվեյցարիա, Ավստրիա, Գերմանիա, Ճապոնիա) կասեցրին միջուկային տեխնոլոգիաների հետագա զարգացման ծրագրերը՝ նկատի ունենալով դրանց անկատարությունը, անվերահսկելիությունը ու վթարների աղետալի հետևանքները:

Այսպիսով, համաշխարհային էներգետիկ պահանջարկի բավարարման տեսանկյունից կարևորվում է միջուկային էներգետիկայի ոլորտի հետագա զարգացումը: Վերջինս ապահովելու համար անհրաժեշտ են անվտանգության գործուն մեխանիզմներ, որոնք վերաբերում են ինչպես տեխնոլոգիական ցիկլի արդիականացմանը (միջուկային ռեակտորների արդիականացում, սպասարկող մեքենասարքավորումների տեխնոլոգիաների բարելավում, օգտագործված միջուկային վառելիքի և թափոնների պահպանում և ուտիլիզացիա), այնպես էլ անվտանգության վերահսկողության ազգային և միջազգային կառույցների գործունեությանը, քանի որ միջուկային անվտանգության հարցերը, որպես կանոն, իրենց ազդեցությունն են թողնում հարևան և տարածաշրջանի երկրների վրա:

Նետաբար՝ հուսալիության և անվտանգության զարգացման խնդիրները քննարկելու ժամանակ միջուկային կայանները պետք է դիտարկվեն որպես էներգետիկ անվտանգության գլոբալ համակարգի անբաժանելի մաս: Գլոբալ էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար տնտեսապես հիմնավորված գներով որակյալ և հուսալի ամենօրյա էներգամատակարարումը, ինչպես արտակարգ իրավիճակներում, այնպես էլ պատերազմի ժամանակ<sup>1</sup>:

Ներկայումս միջուկային և ճառագայթային անվտանգությունն ապահովվում է այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալությունը (ԱԷՄԳ)<sup>2</sup> և ՄԱԿ-ի ճառագայթային պաշտպանության միջազգային հանձնաժողովը<sup>3</sup>: Այս

<sup>1</sup> Митрова Т.А. Проблемы глобальной энергетической безопасности. Информационно-аналитический материал. М., 2006.

<sup>2</sup> Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության պաշտոնական կայք (<https://www.iaea.org/>)

<sup>3</sup> Ճառագայթային պաշտպանության միջազգային հանձնաժողովի պաշտոնական կայք (<http://www.icrp.org/>)

կազմակերպությունների ուղեցույցներն ու առաջարկություններն ամբողջ աշխարհում ապահովում են միջուկային էներգետիկ օբյեկտների անվտանգությունը: Միջուկային օբյեկտների շահագործման ընթացքում խափանումների վտանգավորության աստիճանավորումը մշակվել է ԱԷՄԳ-ի կողմից և ներկայացվել միջուկային իրադարձությունների միջազգային սանդղակում: Ըստ այդ սանդղակի՝ միջուկային օբյեկտներում իրադարձությունները դասակարգվում են ութ մակարդակներով: Ցածր մակարդակներում (1-3) տեղի ունեցող դեպքերը կոչվում են միջադեպեր, իսկ վերին մակարդակներում դասակարգվողները (4-7)՝ դժբախտ պատահարներ: Այն իրադարձությունները, որոնք աննշան են անվտանգության տեսանկյունից, դասակարգվում են որպես ցածր մասշտաբի դեպքեր (մակարդակ 0) և կոչվում են շեղումներ: Անվտանգության հետ կապ չունեցող իրադարձությունները չեն ընդգրկվում որևէ սանդղակում:

ՀՀ-ում միջուկային էներգետիկայի հիմնական օբյեկտը Հայկական ատոմային էլեկտրակայանն է (ՀԱԷԿ) և նրա հետ կապված անվտանգության, շահագործման և աշխատած միջուկային վառելիքի, ռադիոակտիվ թափոնների պահպանման, հարակից ենթակառուցվածքների անվտանգության, ինչպես նաև անվտանգության միջոցառումների ապահովման պատասխանատվության գործընթացները: ՀՀ-ում միջուկային անվտանգության կարգավորումը ներառում է.

- անվտանգության նորմերի, կանոնների, կարգերի և այլ իրավական ակտերի մշակումն ու ընդունումը,
- անվտանգության գնահատումների, հետազոտությունների և վերլուծությունների կազմակերպումն ու անցկացումը,
- միջուկային տեղակայանքների լիցենզավորումը, տեսչական ստուգումների անցկացումն ու պատասխանատվության միջոցների կիրառումը անվտանգության պահանջները չկատարելու կամ խախտելու դեպքում:

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1999 թ. փետրվարի 1-ին<sup>1</sup>: Այն կարգավորում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորման, միջուկային տեղակայանքների, իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության, իոնացնող ճառագայթումից պաշտպանության, ռադիոակտիվ թափոնների կառավարման, ատոմային օբյեկտների ֆիզիկական պաշտպանության, միջուկային վնասի, դրա փոխհատուցման և ատոմային էներգիայի օգ-

<sup>1</sup> ՀՀ օրենքը խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին: ՀՕ-285, ՀՀՊՏ 1999.03.15/6(72), 01.02.1999:

տագործման հետ կապված այլ հարաբերություններ՝ անձնակազմի, բնակչության, շրջակա միջավայրի և ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակով: Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության մակարդակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով ճանաչում և կիրառում են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտները:

Միջազգային մակարդակով ՀԱԷԿ-ի անվտանգության վերահսկողությունն իրականացնում է ԱԷՄԳ-ը: ՀՀ նախագահին առընթեր գործում է Ատոմային էներգետիկայի անվտանգության խորհուրդը, որում ներգրավված են ազգային և միջազգային փորձագետներ<sup>1</sup>: Բացի այդ, ՀՀ կառավարությունը և ՀԱԷԿ-ը համագործակցում են մասնագիտացված հաստատությունների և ձեռնարկությունների հետ՝ կապված անվտանգության բարձրացման, ախտորոշման, սեյսմակայունության գնահատման, ռադիոակտիվ թափոնների պահեստավորման և թաղման հարցերի հետ: ՀԱԷԿ-ն ատոմակայաններ շահագործող կազմակերպությունների Համաշխարհային ասոցիացիայի անդամ է, որի հիմնական նպատակն է հետևել ատոմակայանների անվտանգությանը: ՀԱԷԿ-ի անվտանգության հետ անմիջականորեն կապված է նաև Միջուկային ռեակտորների նախագծման գլխավոր նախագծող ձեռնարկությունը (ՌԴ):

Ճապոնական «Ֆուկուսիմա» ատոմակայանի աղետից հետո հայկական ԱԷԿ-ում անցկացվեցին սթրես-թեստեր «հետֆուկուսիմյան» չափանիշներով՝ ԱԷՄԳ-ի փորձագետների մասնակցությամբ: Եզրակացությունը դրական էր, ՀԱԷԿ-ի ռիսկերը վերահսկելի են և գտնվում են ընդունելի մակարդակի վրա: Հանրությանը հայտնի է ՀԱԷԿ-ում վթարային իրավիճակների երկու դեպքի մասին, որոնք չեն հանգեցրել ռադիոակտիվ արտանետումների և կառավարելի են եղել: 1-ին դեպքը. 1982 թ. հոկտեմբերի 15-ին ՀԱԷԿ-ում տեղի ունեցավ վթար, որն առաջացրեց հրդեհ: 20 մետրից ավելի երկարությամբ մայրուղու վրա հրդեհի ազդեցությամբ մալուխները շարքից դուրս եկան, մասամբ վնասվել էին սարքավորումները: Առաջացան լուրջ խնդիրներ թիվ 1 բլոկի ռեակտորի հովացման ռեժիմի պահպանման և վերահսկման հետ, ինչպես նաև բարդություններ թիվ 2 բլոկի ռեակտորի նորմալ հովացման համար: Հրդեհի մարումից հետո հովացման ընթացքում շարժական սարքերի օգնությամբ իրականացվեց ճառագայթային իրավիճակի ստուգում: Արձանագրվեց, որ խիստ ռեժիմի գոտու

<sup>1</sup> <http://www.anra.am/>



և ԱԷԿ-ի տարածքում գամմա ճառագայթման ֆոնը գրեթե չի փոխվել՝ համեմատած մինչվթարային մակարդակի հետ<sup>1</sup>:

2-րդ դեպքը տեղի է ունեցել 2017 թ., և կապված էր ՀԱԷԿ-ի 110-կիլովոլտանոց ենթակայանի վթարային անջատման հետ: Դրա համար պատճառ էր հանդիսացել 110-կիլովոլտանոց գծի վրա սառցակալած հատվածների առկայությունը: Վերջինիս հալելու արդյունքում տեղի է ունեցել կարճ միացում: Այս դեպքում ևս միջուկային և ճառագայթային նորմերից շեղումներ չարձանագրվեցին:

Ներկայումս Հայաստանը հայտ է ներկայացրել երկարաձգելու ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետը ևս 10 տարով, որի համար իրականացվում են համապատասխան արդիականացման ներդրումային ծրագրեր: Հաշվի առնելով միջուկային կայաններում վթարների համաշխարհային միտումները՝ պետք է արձանագրել, որ նման կայաններում վթարները բացառելը վեր է մարդու հնարավորություններից, իսկ իրականացվող միջոցառումները կարող են միայն նվազեցնել միջուկային ռիսկերի ընթացիկ մակարդակը: Այս առումով արդիական է ինչպես անվտանգության ապահովման օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի շարունակական բարելավումը, այնպես էլ միջուկային ռիսկերի ապահովագրության, հնարավոր վթարների հետևանքների վերացման ֆինանսական և տեխնիկական միջոցների մշակումը:

## ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### **ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Կայուն էներգամատակարարումը ժամանակակից աշխարհում կարևոր հիմնախնդիր է, որի ապահովման գործում կարևոր ներդրում ունի միջուկային էներգետիկան: Միջուկային անվտանգության ապահովման գործում ներգրավված են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կառույցներ, քանի որ միջուկային անվտանգության հարցերը, որպես կանոն, շոշափում են հարևան երկրների և տարածաշրջանի շահերը: Վերջին տասնամյակներում տեղի են ունեցել մի քանի լուրջ միջուկային վթարներ, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ վթարները

<sup>1</sup> [http://rb.mchs.gov.ru/mchs/radiation\\_accidents/m\\_other\\_accidents/1982\\_god/Avarija\\_na\\_bl\\_oke\\_1\\_Armjanskoj\\_AJES\\_SSSR](http://rb.mchs.gov.ru/mchs/radiation_accidents/m_other_accidents/1982_god/Avarija_na_bl_oke_1_Armjanskoj_AJES_SSSR)

բացառելը վեր է մարդու հնարավորություններից, իսկ իրականացվող միջոցառումները կարող են միայն նվազեցնել միջուկային ռիսկերի ընթացիկ մակարդակը:

***Բանալի բառեր.** միջուկային էներգիա, անվտանգություն, վթար, հուսալիություն, ատոմակայան, ռադիոակտիվ թափոններ, էներգամատակարարում:*

## **ЯДЕРНАЯ БЕЗОПАСНОСТЬ И ЕГО РЕГУЛИРОВАНИЕ В МИРЕ И РА**

**ԱՅԿ ԱՏՈՎՈՎԻՇ ՄԱՐԿՕՅԱՆ**, *կ.է.հ.*

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаяна НАН РА*

**Аннотация:** Устойчивое энергоснабжение - важная проблема в современном мире, в обеспечении которого атомная энергетика вносит важный вклад. Ядерная безопасность связана как с национальными, так и с международными структурами, поскольку вопросы ядерной безопасности обычно затрагивают интересы соседних стран и региона. За последние несколько десятилетий произошли несколько крупных ядерных катастроф, что дает основание сделать вывод, что исключение несчастных случаев превыше человеческих возможностей, а принимаемые меры могут лишь снизить нынешний уровень ядерных рисков.

**Ключевые слова:** *Ядерная энергетика, безопасность, авария, надежность, атомная электростанция, радиоактивные отходы, электроснабжение.*

## **NUCLEAR SAFETY AND THE REGULATION OF THEREOF WORLDWIDE AND IN ARMENIA**

**HAYK ASHOT MARKOSYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Sustainable energy supply is an important issue in the modern world, and the nuclear energy sector significantly contributes to it. Nuclear security is discussed at both national and international levels, since nuclear security issues, as a rule, affect the interests of neighboring countries and the region. Over the last decades, several serious nuclear power station accidents have been reported, which suggests that prevention of accidents is beyond human capabilities and the measures that can be taken could only reduce the current level of nuclear risks.

**Keywords:** *Nuclear energy, safety, accident, reliability, nuclear power plant, radioactive waste, power supply.*

**ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՂԱՎԻԹ ԱՐՄԵՆԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ  
ՆԵՐՈՒԺՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Վերականգնվող էներգիայի (ՎԷ) աղբյուրների օգտագործումը վերջին տարիներին լայն քննարկման առարկա է դարձել: ՎԷ ռեսուրսները յուրահատուկ հնարավորություններ են ընձեռում կայուն և էկոլոգիապես մաքուր էներգետիկ համակարգ ձևավորելու համար, ինչպես նաև մեղմում են տնտեսության վրա բնական վառելիքահումքային ռեսուրսների սակավության անբարենպաստ ազդեցությունը՝ բավարարելով էլեկտրաէներգիայի, ջեռուցման և տրանսպորտային կարիքների պահանջարկի մի մասը:

Ջ.Լեգեթը պնդում է, որ արևային ֆոտովոլտային վահանակները կարող են ապահովել 10 հազար անգամ ավելի շատ էներգիա, քան ներկայումս սպառվում է աշխարհում<sup>1</sup>: Վերականգնվող էներգետիկայի համաշխարհային խորհրդի (World Council fo Renewable Energy - WCRE) գլխավոր տնօրեն Հերմեն Շերի խոսքերով Երկիր մոլորակի ՎԷ-ի մատակարարման ներուժը 15 հազար անգամ ավելի մեծ է, քան միջուկային և անխաջրածնային էներգիայի տարեկան սպառումը: ՎԷ աղբյուրների օգտագործման տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունները գրեթե 20 անգամ գերազանցում են ներկայիս համաշխարհային էներգետիկ պահանջարկը<sup>2</sup>:

Այնուամենայնիվ, այսօր ՎԷ-ն ապահովում է աշխարհի էներգետիկ պահանջարկի միայն 17%-ը, որի համեմատաբար մեծ բաժինը կազմում են ՎԷ ավանդական տեսակների՝ կենսաէներգետիկայի (9%) և հիդրոէներգետիկայի (5,7%) ոլորտները, իսկ համեմատաբար նոր աղբյուրները, ինչպիսիք են հողմային և արևային կայանները, ապահովում են համաշխարհային էներգիայի ընդհանուր սպառման միայն 2%-ը<sup>3</sup>: Ըստ Վերա-

---

<sup>1</sup> Jeremy Legget, “The Energy of Nations: Risk Blindness and the road to renaissance”. New York, Routhledge, 2014, p. 36.  
<sup>2</sup> Herman Scheer, “The Energy Imperative: 100 Percent Renewable Now”. New York, Earthscan, 2012, p. 66.  
<sup>3</sup> “Renewables 2016: Global status report”. Renewable Energy Policy Network for the 21st Century. Zografou, National Technical University of Athens (NTUA), 2016. p 24-25.

կանգնվող էներգիայի միջազգային գործակալության (IRENA), 2013-2015թթ. ՎԷ-ի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի ոլորտում նոր հզորությունների ներդրման հաշվով կազմել է 60%: 2014 թվականին էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության մեջ ՎԷ-ի տեսակարար կշիռը կազմել է 22,6%, իսկ 2015 թվականին՝ 23,7%: Ակնկալվում է, որ մինչև 2030 թվականը ՎԷ-ի աղբյուրները կդառնան էլեկտրաէներգիայի արտադրության հաշվեկշռի առաջատարը՝ երկրորդ տեղ մղելով ավանդական ռեսուրսները<sup>1</sup>:

ՎԷ ռեսուրսների բացահայտումն ու ներուժի գնահատումը անհրաժեշտ պայմաններ են էկոլոգիապես մաքուր և անվտանգ էներգետիկ համակարգի ձևավորման համար: Հարկ է նշել, որ արևային, հողմային, երկրաջերմային, հիդրո և կենսաէներգետիկ ներուժն առկա է գրեթե բոլոր երկրներում: Նշված աղբյուրների հիմնական մասը կազմում են երկարատև և հաջողությամբ գործարկված հիդրոէլեկտրակայանները: Հիդրոէներգետիկայի ոլորտը համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրությունում շարունակում է մնալ կայուն՝ 1990թ.-ին կազմելով 18.1%, 2014թ.-ին՝ 16.4%, որը 2030թ.-ի կանխատեսմամբ հավանաբար կպահպանի նույն ցուցանիշը: Մյուս կողմից, վերջին 25 տարիների ընթացքում վերականգնվող էներգետիկայի զարգացման հիմնական շարժիչը էներգիայի ստացման համեմատաբար նոր տեխնոլոգիաներն են, ինչպիսիք են արևային, հողմային, երկրաջերմային աղբյուրները և նույնիսկ օվկիանոսի ալիքների էներգիայի օգտագործման դեռևս էկզոտիկ համարվող տեխնոլոգիան: Դրանց միջոցով (հիմնականում արևային և հողմային) ստացվող էներգիայի տեսակարար կշիռը համաշխարհային էներգիայի արտադրության մեջ շարունակաբար աճում է՝ 1990թ 1,5%-ից 2014թ.-ին հասնելով 6,3%: Կանխատեսվում է, որ 2030թ.-ին այս ցուցանիշը կհավասարվի հիդրոէներգետիկայի տեսակարար կշռին՝ անցնելով 16%-ի սահմանագիծը<sup>2</sup>:

Ներկայումս ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի 30%-ն արտադրվում ՎԷ-ի աղբյուրներից, որի առյուծի բաժինը արտադրվում է հիդրոէներգետիկ ռեսուրսների հաշվին<sup>3</sup>: Մեփական վառելիքաէներգետիկ ռեսուրսների սակավության, տնտեսական շրջափակման և այլ, այլ

<sup>1</sup> Renewable Energy Policies in a Time of Transition. Abu Dhabi, IRENA, OECD/IEA and REN21, 2018, pp. 54-56.

<sup>2</sup> Global Energy Transformation: A roadmap to 2050. Abu Dhabi, International Renewable Energy Agency, 2018, p. 51.

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր»: ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի № 2 արձանագրային որոշման հավելված, էջ 15:

թվում աշխարհաքաղաքական պատճառներով ՎԷ-ի աղբյուրների զարգացումը առաջնային կարևորություն ունի ՀՀ-ի համար, ինչը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ՝ ՀՀ էներգետիկ համակարգը բնութագրվում է ավանդական ածխաջրածնային էներգակիրների ներմուծումից կախվածության բարձր մակարդակով: Այս հանգամանքը կարող է հանգեցնել էներգետիկ անվտանգության ռիսկերի առաջացման՝ պայմանավորված մատակարարման ընդհատումներով և ներմուծվող վառելիքի գների անկայունությամբ: Հայկական ԱԷԿ-ին էլեկտրաէներգիայի արտադրության համար անհրաժեշտ միջուկային հումքը նույնպես ներմուծվում է, ինչը նույնպես մեծացնում է արտաքին էներգակիրներից կախվածությունը: ՀՀ էներգետիկ ոլորտի զարգացման մեկ այլ խոչընդոտ է էներգետիկ ենթակառուցվածքների ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճանը:

Այս պայմաններում երկրի վառելիքաէներգետիկ համալիրում նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և ՎԷ ներմուծման խնդրի լուծումը կբարձրացնի տնտեսության էներգետիկ ապահովվածության աստիճանը, կմեղմի երկրի կախվածությունն արտերկրի հումքային աղբյուրներից, հիմք կստեղծի տնտեսության էքստենսիվ աճից ինտենսիվ զարգացման անցնելու և սեփական շահերով թելադրված ազգային էներգետիկ քաղաքականության վարման համար՝ բարձրացնելով երկրի էներգետիկ անկախության և անվտանգության աստիճանը<sup>1</sup>:

ՀՀ վերականգնվող էներգետիկայի զարգացման բարենպաստ հետևանքներից կարելի է առանձնացնել նաև հետևյալները.

- կայուն և հասանելի էլեկտրամատակարարում, ինչը հնարավոր է ապահովել փոքր հեկերի, արևային և հողմային կայանների միջոցով,
- ներմուծվող վառելանյութերի գնային տատանումների հետևանքով առաջացող բացասական ազդեցության նվազեցում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և նոր ներդրումների ներգրավում, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում գործարար ակտիվության խթանում,
- ածխաջրածնային վառելանյութերի օգտագործման կրճատման արդյունքում ՀՀ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցում և այլն:

Հաշվի առնելով միջազգային շուկաներում ՎԷ-ի ոլորտին առնչվող տեխնոլոգիաների և սարքավորումների նկատմամբ բարձր պահանջարկը՝

---

<sup>1</sup> Odabashian V., Karamyan G., “Fuel Cells Development in Armenia, Renewable Energy: Reality and Perspectives”, p5, Conference Proceedings, Yerevan, 2003.

տնտեսության այս ճյուղի զարգացումը կարող է նպաստել նաև հայկական կազմակերպությունների արտահանման ներուժի ավելացմանը:

ՎԷ զարգացման առաջին անհրաժեշտ նախապայմանը համապատասխան իրավական կարգավորման մեխանիզմների մշակումն ու գործածությունն է: 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված «Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին» ՀՀ օրենքը համարվում է ՎԷ ոլորտի կարգավորման հիմնական իրավական ակտը: 2007թ.-ին ՀՀ կառավարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) օժանդակությամբ մշակեց և հաստատեց ՀՀ էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ազգային ծրագիրը, որի հիմնական խնդիրը Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման ծրագրային նպատակներն ու դրանց հասնելու ուղիները նախանշելն է:

Հիմնվելով նշված ծրագրի վրա՝ ՀՀ ՎԷ-ի զարգացման ներուժը կարելի է դասակարգել ըստ հետևյալ ենթաբաժինների.

- հիդրոէներգետիկա,
- արևային էներգետիկա,
- կենսազագային էներգետիկա,
- հողմային էներգետիկա,
- երկրաջերմային էներգետիկա<sup>1</sup>:

ՀՀ հիդրոէներգետիկայի զարգացման ներուժի օգտագործումը ենթադրում է փոքր և միջին հիդրոէլեկտրակայանների ստեղծում և գործարկում, ինչը հիմնականում պայմանավորված է ՓՇԵԿ կառուցման բարենպաստ պայմաններով: Մասնավորապես պետությունը սահմանել է էլեկտրաէներգիայի արտադրության համար ետգնման բարենպաստ սակագներ՝ 15-ամյա ժամկետով: Էներգախնայողության և ՎԷ-ի ազգային ծրագրի համաձայն ՀՀ հասանելի ջրային ռեսուրսները և դրանց օգտագործման ներուժը բավարար է 313 ՓՇԵԿ-ների շահագործման համար՝ տարեկան 737.38 մլն ԿՎտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությամբ: Նշված ծրագրով նախատեսվում է մինչև 2020թ. կառուցել և շահագործման հանձնել խոշոր՝ մասնավորապես Մեղրու և Լոռիբերդի ՀԷԿ-եր՝ համապատասխան 140ՄՎ և 60ՄՎ դրվածքային հզորություններով՝ տարեկան գումարային 1012 մլն ԿՎտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրությամբ<sup>2</sup>:

Մինչ օրս իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում ՓՇԷԿ-երի կառուցման համար առկա է առնվազն

<sup>1</sup> Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր: Երևան, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, հունիս 2014, էջ 20:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 36:

115 պոտենցիալ չօգտագործված տարածք, որոնք միասին կարող են ապահովել 157 Մվտ դրվածքային հզորություն և շուրջ 540 մլն ԿՎտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրություն: Հարկ է նշել, որ հիդրոկայանների շահագործումը կարող է հանդիսանալ նաև բնապահպանական խնդիրների առաջացման պատճառ<sup>1</sup>:

Ի տարբերություն ջրային ռեսուրսների օգտագործման՝ արևը մաքուր և անսպառ էներգիայի ստացման ամենահասանելի աղբյուրն է: Վերջին տարիներին արևային էներգիա արտադրող կազմակերպությունները դարձել են ավելի եկամտաբեր՝ մրցակցելով ավանդական էներգիայի աղբյուրների հետ ինչպես տնտեսական, այնպես էլ անվտանգության չափանիշներով: Արևային էներգիան լայնորեն օգտագործվում է ինչպես ջրատաքացման համակարգերում, այնպես էլ ֆոտովոլտային վահանակների միջոցով էլեկտրաէներգիայի ստացման համար:

Աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ Հայաստանն արևային էներգետիկայի զարգացման համար ունի զգալի ներուժ : Հանրապետությունը գտնվում է մերձարևադարձային գոտու հարևանությամբ, բնակավայրեր և տարածաշրջաններ ունեն բարենպաստ կլիմայական դիրք, ինչով էլ պայմանավորվում է ՀՀ արևային էներգիայի օգտագործման ներուժը: Վերջինիս գնահատումն իրականացվում է տարեկան արևային ճառագայթման ինդեքսների հիման վրա: Այսպես, ՀՀ միջին տարեկան ճառագայթման ինդեքսը կազմում է 1700 ԿՎտժ/մ<sup>2</sup> և կախված տեղանքից՝ տատանվում է 1500-ից մինչև 1900 ԿՎտժ/մ<sup>2</sup> սահմաններում:

ՀՀ-ում առկա ՎԷ հաջորդ աղբյուրը կենսագազի պաշարներն են: Կենսագազի հիման վրա վառելիքի արտադրության նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է համեմատաբար կարճաժամկետ հատուցման ժամանակահատվածով, որը կազմում է 7-8 տարի:

Հայաստանում կենսագազերից էներգիայի արտադրությունը վերջին ժամանակներում որոշակի զարգացում է ապրել: ԱՄՆ ՄՁԳ 2007թ. ծրագրի համաձայն՝ 2006-2020 թթ. ՀՀ կենսագազի ներուժը 34.17 մլն դոլար ներդրման դեպքում գնահատվել է տարեկան 38.34 մլն մ<sup>3</sup>, ինչը կնվազեցնի ջերմոցային գազերի արտանետումները տարեկան 544.6 հազ CO<sub>2</sub>-ին համարժեք տոննայով:

Կենսագազերից էներգիայի արտադրության ՀՀ հիմնական գործնական նախագիծը Նուբարաշենի քաղաքային աղբավայրում կենսագազի ստացման ներուժի և մշակաբույսերի կառուցվածքի գնահատման ծրա-

<sup>1</sup> Odabashian V., “Hydrogen Economy: Recent Developments and Prospects”. Round Table Discussions on the Renewable Energy Development Roadmap in Arzakan, June 25-26, 2011, p. 8.

գիրն է: Այն ուղղված է Նուբարաշենի քաղաքային աղբավայրից մեթանի գեներացման և որպես վառելանյութ օգտագործման հնարավորությունների բացահայտմանը: Երևանի քաղաքապետարանի և Նուբարաշենի վարչական շրջանի հետ միասին ծրագրի իրականացման մեջ ներգրավված են նաև երեք ճապոնական ընկերություններ՝ Shimizu, Hokkaido Electric Power և Mitsui: Մի շարք օտարերկրյա ընկերություններ նույնպես հետաքրքրված են այս տեխնոլոգիայով: 2002-2003 թթ. նշված ծրագրի շրջանակներում հիմնվել է կենսազագի երկու արտադրամաս: Առաջինի մեթանի արտադրողականությունը 50մ<sup>3</sup> է, ընդլայնման ներուժը մինչև 3000 մ<sup>3</sup>: Երկրորդի մեթանային հզորությունը 25 մ<sup>3</sup> է: Կենսազագի ոլորտին վերաբերող մեքենասարքավորումներ մշակող հիմնական ընկերությունը Հայաստանում SolarEn LLC-ն է: Հայաստանի այլ քաղաքներում ևս աղբավայրերը գտնվում են պետական վերահսկողության տակ՝ մեթանի ստացման առկա ռեսուրսների բացահայտման և ուսումնասիրման նպատակով<sup>1</sup>:

Բացի աղբավայրերից, խոզաբուծական, խոշոր եղջերավոր անասնապահական և թռչնաբուծական տնտեսությունները նույնպես ունեն կենսաբանական մնացորդներից կենսազագերի գեներացման որոշակի ներուժ: Մասնավորապես Լուսակերտի թռչնաբուծական ֆաբրիկայի նախաձեռնությամբ հիմնադրվել և շահագործման է հանձնվել Լուսակերտի կենսազագի գործարանը (ԼԿԳ): Այն Հայաստանում իրականացված վերականգնվող էներգետիկայի ոլորտում առաջին մաքուր զարգացման մեխանիզմն է: Վերջինս ՄԱԿ-ի կողմից մշակված մեխանիզմն է, որն ուղղված է ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման կամ կլանման նախագծերում ներդրումների խթանմանը: Դրա հիմնական նպատակը մթնոլորտում ջերմոցային գազերի խտության կարգավորումն է այնպիսի մակարդակով, որով հնարավոր կլինի կանխարգելել կլիմայական համակարգում վտանգավոր մարդածին ազդեցությունները: ԼԿԳ շահագործման մեջ ներդրումային մասնակցությունն ունեն նաև նորվեգական «VEXT» և դանիական IFU ընկերությունները<sup>2</sup>:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև կենսազանգվածի և դրանից վառելիքի ստացման ներուժի վրա: Կենսազանգվածը հիմնականում հատուկ այդ նպատակի համար մշակված մշակաբույսերի կամ բերքահավաքից հետո առաջացած մնացորդն է, որը կարող է մշակվել վառելանյութի արտադրության համար անհրաժեշտ հումք ստանալու

---

<sup>1</sup> Gharabegian A., Hambarian A., Søndergaard M., Touryan K., “Renewable Energy in Armenia”. Yerevan, Armenia Renewable Resources And Energy Efficiency Fund, 2016, p. 2.  
<sup>2</sup> Sargsyan A., “Energy Security And Energy Union Perspectives For Armenia”, The EaP CSF WG 3 Workshop/October 20, 2015 POLICY PAPER, pp. 41-43.



նպատակով: Օրինակ, որոշ երկրներում կենսազանգվածից ստացված էթանոլը և կենսադիզելը օգտագործվում են որպես ներքին այրման շարժիչների համար վառելիք կամ վառելիքի հավելում: Հայաստանում այս ոլորտում դեռևս ոչ մի իրական աշխատանք չի իրականացվում:

ՀՀ հողմային էներգետիկան նույնպես գտնվում է նախնական զարգացման փուլում: Չնայած Հայաստանի հսկայական հողմային էներգետիկ ներուժին և միջազգային ընկերությունների հետաքրքրությանը՝ արդյունաբերական նշանակության հողմային էլեկտրակայաններ դեռևս չեն կառուցվել: Քամու էներգիայի մշտադիտարկումները և ներուժի գնահատումն իրականացվում են դեռևս 1999թ.: Մասնավորապես քամու էներգիայի ներուժի գնահատմանն են ուղղվել հետևյալ ծրագրերը.

- Սոթքի լեռնանցքի տարածքում SolarEn ընկերության կողմից իրականացվող մշտադիտարկման ծրագիրը,
- ՎԷԱԼ (Վերականգնվող էներգիայի ազգային լաբորատորիա) և ԱՄՆ ՄԶԳ համատեղ ծրագրի շրջանակներում Կարախասի լեռնանցքում, Գազարին գյուղում, Ապարանում և Որոտանի լեռնանցքում իրականացված ուսումնասիրությունները,
- ArmNedWind-ի կողմից Հայաստանի 5 մարզերում (Կարախասի, Մելիքի, Պուշկինի լեռնանցքներ, Արտանիշ և Արփի լիճ) իրականացված ծրագիրը,
- Իրանի հետ համատեղ Պուշկինի լեռնանցքում և Սիսիանում ՀՀ կառավարության ծրագրերը,
- Գորխում հողմային էներգետիկ ներուժի գնահատման KfW ծրագիրը,
- TACIS / DEM մշտադիտարկման ծրագիրը:

ՀՀ էներգետիկայի նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից հիմնված ZodWind ընկերությունը ԱՄՆ-ի Վերականգնվող էներգետիկայի ազգային լաբորատորիայի հետ համատեղ հողմային էներգիայի ներուժի գնահատման նպատակով ձեռնամուխ է եղել ՀՀ հողմային աստիճանի մշակմանը: Բացի այդ, գրեթե ավարտված է KfW ծրագրի շրջանակներում հողմային էներգետիկայի հեռանկարների հետ կապված տարածաշրջանների գնահատումը, և ներկայումս իրականացվում է հողմային կայանների պոտենցիալ արդյունավետության գնահատում: Հետազոտությունների արդյունքների հիման վրա առանձնացվել են 6 շրջաններ, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 800 ՄՎտ:

Տարածաշրջանում առաջին 2.6 ՄՎտ հզորությամբ հողմակայանն արդեն իսկ շահագործվում է Պուշկինի լեռնանցքում, որը կառուցվել է հայ-իրանական միջպետական ծրագրի շրջանակներում և ներառում է չորս հողմային տուրբին: Այն տարեկան արտադրում է մոտ 5 մլն ԿՎտժ էլ.

Էներգիա: Պետք է նշել նաև, որ ներկայումս մշակվում են 20 և 80 ՄՎտ դրվածքային հզորությամբ հողմային էլեկտրակայանների կառուցման ներդրումային նախագծեր:

Չնայած Հայաստանում հողմային էներգիայի զարգացման գործում օտարերկրյա ընկերությունների շահագրգռվածությանը, այս ոլորտում առայժմ զգալի ներդրումներ չեն իրականացվում: Դրա պատճառը հիմնականում բարձր գործառնական ծախսերն են: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից մշակված 2007 թ. ծրագրի համաձայն՝ Հայաստանում հողմային էլեկտրակայանների տեղակայման արժեքը կազմում է մոտ 1000-1300 ԱՄՆ դոլար մեկ ԿՎտ-ի համար: Այսինքն՝ մինչև 100 ՄՎտ հողմակայան ունենալու համար հարկավոր է ներդնել 100-130 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստանում տեխնիկապես հնարավոր պոտենցիալ հողմային էներգիայի ընդհանուր հզորությունը գնահատվում է մոտ 1000 ՄՎտ: Հողմակայանները կարող են ապահովել հանրապետության էլեկտրաէներգիայի սպառման 17%-ը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կառավարությունը նպատակ է դրել մինչև 2020 թվականը կառուցել 300 ՄՎտ հզորությամբ հողմային տուրբիններ, ինչը զգալիորեն կավելացնի էներգետիկ արտադրության մեջ հողմակայանների տեսակարար կշիռը<sup>1</sup>:

Ոլորտի զարգացումը խթանելու նպատակով վերը նշված ծրագրերին գույահեռ առաջանում է նաև զգալի պետական աջակցության անհրաժեշտություն: Հողմային էներգիայի բոլոր առավելություններն ու թերությունները, դրա զարգացումը և ապագան հիմնականում կախված կլինեն այն ներդրումային պայմաններից, որոնք ՀՀ կառավարությունը կապահովի, քանի որ հողմային կայանների կառուցումը տեխնիկապես բարդ և թանկ գործընթաց է:

Որպես հրաբխային գոտում գտնվող երկիր՝ Հայաստանում առկա են զգալի երկրաջերմային ռեսուրսներ, որոնք կարող են օգտագործվել էներգիայի արտադրության համար: Երկրաջերմային ներուժի ուսումնասիրությունները սկսվել են դեռևս 1984 թվականին Սիսիանում, որտեղ մակերևութային ջրի ջերմաստիճանը հասնում է 32°C-ի: Հետագոյությունների ընթացքում 920 մ խորության վրա հայտնաբերվել են մինչև 99°C ջերմությամբ երկրաջերմային ավազաններ: Երկրաջերմային ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են մի շարք ստորջրյա վտակներ (Ջերմուկ՝ 64°C, Հանքավան՝ 42°C, Արգական՝ 54°C, Սիսիան՝ 45°C, Մարտունի՝ 52°C) և ավազաններ (Ագատավան՝ 42° C, 2600 մ, Սևաբերդ՝ 83° C, 3100 մ): 1998թ. Համաշխարհային բանկի դրամաշնորհային

<sup>1</sup> Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր: Երևան, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, հունիս 2014, էջ 24:

ծրագրի ֆինանսավորմամբ ստեղծված Երևանի Երկրաջերմային փորձնական ծրագրի շրջանակներում հայ-ամերիկյան երկրաբանական հետազոտությունների կազմակերպության հետ համատեղ Գառնիի տարածքում փորվեց «Ագատ-1» հորատանցքը: Արդյունքում 2280-2285 մ խորության վրա հայտնաբերվեցին հարուստ երկրաջերմային ռեսուրսների պաշարներ: 2000-2001թթ. ռուսական «Լուկոյլ» նավթային ընկերությունը շարունակեց աշխատանքը «Ագատ-1» հանքավայրի առանձնահատկությունների ուսումնասիրության նպատակով (ջերմաստիճան, ճնշում, հանքայնացում և այլն): Սակայն տեխնիկական պատճառներով աշխատանքները դադարեցվեցին: Ավելի ուշ հետազոտությունները վերսկսվեցին ՀՀ էներգետիկայի նախարարության ենթակա «Geoenergetica» ձեռնարկության կողմից, ինչի արդյունքում տրվեցին երկրաջերմային ռեսուրսների ստորգետնյա բաշխման նկարագիրը և ուղղվածությունը դեպի Երևան: Այնուամենայնիվ, ներկայումս Հայաստանում չկան հատուկ նախագծեր, որոնք ուղղված կլինեն երկրաջերմային էներգիայի՝ որպես վերականգնվող էներգիայի ռեսուրս ուսումնասիրությանը<sup>1</sup>:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՆԵՐՈՒԺՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

### **ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.***

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

### **ԴԱՎԻԹ ԱՐՄԵՆԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

**Համառոտագիր:** Վերականգնվող էներգիայի աղբյուրների համաշխարհային պաշարները լիովին բավարար են համաշխարհային էներգետիկ սպառումը բավարարելու համար: Հայաստանում արդեն իսկ ձեռնարկվել են հիդրո, արևային, կենսազագային, հողմային և երկրաջերմային էներգետիկայի պաշարների գնահատմանն ուղղված առաջին քայլերը: Կատարված հետազոտությունները վկայում են արդյունաբերական մասշտաբի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առկայության մասին, որոնց յուրացումը պահանջում է ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ ֆինանսական խնդիրների լուծում:

<sup>1</sup> Gharabegian A., Hambarian A., Søndergaard M., Touryan K., “Renewable Energy in Armenia”. Yerevan, Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund, 2016, p. 4-5.

*Բանալի բառեր. էներգետիկա, վերականգնվող, հիդրո, արևային, կենսա-  
գազային, հողմային, երկրաջերմային, էներգետիկ  
անվտանգություն, ինքնաբավարարություն:*

## **ПОТЕНЦИАЛ И ИСПОЛЬЗОВАНИЕ ВОЗОБНОВЛЯЕМЫХ ИСТОЧНИКОВ ЭНЕРГИИ В АРМЕНИИ**

**АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН**, *к.э.н.*

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаяна НАН РА*

**ДАВИД АРМЕНАКОВИЧ ПЕТРОСЯН**

*экономист первой категории Института экономики им. М.Котаяна НАН РА*

**Аннотация:** Мировые запасы возобновляемых источников энергии вполне достаточны для удовлетворения реализации мировой энергетики. Армения уже сделала первые шаги для оценки запасов гидроэнергетики, солнечной энергии, биогаза, ветровых и геотермальных энергетических ресурсов. Исследования показали, что возобновляемые источники энергии доступны в промышленном масштабе, использование которых требует решение как технологических, так и финансовых проблем.

**Ключевые слова:** *энергия, возобновляемые источники энергии, гидроэнергия, солнечная, биогаз, ветер, геотермальная, энергетическая безопасность, самообеспеченность.*

## **THE POTENTIAL OF RENEWABLE ENERGY SOURCES AND UTILIZATION PROSPECTS OF THEREOF**

**HAYK ASHOT MARKOSYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**DAVIT ARMENAK PETROSYAN**

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Renewable energy sources on a global scale are sufficient to fully meet the world's energy consumption. Armenia has already initiated the first steps to assess the reserves of hydropower, solar energy, biogas, wind and geothermal energy resources. Research has shown that renewable energy sources are available on an industrial scale, the use of which requires addressing both technological and financial issues.

**Keywords:** *Energy, renewable energy sources, hydropower, solar, biogas, wind, geothermal, energy security, self-sufficiency.*


**ԱՇԽԱՏՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Պաշտոնական բիզնես-վիճակագրությունը ձեռնարկությունների աշխատուժի հետազոտության համար օգտագործում է համատարած և ընտրանքային դիտարկումներ: Ձեռնարկություններում աշխատանքի գործունի ռեսուրսների դրության, շարժի և արդյունավետության հաշվառման ոլորտում հետազոտման օբյեկտ է վարձու աշխատողների համակցությունը կամ անձնակազմը: Ձեռնարկությունը՝ որպես շուկայի ինքնուրույն տնտեսվարող գործակալ, հնարավորություն ունի ինքնուրույն տնօրինելու իր ռեսուրսները: Սակայն պետք է հաշվի առնել, որ լրիվությամբ ձեռնարկությանը պատկանում են միայն ակտիվների տեսքով ներկայացված կապիտալի ռեսուրսները, քանի որ աշխատանքի ռեսուրսները սկզբունքորեն տարբերվում են նրանով, որ դրանք անբաժան են իրենց սեփականատերից:

Աշխատուժի կազմի ուսումնասիրումը ենթադրում է նաև մի շարք ժողովրդագրական հատկանիշների գծով համապատասխան կառուցվածքային բնութագրիչների ստացումը (սեռը, տարիքը, ընդհանուր և մասնագիտական կրթությունը և այլն), որոնք հետաքրքրական են, հաշվի առնելով աշխատանքային կանոնադրությունը, կադրային քաղաքականության փոփոխության հեռանկարները, կադրային կազմի տարիքային առանձնահատկությունները և այլն:

Վերջապես, ձեռնարկության ներդրումային քաղաքականության սկզբունքների հարցերի լուծման ժամանակ, կապված արտադրության վերակառուցման և տեխնիկական վերազինման հետ, որպես ուղեցույց կարելի է օգտագործել աշխատողների աշխատանքի բաշխման տվյալները ըստ մեքենայացման և ավտոմատացման մակարդակների:

Գծապատկեր 1-ում ներկայացված է աշխատաժամանակի ֆոնդերի կառուցվածքը, որը հիմք է ձեռնարկության աշխատուժի ռեսուրսների դրության ցուցանիշների և աշխատաժամանակի ռեսուրսների օգտագործման արդյունավետության չափման և հաշվարկման համար:



**Գծապատկեր 1. Աշխատածամանակի ֆոնդերի կառուցվածքը**

Աշխատուժի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրվում է աշխատանքի արտադրողականության, աշխատանքի գնի և ժամանակի ֆոնդերի օգտագործման ցուցանիշների համակարգով:

**Գծապատկեր 2. Արդյունավետության ցուցանիշները**

- ❖ Փաստացի աշխատած ժամանակ (ՓԱԺ) և փաստացի աշխատած աշխատողներ (ՓԱԱ):
- ❖ Աշխատանքի արտադրողականություն (բնեղեն, աշխատանքային և արժեքային չափման միավորներով)

➤ Ուղիղ արտադրողականություն  $W = \frac{\sum Q}{\sum T_{\text{միջ}}} = \sum w_i \frac{\pi_i}{\sum T_i}$

➤ Հակադարձ աշխատատարություն  $t = \frac{T_{\text{միջ}}}{Q} = \sum t_i \frac{Q_i}{\sum Q_i}$

- ❖ Աշխատանքի զինը  $P_U = \frac{ԱՎՖ}{\Phi ԱԺ}$  կամ  $P_U = \frac{ԱՎՖ}{\Phi ԱԱ}$ , որտեղ

ԱՎՖ-ն աշխատանքի վարձատրման ֆոնդն է

- ❖ Օգտագործման գործակիցները (ժամանակի ֆոնդերի, աշխատօրվա  $t_{օր}$ , աշխատաշրջանի  $t_{շրջ}$  հերթափոխային ռեժիմի և անձնակազմի թվաքանակի)։

$$K_{օգտ}^{\text{ֆոնդի}} = 100 \frac{\sum \Phi U \mathcal{C}}{\sum \mathcal{C} n \omega_i} = 100 \sum k_i \frac{T_i}{\sum T_i} = [\%]$$

$$K_{օգտ}^{\text{օրվա}} = 100 \frac{\sum t_{օր}(\text{իստ})}{t_{օր}(\text{իստ})} = [\%]$$

$$K_{օգտ}^{\text{շրջ}} = 100 \frac{\sum t_{շրջ}(\text{իստ})}{t_{շրջ}(\text{իստ})} = [\%]$$

Անընդհատ արտադրական ցիկլով ձեռնարկության աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը թույլ է հերթափոխային ռեժիմի օպտիմալացումը: Հերթափոխային ռեժիմն ապահովում է արտադրության անընդհատությունն ու աշխատատեղերի օպտիմալ օգտագործումը:

### Գծապատկեր 3.

- ✓ Հերթափոխության գործակից  $K_{հերթ} = \frac{\sum T_{հերթ}^i}{T_{հերթ}^i}$

- ✓ Հերթափոխային ռեժիմի օգտագործման գործակից

$$K_{օգտ}^{\text{իստ}} = \frac{\sum K_{հերթ}^{\text{իստ}}}{K_{հերթ}^{\text{իստ}}}$$

- ✓ Աշխատատեղերի օգտագործման գործակից  $K_{\text{ԱՏ}}^{\text{օգտ}} = \frac{T_{\text{աշխ}}^i}{T_{\text{ԱՏ}}}$

- ✓ Աշխատատեղերի օգտագործման ինտեգրալ գործակից

$$K_{\text{ԱՏ}}^{\text{օգտ}} = \frac{\sum T_{\text{աշխ}}^{\text{աշխ.1}}}{T_{\text{ԱՏ}}} \quad O_{\text{աշխ}}^{\text{շրջ}} = K_{\text{ԱՏ}}^{\text{օգտ}} = K_{\text{ԱՏ}}^{\text{օգտ}} K_{\text{օգտ}}^{\text{շրջ}}$$

Անհրաժեշտ է հիշել, որ կիրառվող մոդելների շրջանակը պետք է որոշվի վիճակագրական դիտարկման տեսության լրիվ համապատասխանելիությամբ, ըստ հետազոտման նպատակների և խնդիրների, ինչպես նաև ձեռնարկության տնտեսական գործունեության դիտարկվող վիճակագրական ցուցանիշների վիճակագրական կառուցվածքով:

## ԱՇԽԱՏՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**ԱՆԱՅԻՏ ԳՐԱԶԻԿԻ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.,*  
*ՀԱԱՀ վիճակագրության և բիոմետրիայի ամբիոնի դոցենտ*

**Համառոտագիր:** Ձեռնարկություններում աշխատանքի գործոնի ռեսուրսների դրության, շարժի և արդյունավետության հաշվառման ոլորտում հետազոտման օբյեկտ է վարձու աշխատողների համակցությունը կամ անձնակազմը: Ձեռնարկությունը՝ որպես շուկայի ինքնուրույն տնտեսվարող գործակալ, հնարավորություն ունի ինքնուրույն տնօրինելու իր ռեսուրսները: Սակայն պետք է հաշվի առնել, որ լրիվությամբ ձեռնարկությանը պատկանում են միայն ակտիվների տեսքով ներկայացված կապիտալի ռեսուրսները, քանի որ աշխատանքի ռեսուրսները սկզբունքորեն տարբերվում են նրանով, որ դրանք անբաժան են իրենց սեփականատերերից:

**Բանալի բառեր.** *աշխատանքի գործոն, անձնակազմ, շուկայի ինքնուրույն տնտեսվարող գործակալ, կապիտալի ռեսուրսներ, ակտիվներ:*

## ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ РАБОЧЕЙ СИЛЫ НА ПРЕДПРИЯТИЯХ

**АНАИТ ГРАЧИКОВНА МНАЦАКАНЯН**, *к.э.н., доцент*  
*кафедры Статистики и биометрии АНАУ*

**Аннотация:** Объектом исследования в сфере учета состояния, движения и эффективности использования ресурсов фактора труда на предприятии является совокупность наемных работников, или персонал. Предприятие как самостоятельно хозяйствующий агент рынка имеет возможность самостоятельно распоряжаться своими ресурсами. Однако следует учитывать, что в полной мере предприятию принадлежат только ресурсы капитала, представленные в форме активов, так как ресурсы труда принципиально отличаются тем, что они неотделимы от своего собственника.

**Ключевые слова:** *фактор труда, персонал, самостоятельно хозяйствующий агент рынка, ресурсы капитала, активы.*



## THE EFFICACY OF UTILIZATION OF WORKFORCE IN ENTERPRISES

**ANAHIT HRACHIK MNATSAKANYAN**, *Ph.D. in Economics*

*Associate Professor, Chair of Statistics and biometry*

*Armenian National Agrarian University*

**Abstract:** The object of study on the state of utilization of workforce (including retaining) and performance evaluation in enterprises is a combination of paid and/or hired workforce or aggregate of hired employees or staff. The company, as an independently acting economic agent, is free to decide how to manage its resources. However, it needs to be taken into account that an enterprise fully owns only financial assets, and the workforce is an integral part of ownership and/or cannot be distinguished from the owner and that explains the difference between the financial asset and workforce.

**Keywords:** *Labor factor, staff, independently acting economic agent, capital resources, assets.*

**ՀԱՅԿ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ*

**ԳՆԵԼ ԳԱՐԵԳԻՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*MBA(US), ACCA (UK), Աուդիտի ղեկավար,*

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ*

## **ՀԱՆՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԴԻՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

### ***Public-Interest Entities***

Public-Interest Entities (PIEs) հասկացությունը մինչ այժմ ՀՀ իրավական համակարգում չի սահմանվել կամ թարգմանվել: PIEs հասկացությունն առաջին անգամ սահմանվել է 2006թ. Եվրամիության աուդիտի դիրեկտիվում<sup>1</sup>, որպեսզի հստակեցվի այն կազմակերպությունների ցանկը, որոնց հանրային կարևորությունից ելնելով՝ ֆինանսական հաշվետվությունները պետք է ենթարկվեն պարտադիր աուդիտի: Այդ կազմակերպությունները սահմանվել են.

- արժեթղթերի շուկայում ցուցակված կազմակերպությունները,
- ֆինանսավարկային և ապահովագրական կազմակերպությունները,
- անդամ-պետության կողմից հանրային շահից ելնելով PIEs դասակարգված այլ կազմակերպությունները՝ կախված նրանց գործունեության բնույթից, ծավալից կամ աշխատակիցների քանակից:

Հետագայում ԵՄ-ը էլ ավելի է կարևորում PIEs-ի հանրային նշանակալի լինելը և ԵՄ-ում աուդիտի որակի բարեփոխման հիմնական շեշտադրումը կատարում է հենց PIEs-ի աուդիտի մասով՝ 2014թ. ընդունելով PIEs-ի աուդիտի խստացված առանձնահատուկ պահանջներ<sup>2</sup>:

### ***PIEs տարբերակումը «Հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններից»***

2010թ. Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) հրապար-

---

<sup>1</sup> “On statutory audits of annual accounts and consolidated accounts”, Directive 2006/43/EC of the European Parliament and of the Council, 17.05.2006

<sup>2</sup> Regulation (EU) No 537/2014 of the European Parliament and of the Council of 16 April 2014 on specific requirements regarding statutory audit of public-interest entities <<https://publications.europa.eu/en/publication-detail/-/publication/567809be-e656-11e3-8cd4-01aa75ed71a1/language-en>>

րակված թարգմանությունում<sup>1</sup> կիրառվում է «հանրորեն հաշվետու կազմակերպություններ», «հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններ» եզրույթները՝ թարգմանելով «publicly accountable entities» եզրույթը<sup>2</sup>, նշելով, որ այդ կազմակերպությունները չեն կարող կիրառել ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն, այսինքն՝ դուրս են այս ստանդարտի կիրառման շրջանակից:

Համաձայն ՓՄԿ-ների՝ ՖՀՄՍ-ի կազմակերպություններն ունեն հանրային հաշվետվողականություն, եթե.

- ցուցակված են կամ գտնվում են ցուցակման գործընթացում՝ «Ցուցակված»
- ֆինանսաբանկային, ապահովագրական, ներդրումային են՝ «Ֆինանսական»:  
Ըստ էության, PIEs-ները բաղկացած են.
- Հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններից (publicly accountable entities) և
- հանրային շահից ելնելով PIEs դասակարգված այլ կազմակերպություններից՝ կախված նրանց գործունեության բնույթից, ծավալից կամ աշխատակիցների քանակից:

Ուստի, PIEs-ները ավելին են, քան «հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունները», և երկրորդ կետով սահմանված PIEs-ներին թույլատրվում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի կիրառումը:

### ***Խոշոր և միջին կազմակերպություններ***

PIEs հասկացության մոտ սահմանումները տրված են ՀՀ կառավարության կողմից 2017թ. դեկտեմբերին ընդունված «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումների» հայեցակարգում<sup>3</sup>, որը պատրաստվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ միջազգային փորձագետների առաջարկների հիման վրա (ՖՆ Հայեցակարգ):

---

<sup>1</sup> «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը հրապարակելու մասին», ՀՀ կառավարության 16.09.2010թ.-ի N1209 որոշում:

<sup>2</sup> “International financial reporting standards for small and medium entities (IFRS for SMEs)”, International Accounting Standards Board, www.ifac.org

<sup>3</sup> ՀՀ կառավարության 28.12.2017թ. նիստի N54 արձանագրություն՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին»:

ՖՆ հայեցակարգում սահմանվում է «հանրային հաշվետվողականությունն ունեցող կազմակերպություններ» եզրույթը (ՀՀՈւԿ)՝ ներառելով ցուցակված և ֆինանսական ոլորտի կազմակերպությունները, ինչպես սահմանված է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ում:

ՖՆ հայեցակարգով հաջորդիվ սահմանվում են «Խոշոր», «Միջին», «Փոքր» և «Միկրո» կազմակերպությունները՝ հիմնվելով նրանց տարեվերջի ընդհանուր ակտիվի, հասույթի և աշխատակիցների միջին թվաքանակի սահմանաչափերի վրա՝ բավարարելով նշված երեք չափանիշներից առնվազն երկուսին.

Ցուցանիշ	Միկրո	Փոքր	Միջին	Խոշոր
Տարեկան հասույթ, միլիարդ դրամ	≤ 0.3	> 0.3	> 4.0	> 20.0
Տարեվերջի դրությամբ ընդամենը ակտիվ, միլիարդ դրամ	≤ 0.175	> 0.175	> 2.0	> 10.0
Աշխատակիցների միջին թվաքանակ	≤ 10	> 10	> 100	> 250

Սահմանվում է, որ ՀՀՈՒԿ-ները, խոշոր և միջին կազմակերպությունները պարտավոր են հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ անկախ աուդիտորի եզրակացությամբ: Նկատենք, որ եթե այս սահմանման մեջ ներառված ՀՀՈՒԿ-ները այժմ էլ անցնում են պարտադիր աուդիտ, ապա խոշոր և միջին կազմակերպությունների պարտադիր աուդիտի պահանջը շատ ավելի ցածր սահմանված շեմով ներդրվել էր 2009թ.-ին և հանվել 2014թ.-ին<sup>1</sup>:

ՖՆ հայեցակարգով սահմանվող «Խոշոր» և «Միջին» կազմակերպությունները ըստ էության նույնպես դիտարկվում են որպես PIEs, չնայած այդ եզրույթը չի սահմանվում կամ կիրառվում: Նաև նկատենք, որ ՖՆ հայեցակարգով «Խոշոր» կազմակերպությունից պահանջվում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստել ՖՀՄՄ-ներով, իսկ «Միջին» կազմակերպություններին՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով:

Կարևոր է հաշվի առնել, որ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով<sup>2</sup> 2009թ.-ից մինչ այժմ պահանջվում է, որ մեկ միլիարդ ընդհանուր ակտիվ կամ շրջանառություն ունեցող կազմակերպությունները (որոնց անվանում են խոշոր) հրապարակեն ֆինանսական հաշվետվու-

<sup>1</sup> «ՀՀ-ում պարտադիր աուդիտի տեղին լինելը կազմակերպության բնույթից կախված», Գնել Խաչատրյան, Այլընտրանք եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր 2017թ., էջ 461-469; <[www.alternative.am](http://www.alternative.am)>:

<sup>2</sup> «Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 10.12.2009թ.-ին (հոդված 1):

թյուններ՝ առանց աուդիտորական եզրակացության: Ուշադրություն հրավիրենք, որ այս օրենքով «խոշոր» կազմակերպության սահմանաչափը նշանակալի փոքր է ՖՆ Հայեցակարգով «Միջին» կազմակերպության սահմանաչափից: Այժմ գործող օրենքով որպես «Խոշոր կազմակերպություն» սահմանվում է տարեկան շրջանառության կամ տարեվերջի դրությամբ ընդհանուր ակտիվի մեկ միլիարդ դրամի գերազանցում: Նման ցածր շեմի պայմաններում, 2016թ.-ին այդպիսի չափանիշներին բավարարող կազմակերպությունների քանակը կազմել է հազարի մոտ, մինչդեռ ՖՆ հայեցակարգով «Խոշոր» և «Միջին» կազմակերպությունների ընդհանուր քանակը կկազմի 500-ի մոտ՝ նրանց կեսի չափ:

Որով, ըստ էության, կառավարությունը համարում է, որ Հայեցակարգով «Միջին» և «Խոշոր» կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը երկրի համար ունի հանրային նշանակություն:

### ***ՀՀ-ում պարտադիր աուդիտի ենթակա այլ կազմակերպություններ***

Բացի ՀՀՈՒԿ-ներից, ՀՀ տարբեր օրենքներով սահմանված են պարտադիր աուդիտի ենթակա այլ կազմակերպություններ՝ ելնելով նրանց բնույթից և/կամ ծավալից, մասնավորապես հիմնադրամներ, բաց բաժնետիրական ընկերություններ, հասարակական կազմակերպություններ, խաղատներ, շահումով կամ ինտերնետ խաղերի կազմակերպիչներ, հեռուստաադիորնկերություններ<sup>1</sup>:

Ըստ ՖՆ հայեցակարգի՝ 2016թ.-ին ՀՀ-ում պարտադիր աուդիտի ենթակա են եղել 1,174 կազմակերպություն, որոնցից միայն 391-ն (33%) է անցել աուդիտ:

Համեմատության համար նշենք, որ Գերմանիայում 2017թ.-ին PIES քանակը կազմել է ընդամենը 1,150 կազմակերպություն, այսինքն, որոնք պարտավոր էին հրապարակել աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ (տե՛ս հաջորդող բաժինը):

### ***PIEs-ների ընդգրկումը Եվրոպական միությունում***

Եվրոպական միության («ԵՄ») անդամ-պետությունների կողմից PIES սահմանված կազմակերպությունների բնույթի վերաբերյալ համապարփակ վերլուծություն 2017թ. նոյեմբերին ներկայացված է Accountancy Europe

---

<sup>1</sup> «ՀՀ-ում պարտադիր աուդիտի տեղին լինելը կազմակերպության բնույթից կախված», Գնել Խաչատրյան, «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր 2017թ., էջ 461-469; <[www.alternative.am](http://www.alternative.am)>:

կազմակերպության կողմից<sup>1</sup>: Համաձայն այդ ուսումնասիրության՝ PIE-ները ԵՄ տարբեր երկրներում ներառել են.

- հասույթի, ընդամենը ակտիվի և աշխատակիցների թվաքանակի սահմանաչափերով սահմանված կազմակերպություններ,
- կենսաթոշակային հիմնադրամներ,
- պետական բաժնետիրական կազմակերպություններ,
- կառավարչական հաստատություններ,
- հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

Որպես վիճակագրություն՝ նշենք, որ 2017թ. դրությամբ ԵՄ-ում ամենաշատ PIE-ները ունեցել է Ֆրանսիան՝ 1,796, իսկ ամենաքիչը ունեցել է Էստոնիան՝ 30: Ընդհանրապես ԵՄ ուրք երկրներում PIE քանակը չի գերազանցել 200-ը, իսկ ուրք երկրներինը գտնվում էր 400-500-ի մոտակայքում:

### ***PIEs սահմանումը ԵՄՏՄ-ում***

Եվրասիական տնտեսական միության (ԵՄՏՄ) կողմից շրջանառվող ԵՄՏՄ տարածքում աուդիտորական գործունեության կանոնակարգման մասին համաձայնագրում<sup>2</sup> պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունները սահմանվում են հետևյալ,

- ցուցակված և ֆինանսական
- համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող,
- անդամ-երկրների կողմից սահմանվող այլ չափանիշներով սահմանված կազմակերպություններ:

Ըստ էության, ԵՄՏՄ աուդիտի համաձայնագրի նախագծով, բացի ՀՀՈԻԿ-ներից, այլ PIEs չեն սահմանվում, բացառությամբ մայր կազմակերպությունների, որոնք պատրաստում են խմբային հաշվետվություններ: Այս պահանջը տարօրինակ է, քանի որ դուստր կազմակերպություն ունենալը ողջամտորեն չի մատնանշում տվյալ կազմակերպության նկատմամբ հանրային նշանակալի լինելու վերաբերյալ:

ԵՄՏՄ անդամ-երկրներից Ղազախստանում, սահմանում է PIEs-ը (“организации публичного интереса”<sup>3</sup>) ներառելով բաժնետիրական, ֆինանսավարկային, հանքարդյունաբերության, հացահատիկ մշակող և

<sup>1</sup> “Definition of Public Interest Entities in Europe; State of play after the implementation of the 2014 Audit Reform”, Accountancy Europe, Audit & Assurance, November 2017

<sup>2</sup> “Соглашение об аудиторской деятельности на территории Евразийского эконемического союза” Проект, 2017, <[https://docs.eaeunion.org/ria/ru-ru/0121856/ria\\_02022017\\_doc.pdf](https://docs.eaeunion.org/ria/ru-ru/0121856/ria_02022017_doc.pdf)>

<sup>3</sup> Закон Республики Казакстан “О бухгалтерском учете и финансовой отчетности”, 28.02.2007; <[http://online.zakon.kz/document/?doc\\_id=30092011#pos=58;-103](http://online.zakon.kz/document/?doc_id=30092011#pos=58;-103)>

պետական մասնակցությամբ կազմակերպությունները: Սա անշուշտ շատ լայն ընդգրկում է:

Ռուսաստանը PIES չի սահմանում, սակայն պահանջում է որոշակի նմանատիպ բնույթի կազմակերպությունների համար պարտադիր աուդիտի նորմ, ցուցակվածից ու ֆինանսավարկային կազմակերպություններից բացի ներառելով այն կազմակերպությունները<sup>1</sup>, որոնց եթե տարեկան եկամուտը գերազանցել է 60 միլիոն ռուբլին (մոտ 500 միլիոն դրամ)՝ կամ հրապարակում է համախմբված հաշվետվություն:

### ***Անփոփում – առաջարկներ***

Պետության կողմից պարտադիր աուդիտի նորմ պետք է սահմանվի միայն այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք ունեն հանրային մեծ հետաքրքրություն և նշանակալիություն: Մյուս կազմակերպությունների նկատմամբ աուդիտի պահանջը պետք է սահմանվի նրանց բաժնետերի կամ կառավարման լիազոր անձանց, օրինակ՝ հիմնադրամների դեպքում, հոգաբարձուների խորհրդի կողմից:

Կարծում ենք՝ ՀՀ-ում պետք է իրավականորեն սահմանել PIES-ը և պարտադիր աուդիտի անհրաժեշտությունը: Այդ կազմակերպությունները պարտավոր են հրապարակել տարեկան ամբողջական ֆինանսական հաշվետվություններ՝ անկախ աուդիտորի եզրակացության հետ միասին: Մասնավորապես առաջարկում ենք նաև հետևյալը.

ա) Public-Interest Entities (PIEs) հայերեն թարգմանել հետևյալ կերպ՝ Հանրային նշանակալի կազմակերպություններ (ՀՆԿ-ներ), քանի որ «հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններ» եզրույթը, որը կիրառվում է ՖՆ հայեցակարգում, վերաբերում է միայն նրա մի մասին:

բ) ՀՆԿ-ների ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը չափազանց կարևոր է պետության և հանրության համար ու նրանց աուդիտի նկատմամբ պետք է սահմանել առավել խստացված պահանջներ, ինչպես դա արվել է ԵՄ-ի կողմից:

գ) Պետք է հստակեցնել ՀՆԿ-ների շրջանակը և ընդհանրապես պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը, քանի որ այժմ ՀՀ-ում պարտադիր աուդիտի շրջանակը նշանակալիորեն չի համապատասխանում պետական և հանրային անհրաժեշտությանը:

<sup>1</sup> Федеральный закон, Российская Федерация, «Об аудиторской деятельности», 24.12.2008.

# ՀԱՆՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԴԻՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

**ՀԱՅԿ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ*

**ԳՆԵԼ ԳԱՐԵԳԻՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

*MBA(US), ACCA (UK), Առևտրի ղեկավար,*

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ*

**Համառոտագիր:** Հռոլվածում ներկայացվել են հանրային նշանակալի կազմակերպությունների կարևորությունը, միջազգային փորձը այդ կազմակերպությունների նկատմամբ առևտրի առանձնահատուկ պահանջների վերաբերյալ և նրանց վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) առկա իրավական պահանջները: Նաև վերլուծության արդյունքում ներկայացվել են ՀՀ-ում այդ կազմակերպությունների նկատմամբ առևտրի պահանջների վերաբերյալ իրավական անհրաժեշտ կարգավորումները:

*Բանալի բառեր.* *PIEs, հանրային հաշվետվողականություն, հանրային կարևորություն, առևտր, ԵՄ առևտրի դիրեկտիվ:*

## РЕГУЛИРОВАНИЕ АУДИТА ОБЩЕСТВЕННО-ЗНАЧИМЫХ ОРГАНИЗАЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**АЙК ГЕРАСИМОВИЧ МНАЦАКАНЯН**, *д.э.н., профессор*

*Заведующий кафедрой финансов и бухгалтерского учета ЕГУ*

**ГНЕЛ ГАРЕГИНОВИЧ ХАЧАТРЯН**

*MBA(US), ACCA(UK), Руководитель аудита, соискатель*

**Аннотация:** В данной статье рассматривается важность общественно-значимых организаций, международный опыт специфических требований к подобным организациям, а также правовые требования РА. Также представлены рекомендации по эффективному регулированию аудита данных организаций в Республике Армения.

**Ключевые слова:** *общественно-значимые организации, общественная отчетность, общественные интересы, аудит, Директива ЕС по аудиту.*



## AUDIT REGULATION OF PUBLIC-INTEREST ENTITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

**HAYK GERASIM MNATSAKANYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor  
Head, Chair of Finances and Accounting, Yerevan State University*

**GNEL GAREGIN KHACHATRYAN**

*Ph.D. Student, Chair of Finances and Accounting, Yerevan State University  
MBA (US), ACCA (UK), Audit Partner, “Sos-Audit” LLC*

**Abstract:** This article presents the importance of Public-Interest Entities, international practice on audit regulations regarding these entities, and current regulations related to such entities in the Republic of Armenia. Also, recommendations are presented to effectively regulate the audit of those entities in the Republic of Armenia.

**Keywords:** *PIEs, public accountability, public interest, audit, EU Audit Directive.*

## ASHOT ARARAT NANYAN

*Ph.D. student, Department of Economics and Management  
Yerevan State University*

### PRODUCTION OF GREEN POWER IN ARMENIA: THE RISK OF CLIMATIC CONDITIONS

One important feature of green power production, frequently documented by various researchers, is volatility, coming from its dependence on weather and climatic conditions, in general. The question is how the government, on the one side, and power stations and regular consumers, on the other side, should deal with such a volatility. In this regard, some European countries have occasionally made use of strategies, such as demand management, storage of electricity (in pumped-storage plants), double structure systems, buffering strategies and so on<sup>1</sup>. In all these examples there is one thing extremely important for efficient operation of the respective systems, namely, the ability to predict the future “states of nature” that will confront individual production units.

Thus, below we suggest a simple structural framework that allows to better understand the implications of the uncertainty in climatic conditions for the production of hydropower and provides insights into calibration of the probabilities characterizing this uncertainty.

It is well established that the major risk, confronting the operations of hydropower stations, relates to the level of the pressure of water flow fuelling their production systems. For instance, quarterly financial statements of “ARTSAKH HEK” OJSC<sup>2</sup>, a medium-sized hydropower cascade situated in the Nagorno-Karabakh Republic, identify only two types of risks. The first one is the currency risk that is typical not only to hydropower plants, but also to almost every organizational unit operating in a developing economy. The

---

<sup>1</sup> **Auer, H., and Haas, R.**, “On Integrating Large Shares of Variable Renewables into the Electricity System”, *Energy* 115, 2016, pp. 1592–1601.

**Bertsch, J., Growitsch C., Lorenczik S., and Nagl S.**, “Flexibility in Europe’s Power Sector — An Additional Requirement or an Automatic Complement?”, *Energy Economics* 53, 2016, pp. 118–131.

**Edenhofer, O., Hirth L., Knopf B., Pähle M., Schlörner S., Schmid E., Ueckerdt F.**, “On the Economics of Renewable Energy Sources”, *Energy Economics* 40, Supplement 1, 2013, p. S 12 – S 23.

**Grand, D., Le Brun Ch., Vidil R., and Wagner F.**, “Electricity Production by Intermittent Renewable Sources: A Synthesis of French and German Studies”, *The European Physical Journal Plus* 131, 2016, pp. 329–340.

<sup>2</sup> [http://artsakhhek.am/?page\\_id=394](http://artsakhhek.am/?page_id=394).

second source of uncertainties is termed a risk of climatic conditions and is characterized as follows: “Climatic conditions have a significant impact on the company. The company’s profit is largely due to the volumes of water flow. Despite the fact that the analysis of indicators of water volumes for the past couple of years makes it possible to make quite accurate predictions, the volumes of the company’s profits and hence the Company’s financial results are due to climatic factors”. In fact, the risk of climatic conditions represents the uncertainty that gives rise to the volatility of the output of hydropower stations.

To understand the consequences of the risk of climatic conditions for the production of hydroelectricity, we consider a simple optimization problem, specified in ex ante. In particular, similar to standard moral hazard models (Grossman and Hart, 1983<sup>1</sup>, Holmstrom and Milgrom, 1987<sup>2</sup>) we assume that the relationship between the hydropower station and the distribution operator is governed by a contract which is signed before the station commences production process. The contract specifies electricity production schedule, i.e. the amount of electricity that should be produced by the hydropower station depending on the volume of water flow. In line with the conventional literature on incentives (Myerson, 1979<sup>3</sup>, Rogerson, 1985<sup>4</sup>), at the time of contracting the parties are confronted with postcontractual uncertainty, that is, at that time they do not know what the pressure of water flow will be after the contract is signed. This interpretation seemingly resembles the situation of moral hazard with the exception that in the former case there is no private information. However, different from Holmstrom (1982)<sup>5</sup> this interaction represents a decision under risk without any incentive compatibility issue because the interests of parties are highly aligned and they make a decision collaboratively<sup>6</sup>.

---

<sup>1</sup> **Grossman, S., and O. Hart**, “An analysis of the principal-agent problem”, *Econometrica* 52, 1983, pp. 7-45.

<sup>2</sup> **Holmstrom, B., and P. Milgrom**, “Aggregation and linearity in the provision of intertemporal incentives”, *Econometrica* 55, 1987, pp. 303-328.

<sup>3</sup> **Myerson, R.**, “Incentive compatibility and the bargaining problem”, *Econometrica* 47, 1979, pp. 61-74.

<sup>4</sup> **Rogerson, W.**, “Repeated moral hazard”, *Econometrica* 53, 1985, pp. 69-76.

<sup>5</sup> **Holmstrom, B.**, “Moral hazard in teams”, *Bell Journal of Economics* 13, 1982, pp. 324-340.

<sup>6</sup> In fact, strictly speaking, the optimization problem, formulated below, approximates the decision of a single agent, the hydropower company. However, in our view, this broader interpretation indicates the possibility of extending the underlying environment (also formally).

The initial notations necessary for the formulation of the problem in continuous distributions are as follows:

- $W$  –the level of water flow in the part of the river near the hydropower station;  $W \in [0, \bar{W}]$  with density  $f(W)$  and distribution  $F(W)$ ,
- $E(W)$  –production of electricity as a function of the volume of water; an unknown function and the choice “variable” of the model,
- $C(E(W), W)$  –total costs of producing electricity in the hydropower station; a known composite function of  $W$ ,
- $P$  –the price at which the hydropower station sells electricity to the distribution network operator; a given number which will be interpreted as an average revenue and be made dependent on the state of nature for the purpose of consistent calibration of the discrete version of the model,
- $\bar{E}(W)$  –the optimal size of the production in the given hydropower station, a given function,
- $\bar{\Pi}$  –the minimum necessary level of profit, a given number.

Notice that all of the aforementioned objects are given except for  $E(W)$ .

**Assumption:** The average cost of hydroelectricity production is independent of the production level, implying that the total cost function is linear in output, i.e.,

$$C(E(W), W) = c(W) * E(W),$$

where  $c(W)$  is a given function of the average cost.

As already emphasized, in this setting the main source of risks is the stochastic and uncertain nature of water supply, which triggers a further inefficiency in the production phase. To reflect this feature in the model,  $W$  is assumed to be a given random variable. Since, by definition, electricity production is a function of water consumption, it is random as well. The same is true for the production costs, which turn out to constitute a composite function of  $W$ .

The objective function of the hydropower station, that is concerned about minimizing the risk of climating conditions, is defined as follows:

$$R[E(W)] = \int_0^{\bar{W}} [E(W) - \bar{E}(W)]^2 f(W) dW. \quad (1)$$

Designing the optimal production schedule the company should not forget about its minimum profit requirement. This constraint is formalised in the following way:

$$\Pi[E(W)] = \int_0^{\bar{W}} [P - c(W)]E(W)f(W)dW \geq \bar{\Pi}, \forall W \in [0, \bar{W}]. \quad (2)$$

Notice that, by definition,  $R$  and  $\Pi$  are *functionals* depending on  $E(W)$ . Further, the problem of the hydropower station takes on the following form:

$$\min_{E(W)} R[E(W)] \quad (3)$$

subject to

$$\Pi[E(W)] \geq \bar{\Pi}, \quad \forall W \in [0, \bar{W}]. \quad (4)$$

Since we intend to bring the model (3)-(4) to the data, it is more convenient to solve it in discrete distributions. Let  $W_i$  be the  $i$ -th realization of the random variable  $W$ , and  $E_i = E(W_i)$ ,  $c(W_i) = c_i$ ,  $prob(W = W_i) = \pi_i$ ,  $i = 1, \dots, N$ . Then, we can rewrite the problem as follows:

$$\max_{(E_i)_{i=1}^N} \sum_{i=1}^N \pi_i (E_i - \bar{E}_i)^2 \quad (5)$$

subject to

$$\sum_{i=1}^N \pi_i (P - c_i) E_i \geq \bar{\Pi}. \quad (6)$$

For ease of mathematical derivations, we assume that at the optimum the constraint (6) holds as an equality. Then the problem (5)-(6) can be solved via Lagrange method.

The Lagrangian of (5)-(6) takes on the following form:

$$\mathcal{L} = \sum_{i=1}^N \pi_i (E_i - \bar{E}_i)^2 + \lambda \left( \sum_{i=1}^N \pi_i (P - c_i) E_i - \bar{\Pi} \right). \quad (7)$$

The First Order Conditions will be:

$$\frac{\partial \mathcal{L}}{\partial E_k} = 2(E_k - \bar{E}_k)\pi_k + \lambda(P - c_k)\pi_k = 0, k = 1, \dots, N. \quad (8)$$

$$\frac{\partial \mathcal{L}}{\partial \lambda} = \sum_{i=1}^N \pi_i (P - c_i) E_i - \bar{\Pi} = 0. \quad (9)$$

Solving the system of equations (8) for  $E_k, k = 1, \dots, N$ , and inserting these values into (9), we get the following equation:

$$\sum_{i=1}^N \pi_i (P - c_i) [2\bar{E}_i - \lambda(P - c_i)] = 2\bar{\Pi}. \quad (10)$$

(10) implies that:

$$\lambda = \frac{2\bar{E}_i \sum_{i=1}^N \pi_i (P - c_i) - 2\bar{\Pi}}{\sum_{i=1}^N \pi_i (P - c_i)^2}. \quad (11)$$

Hence:

$$E_k = \bar{E}_k \frac{\sum_{i \neq k} \pi_i (P - c_i)(c_k - c_i)}{\sum_{i=1}^N \pi_i (P - c_i)^2} + \bar{\Pi} \frac{P - c_k}{\sum_{i=1}^N \pi_i (P - c_i)^2}, k = \overline{1, N} \quad (12)$$

Then the following result immediately follows from (12):

**Proposition:** Irrespective of climatic conditions, an increase in the average profit leads to a higher production of electricity, as long as  $c_k \leq P$  for every  $k = 1, \dots, N$ .

This result becomes apparent once we additionally presume that in every state of nature production is below its exogenously given optimum. In such a case, in terms of risk an increase in all possible states is definitely preferable to any other configuration. Therefore, the power plant ends up in a situation described in the proposition.

In the next section under some refinements we apply the model to historical data of “ARTSAKH HEK” OJSC. One thing you might worry about is that by construction the model is static in contrast to temporal nature of the data. However, as will become evident below, our calibration strategy abstracts from time dimension in modifying the sequence of elements of the data and thereby addresses this concern.

**A methodology for calibration of probabilities:** Consider the following information that is available in financial statements of hydropower plants (unfortunately, below the notations of the model are slightly abused):

- $\{E_t\}_{t=1}^T$  —the amount of electricity produced in a hydropower station,
- $\{AC_t\}_{t=1}^T$  —the average cost of production,
- $\{AR_t\}_{t=1}^T$  —the average revenue of production,
- $\{\Pi_t\}_{t=1}^T$  —the profit of a hydropower station.

Further, the optimal level of electricity production as a function of t is defined as the trend component of  $\{E_t\}_{t=1}^T$  and is denoted by  $\{\bar{E}_t\}_{t=1}^T$ .

Consider three states of nature,  $k \in K = \{H, L, M\}$ , with probabilities  $Prob(k = H) = \pi_H \geq 0$ ,  $Prob(k = L) = \pi_L \geq 0$ ,  $Prob(k = M) = \pi_M \geq 0$ ,  $\pi_H + \pi_M + \pi_L = 1$ .  $H (L, M)$  corresponds to the situation when climatic conditions are favourable (disadvantageous, middling) to the electricity production. Define two cut-off values of the produced electricity,  $E^1$  and  $E^2$  ( $E^1 < E^2$ ), such that, by convention,  $L := \{E_t: E_t \leq E^1, t = 1, \dots, T\}$  is produced in state  $L$ ,  $M := \{E_t: E^1 < E_t < E^2, t = 1, \dots, T\}$  –in state  $M$ , and  $H = \{E_t: E_t \leq E^1, t = 1, \dots, T\}$  –in state  $H$ . Moreover, one of the criteria for choosing  $E^1$  and  $E^2$  should advicably be that  $L, M$  and  $H$  have more or less the same number of elements (so that ex ante probabilities do not affect the final outcome). Let  $|L| = T_L, |M| = T_M, |H| = T_H$  ( $T_L + T_M + T_H = T$ ) and let  $T^* = \min\{T_L, T_M, T_H\}$ . Afterwards, arrange the entries of each group in chronological order. Denote by  $E_{ki}$  the  $i$ -th ( $i = 1, \dots, T_k$ ) element of the ordered group  $k$  ( $k = L, M, H$ ). Eliminate the last  $T_k - T^*$  elements of each ordered group  $k$  ( $k = L, M, H$ ) and, thus, for every  $i$  ( $i = 1, \dots, T^*$ ) match together the three elements  $E_{Hi}, E_{Mi}$  and  $E_{Li}$ . This procedure is directed at matching each element of every group with, in a certain sense, the closest elements of the two other groups<sup>1</sup>. Then other characteristics, such average cost, average revenue, profit, optimal production, need to be attached to ever element  $E_{ki}$  forming the following vector of attributes for every  $k$  ( $k = H, L, M$ ) and  $i$  ( $i = 1, \dots, T^*$ ):

$$(E_{ki}, \bar{E}_{ki}, AC_{ki}, AR_{ki}, \Pi_{ki}).$$

$$\text{Eventually let } \bar{\Pi} = \frac{1}{3T^*} \sum_{k \in K} \sum_{i=1}^{T^*} \Pi_{ki}.$$

Using a sufficient statistic approach and endogenizing the price (that is approximated by the average revenue) with respect to the state of nature, in the context of empirical analysis (12) boils down to the folloing system of equations ( $i = 1, \dots, T^*$ ):

$$E_{Hi} = \bar{E}_{Hi} \frac{\pi_L(AR_{Li} - AC_{Li})(AC_{Hi} - AC_{Li}) + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})(AC_{Hi} - AC_{Mi})}{\pi_L(AR_{Li} - AC_{Li})^2 + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})^2 + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})^2} +$$

<sup>1</sup> For more on matching strategies, see, for example, **Cameron, C., Trivedi, P.**, “Microeconometrics: Methods and Applications”, Cambridge University Press, 2009, pp. 860-896.

$$+\bar{\Pi} \frac{AR_{Hi} - AC_{Hi}}{\pi_L(AR_{Li} - AC_{Li})^2 + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})^2 + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})^2}, \quad (13)$$

$$E_{Mi} = \bar{E}_{Mi} \frac{\pi_L(AR_{Li} - AC_{Li})(AC_{Mi} - AC_{Li}) + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})(AC_{Mi} - AC_{Hi})}{\pi_L(AR_{Li} - AC_{Li})^2 + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})^2 + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})^2} +$$

$$+\bar{\Pi} \frac{AR_{Mi} - AC_{Mi}}{\pi_L(AR_{Li} - AC_{Li})^2 + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})^2 + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})^2}, \quad (14)$$

$$E_{Li} = \bar{E}_{Li} \frac{\pi_M(AR_{Mi} - AC_{Mi})(AC_{Li} - AC_{Mi}) + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})(AC_{Li} - AC_{Hi})}{\pi_L(AR_{Li} - AC_{Li})^2 + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})^2 + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})^2} +$$

$$+\bar{\Pi} \frac{AR_{Li} - AC_{Li}}{\pi_L(AR_{Li} - AC_{Li})^2 + \pi_M(AR_{Mi} - AC_{Mi})^2 + \pi_H(AR_{Hi} - AC_{Hi})^2}. \quad (15)$$

The model closes with the following definition:

**Definition:** Equilibrium in hydropower production under the risk of climatic conditions is defined as a vector of probabilities  $(\pi_H, \pi_M, \pi_L)$  such that optimality conditions (13), (14) and (15) hold true for any given values of  $\{E_k, \bar{E}_k, AC_k, AR_k, \bar{\Pi}\}_{k \in K}$ .

Taking this definition into account, our objective is to calibrate equilibrium values of  $\pi_H, \pi_M, \pi_L$ , given the relationships in (13), (14) and (15). That is, we are interested in probabilities under which the model (5)-(6) reproduces the actual production data as closely as possible<sup>1</sup>. Because the model is based on the assumption of “random” water flow, these probabilities, in fact, would reflect the risk of climatic conditions.

With an aspiration to quantify the equilibrium, we proceed as follows: with a slight abuse of notation, the values, that are determined by (13), (14) and (15), are denoted by  $\hat{E}_{Hi}(\pi_H, \pi_M, \pi_L), \hat{E}_{Mi}(\pi_H, \pi_M, \pi_L), \hat{E}_{Li}(\pi_H, \pi_M, \pi_L)$ , whereas  $E_{Hi}, E_{Mi}, E_{Li}$  stand for the actual (observed) values. Naturally, we attempt to minimize the difference between the actual data and the data predicted by (13)-(15) taking into account that  $\pi_L, \pi_M$  and  $\pi_H$  are probabilities. Thus, in the end we arrive at the following problem:

---

<sup>1</sup> This procedure can also be interpreted in the following way: we ask what values the probabilities would take on, if the hydropower station operated in an optimal manner.



$$\max_{\pi_H, \pi_M, \pi_L} \sum_{i=1}^{T^*} [(E_{Hi} - \hat{E}_{Hi}(\pi_H, \pi_M, \pi_L))^2 + (E_{Li} - \hat{E}_{Li}(\pi_H, \pi_M, \pi_L))^2 + (E_{Mi} - \hat{E}_{Mi}(\pi_H, \pi_M, \pi_L))^2] \quad (16)$$

subject to

$$\pi_H + \pi_M + \pi_L = 1, \quad (17)$$

$$\pi_H \geq 0, \pi_M \geq 0, \pi_L \geq 0 \quad (18)$$

Alternatively, one could additionally weigh the terms  $(E_{ki} - \hat{E}_{ki}(\pi_H, \pi_M, \pi_L))^2$  by  $\pi_k$  for  $k = H, M, L$ , in the objective function (16). However, since this latter approach is not directly backed by the structure of the model, we refrain from implementing it and choose the former method.

At this point, we can already apply the aforementioned methodology to the quarterly data of “ARTSAKH HEK” covering the period from the third quarter of 2009 to the third quarter of 2016. First, it is helpful to look at the density of the produced electricity.




Figure. The density function of the power production in “ARTSAKH HEK” and its two thresholds.

The two cut-off values classifying the production stand out immediately: all the entries below 34 mln kwh are qualified as type *L*, the entries between 34 and 51- as type *M*, and the entries above 51- as type *H*. Thus, groups *H* and *M* comprise 10 and group *L*- 9 elements. This means that the effective number of elements is 9.

The “ordered” states of nature *H*, *M* and *L* are fully characterized in table 2.

We solve the problem (16)-(18) via some version of an evolutionary (genetic) algorithm and obtain the following equilibrium probabilities:

$$\begin{cases} \pi_H^* \approx 0.36, \\ \pi_M^* \approx 0.45, \\ \pi_L^* \approx 0.19. \end{cases}$$

These numbers can be interpreted as follows: given the uncertainty in the water flow, in the subsequent quarter the climatic conditions will be favourable (middling, unfavourable) to the production of electricity in “ARTSAKH HEK” with probability **0.36 (0.45, 0.19)**. Hence, it is most likely that in the fourth quarter of 2016 the level of the production of electricity in “ARTSAKH HEK” will be either high or low.

Table 2

The characteristics of groups *H*, *M* and *L* in “ARTSAKH HEK”<sup>1</sup>.

<b>State <i>H</i></b>	E, mln kwh (1)	E*, mln kwh (2)	Π, thousand drams (3)	AR, dram/kwh (4)	AC, dram/kwh (5)
2010-Q2	58.61	40.85	719412	16.07	-2.31
2010-Q3	56.69	40.54	1016728	22.55	-3.93
2010-Q4	51.37	40.22	1157427	31.44	-6.03
2013-Q4	52.77	39.29	701181	41.09	-12.01
2014-Q1	54.37	39.37	487230	16.38	-2.96
2014-Q4	56.78	39.49	863419	49.23	-12.15
2015-Q2	52.09	39.51	1101481	33.57	-6.97
2016-Q1	55.51	39.48	690747	19.00	-3.46
2016-Q2	56.92	39.46	1388874	37.53	-6.65
<b>State <i>M</i></b>	(1)	(2)	(3)	(4)	(5)
2009-Q4	45.40	41.41	727170	23.63	-5.24
2010-Q1	45.83	41.14	241780	9.00	-1.41
2011-Q3	35.17	39.35	184,524	9.50	-2.34
2012-Q3	37.97	38.92	302666	27.31	-0.01
2012-Q4	45.15	38.96	380406	33.59	-0.01
2013-Q1	37.15	39.02	12015	0.01	0.00
2013-Q2	34.39	39.11	250673	29.10	-9.09
2013-Q3	42.95	39.20	229447	30.37	-10.88
2014-Q2	42.29	39.42	902385	37.43	-7.71
<b>State <i>L</i></b>	(1)	(2)	(3)	(4)	(5)
2009-Q3	26.00	41.67	421775	25.55	-6.34
2011-Q1	28.07	39.90	47126	9.33	-2.87
2011-Q2	31.62	39.60	43501	12.11	-5.12
2011-Q4	31.27	39.15	189,229	9.99	-3.19
2012-Q1	21.22	39.01	32151	10.75	-5.12
2012-Q2	28.86	38.94	74,316	20.62	-7.61
2014-Q3	12.98	39.46	814050	138.76	-38.96
2015-Q3	14.07	39.50	991721	143.28	-39.24
2015-Q4	31.42	39.49	1058334	83.17	-24.41

<sup>1</sup> The data are taken from the quarterly financial statements of “ARTSAKH HEK”, OJSC.

## ԿԱՆԱԶ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՌԻՍԿ

### ԱՇՈՏ ԱՐԱՐԱՏԻ ՆԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության  
և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ*

**Համառոտագիր:** Հոդվածում առաջարկված է տնտեսագիտամաթեմատիկական մոդել՝ ուղղված էներգետիկայի այս ճյուղին բնորոշ կլիմայական պայմանների ռիսկի կառավարմանը: Մոդելը կիրառված է «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ի եռամսյակային տվյալների նկատմամբ, և գնահատված են հիդրոէլեկտրակայանի «հնարավոր վիճակների» հավասարակշիռ հավանականությունները:

*Բանալի բառեր.* կանաչ էներգետիկա, կլիմայական պայմանների ռիսկ, հավասարակշիռ հավանականություններ, գենետիկ ալգորիթմ, մաթեմատիկական մոդել, գնահատում:

## ПРОИЗВОДСТВО ЗЕЛЕННОЙ ЭНЕРГИИ В АРМЕНИИ: РИСК КЛИМАТИЧЕСКИХ УСЛОВИЙ

### АШОТ АРАРАТОВИЧ НАНЯН

*аспирант Факультета экономики и менеджмента,  
Ереванский государственный университет*

**Аннотация:** В данной статье предложена экономико-математическая модель для управления риском климатических условий, характерной для данной отрасли энергетики. Модель применена к квартальным данным ЗАО «Арцах ГЭС», и оценены равновесные вероятности «возможных состояний» гидроэлектростанции.

**Ключевые слова:** зеленая энергетика, риск климатических условий, равновесные вероятности, генетический алгоритм, математическая модель, оценка.

## PRODUCTION OF GREEN POWER IN ARMENIA: THE RISK OF CLIMATIC CONDITIONS

**ASHOT ARARAT NANYAN**

*Ph.D. student, Department of Economics and Management  
Yerevan State University*

**Abstract** The paper proposes an economic-mathematical model built by the author that will enable to manage the risk associated with climatic and/or environmental conditions typical to this sector of the electricity industry. The model is applied with respect to the quarterly data on “ARTSAKH HEK” OJSC, and equilibrium probabilities of “possible states” of the hydropower station are estimated.

**Keywords:** *Green energy, risk associated with climatic conditions, equilibrium probabilities, genetic algorithm, mathematical model, estimation.*

**ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱՉԴՈՂ  
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ներկայումս խիստ կարևորվում է ՀՀ բնակչության սոցիալական իրավիճակի, մասնավորապես վերջինիս կենսամակարդակի բարելավումը: Ըստ այդմ բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնների վերլուծության առումով հողվածում իրականացվել է գնահատում, որտեղ ներառվել են մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները՝ իրական ՀՆԱ-ն և սպառողական գների ինդեքսը, որն էլ հնարավորություն է տալիս բացահայտելու բնակչության կենսամակարդակի բարելավման կառավարման ուղիները:

Հարկ է նշել, որ գոյություն ունի որոշակի ազդեցություն իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի միջև: Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 1-ի տվյալները, ՀՀ-ում 2000 թվականին 1995 թվականի համեմատ սպառողական գների ինդեքսի աճի տեմպը նվազել է՝ կազմելով 64.1%, որը բերել է իրական ՀՆԱ-ի աճի տեմպի նվազման՝ 0.65%: 2008 թվականին 2000 թվականի համեմատ սպառողական գների ինդեքսի աճի տեմպը ավելացել է՝ կազմելով 9.87%, սակայն իրական ՀՆԱ-ի աճի տեմպը նվազել է՝ կազմելով 99.9%: 2010 թվականին 2008 թվականի համեմատ սպառողական գների ինդեքսի աճի տեմպը նվազել է՝ կազմելով 0.73%, որի արդյունքում իրական ՀՆԱ-ի աճի տեմպը ևս նվազել է՝ կազմելով 4.59%: 2016 թվականին 2010 թվականի համեմատ սպառողական գների ինդեքսի աճի տեմպը նվազել է՝ կազմելով 8.87%, հետևաբար իրական ՀՆԱ-ի աճի տեմպը ևս նվազել է՝ կազմելով 1.17%:

Իրական ՀՆԱ ցուցանիշի և սպառողական գների ինդեքսի կանխատեսման նպատակով կիրառվել է max-min մեթոդը, որը երկու ցուցանիշների դեպքում կանխատեսվող մեթոդ է: MAX-MIN մեթոդը կիրառելու նպատակով իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի ցուցանիշներից ընտրվել են առավելագույն և նվազագույն ցուցանիշները:

Իրական ՀՆԱ-ի առավելագույն արժեքը 114,1 է, իսկ նվազագույնը՝ 85,6, սպառողական գների ինդեքսի առավելագույն արժեքը՝ 276 , իսկ նվազագույնը՝ 98,6: Հաշվարկվել են վերջիններիս տարբերությունները, այնուհետև հարաբերությունները:

MAX-MIN մեթոդն է արտացոլվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$Y = a + bx \quad (1)^1$$

որտեղ՝


Y-ը իրական ՀՆԱ-ի ցուցանիշն է (%),

X-ը սպառողական գների ինդեքսն է (%),

a-ն հաստատուն մեծություն է,

b-ն փոփոխական (լրացուցիչ) մեծություն է:

Կիրառելով MAX-MIN մեթոդը՝ հաշվարկվել է b-ն (փոփոխական մեծությունը)՝ 6.2%: Այսինքն՝ սպառողական գների ինդեքսի մեկ տոկոսային փոփոխությունը կարող է բերել իրական ՀՆԱ-ի ցուցանիշի 6.2 տոկոսային կետի ավելացման: Ըստ այդմ էլ (1) բանաձևից դուրս է բերվել a-ն (հաստատուն մեծություն) 1597.1 ( $a = 114.1 - (6.2 * 276) = -1597.1$ ), այսինքն՝ սպառողական գների ինդեքսի լրացուցիչ 6.2% ավելացումը կարող է բերել իրական ՀՆԱ-ի 1597.1 տոկոսային կետի նվազեցման:



Գծապատկեր 1. 1995-2016 թթ. իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի համեմատական վերլուծությունը ՀՀ-ում (%)<sup>2</sup>

<sup>1</sup> Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

<sup>2</sup> ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 2017թ., 2013թ., 2008թ., 2003թ., 2001թ., «Ազգային հաշիվների համակարգ», էջ՝ 227, 227, 210, 216, 188, (<http://www.armstat.am/file/doc/99504388.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/99477463.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/99456328.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/638.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/99452313.pdf>), ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 2017թ., 2013թ., 2008թ., 2003թ., 2001թ., «Գներ և սակագներ», էջ՝ 416, 416,

ՀՀ-ում իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի միջև փոխկապակցվածությունը բացահայտելու նպատակով իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, որտեղ իրական ՀՆԱ-ն և սպառողական գների ինդեքսը ներկայացվել են ըստ հետևյալ բանաձևի.

$$GDP = a_0 + a_1 * CPI + \varepsilon_t \quad (2)$$

որտեղ՝

GDP-ն իրական ՀՆԱ-ի ցուցանիշն է (%),

CPI-ն սպառողական գների ինդեքսն է (%),

$a_0, a_1$ -ը անկախ փոփոխականների ճկունության գործակիցներն են,

$\varepsilon_t$  -ն պատահական սխալի մեծությունն է:

Վերլուծության համար դիտարկվել են 1997-2016թթ.՝ իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի տարեկան պաշտոնական վիճակագրական տվյալները: (2) մոդելը գնահատվել է ամենափոքր քառակուսիների եղանակով՝ Eviews 9 համակարգչային ծրագրի միջոցով<sup>1</sup>, սակայն, մինչ մոդելի գնահատելը, անհրաժեշտ է տվյալները համահարթեցնել, ուստի այդ նպատակով տվյալները լոգարիթմվել են՝ կեղծ կոռելյացիա ստանալուց խուսափելու համար (աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**1995-2016 թթ. իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի համեմատական վերլուծությունը ՀՀ-ում<sup>2</sup>**

	Իրական ՀՆԱ (Log)	ՍԳԻ (Log)
1997	4.634729	4.736198
1998	4.673763	4.688592
1999	4.635699	4.611152
2000	4.665324	4.597138
2001	4.698661	4.635699
2002	4.730039	4.61611
2003	4.737075	4.651099
2004	4.70411	4.672829
2005	4.733563	4.611152

397, 427,378, (<http://www.armstat.am/file/doc/99504423.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/99479593.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/99456363.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/645.pdf>), (<http://www.armstat.am/file/doc/99452348.pdf>):

<sup>1</sup> Eviews-ը Micro TSP փաթեթի Windows տարբերակն է, որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է, <http://www.eviews.com/> :

<sup>2</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

	Իրական ՀՆԱ (Log)	ՍԳԻ (Log)
2006	4.728272	4.633758
2007	4.732684	4.64823
2008	4.670021	4.691348
2009	4.449685	4.638605
2010	4.62301	4.683981
2011	4.647271	4.67935
2012	4.671894	4.630838
2013	4.637637	4.661551
2014	4.643429	4.634729
2015	4.639572	4.641502
2016	4.611152	4.591071

Ընտրված ցուցանիշների հիման վրա իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, համաձայն որի՝ բացահայտվել է իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի դիպուկության աստիճանը: Ավելին, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ի տվյալները, իրական ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի միջև գոյություն ունի նշանակալից բացասական կոռելյացիա՝ -0.60, ուստի իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են, որ դիտարկվող գործոնների միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն:

*Աղյուսակ 2*

**Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները<sup>1</sup>**

	Իրական ՀՆԱ	Սպառողական գների ինդեքս
Իրական ՀՆԱ	1	
Սպառողական գների ինդեքս	-0.60	1

<sup>1</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews 9 համակարգչային ծրագրի միջոցով:



# ՀՀ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

## ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**Համառոտագիր:** Հարկ է նշել, որ ներկայումս խիստ կարևորվում է ՀՀ բնակչության սոցիալական իրավիճակի, մասնավորապես վերջինիս կենսամակարդակի բարելավումը: Ըստ այդմ իրականացվել է գնահատում, որի արդյունքում բացահայտվել է, որ էական կապ գոյություն ունի դիտարկված ցուցանիշների միջև: Հետևաբար, կիրառելով MAX-MIN մեթոդը, հաշվարկվել է, որ սպառողական գների ինդեքսի լրացուցիչ 6.2 տոկոս ավելացումը կարող է բերել իրական ՀՆԱ-ի 1597.1 տոկոսային կետի նվազեցման, այսինքն՝ սպառողական գների ինդեքսի հետագա ավելացումը կբերի իրական ՀՆԱ-ի նվազման, ինչն էլ վկայում է ստվերային տնտեսության ծավալների ավելացման մասին:

*Բանալի բառեր. բնակչության կենսամակարդակ, իրական ՀՆԱ, սպառողական գների ինդեքս, մակրոտնտեսական ցուցանիշներ, MAX-MIN մեթոդ:*

## АНАЛИЗ ФАКТОРОВ, ВЛИЯЮЩИХ НА УРОВЕНЬ ЖИЗНИ В АРМЕНИИ

### ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** Следует отметить, что в настоящее время придается большое значение социальному положению населения Республики Армения, в частности, улучшению его жизненного уровня. Исходя из этого дана оценка, которая показывает, что существует значительная корреляция между наблюдаемыми показателями. Таким образом, используя метод MAX-MIN, предполагается, что увеличение индекса потребительских цен на 6,2% может привести к снижению реального ВВП на 1597,1 процентных пункта, другими словами, дальнейшее увеличение индекса потребительских цен приведет к снижению реального ВВП, что свидетельствует о повышении объема теневой экономике.

**Ключевые слова:** *жизненный уровень населения, реальный ВВП, индекс потребительских цен, макроэкономические показатели, метод MAX-MIN.*

# ANALYSIS OF THE FACTORS AFFECTING THE STANDARDS OF LIVING IN THE REPUBLIC OF ARMENIA

**LILIT MANVEL PETROSYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** It should be noted that the social conditions of the population of the Republic of Armenia, namely raising the standards of living need to be emphasized. Moreover, the author carries out an assessment and stipulates that there is a strong relationship among the considered variables. Hence, by utilizing the MAX-MIN method the author figures out that an additional consumer price index increase by 6.2p.p. could cause a real GDP decline by 1597.1 p.p.; in other words, the further increase in the consumer prices will lead to the real GDP decline, thus stating the evidence of increase in the size of the shadow economy.

**Keywords:** *Standards of living of the population, real GDP, consumer price index, macroeconomic indicators, the MAX-MIN method.*

## **ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

## **ՅՐԱՆՏ ԶԱՎԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.թ**

*«Յուրով» ընկերության գնումների և լոգիստիկայի  
բաժնի ղեկավար*

### **ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԳԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶՅՈՒՄ**

Ժողովրդագրական հիմնախնդիրների տեսանկյունից ներկայիս դարաշրջանն աշխարհում կարելի է անվանել ճակատագրական և կանխորոշիչ, աստիճանաբար ավելանում է 65-ից բարձր տարիքի անձանց և նվազում ծնելիության տեսակարար կշիռը (աղյուսակ 1), աստիճանաբար ավելանում է 1 երեխա ունեցող ընտանիքների թվաքանակը: Աշխարհի շուրջ 100 երկրներում 1 կնոջ հաշվով միջին պտղաբերության մակարդակն այդպես էլ չի հասնում 2-ի<sup>1</sup>: Հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ այդուհանդերձ 20-21-րդ դարաշրջանը մի շարք գիտնականների կողմից բնորոշվում է որպես ժողովրդագրական պայթյունի դարաշրջան, քանզի բնորոշվում է նաև բնակչության աննախադեպ աճով: Արդյո՞ք սա իրականություն է: Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ բնակչության աննախադեպ աճ գրանցվել է XX դարի կեսերին, սակայն աճի տեմպն աստիճանաբար նվազում է: Այսպես, եթե 1970թ. աշխարհի մասշտաբով բնակչության տարեկան աճը եղել է 2.09%, ապա արդեն 2015թ. այն կազմել է 1.19%: Համեմատության համար նշենք, որ 2017թ. տվյալ ցուցանիշը կազմում է 1.06%: Արդի աշխարհի ժողովրդագրական մեկ այլ հիմնախնդիր է նաև բնակչության սեռային բաշխվածության անհամամասնության աճը: Մասնավորապես աղյուսակ 1-ի տվյալներով կարող ենք տեսնել, որ 65-ից բարձր տարիքային խմբում 1970-2016թթ. գերակշռում են կանայք: Իհարկե, այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ չափահասների շրջանում մահացության աստիճանն ավելի մեծ է տղամարդկանց, քան կանանց շրջանում: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0-14 տարեկանների սեռային բաշխվածության մեջ դիտարկվող ժամանակահատվածում գերակշռում են տղաները, և 2005թ.-ից սկսած՝ նրանց տեսակարար կշիռն աճում է՝ կարող ենք ասել, որ ոչ հեռու ապագայում սա կարող է հանգեցնել քավական ծանր հետևանքների: Այսպես, եթե շարունակական բնույթ կրի

<sup>1</sup> <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/rankorder/2127rank.html?countryName=Russia&countryCode=rs&regionCode=cas&rank=197>

0-14 տարիքային խմբում աղջիկների տեսակարար կշռի նվազումը, սա կհանգեցնի ընդհանուր ծնելիության մակարդակի անկման, քանզի արդեն աշխարհի մասշտաբով ամուսնությունների թիվն էապես կկրճատվի, և բնակչության աճի տեմպը կնվազի անգամ 2017թ. ցուցանիշից, որն ի դեպ դիտարկվող ժամանակահատվածում ամենացածրն էր:

*Աղյուսակ 1*

**Աշխարհի ժողովրդագրական պատկերը՝ թվերով, 1970-2016թթ. վերջի դրությամբ<sup>1</sup>**


	1970	1980	1985	1990	1995	2000	2005	2010	2015	2016
65-ից բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում, %	5.31	5.90	5.94	6.16	6.52	6.89	7.31	7.64	8.28	8.48
Մինչև 14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը ողջ բնակչության մեջ, %	37.53	35.30	33.81	32.90	31.84	30.11	28.04	26.83	26.18	26.06
0-14 տարեկանների մեջ աղջիկների տեսակարար կշիռը	0.49	0.49	0.49	0.49	0.49	0.49	0.48	0.48	0.48	0.48
0-14 տարեկանների մեջ տղաների տեսակարար կշիռը	0.51	0.51	0.51	0.51	0.51	0.51	0.52	0.52	0.52	0.52
65-ից բարձր տարիքային խմբում տղամարդկանց տեսակարար կշիռը	0.42	0.42	0.42	0.42	0.43	0.44	0.44	0.45	0.45	0.45
65-ից բարձր տարիքային խմբում կանանց տեսակարար կշիռը	0.58	0.58	0.58	0.58	0.57	0.56	0.56	0.55	0.55	0.55
Բնակչության տարեկան աճը, %	2.09	1.75	1.75	1.74	1.51	1.33	1.25	1.22	1.19	1.18

Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ 2017թ. հուլիսի դրությամբ աշխարհի բնակչությունը կազմել է շուրջ 7.5 մլրդ մարդ, որից 1.4 մլրդը բնակվում է Չինաստանում, 1.3 մլրդը՝ Հնդկաստանում, 327 մլնը՝ ԱՄՆ-ում, 261 մլնը՝ Ինդոնեզիայում, 207 մլն՝ Բրազիլիայում<sup>2</sup>:

2017թ. դրությամբ աշխարհի ամենախիտ բնակեցված 10 երկրները ներկայացված են գծապատկեր 1-ում:

<sup>1</sup> [http://databank.worldbank.org/data/reports.aspx?Code=SP.POP.TOTL&id=1ff4a498&report\\_name=Popular-Indicators&populartype=series&ispopular=y#](http://databank.worldbank.org/data/reports.aspx?Code=SP.POP.TOTL&id=1ff4a498&report_name=Popular-Indicators&populartype=series&ispopular=y#)

<sup>2</sup> <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/xx.html>



**Գծապատկեր 1. 2017թ. հուլիսի դրությամբ աշխարհի ամենախիտ բնակեցված 10 երկրները<sup>1</sup>:**

Այսպիսով, ստացվում է, որ աշխարհի ամենախիտ բնակեցված 10 երկրներում միջին հաշվով 1 քվ-ի վրա բնակվում է 6726 մարդ: Թերևս հենց այս տեսանկյունից է ժամանակին Մալթուսն ասել, որ աշխարհի բնակչության նմանատիպ արագ աճն ի վերջո կհանգեցնի գերբնակեցման<sup>2</sup>: Համաձայն Մալթուսի տեսության՝ աշխարհի բնակչությունն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ առկա ռեսուրսները՝ թվաքանական պրոգրեսիայով, ուստի կգա մի ժամանակ, երբ սովոր կտիրի աշխարհում: Մյուս կողմից, սակայն, Մալթուսը նշում էր, որ աշխարհի բնակչության թվաքանակի գերաճը պարբերաբար զսպվում է բնական և արհեստածին եղանակներով՝ բնական աղետներ, պատերազմներ և այլն:

Սակայն, ինչպես արդեն նշեցինք, նման տեմպերով բնակչության աճի և կին-տղամարդ անհամամասնության մեծացման հետ մեկտեղ Մալթուսի անհանգստությունն ի չիք կդառնա, քանզի բնակչության թվաքանակը կսկսի նվազել անգամ բնական ճանապարհով:

Այսպիսով, մենք քննարկեցինք վերջին 50 տարվա ժողովրդագրական հիմնախնդիրներն աշխարհի մակարդակով: Հասկանալի է, որ դրանք այս կամ այն կերպ դրսևորվել են նաև Հայաստանում: ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրներին առավել մանրամասն կանդրադառնանք ստորև:

Անկախության տարիներից ի վեր բազմիցս են քննարկվում ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները, որոնց ներքո որպես կանոն դիտարկվում են արտագաղթը, ծնելիության անբավարար մակարդակը, հիվանդությունների երիտասարդացման հիմնախնդիրը՝ կապված էկոլոգիական

<sup>1</sup> Գծապատկերը կազմված է հեղինակների կողմից՝ համաձայն [www.cia.gov](http://www.cia.gov) կայքի պաշտոնական վիճակագրական տվյալների:

<sup>2</sup> Malthus T.R. (1807). Essay on the population, vol. i. L, p.306

հիմնախնդիրների հետ, կին-տղամարդ համամասնության շեղումը, ամուսնությունների միջին տարիքի, ինչպես նաև ամուսնալուծությունների աճը և այլն:

Աղյուսակ 2-ում ներկայացված է ՀՀ ժողովրդագրական պատկերը 1970-2016թթ.՝ աշխարհի հետ համեմատականներ անցկացնելու համար:

*Աղյուսակ 2*

**ՀՀ ժողովրդագրական պատկերը՝ թվերով, 1970-2016թթ. վերջի դրությամբ<sup>1</sup>**


	1970	1980	1985	1990	1995	2000	2005	2010	2015	2016
65-ից բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում, %	5.56	5.80	5.96	5.41	5.63	8.38	10.02	11.90	10.99	10.91
Մինչև 14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը ողջ բնակչության մեջ, %	39.34	34.27	30.27	29.88	30.04	29.26	25.81	21.46	19.46	19.84
0-14 տարեկանների մեջ աղջիկների տեսակարար կշիռը	0.49	0.49	0.49	0.49	0.49	0.49	0.48	0.48	0.47	0.47
0-14 տարեկանների մեջ տղաների տեսակարար կշիռը	0.51	0.51	0.51	0.51	0.51	0.51	0.52	0.52	0.53	0.53
65-ից բարձր տարիքային խմբում տղամարդկանց տեսակարար կշիռը	0.41	0.40	0.38	0.37	0.37	0.39	0.40	0.41	0.41	0.40
65-ից բարձր տարիքային խմբում կանանց տեսակարար կշիռը	0.59	0.60	0.62	0.63	0.63	0.61	0.60	0.59	0.59	0.60
Բնակչության տարեկան աճը, %	2.49	2.11	1.65	1.52	0.05	-2.04	-0.63	-0.65	-0.39	0.37

Աղյուսակ 2-ի տվյալները համադրելով աղյուսակ 1-ի տվյալների հետ՝ կարող ենք փաստել մի շարք էական մարտահրավերներ ՀՀ ժողովրդագրական ոլորտում, քանզի ակնհայտ է դառնում, որ թեպետ համաշխարհային մակարդակով ժողովրդագրական հիմնախնդիրները սրվել են, սակայն դրանք էլ ավելի սուր են արտահայտված ՀՀ-ում: Մասնավորապես աղյուսակ 2-ից երևում է, որ սկսած 2000թ. Հայաստանում 65-ից բարձր տարիքային խմբի տեսակարար կշիռը ողջ բնակչության թվաքանակում գերազանցում է համաշխարհային ցուցանիշը շուրջ 2%-ային կետով, ինչն ավելի սուր է արտահայտում բնակչության ծերացման վտանգը ՀՀ-ում: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ տվյալ ցուցանիշը բարձր է ոչ միայն համաշխարհայինից, այլև ՀՀ մինչև 2000թ. արձանագրված ցուցանիշից և ցավոք ունի աճի միտում: Այս երևույթը

<sup>1</sup> [http://databank.worldbank.org/data/reports.aspx?Code=SP.POP.TOTL&id=1ff4a498&report\\_name=Popular-Indicators&populartype=series&ispopular=y#](http://databank.worldbank.org/data/reports.aspx?Code=SP.POP.TOTL&id=1ff4a498&report_name=Popular-Indicators&populartype=series&ispopular=y#)

կարող է ունենալ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Հասկանալի է, որ առաջնային պատճառներից են արտագաղթը, ծնելիության մակարդակի անկումը, արցախյան հակամարտության շարունակականությունը մինչ օրս: Մակայն հարկ է նշել նաև, որ ներկայումս 65-ից բարձր տարիքային խմբում 1940-1950-ականների սերունդն է, երբ ծնելիության գործակիցն ուներ բավական բարձր ցուցանիշներ (գծապատկեր 2): Ընդ որում այս խնդիրը դեռևս մոտակա 10 տարում էլ ավելի կսրվի, երբ 65-ից բարձր տարիքային խումբ մուտք կգործեն 1950-60-ականների ծնվածները:

Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ ծնելիության ընդհանուր գործակիցը 1940-2017թթ.:




**Գծապատկեր 2. ՀՀ ծնելիության ընդհանուր գործակիցը 1940-2017թթ. (հազար բնակչի հաշվով)<sup>1</sup>**

Ինչպես տեսնում ենք, ծնելիության ընդհանուր գործակիցն էականորեն նվազել է 2000թ., այն անգամ ցածր է եղել 1990-ականների ցուցանիշի մակարդակից, երբ ՀՀ բնակչությունը գտնվում էր սոցիալական շատ ծանր կացության մեջ: Եվ թեպետ 2010թ. ծնելիության ընդհանուր գործակցի աճ է գրանցվել, սակայն դրա արդյունքում այն դեռևս բավական ցածր է 1990-ականների մակարդակից և բացի այդ՝ չի մեղմացրել բնակչության ծերացման վտանգը:

Համեմատության համար ներկայացնենք 2001թ. և 2011թ. անցկացված մարդահամարի արդյունքում բացահայտված ՀՀ մշտական բնակչության տարիքային բաշխումը (գծապատկեր 3):

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա. 1940-2000թթ. տվյալները վերցված են հետևյալ աղբյուրից՝ [http://armstat.am/file/article/demos\\_08\\_3.pdf](http://armstat.am/file/article/demos_08_3.pdf) էջ 6, իսկ 2000-2017թթ.՝ <http://armstat.am/am/?nid=12&id=11005&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>



**Գծապատկեր 3. ՀՀ ընդհանուր բնակչության տարիքային կազմը՝ ըստ 2001թ. և 2011թ. մարդահամարի արդյունքների<sup>1</sup>**


Ինչպես տեսնում ենք, 10 տարվա կտրվածքով ակնհայտ է, որ ՀՀ մշտական բնակչության թվաքանակում կրճատվում են ինչպես 15-19 տարեկանների, այնպես էլ 20-49 տարեկանների տեսակարար կշիռները: Սա ևս մեկ անգամ վկայում է ազգի ծերացման վտանգի մասին:

Երկրի ազգային անվտանգության տեսանկյունից հարկ ենք համարում համեմատական վերլուծություն իրականացնել նաև ՀՀ և հարևան երկրների, ինչպես նաև մի շարք զարգացած և զարգացող երկրների 2017թ. ծնելիության ցուցանիշների միջև (գծապատկեր 4):

ՀՀ-ն 1 կնոջ հաշվով ծնելիության միջին մակարդակով գտնվում է աշխարհի 224 երկրների շարքում 177-րդ տեղում: Իսկ գծապատկեր 4-ի տվյալներից էլ ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում ծնելիության մակարդակը ցածր է անգամ մի շարք զարգացած երկրների նույն ցուցանիշից: Ընդ որում զարգացած երկրներին սովորաբար բնորոշ է լինում ծնելիության ցածր մակարդակը, և թերևս այս երևույթը կարելի է բացատրել դրանցում առկա միգրանտների քանակով: Սակայն այստեղ առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ ՀՀ ծնելիության մակարդակը ցածր է հարևան բոլոր երկրներից: Այս պատկերի շարունակականությունը կարող է հանգեցնել ազգային անվտանգության մակարդակի նվազման:

<sup>1</sup> Գծապատկերը կազմված է հեղինակների կողմից՝ ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների. 2001թ. մարդահամարի արդյունքները վերցված են հետևյալ աղբյուրից՝ <http://docs.armstat.am/census/pdfs/21.pdf>, իսկ 2011թ.-ինը՝ <http://armstat.am/file/doc/99478253.pdf>






**Գծապատկեր 4. Օսեղիության միջին մակարդակը 1 կնոջ հաշվով, 2017թ. հաշվարկներ<sup>1</sup>**

Կրկին վերադառնալով աղյուսակ 1-ի և 2-ի տվյալների համեմատությանը՝ պետք է նշենք ևս մի քանի անհանգստացնող հանգամանք: Նախ և առաջ մինչև 14 տարեկանների տեսակարար կշիռն աստիճանաբար նվազում է ՀՀ բնակչության թվաքանակում, և այն գրեթե 6%-ային կետով ցածր է համաշխարհային նույն ցուցանիշից: Բացի դրանից՝ Հայաստանում առավել սուր է արտահայտված նաև մինչև 14 տարեկանների սեռային բաշխվածության անհամաչափությունը, որը ոչ հեռու ապագայում կարող է հանգեցնել ծնելիության մակարդակի առավել մեծ անկման:

Փորձենք բացատրել ծնելիության անբավարար մակարդակը՝ կախված ամուսնությունների և ամուսնալուծությունների ցուցանիշից: Գծապատկեր 5-ում ներկայացված են ՀՀ ամուսնությունների և ամուսնալուծությունների գործակիցները՝ ըստ 1996-2016թթ.:


Ինչպես նկատում ենք, 1997-2002թթ. գրանցվել են թե՛ ամուսնությունների և թե՛ ամուսնալուծությունների ամենացածր ցուցանիշները՝ այնուհետև արձանագրելով ոչ կայուն աճի միտում: Հետաքրքրական է, սակայն, այն հանգամանքը, որ 2010-2014թթ. գրանցված ամուսնության գործակցի աճին զուգընթաց նվազել է ծնելիության ընդհանուր գործակիցը: Մա կարող է նշանակել, որ նորաստեղծ ընտանիքներն ամեննին էլ չեն շտապում երեխա ունենալ՝ առաջնային դարձնելով կարիերայի առաջխաղացումը:

<sup>1</sup> Գծապատկերը կազմված է հեղինակների կողմից՝ համաձայն հետևյալ աղբյուրի՝ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/rankorder/2127rank.html?countryName=Russia&countryCode=rs&regionCode=ca&rank=197>



**Գծապատկեր 5. Ամուսնությունների և ամուսնավուժությունների գործակիցները ՀՀ-ում, 1000 բնակչի հաշվով<sup>1</sup>**

Պատկերն առավել ակնառու կլինի, եթե վերլուծենք առաջին ամուսնությունների տարիքային փոփոխությունը 1990-2016թթ. (գծապատկեր 6):



**Գծապատկեր 6. Առաջին ամուսնությունների միջին տարիքը ՀՀ-ում 1990-2016թթ.<sup>2</sup>**

Ինչպես երևում է գծապատկեր 6-ից, դիտարկվող ժամանակահատվածում անշեղորեն աճել է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ [http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_\\_2%20Population%20and%20social%20processes\\_\\_28%20Population/PS-pp-3-2016.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a](http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__28%20Population/PS-pp-3-2016.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a)


<sup>2</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ ԱՎԾ տվյալների՝ [http://armstat.am/file/article/demog\\_2017\\_6.pdf](http://armstat.am/file/article/demog_2017_6.pdf)

առաջին ամուսնությունների միջին տարիքը՝ 4 տարով, տղամարդկանց համար այն 26-ից դարձել է 30, կանանց համար՝ 22-ից՝ 26: Եվ եթե այս միտումը ծնելիության մակարդակի անկման հետ մեկտեղ պահպանվի, ապա ոչ ուշ, քան 20-30 տարի հետո Հայաստանում բնական հավելված չի գրանցվի, և մենք կունենանք «մահացող ազգի կարգավիճակ»:

Բազմիցս է խոսվում այն մասին, որ ամուսնության միջին տարիքի աճը պայմանավորված է սոցիալական խնդիրներով, սակայն մենք չենք կարող անշեղորեն պնդել այդ թեզը, քանզի անգամ ամենավատ սոցիալական պայմաններում գտնվելու պարագայում (1990-ականներ) Հայաստանում ամուսնության միջին տարիքն ավելի ցածր էր, քան այսօր: Ընդ որում տվյալ պարագայում մենք գործ ունենք ևս մեկ պարադոքսալ երևույթի հետ. ամուսնության միջին տարիքի աճն ուղեկցվում է ամուսնալուծությունների թվի աճով, այսինքն՝ տվյալ պարագայում հասարակությունում արդյունավետ չի գործում «տասը չափիր, մեկ կտրիր» հանրահայտ սկզբունքը:

Ի վերջո ցանկանում ենք անդրադառնալ նաև կին-տղամարդ անհամամասնության հիմնախնդրին, որն էլ ավելի է սրում ժողովրդագրական խնդիրները ՀՀ-ում:

Գծապատկեր 7-ը ցույց է տալիս սեռային անհամամասնությունը ՀՀ մշտական բնակչության ամուսին/կին չունեցող անձանց շրջանում՝ ըստ տարիքային խմբերի:



Գծապատկեր 7. ՀՀ մշտական բնակչության ամուսին/կին չունեցող անձանց տարիքային բաշխումը՝ ըստ 2011թ. մարդահամարի տվյալների<sup>1</sup>

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա՝ <http://armstat.am/file/doc/99478253.pdf>

Գծապատկերն ակնհայտորեն ամուսին/կին չունեցող անձանց բաժանում է 2 մասի՝ յուրաքանչյուրին բնորոշ առանձին խնդրով: Այսպես, 30-55 տարիքային խմբում կանայք 54229-ով ավելին են, քան նույն տարիքային խմբի տղամարդիկ, ուստի տվյալ դեպքում ոչ բոլոր կանայք կարող են նույն տարիքային խմբում ամուսին գտնելու հնարավորություն ունենալ: Իսկ ահա 19-29 տարիքային խմբում տղամարդիկ 64042-ով ավելին են, քան կանայք, այսինքն՝ այս իրավիճակում էլ բոլոր տղամարդիկ չէ, որ կկարողանան կին ընտրել նույն տարիքային խմբում: Մտացվում է, որ նույն տարիքային խմբում ընտրություն կատարելով անգամ լավագույն տարբերակում նվազագույնը 118271-ով կրճատվում է հայ ընտանիքների պոտենցիալ քանակը՝ իր հետ բերելով նաև ծնելիության, հետևաբար նաև ազգի պոտենցիալ աճի կրճատում: Խնդրի լուծումը, օրինակ՝ կարող է լինել այնպիսի ընտանիքների կազմումը, որտեղ կինը 30-50 տարիքային խմբից է, իսկ ամուսինը՝ 15-29: Սակայն սա մեր մենթալիտետում քիչ ընդունված տարբերակ է, ուստի չենք կարծում, որ մեր նշած թիվը էապես կկրճատվի անգամ այս տարբերակի կիրառման պարագայում: Լուծումներից հաջորդը կարող է լինել խառնամուսնությունների տեսքով, սակայն տվյալ պարագայում կարծում ենք՝ այդպես էլ չի լուծվի ազգի ծնելիության խնդիրը, քանզի մեզանում խառնամուսնությունները որպես կանոն նպաստում են ծագումով հայ ամուսնու կամ կնոջ տեղափոխմանը ոչ հայազգի կնոջ կամ ամուսնու բնակության երկիր՝ տվյալ երկրի քաղաքացիություն ստանալու և այլ ակնկալիքներով: Ի վերջո որպես լուծում պետական մակարդակով կարող ենք առաջարկել միայնակ մայրերին մի շարք առավելությունների տրամադրումը: Մա թերևս որոշ չափով կարող է լուծել 30-55 տարիքային խմբում պոտենցիալ ծնելիության մակարդակի խնդիրը: Մասնավորապես պետության կողմից կարող են բացվել պետական մանկապարտեզներ՝ մտուրային տարիքի երեխաներ ունեցող միայնակ աշխատող մայրերին աջակցելու նպատակով, ինչպես նաև երկարաձգվել տվյալ թիրախային խմբում գտնվող կանանց հետծննդյան վճարովի արձակուրդի ժամանակահատվածը: Հասկանալի է, սակայն, որ տվյալ առաջարկությունն իր հետ կարող է բերել մի շարք խնդիրներ, ուստի և առավել հստակ առաջարկությունների իրականացման համար անհրաժեշտ ենք համարում հետազայում ավելի մանրամասն վերլուծության իրականացումը:

Համանման հիպոթետիկ լուծում, սակայն, չենք կարող առաջարկել մինչև 30 տարեկան տղամարդկանց քանակի գերազանցությամբ պայմանավորված ծնելիության պոտենցիալ մակարդակի աճի համար: Ավելին, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ սփյուռքահայ երիտասարդու-

թյունը կին ընտրելիս «հիշում է հայրենիքը», և ընտրություն են կատարում Հայաստանից, ապա տվյալ պարագայում մինչև 30 տարիքային խմբում կին չունեցող տղամարդկանց և կանանց միջև անհամամասնությունն էլ ավելի կխորանա: Տվյալ պարագայում ունենք առկա փաստ, սակայն հետազայում նման պատկերից խուսափելու համար կարող ենք առաջարկել ծնվող երեխաների համար տրամադրվող նպաստի չափի տարբերակում՝ հոգուտ ծնվող աղջիկների: Այս դրույթը ևս առավել մանրամասն հաշվարկների կարիք ունի, ուստի սրան խորությամբ կանդրադառնանք հետագայում:

Այսպիսով, կատարված աշխատանքի արդյունքում հանգում ենք մի շարք եզրակացությունների.

- աշխարհի բնակչությունը ներկայումս աճում է նվազող տեմպերով, և 2017թ. աշխարհի բնակչության տարեկան աճը եղել է 1.06%:
- Աշխարհի մասշտաբով ներկայումս ինչպես մինչև 14 տարեկանների տարիքային խմբում, այնպես էլ նոր ծնվող երեխաների մեջ գերակշռում են տղաները, և այդ անհամամասնությունն աճի միտում ունի:
- Աշխարհի բնակչության մեջ աստիճանաբար աճում է 65-ից բարձր տարիքային խմբի տեսակարար կշիռը՝ 2016թ. հասնելով 8.48%-ի, իսկ Հայաստանում այս ցուցանիշն ավելի մեծ է՝ 10.91% (2016թ.):
- Հայաստանում 65-ից բարձր տարիքային խմբի տեսակարար կշիռը բնակչության մեջ ոչ միայն բարձր է համաշխարհային միջին ցուցանիշից, այլև ունի շարունակական աճի միտում:
- Ծնելիության ընդհանուր գործակիցը Հայաստանում ներկայումս ցածր է 1990թ. արձանագրված նույն ցուցանիշից:
- Ծնելիության միջին մակարդակով Հայաստանը աշխարհի 224 երկրների շարքում գրավում է 177-րդ տեղը՝ հետ մնալով բոլոր հարևան երկրներից:
- Մինչև 14 տարիքային խմբի տեսակարար կշիռը նվազում է ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում, սակայն Հայաստանի ցուցանիշը 6%-ային կետով ցածր է անգամ աշխարհի միջինից:
- Հայաստանում առաջին ամուսնությունների տարիքը 26 տարվա ընթացքում աճել է 4 տարով:
- Հայաստանում 15-29 տարեկանների շրջանում կին չունեցող տղամարդիկ գերազանցում են նույն տարիքային խմբի ամուսին չունեցող կանանց 64042-ով, իսկ 30-55 տարիքային խմբում ամուսին չունեցող կանայք գերազանցում են նույն տարիքային խմբի կին չունեցող տղամարդկանց 54229-ով, ինչն էլ նպաստում է ծնելիության պոտենցիալ մակարդակի անկմանը:

Ամփոփելով արդյունքները՝ նշենք, որ ներկայումս ՀՀ ժողովրդագրական պատկերում առկա են մի շարք լրջագույն խնդիրներ, որոնք շուտափույթ լուծում չստանալու պարագայում ոչ հեռու ապագայում կնպաստեն մեզանում նոր՝ «մահացող ազգ» եզրույթի շրջանառությանը: Ուստի անհրաժեշտ է լրջորեն մոտենալ առաջին հայացքից զուտ անձնական հարթության վրա գտնվող հիմնախնդիրին և դրան տալ պետական լուծում, հակառակ դեպքում այն կդառնա ազգային անվտանգության տեսանկյունից անլուծելի հիմնախնդիր:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԳՈՒՄ

**ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**ՀՐԱՆՏ ԶԱՎԵՆԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*«Յուրում» ընկերության գնումների և լոգիստիկայի*

*բաժնի ղեկավար*

**Չամառոտագիր:** Ժողովրդագրական հիմնախնդիրների տեսանկյունից ներկայիս դարաշրջանը համարվում է մեծ փոփոխությունների ժամանակաշրջան:

Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ ժողովրդագրական պատկերը, համեմատել այն համաշխարհային միտումների հետ, վեր հանել ՀՀ տնտեսության զարգացումը խոչընդոտող ժողովրդագրական հիմնախնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ:

Արդյունքում ստացվել է, որ ՀՀ-ում ժողովրդագրական հիմնախնդիրները համահունչ են համաշխարհային միտումներին, սակայն առավել սուր են արտահայտված և անհապաղ միջոցառումներ չնախաձեռնելու պարագայում կարող են հանգեցնել անցանկալի հետևանքների:

***Բանալի բառեր.** Ժողովրդագրական հիմնախնդիր, ծնելիություն, ամուսնությունների միջին տարիք, բնակչության աճ, տեսակարար կշիռ:*

## ТЕКУЩИЕ ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ В АРМЕНИИ

**ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН**, к.э.н.

*Научный сотрудник Института экономики имени М. Котаяна, НАН РА*

**ГРАНТ ЗАВЕНОВИЧ АРУТЮНЯН**, к.э.н.

*Руководитель департамента закупок и логистики в ООО ЮКОМ*

**Аннотация:** С точки зрения демографических проблем нынешняя эпоха считается периодом больших перемен.

Целью статьи является анализ демографической картины РА, сравнение ее с глобальными тенденциями, выявление демографических проблем, препятствующих развитию экономики Армении, и предложение возможных решений.

В результате выяснилось, что демографические проблемы в Армении соответствуют мировым тенденциям, но выражены острее и могут привести к нежелательным последствиям, если не предпринять соответствующие меры.

**Ключевые слова:** демографические проблемы, рождаемость, средний возраст бракосочетаний, рост населения, удельный вес.

## CURRENT DEMOGRAPHIC ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA

**LILIT NORAYR SARGSYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**HRANT ZAVEN HARUTYUNYAN**, *Ph.D. in Economics*,

*Head of Procurement and Logistics Department, "UCOM" LLC*

**Abstract:** From the point of view of demographic issues, the current epoch is considered a period of great changes.

The purpose of the article is to analyze the demographic stance in the Republic of Armenia, to compare it with global trends, to reveal those demographic issues that hinder the development of the Armenian economy, and to propose possible approaches to address them.

The findings of the study state that the demographic issues the Republic of Armenia faces reflect the global trends, however, are more deeply-rooted and could cause undesirable consequences.

**Keywords:** Demographic issues, fertility, average age of women at marriage, population growth, share.

## **ՏԱԹԵՎԻԿ ՍՄՐԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

### **ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կանգնած է գիտելի-քահենք տնտեսության կայացման խնդրի առջև, որի կարևորագույն տարրերից մեկը համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումն է: Վերջինս անհնար է իրականացնել առանց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների համընդհանուր կիրառման: Պետության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ենթադրում է էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում, որն էլ իր հերթին պահանջում է տեխնոլոգիաների բնագավառում նորարարությունների իրականացում:

2010 թ. տարեսկզբին ՀՀ կառավարությունը հաստատել է 2010-2012 թթ. համար «ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը», որը, ըստ կառավարության բնորոշման, ներկայացնում է ՀՀ-ում ինտերնետի (համացանցի) և էլեկտրոնային ծառայությունների մասսայականացման ինքնատիպ «ճանապարհային քարտեզ»<sup>1</sup>.

Հայեցակարգի շրջանակներում ընդգրկված էր 2010-2012թթ. ժամանակահատվածը, որն արտացոլում է էլեկտրոնային հասարակության ձևավորման և էլեկտրոնային կառավարման ներդրման նախագծի զարգացման տարբեր փուլերը, ընդհուպ մինչև էլեկտրոնային կառավարման իրականացումը և էլեկտրոնային հասարակության կայացման կայուն հիմքերի ստեղծումը: Դրանք են<sup>2</sup>

1. նախնական,
2. գործարկման,
3. զարգացման,
4. կայացման:

Նախնական փուլն ընդգրկում էր 2010 թվականի առաջին և երկրորդ եռամսյակները: Այս փուլի ընթացքում իրագործվել են հիմնական կառույցների կազմակերպումը, հիմնարար փաստաթղթերի ստեղծումը և e-gov.am (էլեկտրոնային կառավարում) փորձանմուշի մեկ-

<sup>1</sup> **Աննա Մինասյան**, էլեկտրոնային կառավարման զարգացման հեռանկարները ՀՀ-ում, «Հայաստան – Ֆինանսներ և Էկոնոմիկա» ամսագիր, #1 (127) հունվար 2011, էջ 18,19:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգ (2010-2012թթ.), էջ 9,10:



նարկը: Դրանց հիման վրա հետագայում կառուցվել են e-gov.am հիմնական վեբ-ծառայությունները, որոնք կազմում են էլեկտրոնային կառավարման հիմքը:

Քանի որ էլեկտրոնային հասարակությունը ենթադրում է հասարակության լայն խավերի ներգրավում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեջ, ներդրվել է «Համակարգչային գրագիտություն դպրոցում» նախագիծը, որն ապահովում է հանրակրթական դպրոցների շրջանավարտների պարտադիր համակարգչային հմտությունների տիրապետումը և նրանց բնականոն ընդգրկումը էլեկտրոնային հասարակության մեջ: Նմանատիպ եզակի նախագիծ է նաև «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս մատչելի դարձնելու համակարգիչները և դրանց առնչվող էլեկտրոնային կառավարման գործառույթները բնակչության ամենալայն խավերի համար:

Գործարկման փուլը տևել է 2010 թվականի երկրորդ եռամսյակից մինչև 2011 թվականի երկրորդ եռամսյակը: Այս փուլի ընթացքում տեղի ունեցան էլեկտրոնային կառավարման փորձանմուշի իրագործումը, փորձարկումը և տեղակայումը: Իրականացվեցին մի շարք հիմնարար էլեկտրոնային կառավարման ծառայություններ, ինչպես նաև դրանց կիբեռանվտանգությունն ապահովող միջոցառումներ: Վերանայվեցին կառավարության փաստաթղթաշրջանառությունը և նրա կիրառումները: Ապահովվեց տվյալների ռեգիստրների համատեղելիություն, և կիրառվեցին դրանց ստեղծման և օգտագործման ընդհանուր մոտեցումները:

Այս փուլի ընթացքում զուգահեռաբար նախագծվեցին ու մեկնարկեցին մի շարք կարևոր էլեկտրոնային կառավարման ծառայություններ: Իրագործվեցին մի շարք պետական նշանակության ծրագրեր՝ հաշվի առնելով միջազգային փորձը և ֆինանսական հնարավորությունները:

Էլեկտրոնային կառավարման երրորդ զարգացման փուլի միջոցառումները սկսվել են 2011 թվականի երկրորդ եռամսյակից և շարունակվել մինչև 2012 թվականի երկրորդ եռամսյակի վերջը: Այս փուլի ընթացքում իրագործվեցին բոլոր հիմնական՝ G2G (կառավարության տարբեր մարմինների միջև), G2B (կառավարության և մասնավոր ձեռնարկությունների միջև), G2C (կառավարության և քաղաքացիների միջև) վեբ-ծառայությունները:

Պետական մարմինների միասնական փաստաթղթաշրջանառության ու տվյալների ռեգիստրների պայմաններում այժմ հնարավոր է ապահովել էլեկտրոնային կառավարման նախագծի հիմնական բաղադրիչների ներդաշնակ աշխատանքը: Գործարարության և հասարակու-

թյան ընդգրկումը էլեկտրոնային հասարակության մեջ պայմանավորված է տեղեկատվական կրպակների լայն տեղակայմամբ, համացանցի մատչելիությամբ, (բջջային) հեռախոսակապի հնարավորությունների օգտագործմամբ:

Ապագայում էլեկտրոնային առևտրի խրախուսումը, էլեկտրոնային բովանդակության լայն տարածումը (էլեկտրոնային գրադարաններ, կրթական էլեկտրոնային պաշարներ, դասավանդման էլեկտրոնային եղանակներ և այլն) հնարավորություն կտան զգալիորեն նվազեցնել թվային ձեռքբերածքը քաղաքի և գյուղի, ունևոր և չքավոր խավի, հաշմանդամների և հասարակության այլ խմբերի միջև:

Կայացման փուլի միջոցառումներն իրականացվել են 2012 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակներում: Կայացման փուլի համար մշակվել և իրագործվել են նախագծեր, որոնք պետք է ապահովեն e-gov.am համակարգի ինտեգրումը միջազգային կառույցներում:

ՀՀ-ում արդեն իսկ ներդրվել և արդյունավետորեն գործում է էլեկտրոնային կառավարման Mulberry համակարգը: Այսօրինակ համակարգի ներդրումը հնարավորություն է ընձեռում պետական կառավարման մարմինների աշխատանքին հաղորդել նոր որակ: Այն բարձրացնում է պետական կառավարման արդյունավետությունը, ապահովում թափանցիկության բարձր մակարդակ:

Անցումն էլեկտրոնային կառավարման Mulberry համակարգին ենթադրում է, որ պետական ծառայությունները մատուցվում են համացանցի միջոցով: Դա նվազագույնի է հասցնում պետական ծառայողի և քաղաքացու շփումը և էապես կրճատում կոռուպցիոն ռիսկերը: Համակարգն ապահովում է փաստաթղթաշրջանառության արդյունավետությունը: Ակնթարթորեն վարչապետի հանձնարարականները հասնում են նախարարներին, ստացվում է նրանց արձագանքն այդ փաստաթղթերի վերաբերյալ: Փաստաթղթերն արխիվացվում են, իրականացվում է վերահսկողություն, թե կատարողականն ինչպիսին է:

Պետական մարմիններում էլեկտրոնային կառավարման Mulberry համակարգի ներդրումն ապահովում է շոշափելի արդյունքներ: Դրանք են<sup>1</sup>.

1. պետական մարմիններում շրջանառվող բոլոր փաստաթղթերը ստանում են էլեկտրոնային տեսք, և փաստաթղթերի շարժը պետական մարմինների ստորաբաժանումների և աշխատակիցների միջև կատարվում է էլեկտրոնային եղանակով,

---

<sup>1</sup> Էլեկտրոնային կառավարման Mulberry համակարգի մասին ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանի ելույթը, <http://www.slaq.am/arm/news/7171/>

2. պետական կառավարման մարմինների միջև ողջ նամակագրությունը նույնպես իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Արդյունքում, միայն պետական մարմիններում փաստաթղթերի շրջանառության ժամկետը նվազում է մի քանի անգամ,

3. հաշվի առնելով այն, որ նամակագրությունը պետական մարմինների միջև իրականացվում է էլեկտրոնային եղանակով, առաջացավ էլեկտրոնային փաստաթղթերի՝ իրավական ուժ ունենալու խնդիրը: Էլեկտրոնային փաստաթղթերը իրավական ուժ կարող են ստանալ միայն էլեկտրոնային թվային ստորագրության առկայության պարագայում: «Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը ընդունվել էր դեռևս 2004 թվականին<sup>1</sup>: Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը զուգահեռ կառավարությունը ստեղծեց նաև էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոն, որը մեկնարկել է 2013թ. հոկտեմբերի 28-ին: Այս համակարգի ներդրման արդյունքում բնակչությանը տրամադրվող մի շարք էլեկտրոնային ծառայությունների թիվն էապես աճել է, քանի որ էլեկտրոնային միջավայրի զարգացման նախապայմանն անձանց անվտանգ նույնականացումն է<sup>2</sup>: Էլեկտրոնային եղանակով իրականացվող նամակագրությունը պետական մարմինների միջև հավաստվում է հենց էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային ծառայության հասանելիությունը և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի աշխատանքն անհնար է ապահովել առանց համապատասխան նույնականացման միջոցների ներդրման: Համակարգն ունի մեկ այլ առավելություն ևս. այն ստեղծում ու պահպանում է ցանկացած փաստաթղթի շարժի պատմությունը: Դա նշանակում է, որ մշտապես կարելի է տեսնել կամ վեր հանել, թե փաստաթուղթը որ պահին որ աշխատակցի մոտ է գտնվել, երբ և ում է առաքվել, ինչպիսի կարծիքներ են հնչել և ինչ քննարկումներ են եղել փաստաթղթի վերաբերյալ,

4. փաստաթղթաշրջանառության պատմության պահպանումը հնարավորություն է տալիս հսկողություն սահմանելու հանձնարարականների, նամակների, դիմումների քննարկման ժամկետների նկատմամբ: Տրվում է չկատարված, ժամկետանց, ուշացումով կատարված աշխատանքների մասին հաշվետվություններ ստանալու հնարավորություն,

<sup>1</sup> «Էլեկտրոնային փաստաթղթի էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2005.01.26/7(379) հոդ.114, ՀՕ-40-ն:

<sup>2</sup> <https://www.ekeng.am/hy/certificationauthority/>

5. համակարգն ընձեռում է փաստաթղթերի որոնման լայն հնարավորություն, դա բարձրացնում է արխիվային աշխատանքների արդյունավետությունը,

6. համակարգի թերևս ամենակարևոր առավելությունն այն է, որ քաղաքացիները, դիմելով պետական մարմինների, հնարավորություն են ստանում իրենց դիմումների ընթացքին հետևելու կառավարության ինտերնետային կայքի միջոցով: Քաղաքացին, դիմելով որևէ պետական մարմնի, որն արդեն անցում է կատարել էլեկտրոնային կառավարման համակարգին, ստանում է 12 նիշանոց հսկիչ համար, որի միջոցով հնարավորություն է ստանում հետևելու իր դիմումի ընթացքին, տեսնել ում է այն մակագրված, և երբ պետք է ակնկալի պատասխանը: Պատասխանի ստացման ժամկետն անցնելուց հետո պատասխան չստանալու դեպքում քաղաքացին կարող է ավելի արդյունավետ պայքարել տեղեկատվություն և պատասխան ստանալու իր իրավունքի պաշտպանության համար: Իսկ պատասխանը պատրաստ լինելուն պես հրապարակվում է ինտերնետային կայքում էլեկտրոնային ձևաչափով՝ հաստատված իրավաբանական ուժ ունեցող էլեկտրոնային ստորագրությամբ: Քաղաքացին ցանկության դեպքում կարող է պետական մարմնից ստանալ պատասխանի թղթային տարբերակը ևս:

Պետք է նշել, որ էլեկտրոնային կառավարման բնագավառում մարգպետարանների առաջընթացը նույնպես շոշափելի է: Mulberry համակարգը ներդրվել է ՀՀ բոլոր մարգպետարաններում: Mulberry համակարգը պարզապես գործիք է, այն ունի հետևյալ ծրագրերը և հնարավորություններ<sup>1</sup>:

Ծրագրեր.

- փաստաթղթերի կառավարում,
- գործավարություն,
- աշխատանքային գործընթացների կառավարում,
- էլեկտրոնային կառավարման համակարգեր, ֆունկցիոնալ հնարավորություններ՝
- կարգաբերվող փաստաթղթերի դաշտեր,
- կարգաբերվող աշխատանքային գործընթացներ,
- էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն,
- օգտագործողների կառավարում,
- հաշվետվությունների ստեղծում,
- որոնման համակարգ,

---


<sup>1</sup> <http://www.aipartnership.co.uk/E-GovernmentSystems.html>

- վերջնաժամկետների կառավարում,
- վեբ տեխնոլոգիաների օգտագործում:

Ինչպես արդեն նշվեց, այս համակարգն արդեն ներդրվել է բոլոր ՀՀ գերատեսչություններում: Դիտարկենք՝ ինչպես է տեղի ունենում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում:

Եթե որևէ հարցով նախարարություն է գալիս մտից փաստաթուղթ, ապա ըստ գործավարության կարգի, եթե փաստաթուղթն ունի թղթային տեսք, այն անմիջապես տեսածրվում է, որպես նկար մուտքագրվում է համակարգի մեջ և հանձնվում քարտուղարության պետին: Էլեկտրոնայինի դեպքում անմիջապես հանձնվում է քարտուղարության պետին: Իր հերթին քարտուղարության պետն այն ուղարկում է մակագրության աշխատակազմի ղեկավարին: Աշխատակազմի ղեկավարն այն ուղարկում է նախարարին կրկին մակագրության: Նախարարը, մտից փաստաթղթից կախված, փոխնախարարներից մեկին մակագրում է համապատասխան հանձնարարականով: Եթե հարցը կապված է հեռահաղորդակցության ոլորտի հետ, այս դեպքում փոխնախարարն ուղարկում է տեղեկատվայնացման վարչության պետին: Նա էլ իր հերթին հանձնարարում է իր անմիջական ենթակային կատարել հանձնարարությունը: Մասնագետը, կատարելով առաջադրանքը, ի պատասխան տվյալ մտից փաստաթղթի, ստեղծում է էլեկտրոնային ելքից փաստաթուղթ և այն ուղարկում հաստատման վարչության պետին: Եթե կան տվյալ առաջադրանքին մասնակից այլ վարչություններ, ապա վարչության պետը տվյալ փաստաթուղթը համաձայնեցնում է նրանց հետ: Համաձայնեցումից հետո վարչության պետը փաստաթուղթն ուղարկում է փոխնախարարին՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացման: Այնուհետև արդեն վավեր փաստաթուղթն ուղարկվում է քարտուղարության պետին, իսկ հետո՝ քարտուղարություն: Քարտուղարության աշխատակիցը վերջնական ստուգում է ելքից փաստաթուղթը: Եթե ուղղումների կարիք կա, ապա այն հետ է ուղարկվում կատարողին և համապատասխան ուղղումներից հետո կրկին գալիս է քարտուղարություն: Համակարգը հնարավորություն է տալիս, որ այս շղթայի ցանկացած փուլում փաստաթուղթը հնարավոր լինի հետ ուղարկել վերախմբավորման, որպեսզի քարտուղարություն հասնի որքան հնարավոր է քիչ թերություններով: Քարտուղարությունում, եթե տվյալ փաստաթուղթը անհրաժեշտ է ուղարկել ավանդական եղանակով, ապա այն տպվում է և հաստատվում կնիքով, հակառակ դեպքում ուղարկվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կառա-

վարման համակարգով (ԷՓԿՀ): Այժմ վերը նկարագրվածը ներկայացնենք գծապատկերի տեսքով:



**Գծապատկեր<sup>1</sup>. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը ՀՀ-ի տրանսպորտի և կապի նախարարությունում**

Պետք է նշել, որ էլեկտրոնային կառավարման համակարգում մարզպետարանների առաջընթացը նույնպես շոշափելի է: Mulberry համակարգը ներդրվել է ՀՀ-ի բոլոր մարզպետարաններում: Այժմ մարզերում շարունակվում են համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածության գործընթացները, տվյալների բազայի համակարգման, տվյալների թարմացման, ինչպես նաև դրանցից օգտվելու մեխանիզմների մշակման աշխատանքները, աստիճանաբար մարզերում բարելավվում է համացանցի կապի որակը:

Ներկայումս ՀՀ-ում գործում է էլեկտրոնային կառավարման պաշտոնական կայքը ([www.e-gov.am](http://www.e-gov.am)), որն առաջարկում է բազմաթիվ պետական ծառայություններ, որոնց քանակը հետզհետե ավելանում է: Կայքի նպատակն է մեկտեղել ՀՀ պետական գերատեսչությունների էլեկտրոնային

<sup>1</sup> [www.mtc.am](http://www.mtc.am)

կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների հիմնապաշարները և հարմարավետ միջավայր ստեղծել դրանց օգտագործման համար: Կայքում, բացի բազմաթիվ էլեկտրոնային ծառայություններից, տեղադրված են նաև ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի ստորագրած որոշումները, ինչպես նաև կառավարության հերթական նիստում ընդգրկված հարցերի նախագծերը:

Ունենալով բազմազան բաժիններ՝ e-gov.am կայքում գոյություն ունեն որոշ գործիքներ, որոնք ակտիվորեն չեն գործում, և պետք է աշխատանքներ տանել դրանց կատարելագործման ուղղությամբ: Կարելի է առանձնացնել հետևյալ բաժինները՝ անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգը, Հայաստանի ազգային պատկերասրահը, էլեկտրոնային վիզան՝ e-visa: Ներկայումս e-gov.am կայքը հասարակության կողմից ակտիվ չի օգտագործվում, քանի որ գոյություն ունեն մի շարք դժվարություններ.

- ✓ հասարակությունը չունի համակարգչից օգտվելու բավականաչափ հմտություններ,
- ✓ սխալվելու դեպքում չգիտի որտեղ դիմել:

Դրա հետ կապված անհրաժեշտ է իրականացնել որոշակի բարելավումներ.

- հիմնել էլեկտրոնային կառավարման էլեկտրոնային ուսուցման կենտրոն,
- կայքի հնարավորությունների վերաբերյալ տեղեկացում,
- կայքից օգտվելիս սխալվելու դեպքում հատուկ գործիքների ստեղծում՝ խնդիրը լուծելու համար:

Էլեկտրոնային կառավարման ներդրման գործընթացում մեծ է ինտերնետից օգտվողների դերը: Որքան մեծանա այս ցուցանիշը, այնքան մեծ կլինի էլեկտրոնային կառավարման համակարգից օգտվողների հավանականությունը: Այսպես, 2016թ. ՀՀ-ում ինտերնետից օգտվողների թվաքանակը կազմել է 2,126,716 մարդ՝ ընդ որում 2014թ. համեմատությամբ աճելով 1,4 անգամ:

## Ինտերնետից օգտվող բաժանորդների քանակը 2000-2016թթ.

Տարի	ՀՀ-ում ինտերնետից օգտվողներ (մարդ)	ՀՀ-ի բնակչություն (մարդ)
2000	30,000	3,002,594
2001	40,000	3,000,164
2006	161,000	2,950,060
2008	172,800	2,968,586
2009	191,000	2,967,004
2010	1,396,550	2,966,802
2011	1,800,000	3,060,927
2012	1,190,504	3,037,000
2013	1,399,186	3,022,000
2014	1,470,000	3,014,000
2015	2,126,716	2,998,600
2016	2,126,716	2,934,152

Եթե ուսումնասիրվի ինտերնետից օգտվողների տեսակետից առաջատար երկրների ցանկը, ապա կարելի է փաստել, որ այստեղ ՀՀ-ն ընդգրկված չէ (այն զբաղեցնում է 114-րդ տեղը), ուստի այս ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան:

Այսօր ՀՀ էլեկտրոնային կառավարման զարգացման և առաջխաղացման աշխատանքներն իրականացնում է Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակը (ԷԿԵՆԳ): ԷԿԵՆԳ-ը հանդիսանում է ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման նախագծերի ներդրման և իրականացման գործընթացի համակարգողն է՝ խթանելով էլեկտրոնային կառավարման ոլորտում քաղաքացիների և ձեռնարկությունների սերտ հաղորդակցությունը պետական կառույցների հետ:

Ընկերությունը ստանձնել է ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության նախագծերի իրականացման պատասխանատվությունը և իրականացնում է մի շարք կարևորագույն նախագծեր, որոնք միտված են էլեկտրոնային կառավարման ոլորտի զարգացմանն ու առաջընթացին: ԷԿԵՆԳ-ը միակ լիազորված ընկերությունըն է ՀՀ-ում, որը տրամադրում է թվային ստորագրություններ ֆիզիկական անձանց, ինչպես նաև զբաղվում է էլեկտրոնային կառավարմանն առնչվող մի շարք նախագծերի ներդրմամբ: ԷԿԵՆԳ-ի կողմից իրականացվող նախագծերից մեկը կենսաչափական

<sup>1</sup> <http://www.internetworldstats.com/asia/am.htm>



կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի ներդրման ծրագիրն է: Ներկայումս անձնագիրը ծառայում է և՛ որպես ճամփորդական փաստաթուղթ, և՛ երկրի ներսում անձի նույնականացման միջոց, սակայն այժմ այս գործառույթները կրաժանվեն էլեկտրոնային նոր անձնագրի և նույնականացման էլեկտրոնային քարտի միջև: ԷԿԵՆԳ-ի կողմից իրականացվող ծրագրերից է եղել նաև էլեկտրոնային ստորագրության նախագիծը:

Այսօր աշխարհում ավելի ու ավելի մեծ թվով ընկերություններ են կիրառում էլեկտրոնային ստորագրություններ, որն ապահովում է բարձր արտադրողականություն և արդյունավետություն ծախսերի կրճատման, ներդրման արագ հետգնման, բարձր ապահովության, կեղծիքների և աղավաղումների կրճատման միջոցով:

*Աղյուսակ 2*

**ՀՀ-ում թողարկված էլ. ստորագրությունների քանակը  
2015-2017թթ. ընթացքում<sup>1</sup>**

	Թողարկված էլեկտրոնային ստորագրություններ
2015թ.	61806
2016թ.	61281
2017թ. հունվարից մինչև դեկտեմբեր	56843

ԷԿԵՆԳ-ը ներգրավված է նաև ՀՀ-ում էլեկտրոնային առողջապահության և հեռաբժշկության համակարգերի ներդրման աշխատանքներում:

ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման գործընթացում հավասարաչափ կարևորվում են էլեկտրոնային կառավարման՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, կառավարության և մասնավոր ձեռնարկությունների միջև, կառավարության և քաղաքացիների միջև ծառայությունները:

Հայաստանը՝ որպես գործարարության և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն, երկրում գիտելիքահեռք տնտեսության և էլեկտրոնային հասարակության ձևավորման նպատակով խիստ կարևորում է պետական մարմինների հետ քաղաքացիների և մասնավոր հատվածի ազատ և թափանցիկ էլեկտրոնային փոխադարձ շփումների ու փոխադարձ կապի ապահովումը, ինչը հնարավոր է իրականացնել բարձ-

<sup>1</sup> <https://www.ekeng.am/hy/>

րորակ, դեպի սպառողը կողմնորոշված էլեկտրոնային ծառայությունների մատուցման և սպառողական կառավարման առաջադեմ մեթոդների կիրառման միջոցով:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

**ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Տվյալ հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են էլեկտրոնային հասարակության կայացման կայուն հիմքերի ստեղծման առանձին փուլերը: Վերլուծվել են e-gov.am և Mulberry համակարգերի ներդրման և շահագործման պայմանները: Բացահայտվել են այդ համակարգերի ներդրումն ապահովող շոշափելի արդյունքները: Պետք է նշել, որ կարևորվում են պետական մարմինների և քաղաքացիների ու մասնավոր հատվածի ազատ և թափանցիկ էլեկտրոնային փոխշփումները, ինչը հնարավոր է իրականացնել բարձրորակ ու առաջադեմ մեթոդների կիրառման միջոցով:

*Բանալի բառեր.* *էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային ստորագրություն, կառավարության փաստաթղթաշրջանառություն, էլեկտրոնային ծառայության հասանելիություն, Mulberry համակարգ:*

## СИСТЕМА ЭЛЕКТРОННОГО УПРАВЛЕНИЯ В РА

**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, *к.э.н.*

*младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**Аннотация:** В рамках этой статьи были изучены отдельные этапы создания устойчивой основы для формирования электронного общества. Проанализированы условия внедрения и функционирования систем e-gov.am и Mulberry. Были выявлены значительные результаты, обеспечивающие внедрение этих систем. Следует отметить, что подчеркивается важность свободных и прозрачных электронных отношений между государственными органами, гражданами и частным сектором, что может быть достигнуто за счет использования высококачественных и прогрессивных методов.

**Ключевые слова:** *электронное управление, электронная подпись, правительственный документооборот, доступность к электронным услугам, система Mulberry.*

## THE SYSTEM OF ELECTRONIC GOVERNANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

**TATEVIK SMBAT PARSADANYAN**, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article studies separate stages of building a sustainable foundation for developing the electronic society. The conditions of introducing and functioning of the E-gov.am and Mulberry systems have been analyzed. Significant outcomes of introducing these systems have been identified. It needs to be stated that free and transparent electronic interactions between public institutions and citizens, and private sector are stressed that could be ensured by utilizing high-quality and contemporary and/or progressive methods.

**Keywords:** *Electronic governance, electronic signature, government document circulation, access to electronic service, Mulberry system.*

**ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ**  
**НАШИ АВТОРЫ**  
**OUR AUTHORS**

**ԳԱԳԻԿ ԻՇԽԱՆՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**, *տ.գ.ղ., պրոֆեսոր*  
*ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր*

**ГАГИК ИШХАНОВИЧ ВАРДАНЯН**, *д.э.н., профессор*  
*Проректор по науке и внешним связям АГЭУ*

**GAGIK ISHKHAN VARDANYAN**, *Doctor of Sciences, Professor*  
*Vice-Rector for Science and International Relations*  
*Armenian State University of Economics*

**ԱՐԱՍ ՀԱՄԱՅԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**, *տեխն.գիտ.դոկտ., պրոֆեսոր*  
*Տնտեսության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ*

**АРАМ АМАЯКОВИЧ АРАКЕЛЯН**, *доктор техн.наук, профессор*  
*Зав.кафедрой Математических методов в экономике ЕрГУ*

**ARAM HAMAYAK ARAKELYAN**, *Doctor of sciences (Engineering), Professor*  
*Head of the Department of Mathematical Modeling in Economics*  
*Yerevan State University*

**ԱՇՈՏ ՀԱԿՈՒԻ ԲԱՅԱԴՅԱՆ**, *տ.գ.ղ., պրոֆեսոր*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող*

**АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН**, *д.э.н., профессор*  
*зав.отделом, главный научный сотрудник*  
*Института экономики им.М.Котаняна НАН РА*

**ASHOT HAKOV BAYADYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*  
*Head of Department, Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ ԶԱՔԱՐՅԱՆ**, *տ.գ.ղ., պրոֆեսոր*  
*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

**АРАРАТ ЕГИШЕВИЧ ЗАКАРЯН**, *д.э.н., профессор*  
*Институт экономики им. М. Котаняна НАН РА, главный научный сотрудник*

**ARARAT YEGHISHE ZAKARYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*  
*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of science, Republic of Armenia*

**ՀԱՅԿ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՅԱԿԱՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*  
*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ*

**АЙК ГЕРАСИМОВИЧ МНАЦАКАНЯН**, *д.э.н., профессор*  
*Заведующий кафедрой финансов и бухгалтерского учета ЕГУ*

**HAYK GERASIM MNATSAKANYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*  
*Head, Chair of Finances and Accounting*  
*Yerevan State University*

**ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**, *տ.գ.թ.*  
*ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ախտենտ*

**КАРАПЕТ ОГАНЕСОВИЧ АРАКЕЛЯН**, *к.э.н.*  
*Армянский государственный экономический университет,*  
*ассистент кафедры маркетинга*

**KARAPET HOVHANNES ARAKELYAN**, *Candidate of Sciences (Economics)*  
*Assistant Professor, Chair of Marketing, Armenian State University of Economics*

**ԵՐԱ ԱՐԿԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆ**, *աշխարհ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

**ЭБА АРКАДЬЕВНА БАБАЯН**, *к.географ.н., профессор*  
*ведущий научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**EVA ARKADI BABAYAN**, *Candidate of Sciences (Geography)*  
*Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԲԵԼԼԱ ՎԱԼԵՐԻԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**БЕЛЛА ВАЛЕРЬЕВНА ГАБРИЕЛЯН**, *к.э.н., доцент*  
*старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА,*

**BELLA VALERI GABRIELIAN**, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*  
*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՄԱԼՅԱ ՄԿՐՏՅԻ ԳԱԼՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**АМАЛИЯ МКРТЫЧЕВНА ГАЛСТЯН**, *к.э.н.*,

*научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА*

**AMALYA MKRTICH GALSTYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱԶՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**СВЕТЛАНА АРКАДЬЕВНА ДАЛЛАКЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**SVETLANA ARKADI DALLAQYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ ԶԱԽԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**АРМИНЕ ГРИГОРЬЕВНА ЗАХАРЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**ARMINE GRIGORI ZAKHARYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱԼՎԱՐԴ ԹԵՎՈՍԻ ԶԱՏԻԿՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, ավագ գիտաշխատող*

**АЛВАРД ТЕВОСОВНА ЗАТИКЯН**, *к.э.н.*

*заместитель директора, старший научный сотрудник*

*Института экономики им. М.Котаняна НАН РА*

**ALVARD TEVOS ZATIKYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Deputy Director, Senior Research Associate*

*M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Arm*

**ՌԱԶՄԻԿ ԿԱՍՈՅԻ ԻՍԱԿԱԿՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**РАЗМИК КАМОЕВИЧ ИСААКЯН**

*Младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**RAZMIK KAMO ISAHAKYAN**, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԼԻԱՆԱ ՄԵՐՈՎՆԱ ԲԱՅՐԱՊԵՏՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոն*

**ЛИАНА МГЕРОВНА АЙРАПЕТЯН**, *к.э.н., доцент*

*кафедрой коммерции и организации бизнеса АГЭУ*

**LIANA MHER HAYRAPETYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Department of Commerce and Business Organization  
Armenian State university of Economics*

**ԳԱՅԱՆԵ ԵՐՆԻԿԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ГАЯНЕ ЭРНИКОВНА АРУТЮНЯН**, *к.э.н., доцент*

*старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**GAYANE ERNIK HARUTYUNYAN**, *Ph.D. in Economics, Assistant Professor*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԶՐԱՆՏ ԶԱՎԵՆԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*«Յուրքու» ընկերության գնումների և լոգիստիկայի բաժնի ղեկավար*

**ГРАНТ ЗАВЕНОВИЧ АРУТЮНЯН**, *к.э.н.*

*Руководитель департамента закупок и логистики в ООО ЮКОМ*

**HRANT ZAVEN HARUTYUNYAN**, *Ph.D. in Economics,*

*Head of Procurement and Logistics Department, UCOM*

**ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**MERI GAGIK MANUCHARYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Science, Republic of Armenia*

**ՄԻՔԱՅԵԼ ՄԵՐՈՐԻ ՄԱՐԴՈՒՄՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ*

**МИКАЕЛ СЕРОБОВИЧ МАРДУМЯН**, *к.э.н., доцент*

*заведующий кафедрой коммерции и организации бизнеса АГЭУ*

**MIKAEL SEROB MARDUMYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Head of the Department of Commerce and Business Organization  
Armenian State university of Economics*

**ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН**, *к.э.н.*

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**HAYK ASHOT MARKOSYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՆԱԻՏ ԳՐԱՉԻԿՈՎՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀԱԱՀ Վիճակագրության և բիոմետրիայի ամբիոն*

**АНАИТ ГРАЧИКОВНА МНАЦАКАНЯН**, *к.э.н., доцент*

*кафедры Статистики и биометрии АНАУ*

**АНАИТ HRACHIK MNATSAKANYAN**, *Ph.D. in Economics*

*Associate Professor, Chair of Statistics and biometry  
Armenian National Agrarian University*



**ՍՏԵՓԱՆ ՈԱՖԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆ**, տեխ. գիտ. թեկ.  
«Էներգիա ռեկ Արմենի» ՍՊԸ, գլխավոր ինժեներ

**СТЕПАН РАФИКОВИЧ ПАПИКЯН**, Канд. тех. наук.  
«ЭРА» ООО, главный инженер

**STEPAN RAFIK PAPIKYAN**, Candidate of Sciences (Technical)  
Chief Engineer, "Energia rek Armeni" LLC

**ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ**, տ.գ.թ.  
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող

**ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН**, к.э.н.  
научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

**SHOGHER PYOTR POGHOSYAN**, Ph.D. in Economics  
Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia Abstract

**ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**, տ.գ.թ.  
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող

**ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН**, к.э.н.  
Научный сотрудник Института экономики имени М. Котаняна, НАН РА

**LILIT NORAYR SARGSYAN**, Ph.D. in Economics,  
Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia

**ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**, տ.գ.թ.  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, к.э.н.  
младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

**TATEVIK SMBAT PARSADANYAN**, Ph.D. in Economics  
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia

---

**ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱԶԱՏՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**АЗАТЯН ЛИАНА САМВЕЛОВНА**

*научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА*

**LIANA SAMVEL AZATYAN**

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

---

**ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**РУЗАНА СТЕПАНОВНА АЛОЯН**

*младший научный сотрудник  
Института экономики им.М. Котаняна НАН РА*

**RUZANNA STEPAN ALOYAN**

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

---

**ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*Տնտեսագետ, մագիստրանտ*

**АРАМ АШОТОВИЧ ГЕВОРГЯН**

*экономист, магистрант*

**ARAM ASHOT GEVORGYAN, M.A. in Economic**

*Economist, Graduate student*

---

**ԴՈՆԱՐԱ ՅՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին  
կարգի տնտեսագետ*

**ДОНАРА ОВИКОВНА ГРИГОРЯН**

*экономист первой категории Института экономики им. М. Котаняна НАН РА*

**DONARA HOVIK GRIGORYAN**

*First Level Economist, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

---

**ՍԵՐԳԵՅ ԱԼԵԽՍԵՅԻ ԻԳՆԱՏՈՎ**

*Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հայցորդ*

**СЕРГЕЙ АЛЕКСЕЕВИЧ ИГНАТОВ**

*сосискатель кафедры международных экономических отношений Армянского государственного экономического университета*

**SERGEY ALEKSEY IGNATOV**

*Ph.D. Student, Chair of Interantioan Economic Relations, Armenian State University of Economics*

**ԳՆԵԼ ԳԱՐԵԳԻՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*MBA(US), ACCA (UK), Առևտրի դեկավար, ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ*

**ГНЕЛ ГАРЕГИНОВИЧ ХАЧАТРЯН,**

*MBA(US), ACCA(UK), Руководитель аудита, соискатель*

**GNEL GAREGIN KHACHATRYAN**

*Ph.D. Student, Chair of Finances and Accounting, Yerevan State University MBA (US), ACCA (UK), Audit Partner, “Sos-Audit” LLC*

**ՍՏՅՈՊԱ ՍԱՄՎԵԼԻ ԾԱՌՈՒԿՅԱՆ**

*ԵՊՀ հայցորդ*

**СТЕПА САМБЕЛОВИЧ ЦАРУКЯН**

*соискатель ЕГУ*

**STYOPA SAMVEL TSARUKYAN,**

*Ph.D. Student, Yerevan State University*

**ՉԱՐՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՄԵԼԻԿՅԱՆ**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ*

**АРМИК ВАГАНОВИЧ МЕЛИКЯН**

*аспирант Национальнго Аграрного Университета Армении*

**ZARMIK VAHAN MELIKYAN**

*Ph.D. Student, Agrarian National University of Armenia*

## **ԱՇՈՏ ԱՐԱՐԱՏԻ ՆԱՆՅԱՆ**

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ*

## **АШОТ АРАРАТОВИЧ НАНЯН**

*аспирант Факультета экономики и менеджмента, Ереванский государственный университет*

## **ASHOT ARARAT NANYAN**

*Ph.D. student, Department of Economics and Management  
Yerevan State University*

## **ՄԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԶՈՐԱՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

## **МАРИНЕ АЗАТОВНА ЧОБАНЯН**

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

## **MARINE AZAT CHOBANYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

## **ԴԱՎԻԹ ԱՐՄԵՆԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ*

## **ДАВИД АРМЕНАКОВИЧ ПЕТРОСЯН**

*экономист первой категории Института экономики им. М.Котаняна НАН РА*

## **DAVIT ARMENAK PETROSYAN**

*First level Economist, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

## **ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

## **ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН**

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

## **LILIT MANVEL PETROSYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՄԱՏԻՎԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2018**

**ՄԱՍ II**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-  
ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ - 2018**

**ЧАСТЬ II**

**THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC  
DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

**SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2018**

**PART II**

Հրատարակչության խմբագիրներ՝  
Նյութերի հավաքագրող՝  
Համակարգչային ձևավորումը՝

Ա. Հովակիմյան, Ա. Սահակյան, Ն. Նանասյան  
Ա. Մարկոսյան  
Մ. Համբարձումյանի

Редакторы издательства  
Собрание материалов  
Компьютерная верстка

А. Овакимян, А. Саакян, Н. Нанасян  
А. Маркосян  
М. Амбарцумян

Publishing House Editors:  
Collection of Articles:  
Text Design and Electronic Composition:

A. Hovakimyan, A. Sahakyan, N. Nanasyan  
A. Markosyan  
M. Hambardzumyan

Հրատ. պատվեր № 864

Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 60 x 84 1/16:

Ծավալը՝ 19 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

**Տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարանում:**

Заказ № 864

Печать офсетная. Формат 60 x 84 1/16.

Печ. л. 19 Тираж 100 экз.

**Отпечатано в типографии издательства “Гитутюн”  
Национальной академии наук Республики Армения**

Printing Order № 864

Printing: Offset. Size: 60 x 84 1/16.

Conventional Offset Press: 19 printing units. Number of copies printed: 100.

**Printed by the print house of “Gitutyun”  
Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia**